



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

719  
720

8415  
4-46



Ord. 14.  
N<sup>o</sup> 296

11  
11  
11



84-31

L-48

# 4496.

Արամեոսի Կարա  
ժիւղ. Վե՛րն

ՅԵՐԿՐԷ Ի ԼՈՒՍԻՆ  
ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆ

97 յԱՄՈՒ ՄԷՉ

ՊԱՍԿԵԱԼ Ի ՃԵՄԱՐԱՆԷՆ ՅՐԱՆՍԱՅԻ

ԲԱՐԳՄԱՆԵԱՑ Ի ՅՐԱՆՍԵՐԷՆԷ

Կ. Ս. ԻԹԻԻՃԵԱՆ

معارف نظارتك رخصتیه طبع اولتمشدر  
۲۷ جوز سنه ۹۹ نومرو ۴۱۶

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. Ս. ԻԹԻԻՃԵԱՆ

1883

REV 2003



84-15  
4-52

ար ժիիւ վերն

**ՅԵՐԿՐԷ Ի ԼՈՒՍԻՆ**

**ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆ**

97 յԱՄՈՒՄԷՉ

ՊԱԿԵԱԼ Ի ՃԵՄԱՐԱՆԷՆ ՖՐԱՆՍԱՅԻ

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ Ի ՖՐԱՆՍԵՐԷՆԷ

Կ. Ս. ԻԹԻԻՃԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. Ս. ԻԹԻԻՃԵԱՆ

1882



79  
1009  
6100

18 - 18  
2 - 2



Յ Ե Ր Կ Ր Է Ի Լ Ո Ւ Ս Ի Ն

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ 97 ԺԱՄՈՒ ՄԷՋ

ԳԼՈՒԽ Ա.

ԿԸՆ—ՔԼԻԻՊ

—o—

Ամերիկայի Միացեալ-Նահանգաց վերջին դաշնակ-  
 ցական պատերազմին ժամանակ նոր և յոյժ ազդե-  
 ցիկ ֆիլիպ մը կազմուեցաւ Մէրիլանտ նահանգին Պալ-  
 թիմոր քաղաքին մէջ : Ամեն ոք գիտէ թէ այն միջո-  
 ցին պատերազմական բնազդունն որչափ զօրեղ կեր-  
 պիւ աճեցաւ այդ նաւայարդար , վաճառական և մե-  
 քենագործ ժողովրդեան մէջ : Պարզ վաճառականք՝ ի-  
 րենց վաճառատունէն դուրս ցատկելով՝ զինուորական  
 հրամանատար , գնդապետ , զօրավար եղան յանպատ-  
 րաստից , առանց Ուէսթ-Քօնթի զինուորական վար-  
 ժարաններէն անցնելու , և շատ չանցած՝ պատերազմա-  
 կան արուեստին մէջ իրենց հին աշխարհի պաշտօնա-  
 կիցներուն հաւասարեցան , և անոնց պէս՝ ուսմբերը  
 միլիոններն ու մարդիկն անխնայ շուայլելով՝ վառաւոր  
 յաղթութիւններ քրին :

Բայց բանի մը մէջ Ամերիկացիք զարմանալի կեր-  
 պիւ դերազանցեցին զԵւրոպացիս , այն է ուժեղա-  
 կան գիտութեան մէջ : Ոչ թէ իրենց զէնքերն առաւել  
 բարձր կատարելութեան մը հասան , այլ վասն զի ան-  
 սովոր մեծութիւն և մինչեւ այն ժամանակ չտեսնուած  
 հասողութիւն ստացան : Վերէն , վարէն , քովէն , ետե-  
 ւէն ուսմբ արձակելու արուեստին մէջ Անգլիացիք ,



Յրանսացիք և Բրուսիացիք սովորելու բան մը չունին . բայց իրենց թնդանօթները , ումբկէններն ու հրասան- գերն՝ Ամերիկեան ահագին հրանօթներուն քով գրպա- նի ատրճանակներ կը համարուին :

Ասոր վրայ պէտք չէ զարմանալ . Եանքիներն (Ամե- րիկացիք) աշխարհիս առաջին մեքենագէտ-երկրա- չափներն են , ինչպէս որ իտալացիք երաժիշտ և Գեր- մանացիք բնագանցագէտ են , ի ծնէ : Ուստի և խիստ բնական է տեսնել որ իրենց յանդուգն ճարտարիմա- ցութիւնը ումբաձգական զիտութեան մէջ ի գործ դը- նեն : Ասկից յառաջ եկած են այն վիթխարի թնդա- նօթներն , որ կարի մեքենայներէն յոյժ նուազ օգտա- կար , բայց նոյնչափ զարմանալի և առաւել եւս հիա- նալի են : Արմադրոնկի , Բալիզէի և Թրէօյլ տը Պոլիէ- ոյի թնդանօթները խոնարհելու պարտաւորեցան իրենց նոր աշխարհի հակառակորդաց , Բարոթի , Տալկրինի և Ռոտմանի հրաշալի ուղղաձորժիններուն առջեւ :

Արդ , Հիւսիսայնոց և Հարաւայնոց այն ահեղ կըռ- ուին ժամանակ առաջին տեղը բռնած էին ուրմա- ձիգներն : Ամերիկեան լրագիրք անոնց գիւտերը կը հռչակէին հրճուանօք . և ամենէն աննչան վաճառա- կանն , ամենէն յետասմիտ ուամիկը գիշեր ցերեկ իւր գլուխը կը կեղեքէր ումբաձգական անմիտ հաշիւ- ներով :

Արդ , երբ ամերիկացի մ'իդէա մ'ունի , երկրորդ ամերիկացի մը կը վնտուէ այն իդէան ընդունող , եր- բոր երեք լինին , նախագահ մ'եւ երկու քարտուղար կ'ընտրեն : Երբոր չորս են , դիւանապետ մ'ալ կ'ընտ- րեն , և դիւանը կ'սկսի պաշտօն վարել : Իսկ երբոր հինգ լինին , ընդհանուր ժողով կը գումարեն և Բլիւ- պը կազմուած կը լինի : Այսպէս կազմուեցաւ և Պալ- թիմորի կըն-Բլիւպը (թնդանօթ Բլիւպ) :

Սոյն ընկերակցութեան անդամակցելու համար ան-

հըրաժեշտ պայման մը կ'ար . այն է , թնդանօթ մը և կամ գոնէ որ և է հրազէն մը հնարած կամ կատարե- լագործած լինիլ : Բայց , վերջապէս , տասն և հինգ նետող ատրճանակն , առանցաւոր կարճ հրացանը կամ սուսերաւոր ատրճանամբն հնարողները մեծ յարգ չու- նէին . թնդանօթագէտը ամենը կը գերազանցէին ա- մեն պարազայի մէջ :

«Ստոնց վայելած յարգն ու համարումն , ըսաւ օր մը կըն-Բլիւպի ամենէն գիտուն ատենախօսներէն մին , իրենց թնդանօթին մեծութեան և իրենց ուումբերուն հասած հեռաւորութեան համեմատութեամբ էր » :

Կըն-Բլիւպն հիմնուելէ յետոյ , դիւրին է երեւա- կայել թէ ինչե՛ր արտադրեց Ամերիկեան հնարագէտ հանճարը : Ռազմական գործիներն անհեթեթ մեծու- թեան հասան , և ուումբերը թոյլատրեալ սահմաններն անցնելով դնացին շարդուկտոր ըրին խեղճ շրջագայող- ներն : Այս ամեն դիւտերը շատ ետ թողուցին Եւրո- պական թնդանօթագիտութեան երկչոտ գործիներն , ինչպէս որ դիւրաւ կընայ հասկցուիլ հետեւեալ թիւե- րէն :

Երբեմն , հին բարի ժամանակներուն մէջ , երեսուն և վեցնոց ուումբ մը , երեք հարիւր ոտնաչափ հեռու- էն կընար քովէ քով կանգնած երեսուն և վեց ձի և վաթսուն և ութ մարդ զարնել անցնիլ : Արհեստին տղայ ժամանակն էր այս : Յետոյ ուումբերն աւելի յա- ուղադիմութիւն ըրին . Ռոտման թնդանօթն , որ կէս թոնոյ (500 քիլոկրամ) կըռող ուումբ մը եօթն մղոն (մէկ մղոնն է 1609 մէթր և 3 սանթիմէթր) հեռի կը հասցնէր , դիւրաւ կընար 150 ձի և 300 մարդ տա- պալել : Մինչեւ իսկ ասոր հանդիսաւոր փորձն ընելու ինդիւր եզաւ կըն-Բլիւպի մէջ , և թէպէտ ձիերն հա- ճեցան այդ փորձէն անցնիլ , բայց դժբաղդաբար մարդ- չգտնուեցաւ յանձն առնող :



ինչ և իցէ, այս հրանօթներուն արդիւնքն արդա-  
րեւ սարսափելի էր. մէն մի անգամ պարպուելուն,  
պատերազմողները մանգաղով հնձուած հասկերու պէս  
կ'իյնային: Ի՞նչ կը նշանակէր այսպիսի ռուսներու քով  
այն հռչակաւոր ռուսքն, որ 1587ին Բուլթրասի ճակա-  
տամարտին մէջ քսան և հինգ մարդ մէկէն սպաննեց  
կամ վիրաւորեց, և այն միւս ռուսքն, որ 1758ին  
Չորնտոֆի պատերազմին մէջ քառսուն հետեւակազօր  
սպաննեց, և 1742ին, Քէսէյտոֆի Աւստրիական թըշ-  
դանօթն, որոյ մէն մի հարուածն եօթանասուն թըշ-  
նամի կը տապալէր: Ի՞նչ են իէնայի կամ Աւսթէրի-  
ցի հիանալի կրակներն, որք պատերազմին բաղդն ու-  
րոշեցին: Ամերիկայի դաշնակցական պատերազմին  
ժամանակ աւելի սարսափելիները տեսնուեցան: Կէ-  
թիսսլըրի կուռին մէջ, շերտաւոր թնդանօթէ մ'ար-  
ձակեալ կոնաձեւ ռուսք մը 173 հարաւային զարկաւ,  
և Բոթոմաքի անցքին ժամանակ Ռոտմանի ռուսք մը  
215 հարաւայիններ ուրիշ աշխարհ մը զրկեց, որ ան-  
շուշտ ասկէց լաւագոյն է: Նմանապէս պէտք է յիշել  
կըն-Քլիւպի նշանաւոր անգամ և մշտնջենաւոր քար-  
տուղար Ժ. Թ. Մասթոնի հնարած ահագին հըրա-  
սանդն (հավան), որոյ արդիւնքն աւելի մահաբեր էր,  
վասն զի առաջին անգամ փորձի համար նետուելուն՝  
337 հոգի սպաննեց . . . պայթելով:

Այս ճարտարախօս թիւերուն վրայ ի՞նչ պէտք է  
տւեցնել, — ոչինչ: Ուստի և առանց հակառակու-  
թեան պիտի ընդունուի հետեւեալ հաշիւը, զոր Բիթ-  
քայրն փիճակագիրը ձեռք բերած է: Ռուսքերէ ին-  
կած մարդոց թիւը՝ կըն-Քլիւպի անգամոց թուովը  
բաժնելով դառաւ որ ասոնց իւրաքանչիւրն, իւր հաշ-  
ուին, միջին թուով 2375 մարդ և կոտորակ մ'սպան-  
նած է:

Այս թիւը նկատելով յայտնի կը տեսնուի թէ այս

գիտնական ընկերութեան միակ հոգն եղաւ մարդ-  
կութիւնը ջնջել՝ մարդասիրական նպատակաւ, և պա-  
տերազմական զէնքերը կատարելագործել՝ իբրեւ քա-  
ղաքակրթութեան գործիք: Ստակիչ հրեշտակներու՝  
բայց և հանդերձ այսու՝ աշխարհի լաւագոյն որդւոց  
գումարում մ'էր այս կըն-Քլիւպը:

Պէտք է աւելցնել թէ այս քաջ Եանքիները մի մի-  
այն բանաձեւով չբաւականացան, այլ իրենց անձն ալ  
զոհեցին: Ասոնց մէջ ամեն աստիճանէ սպաներ, տե-  
ղակալներ, զօրավարներ և ամեն հասակէ զինուո-  
րականներ կային, անոնք որ դեռ նոր կը մտնէին զի-  
նուց ասպարէզն և անոնք որ թնդանօթի սալին վը-  
րայ ծերացած էին: Շատեր պատերազմի դաշտին վը-  
րայ մնացին, որոց անուանքը կըն-Քլիւպի պատուոյ  
տումարին մէջ արձանագրեալ են, և պատերազմէ վե-  
րագարձողներէն շատեր իրենց անվիճելի անվեհերու-  
թեան նշաններն իրենց վրայ կը կրէին: Անթացուպ,  
փայտէ ոտք, յօդեալ թեւ, ճանկաւոր ձեռք, քառ-  
չուէ ծնօտ, արծաթէ դանկ, բլաթինէ քիթ, բան մը  
չէր պակսեր հաւաքածոյին մէջ, և վերոյիշեալ Բիթ-  
քայրն փիճակագիրն հաշուեց նմանապէս թէ կըն-Քլ-  
իւպի մէջ չորս մարդու համար հազիւ ողջ թեւ մը,  
և վեց մարդու համար ալ երկու ոտք կը գտնուէր:

Բայց այդ արի թնդանօթաձիգներն այնչափ մօ-  
տէն չէին դիտեր զայս, և իրաւամբ կը փառաւոր-  
ուէին՝ երբոր ճակատամարտի մը տեղեկագրէն կը  
տեսնուէր որ մեռնողներուն թիւն՝ արձակուած ռուս-  
բերուն թիւէն տասնապատիկ աւելի էր:

Օր մը, սակայն, տխուր և ողբալի օր, պատե-  
րազմէն ողջ մնացողներն հաշուութիւն ստորագրեցին,  
թնդանօթոց որոտումը տակաւ դադրեցաւ, հրասան-  
դերը լուեցին, ռմբկէններուն բերանն երկար ժա-  
մանակի համար կապուեցաւ, և թնդանօթները գըլ-



խակոր զինարանները մտան, ռումբերը թնդանօթա-  
րանի փակարաններուն մէջ դիզուեցան, արիւնուշտ  
յիշատակները ջնջուեցան, բամպակենինները շքեղապէս  
աճեցան լիապէս պարարտողեալ դաշտերուն վրայ,  
սգոյ հանդերձներն հինցան կսկիծներուն հետ, և կըն-  
-ֆիլւպ խորին անգործութեան մէջ սուզեալ մնաց :

Արդարեւ հետախոյզք ոմանք՝ յամառ աշխատա-  
սէրը, տակաւին ռմբաձգական հաշիւներով կ'զբաղէին,  
և անհետք մեծութեամբ ռումբեր կ'երազէին միշտ-  
բայց՝ առանց գործնականի՝ ի՞նչ արժէք կրնային ու-  
նենալ սին տեսականներն : Այս պատճառաւ կըն-  
-ֆիլւպի դահլիճները կ'ամայանային . ծառայները կը  
ննջէին նախասենեկաց մէջ, լրագիրք կը բորբոսէին  
սեղաններուն վրայ . մթին խորշերը տխուր խորդիւն-  
ներով կը թնդային, և կըն-ֆիլւպի անդամներն, եր-  
բեմն պոռոտաձայն, այժմ՝ աղետայի խաղաղութեան  
մը շնորհիւ՝ ի լուծութիւն դատապարտուած, պղատու-  
նական ռմբակոծութեան երազներով կը ննջէին :

Դժնդակ է այս վիճակ, ըսաւ իրիկուն մը քաջն  
Թում-Հընթըր, երբոր իւր փայտէ ոտքերը կ'ածխա-  
նային ծխարանի վառարանին մէջ : Բան մը չկայ ընե-  
լիք, բան մը չկայ յուսալիք : Ի՞նչ տաղտկալի կեանք :  
Ո՛ր է այն ժամանակն, ուր թնդանօթն ամեն առա-  
ւօտ մեղ կ'արթնոյնէր իւր ուրախալի որոտմամբ :

— Այն ժամանակն ոչ եւս է, պատասխանեց աշ-  
խոյժն Պիլսպի՝ ջանայով երկնցնել իւր անգոյ թեւերն :  
Այն ժամանակ զուարճութիւն մ'էր . մարդ կը հնարէր  
իւր ռմբկէնն, և հաղիւ ձուլուած, կը վազէր փորձել  
թշնամոյն առջեւ . բանակետողը կը վերադառնար քա-  
ջալերական խօսք մը լսելով Շէրման զօրավարէն, կամ  
իւր ձեռքը թոթուելով Մաք-Քլէյլան զօրավարէն :  
Իսկ այսօր, զօրավարը իրենց վաճառատունը վերա-  
դարձած են, և փոխանակ ռումբերու՝ բամպակի ան-

ֆիսա հակեր դուրս կը զրկեն : Ա՛հ, կ'երգնում որ  
թնդանօթին ապագայն կ'օրսուած է Ամերիկայի մէջ :

— Այո՛, Պիլսպի՛, գոչեց Պլոմպէրի գնդապետը,  
դառն պատրանք մ'է այս : Օր մը մարդ իւր խաղաղ  
սովորութիւնները կը թողու, զինուց գործածութեան  
կը վարժուի, պատերազմի դաշտերը կ'երթայ, դիւ-  
ցազնաբար կը կռուի, և երկու երեք տարի յետոյ  
պէտք է կորուսանել այնչափ աշխատութեանց պտուղն,  
ողբալի անգործութեան մէջ նիրհել և իւր ձեռները  
դըպանները թխել :

Ինչ որ ալ ըսէր՝ քաջարի գնդապետը՝ չպիտի կըր-  
նար իւր անգործութեան այդպիսի նշան մը տալ, և  
սակայն դըպանները չէին որ կը պակսէին իրեն (\*):

Եւ չկայ մօտաւոր պատերազմի մը յոյս, ըսաւ  
այն ժամանակ հոչակաւորն Ժ. Թ. Մասթոն՝ իւր եր-  
կաթէ ճանկովն իւր կիւթթա-բերքայէ (\*\*), դանկը  
քերելով : Բնաւ ամպ մը չկայ հօրիգօնն, և այս ալ  
այնպիսի ժամանակ մը, ուր տակաւին շատ բան կայ  
ընելիք թնդանօթական արուեստին մէջ : Ես որ կը  
խօսիմ ձեզ, այս առաւօտ ռմբկէնի մը ծրագիր չի-  
նեցի, որ պատերազմի օրէնքները փոխելու սահման-  
ուած է :

— Իրա՛ւ, պատասխանեց Թում Հընթըր, պատ-  
ուարժան Ժ. Թ. Մասթոնի վերջին փորձին վրայ խոր-  
հելով յակամայից :

— Այո՛, իրաւ, պատասխանեց վերջինը : Բայց ի՞նչ  
օգուտ պիտի ունենան այսչափ յաջող վախճան ունե-  
ցող ուսմունք, այսչափ յաղթեալ դժուարութիւնք :  
Ո՞չ ապաքէն ունայն աշխատութիւնք են : Նոր աշխար-  
հի ժողովուրդք խօսք մէկ ըրած կը թուին խաղաղու-  
թեամբ ապրելու, և մեր պատերազմասէր թրիպիւ-

(\*) Խեղճը դըպաններ ունէր, բայց ձեռք չունէր :

(\*\*) Տեսակ մը խէժ Սոււմադրայի :



նը (\*) ժողովրդոց գայթակղելի աճուձէն ծագելիք մօտաւոր աղետներ կը գուշակէ :

— Սակայն, Մասթոն, ըսաւ Պլոմսպէրի գնդապետն, Եւրոպիոյ մէջ ազգութեանց սկզբունքը պաշտպանելու համար կը կռուին միշտ :

— Ուրեմն :

— Ուրեմն, կրնանք թերեւս մեք ալ փորձ մ'ընել Եւրոպիոյ մէջ, և եթէ մեր ծառայութիւններն ընդունին . . . :

— Կը կարծէք, գոչեց Պիլսպի, օտարաց օգտին համար ռմբածգութիւն ընել :

— Աւելի լաւ է ընաւ չընել, պատասխանեց գընդապետն :

— Անշուշտ, ըսաւ յ. թ. Մասթոն, աւելի լաւ է այդ, բայց պէտք չէ մինչեւ իսկ մտքէ անցունել այդ միջոցն :

— Ինչո՞ւ համար, հարցուց գնդապետն :

— Անոր համար որ հին աշխարհի մէջ զինուորական յառաջացման վրայ այնպիսի գաղափարներ կան, որք բարբոսիկն հակառակ են մեր սովորութեանց: Այդ մարդիկ չեն երեւակայեր թէ մարդ մը կրնայ բանակի մ'սպարապետ լինիլ առանց հարիւրապետի տեղակալութիւն ըրած լինելու, որ ըսել կը լինի թէ մարդ մը չկրնար լաւ ռմբածից լինիլ՝ առանց ինքնին թընդանօդ մը ձուլած լինելու: Արդ, այս բանը պարզապէս . . . :

— Անտեղի է, պատասխանեց թոմ-Հընթըրը, իւր թիկնաթուղին բազուկներն իւր լայնաբերան զմելիովը կարտետելով, և որովհետեւ իրերն այդ վիճակի մէջ են, մեղ ուրիշ բան չմնար ընել, բայց միայն ծխախոտ տնկել, կամ Պալէստայի իւղ թորել :

— Ինչ, գոչեց յ. թ. Մասթոն սրտաւձայն, մեր

(\*) Ամերիկայի լրագիր մը :

կենաց այս վերջին տարիները չպիտի գործածեմք հըրազինութիւնը կատարելագործելու : Նոր աւիթ մը չպիտի ներկայանայ մեր ռումբերուն հասողութիւնը փորձելու : Միջազգային կնճիւռ մը չպիտի ծագի, որ թոյլ տայ մեզ պատերազմ հրատարակել անդրադալանտեան տէրութեան մը դէմ: Ֆրանսացիք մեր շոգենաւներէն մէկն իսկ չպիտի ընկղմեն, և Անգլիացիք ալ մեր ազգակիցներէն երեք չորսը չպիտի կախեն՝ ոտնակոխ րնելով ազգաց իրաւունքն :

— Ոչ, Մասթոն, պատասխանեց Պլոմսպէրի գընդապետն, այդ բարբառգութիւնը պիտի չունենամք. ոչ, այդ միջադէպերէն ոչ մին պիտի պատահի, և եթէ պատահի իսկ, մեք օգուտ չպիտի կրնամք քաղել : Ամերիկեան դիւրազգածութիւնն օր քան զօր կը տըկարանայ, և կնատութեան վիճակի կը հասնիմք :

— Այո՛, նուաստանալու վրայ եմք, պատասխանեց Պիլսպի :

— Եւ մեզ կը նուաստացնեն, յարեց թոմ Հընթըրը :

— Շատ ճշմարիտ են այդ ամեն ըսածնիդ՝ պատասխանեց յ. թ. Մասթոն բարկացայտ : Օղբին մէջ հազար պատճառ կայ պատերազմի, և չեն պատերազմիր. բազուկներու և սրունքներու խնայութիւն կ'ընեն, յօգուտ այնպիսի մարդոց՝ որք չեն գիտեր ինչ ընեն զանոնք : Եւ ինչ պէտք է այդչափ հեռուներէ պատերազմի պատճառ փնտռել : Միթէ հիւսիսային Ամերիկա ժամանակաւ Անգլիացուց սեփականութիւնը չէ՞ր :

— Անշուշտ, պատասխանեց թոմ Հընթըրը, իւր անթացուպին ծայրովը կրակն արծարծելով :

— Ուրեմն, ըսաւ յ. թ. Մասթոն, ինչո՞ւ համար Անգլիա ալ այժմ Ամերիկացուց սեփականութիւնը չը լինի :

— Շատ իրաւացի է, պատասխանեց Պլոմսպէրի գընդապետը :



— Գնացէք առաջարկեցէք զայդ Միացեալ-Նահանգաց Նախագահին, և կը տեսնէք ինչ ընդունելութիւն կ'ընէ ձեզ:

— Անշուշտ գէշ ընդունելութիւն կ'ընէ մեզ, մըրմըրաց Պիլսպի իւր չորս ակումներուն մէջէն, զորս միայն ազատած էր ճակատամարտէն:

— Հաւատքիս վրայ կ'երդնում, գոչեց ժ. Թ. Մասթոն, որ յառաջիկայ ընտրութեանց մէջ քուէ չպիտի տամ իրեն:

— Մեզնէ ալ թող քուէ չսպասէ, պատասխանեցին միաձայն այս պատերազմասէր խեղանդամք:

— Սպասելով այդ օրին, ըսաւ ժ. Թ. Մասթոն, և եզրակացնելու համար, եթէ առիթ չտրուի ինձ նոր ումբկէնս ճակատամարտի մը մէջ փորձելու, կը հրաժարիմ կըն-ֆլիւպի անդամակցութենէս, և կ'երթամ կը թաղեմ ես զիս Արքանզասի դաշտերուն մէջ:

— Մեր ալ ձեր ետեւէն կուգանք, պատասխանեցին յանդուգն ժ. Թ. Մասթոնի խօսակիցներն:

Արդ՝ իրերն այս վիճակի մէջ էին, միտքերն եւս քան զեւս կը գրդուէին, և ֆլիւպը մօտաւոր լուծման մը վտանգին մէջ էր, անակնկալ դէպք մ'եկաւ այս ցաւալի աղետն արգիլեց:

Սոյն խօսակցութեան հետեւեալ օրը, ֆլիւպին իւրաքանչիւր անդամն հետեւեալ շրջաբերականն ըստացաւ.

Պալթիմոր 3 հոկտ.

« Կըն-ֆլիւպի նախագահը պատիւ ունի ծանուցանել իւր « պաշտօնակցաց թէ ամսոյս 5 ին դումարուելիք նստին մէջ « յոյժ կարեւոր եւ շահեկան զեկայց մը պիտի ընէ իրենց: « Հետեւաբար կ'աղաչէ, որ ամեն զործ դադրեցնելով, ներ- « կայ հրաւերիս պատասխանեն:

« Անձնուէր պաշտօնակից

ԻՄԲԵՐ ՊԱՐՊԻՔԷՅՆ Ն. Կ.-Ք. »



Հոկտեմբեր 5ին, իրիկուան ժամ 8ին, մեծ բազմութիւն խունեալ էր կըն-ֆլիւպի դահլիճներուն մէջ, իսնիըն Սքուէյր փողոցը թիւ 21: Պալթիմոր բնակեալ անդամակցաց ամենն ալ անձամբ պատասխանած էին իրենց նախագահին հրաւերին, իսկ թղթակից անդամք ճեպընթաց շոգեկառօք խումբ խումբ Պալթիմարի փողոցները կ'եղնէին, և որչափ որ մեծ էր նիստերուն սրահը, գիտնոց այս բազմութիւնը չկրնայով տեղ գտնել, մօտակայ դահլիճները, նրբաշաւիղներն և արտաքին գաւիթները լցուեր էին. հոն կը հանդիպէին պարզ ժողովուրդականներու, որք ժողովոյն դահլիճին դրանը մէջ խոնեալ, ամեն ոք կաշխատէր առաջ անցնել, և Պարպիքէյն նախագահին կարեւոր զեկոյցը լսելու փափաքով՝ զիրար կը մղէին կը հրմըշտակէին և կը կոխտտէին այն գործելու ազատութեամբ որ ինքնավարական դաղափարներով սնեալ ժողովրդոց յատուկ է:

Սոյն իրիկունը Պալթիմոր գտնուող օտարական մը՝ մինչեւ իսկ ոսկի վճարելով՝ չէր կրնար մեծ դահլիճը մտնել, որ մի միայն բնիկ և թղթակից անդամաց վերապահեալ էր. ոչ ոք կրնար անդ բազմիլ. քաղաքին երեւելիներն և քաղաքապետական խորհրդոյ անդամք իսկ հարկադրեալ էին իրենց կառավարած ժողովրդեան ամբօխին հետ խառնուել՝ որպէս զի ներսէն թուած լուրերն ըմբռնեն:

Սակայն՝ ընդարձակ ժողովարանն հետաքրքրաշարժ տեսարան մը կ'ընծայէր, և իւր նպատակին սքանչելապէս յարմարած էր: Իրարու վրայ շարուած թնդա-



նօթներէ ձեւացեալ բարձր սիւներ, որոց խոշոր հրասանդեր իբր խարխուս կը ծառայէին, նեցուկ եղած էին կամարին նուրբ զինազարդերուն, որք հատու գործիներով կերտուած մետաղեայ ասղնեգործութեանց կը նմանէին: Տեսակ տեսակ հրացաններ, ատրճանակներ և հին ու նոր զէնքեր պատերուն վրայ շաղապատեալ էին վայելչապէս: Կազերը բոց կը շընչէին բազմատեղնեան ջահերու ձեւով միմեանց հետ կապուած հազարաւոր ուէվովէրներու բերնէ, մինչդեռ ատրճանակաց և հրացանաց փունջերէ կազմեալ ճրագարաններ այս պայծառաշուք լուսաւորութիւնը կ'ամբողջացնէին: Թնդանօթաց օրինակներ, արոյրի կտորներ (փորձի համար), ոււմբի հարուածներէ ծակծկած նշաւակներ, կըն-ֆլիւպի ոււմբերէն խորտակեալ երկաթեայ տախտակներ, զանազան տեսակ ոււմբերէ համրիչներ, մանեակներ, դրասանդներ, միով բանիւ, ումբաձիգներու ամեն գործիքներ տեսողաց աչքը կ'ապշեցնէին իրենց հիանալի տրամագրութեամբ, և կարծել կուտային թէ առաւել զարդինելու սահմանեալ էին քան թէ մահ սփռելու:

Ամենէն պատուաւոր տեղն, ապակեայ շքեղ պահարանի մը մէջ, վառողի ուժէն խորտակեալ և գալարեալ թնդանօթի մը կտորը կը տեսնուէր, որ Ժ. Թ. Մասթոնի հնարած թնդանօթին թանկագին բեկորն էր:

Գահլճին ժայրը՝ նախագահը նստած էր լայն բարձրաւանդի մը վրայ՝ իւր չորս քարտուղարներուն հետ: Իւր աթոռը, քանդակագործ թնդանօթասայլի մը վրայ դրուած, իւր ամբողջութեամբ երսունուերկու մատնաչափ տրամագծով հրասանդի մը ահաւոր ձեւն ունէր, իննսուն աստիճանի անկեան մը ներքեւ ուղղուած և ծղկնիններէ կախուած էր, այնպէս որ նախագահը կրնար որրական շարժում մը տալ անոր: Գրասեղանին վրայ, որ երկաթէ լայն տախտակ մ'էր

վեց կարճ թնդանօթներու վրայ զետեղուած, ամենափափուկ ճաշակով կաղամար մը կար, սքանչելապէս քանդակեալ ոււմբէ մը շինուած, և որոտաձայն զանգակ մը, որ պէտք եղած ժամանակ ուէվովէրի պէս կը պայթէր: Զերմ վիճաբանութեանց ժամանակ այս նոր տեսակ զանգակն հազիւ կրնար խափանել գրգռեալ թնդանօթաձիգներու լէզէտնին ձայնը:

Դիւանին առջեւ օձապտոյտ ձեւով դրուած նրստարաններ կային, որք շերտաւոր պատնէշներու պէս մարտկոցներու և միջնորմներու շարունակութիւն մը կը ձեւացնէին, ուր կըն-ֆլիւպի անդամները կը բազմէին, և այս երեկոյին, կրնար ըսուիլ, թէ «պարիսպներուն վրայ մարդ կար»: Նախագահին բնաւորութիւնը բաւական ծանօթ լինելով, ամեն մարդ գիտէր թէ առանց ամենաձանր պատճառի իւր պաշտօնակիցներն անհանգիստ չէր ըներ:

Իմբէյ Պարպիքէյն քառսուն տարեկան մարդ մ'էր, հանդարտ, պաղարիւն, խստամբեր, վերջին ծայր լուրջ, քրոնոմէթրի պէս ճիշդ, տոկուն կազմուածքով և անյողդողդ բնաւորութեամբ, նուազ վեհանձն սակայն արկածախնդիր, և գործնական քաղաքարաց տէր, մինչեւ իսկ իւր ամենէն յանդուգն ձեռնարկութեանց մէջ. վերջապէս Նոր-Սնգլիոյ ամենէն ընտիր մարդը, գաղթարար հիւսիսային, սերեալ այն կտր գլուխներէն, որք այնչափ վլասաբեր եղան Սթուարթներուն, (Սնգլիոյ հին թագաւորաց) անողոք թըշնամի հարաւային ճէնթըլմէններուն, որ մայր հայրենեաց հին ազատ զինուորներն էին: Միով բանիւ, մէկ կտորէ թափուած Եանքի մը:

Պարպիքէյն մեծ հարստութիւն դիզած էր փայտի առուտուրով: Պատերազմին ժամանակ թնդանօթաձգութեան տնօրէն անուանելով, շատ գիւտեր ըրաւ: Թանդուգն իւր քաղաքարաց մէջ, հզօրեղապէս նը-



պաստեց թնդանօթաց յառաջդիմութեան, և անբացատրելի թուիչ մը տուաւ փորձառական հետադատութեանց:

Միջահասակ մարդ մ'էր, և իբրեւ հազուագիւտ բացառութիւն կըն-բիւլպի անդամոց մէջ, մարմնոյն բոլոր անբամներով առողջ և կատարեալ: Իւր դէմքին գծագրութիւնը կարծես անկիւննաչափով ու գծածի-գով քաշուած էր, և եթէ ճշմարիտ է որ մարդու մը բնական յօժարութիւնները գուշակելու համար՝ քովէն պէտք է նայիլ, Պարպիքէյն, քովէն նայելով, աղբը-ւութեան, յանդգնութեան և պաղարիւնութեան ամենէն հաւաստի նշանները կ'ընծայէր:

Այս վայրկենին անշարժ նստած էր իւր աթոռին վրայ, լուռ, խոկուն, աչքը կէս փակած, պատրսպարեալ իւր գլանածեւ մետաքսեայ սեւ փեղոյրին ներքեւ, որ կարծես պտուտակով ամրապնդուած են Ամերիկացուց գանկերուն վրայ:

Իւր պաշտօնակիցները բարձրածայն կը խօսէին իւր շուրջն, առանց անոր ուշադրութիւնը խտորեցնելու, հարցումներ կ'ընէին իրարու, ենթադրութեանց մէջ կը նետուէին, իրենց նախագահը կը քննէին, և ի զուր կ'աշխատէին անոր միտքը գուշակել իւր անխուռով դէմքէն:

Երբոր մեծ դահլճին շանթարձակ ժամացոյցն ութ զարկաւ, Պարպիքէյն, կարծես զսպանակէ մը շարժելով՝ յանկարծ ուղղուեցաւ. ընդհանուր լուութիւն մը տիրեց և նախագահը քիչ մը ճոռոմ ձայնով խօսիլ ըսկաւ այսպէս.

«Քաջ պաշտօնակիցք իմ, բաւական երկար ժամանակէ ի վեր անպտուղ խաղաղութիւն մը կըն-բիւլպի անդամները ցաւալի անդորժութեան մը մէջ ընկղմած է: Քանի մը դիպուածալից տարիներէ յետոյ պէտք եղաւ թողուլ մեր աշխատութիւններն, և արգիլեալ

մնալ յառաջդիմութեան ճանքուն մէջ: Չեմ վախնար բարձրածայն հրատարակել թէ որ և է պատերազմ որ զէնք առնուլ տայ մեզ, բարեաւ թող գայ . . . :

— Այո՛ պատերազմ, գոչեց անդուսպն ժ. թ. Մասթոն:

— Մտիկ ըրէ՛ք, մտիկ ըրէ՛ք, պատասխանեցին ամեն կողմէ:

— Բայց պատերազմն, ըսաւ Պարպիքէյն, անհընարին է ներկայ պարագայից մէջ, և ինչ որ ալ յուսայ իմ պատուարժան ընդմիջողս, երկար տարիներ պիտի անցնին մինչեւ որ մեր թնդանօթները վերստին որոտան պատերազմի դաշտի մը վրայ: Ուրեմն պէտք է որ մեր գլխուն ճարը նայինք և ուրիշ կարգի դադափարաց մէջ ճարակ փնտռեմք մեր գործօնէութեան»:

1000  
100  
100  
100

Երբոր զգաց որ իւր նախագահը փափուկ կէտ մը ձեռք պիտի առնուր. ուստի կրկնապատկեց իւր ուշադրութիւնը:

«Քանի մ'ամսէ ի վեր, ըսաւ Պարպիքէյն, ես ինձ հարցուցի թէ արդեօք, մեր մասնագիտութեան մէջ մնալով, չէի՞նք կրնար իննեւտասներորդ դարուս արժանի մեծ փորձի մը ձեռնարկել. և թէ՛ արդեօք ուրմբաճգական գիտութեան յառաջդիմութիւնը թոյլ չտա՞ր մեզ յաջող վախճանի մը հասցնել. Ուստի խորհեցայ, խուզարկեցի, աշխատեցայ, հաշուեցի, և այդ ուսումէս սա համոզումը դոյացաւ թէ պարտիմք յաջողիլ այնպիսի ձեռնարկութեան մը մէջ, որ ուրիշ ամեն երկիրներու մէջ անգործադրելի կ'երեւի: Ահա երկար խորհրդածութեամբ պատրաստած ծրագիրս է որ զեկուցմանս նիւթ պիտի լինի, և արժանի է ձեզ, արժանի է կըն-բիւլպի անցելոյն, և անշուշտ մեծ ձայն պիտի հանէ աշխարհի մէջ:

— Մեծ ձայն պիտի հանէ, գրեց Պարպիքէյն, գրեց Պարպիքէյն:





— Մեծ ձայն պիտի հանէ բառին բուն նշանակու-  
թեամբ, պատասխանեց Պարպիքէյն :

— Մի՛ ընդմիջէք, կրկնեցին բազմաթիւ ձայներ :

— Կ'աղաչեմ զձեզ ուրեմն, քաջ պաշտօնակիցք  
իմ, շարունակեց նախագահն, որ ձեր բոլոր ուշադ-  
րութիւնը շնորհէք ինձ : »

Բոլոր ժողովականք սարսուռ մը գդացին : Պար-  
պիքէյն ձեռքի արագ շարժմամբ մը փեղոյրը գլխուն  
վրայ կոխելով իւր բանախօսութիւնը շարունակեց  
հանդարտ ձայնիւ .

« Մէկը չկայ ձեր մէջ, քաջ պաշտօնակիցք իմ, որ  
տեսած չլինի Լուսինը, կամ գոնէ անոր վրայ եղած  
խօսքերը լսած չլինի : Մի՛ զարմանաք եթէ այդ գիշե-  
րային Աստեղ վրայ խօսիմ ձեզ : Թերեւս մեզ վերա-  
պահուած է այդ անձանօթ աշխարհին ֆլորմզոսը լի-  
նիլ : Հասկցէք ըսելիքս, և օգնեցէք ինձ ձեր բոլոր  
կարողութեամբ : Ես զձեզ այդ աշխարհին տիրելու  
պիտի տանիմ, և ադոր անունը պիտի միանայ այն ե-  
րեսուն և վեց նահանգաց հետ, որք միութեան այս  
մեծ երկիրը կը կազմեն : »

— Հուրա՛ Լուսնին համար, գոչեց կըն-Քլիւպը  
միաձայն :

«Շատ ուսումնասիրեցին Լուսինը, շարունակեց Պար-  
պիքէյն. անոր զանգուածը, խտութիւնը, ծանրու-  
թիւնը, ծաւալը, կազմութիւնը, շարժմանը, հեռա-  
ւորութիւնն և արեգակնային աշխարհին մէջ ունեցած  
դերը կատարելապէս հասկուած ու ճշգրտած են . Լուս-  
նագրական քարտէսներ շինուած են այնպիսի կատա-  
րելութեամբ, որ երկրացոյց քարտէսներու կը հաւա-  
սարին և մինչեւ իսկ կը գերազանցեն զանոնք, լու-  
սանկարն ամենագեղեցիկ վորձերն հանեց մեր այդ  
Արբանեակին : Միով բանիւ, Լուսնի վրայ ինչ որ մա-  
թեմատիկէն, աստեղագիտութիւնն, երկրաբանութիւնն

ու տեսարանութիւնը կրնան ուսուցանել, գիտեմք .  
բայց մինչեւ ցարդ ուղղակի հաղորդակցութիւն երբէք  
չհաստատուեցաւ անոր հետ : »

Նախագահին այս խօսքն հետաքրքրութեան և  
զարմանաց բուռն շարժմամբ մ'ընդունուեցաւ :

« Ներեցէք ինձ, ըսաւ շարունակելով իւր խօսքն,  
յիշեցնել ձեզ համառօտիւ թէ ինչպէս քանի մ'ե-  
ռանդուն մարդիկ, երեւակայական ուղեւորութիւն-  
ներ ընելով, մեր Արբանեակին (լուսնի) գազանիքը  
թափանցել կարծեցին : Եթե՞նեւ տասներորդ դարուն  
մէջ, Դաւիթ Փապրիսիուս անուն անձ մը պարծեցաւ  
թէ լուսնին մէջ բնակիչներ տեսած է իւր աչօք :  
1649ին, Ժան Պոտուան անուն Ֆրանսացի մը գիրք մը  
հրատարակեց Ուղե-որո-նի-ն յաշխարհ լուսնի տարեւ-  
Դոնի կոնգրեսէ) յաշխարհի տարեւոր մակագրով : Նոյն  
դարու մէջ Սիրանոյ տը Պերժարք հրատարակեց այն  
հուշակաւոր արշաւանքն, որ այնչափ յաջողութիւն ու-  
նեցաւ Ֆրանսայի մէջ : Ժամանակէ մը յետոյ ուրիշ  
Ֆրանսացի մը, — այս մարդիկ շատ կ'զբաղին Լուս-  
նով, — Ֆոնթընէլ անուն, Բալտ-Քլիւպը Պերժարք  
գրեց, որ ժամանակին ընտիր գործերէն մին էր .  
բայց գիտութիւնն յառաջդիմելով ընտիր գործերն  
իսկ կը ջախջախէ : 1835ին միջոցները Նե-Եօրէ-  
+անէն թարգմանեալ տետրակ մը պատմեց թէ Սըր  
ճոն Հէրշել, աստղագիտական գննութիւններ ընելու  
համար Բարեյուսոյ հրուանդանը զրկուելով, կատա-  
րելագործեալ հեռացոյց դիտակի մը միջոցաւ Լուսնինը  
մինչեւ ութսուն եարտա իրեն մօտ բերած, և անոր  
մէջ որոյնպէս տեսած էր քարայրներ, որոց մէջ ձիա-  
գետիներ կ'ապրէին, կանաչադարդ և ոսկեճամուկ  
լեռներ, փղոսկրեայ եղջիւրներով ոչխարներ, սպի-  
տակ այծեամբներ, չղջկան պէս մաշկաթեւ բնակիչներ :

Այն տեսարակն, զոր Լոք անուն Ամերիկացի մը գը-



րած էր, մեծ յաջողութիւն ունեցաւ: Բայց շատ  
չանցաւ հասկցուեցաւ որ գիտնական խաղ մ'էր, և  
ամենէն առաջ Ֆրանսացիք ծիծաղեցան անոր վրայ:

— Ծիծաղել Ամերիկացւոյ մը վրայ, գոչեց ժ. Թ.  
Մասթոն, ահա պատերազմի պատճառ մը . . . :

— Անհող եղի՛ք, պատուական բարեկամս, Ֆրան-  
սացիք ծիծաղելէ առաջ կատարելապէս խարուեր էին  
մեր հայրենակցէն: Այս կարճաժամ պատմութիւնս  
աւարտելու համար պիտի աւելցնեմ թէ Ռութերտամցի  
Հանս Բֆալ անուն անձ մը, բորակածինէն (աղօթ),  
որ 37 անգամ ջրածին կաղէն թեթեւ է, հանուած  
կազով լցուած օգապարիկով մը Լուսնին քով հասեր է  
տասնեւինն օրէն: Այս ուղեւորութիւնն ալ՝ նախըն-  
թաց փորձերուն պէս՝ պարզաբար մտացածին էր,  
բայց Ամերիկայի մէջ ժողովրդականութիւն ունեցող  
մատենագրի մը, տարօրինակ ու հայեցող հանճարի  
մը, Էտկար Բօէի գործն էր:

— Հուրա՛ Էտկար Բօէի համար, գոչեց ժողովն Ե-  
լեքտրացեալ իւր նախագահին խօսքերէն:

« Աւարտեցի, ըսաւ Ետկարահն, այդ փորձերուն  
յիշատակութիւնը, զորս պարզապէս գրական պիտի  
կոչեմ, և որք կատարելապէս անբաւական են լուրջ  
յարաբերութիւններ հաստատելու գիշերային Լուսա-  
ւորին (լուսնի) հետ: Սակայն պարտիմ՝ յաւելցնել թէ  
քանի մը գործնական մտքեր փորձ փորձեցին լրջաբար  
հաղորդակցութեան մտնել անոր հետ: Ասկէց քանի  
մը տարի առաջ, Գերմանացի երկրաչափ մ'առաջար-  
կեց գիտնոց յանձնախումբ մը զրկել Սիպերիոյ անա-  
պատներն: Հոն, ընդարձակածաւալ գաշտերու մէջ  
երկրաչափական անհուն գծաձեւեր պիտի հաստա-  
տէին լուսաւոր ցոլացուցիչներու միջոցաւ, մասնաւո-  
րապէս քառակուսին և հակուղիղը, զոր Ֆրանսացիք  
ուսմկական լեզուով « Իչոց կամուրջ » կը կոչեն: Ամեն

մտացի էակ, կ'ըսէր այդ երկրաչափ, պարտի հաս-  
կընալ այդ գծաձեւին գիտնական նպատակը: Լուս-  
նաբնակներն, եթէ կան, նմանօրինակ գծաձեւով մը  
պիտի պատասխանեն, և անգամ մը որ հաղորդակ-  
ցութիւնն հաստատուի, այնուհետեւ դիւրին կը լինի  
այբուբեն մը հնարել, որ թոյլ տայ խօսակցիլ Լուսնոյ  
բնակչաց հետ: » Այսպէս կը խօսէր Գերմանացի երկ-  
րաչափը, բայց իւր ծրագիրը չգործադրեցաւ և մինչև  
այսօր բնաւ ուղղակի կապ մը չգոյացաւ երկրի և անոր  
Արբանեկին միջեւ: Ամերիկացւոց գործնական հանճա-  
րին վերապահուած է յարաբերութեան մտնել լուսա-  
ւորաց աշխարհին հետ: Ասոր հասնելու միջոցը պարզ,  
դիւրին, հաւաստի և անվրէպ է, և իմ առաջարկու-  
թեանս նիւթ պիտի լինի:

Այս խօսքերը ծափահարութեանց որոտումով մը,  
բացազանչութեանց փոթորիկով մ'ընդունուեցաւ:  
Ներկայ գտնուողաց մէջ չկար մէկն, որ ատենաբանին  
խօսքերէն չնուաճուէր, չձգուէր ու չյափշտակուէր:

« Մտիկ ըրէ՛ք, մտիկ ըրէ՛ք, լուսթիւն » գոչեցին  
ամեն կողմէ:

Երբոր յուզումն հանդարտեցաւ, Պարպիքէյն ա-  
ւելի ծանր ձայնիւ շարունակել սկսաւ իւր ընդմիջեալ  
ատենախօսութիւնը:

« Գիտէք, ըսաւ, ինչ յառաջդիմութիւն ըրած է  
ուսմաձգական գիտութիւնը քանի մը տարիէ ի վեր,  
և ինչ աստիճան կատարելութեան պիտի հասնէին  
հրազէններն՝ եթէ պատերազմը շարունակէր: Գիտէք  
նաեւ թէ, ընդհանուր կերպիւ, թնդանօթաց դիմա-  
դրրական ոյժն ու վաւօդին տարածական զօրութիւնն  
անասման են: Արդ, այս սկզբան յենով, հարցուցի  
ես ինձ թէ արդեօք ընդգիմութեան որոշ պայմաննե-  
րով հաստատեալ բաւական գործիքի մը միջոցաւ հնար  
չէ՞ ուն մը մը զրկել Լուսնին մէջ: »



Այս խօսքին վրայ ժողովականը ապշելով, ամենքը միաձայն « օ » գոչեցին . յետոյ պահ մը լուսթիւն տիրեց, նման այն խոր հանդարտութեան որ փայլակի որոտումներէն առաջ կը տիրէ : Եւ արդարեւ որոտումը փայլատակեց, բայց ծափահարութեանց, աղաղակաց և գոչմանց որոտում մը, որ ժողովին դահլիճը սարսեցուց : Նախագահը կուզէր խօսիլ և չէր կրնար : վերջապէս տասն վայրկեանէ յետոյ կըրցաւ իւր ձայնը լսելի ընել :

« Թողէք զիս որ խօսքս աւարտեմ, ըսաւ պաղ արեամբ : Էս խնդիրն իւր ամեն դէմքերով ձեռք առի, քաջարար ուսումնասիրեցի, և իմ անվիճելի հաշիւներէս կը հետեւի թէ մէկ մանրերկրորդի մէջ տասներկու հազար եարտա ( իբր 11,000 մէթրոյ ) արագութիւն ունեցող ռումբ մը, արձակուելով առ լուսին, հարկաւ պիտի կրնայ անոր հասնիլ : Ուստի, քաջ պաշտօնակիցք իմ, պատիւ կը համարիմ ինձ առաջարկել ձեզ որ այս փոքրիկ փորձն ընէք : »

ԳԼՈՒԽ Գ .

ԱՐԴԻԻՆՔ ԶԵԿՈՒՅՐԱՆ ՊԱՐՊԻՔԷՅՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ



Մննար է նկարագրել պատուարժան նախագահին վերջին խօսքերուն ըրած տպաւորութիւնն : Ի՛նչ գոչիւններ, ի՛նչ աղաղակներ, ի՛նչ շարունակութիւն մեմումանց, հուրաներու, հիւսիքներու և ամեն տեսակ անուանատեղծութեանց, որք առատ են Ամերիկեան լեզուին մէջ : Մնկարագրելի աղմուկ մը . բերանները կը գոչէին, ձեռքերը կը կայթէին, սարքերը դահլիճներուն տախտակամածը կը դղրդէին : Թընդանօթաց այս հանդիսարանին մէջ գտնուած բոլոր

հրազինութիւնը մէկանց պարպուելով չէին կրնար աւելի ուժգնապէս յուզել ձայնական ալիքներն : Եւ զարմանալի չէ այս . թնդանօթածիղներ կան, որք իրենց թնդանօթներէն աւելի պոռոտաձայն են :

Պարպիքէյն անվրդով կը կենար այս խանդավառ ժխորին մէջ : Գուցէ կուզէր տակաւին քանի մը խօսք ուղղել իւր պաշտօնակցաց, որովհետեւ իւր ձեռաց և դլխի շարժումներով լուսթիւն կը պահանջէր և իւր պայթուցիկ զանգակը բուռն որոտումներով մաշեցաւ, բայց և ոչ իսկ լսուեցաւ : Շատ չանցած, զինքը քաշեցին վար առին իւր աթոռէն, և յաղթանակաւ շրջաբերուելէ յետոյ, իւր հաւասարիմ ընկերաց ձեռքէն ոչ նուազ գրգռեալ բազմութեան մը թեւերուն մէջ անցաւ : Ոչինչ կրնայ զարմացնել Ամերիկացի մը : Յաճախ կրկնուած է թէ «անհնարին» բառը Ֆրանսերէն չէ . անշուշտ սխալած են բառգրքին վրայ : Ամերիկայի մէջ ամեն բան հեշտին, ամեն բան պարզ է . մեքենական դժուարութիւնը՝ ծնանելէ առաջ մեռած են : Պարպիքէյնի ծրագրին և անոր գործադրութեան միջեւ ոչ մի ճշմարիտ Եանքի յանձն չէր առնուր դժուարութեան մ'արտաքին երեւոյթն իսկ նըշմարել : Ասաց և եղեւ :

Նախագահին յաղթական շրջադայութիւնն երկար տեւեց իրիկունը : Զահերով պտոյտի ճշմարիտ հանդէս մ'էր : Իրլանտացիք, Գերմանացիք, Ֆրանսացիք, Սկովտացիք, այն ամեն տարասեռ անհատք, որոցմէ կը բաղկանայ Մէրիլանտի ժողովուրդն, իրենց մայրենի լեզուով կը գոչէին, և կեցցէները, հուրաները, պրավոյներն իրար կը խառնուէին անբացատրելի ցընձութեամբ :

Նոյն միջոցին լուսինը, կարծես հասկնալով որ խնդիրն իւր վրայ էր, զուարթ շքեղութեամբ մը կը փայլէր, նսեմացնելով շրջակայ աստղերն իւր հոծ



ճառագայթներով : Բոյոր Եանքիներն իրենց աչքն անոր շողշողուն սկառաակին կ'ուզղէին . ոմանք իրենց ձեռքովը կ'ողջունէին զայն , ոմանք ամենաքաղցր անուններ կուտային անոր , այլք աչքի հայեազքով կը չափէին զայն , ուրիշներ ալ կ'ուզուիով կ'սպառնային անոր : Ժամ ութէն մինչեւ տասներկուք ճոնս'ս-Ֆալլ փողոցի ակնոցագործ մը հարստացաւ ակնոց և գիտակ վաճառելով : Գիշերուան լուսաւորն ազնուական տիկնոջ մը պէս կը գիտուէր ակնոցներով ու հեռագիտակներով : Ամերիկացիք տիրոջ մը համարձակութեամբ կը վարուէին անոր հետ : Կարծես թէ խարտեաշն փեթէ այդ յանդուզն երկրակալներուն սեփականութիւնն եղած և արդէն Միացեալ-Նահանգաց հետ միացած էր : Եւ սակայն խնդիրն անոր ումբ մը հասցնելու վրայ էր . բաւական բիրտ եղանակ մը յարաբերութեան մտնելու մինչեւ իսկ արբանեակի մը հետ , բայց յոյժ գործածական քաղաքակիրթ ազգաց մէջ :

Կէս գիշերը զարկած էր , և ժողովրդեան խանդն ու ցնծութիւնն իջած չէր , ամեն դասերու մէջ կը շարունակէր նոյն ջերմութեամբ . դատաւորը , գիտնականը , վաճառականը , խանութպանը , բեռնակիրը , հանճարեղներն՝ ինչպէս նաեւ «կանանչ» (պարզամիտ ըստ Ամերիկացւոյ) մարդիկն՝ իրենց ամենէն վաճառակ ջիղերը ցնցուած կ'զգային , վասն զի խնդիրն ազգային ձեռնարկի մը վրայ էր . այս պատճառաւ քաղաքին բարձր թաղը , ցած թաղը , Բաթարպոյի շուրերով թրջեալ քարափներն և աւազաններուն մէջ բանտարկեալ նաւերը լի էին ուրախութեան ճինէ և Ռիսքիէ արբեայ բազմութեամբ . ամեն ոք կը խօսէր , կը ճառէր , կը վիճաբանէր , կը հաւանէր , կը ծափահարէր , սկսեալ սրճարանաց նստարանին վրայ իւր Չէրի-Քոպլէրի (տեսակ մ'ըմպելի) գաւաթին

առջեւ անհոգ տարածուած ճէնթըմէնէն մինչեւ ջրկիրն , որ Ֆէլս-Քօինթի տխուր գիներտուններուն մէջ կը գիտովար Գաս-Քօաթրին (կուրծք ջախջախող) կոչուած սարսափելի ըմպելիով :

Սակայն կէս գիշերն երկու ժամ անցնելէ յետոյ յուզումն հանդարտեցաւ : Պարպիբէյն նախագահը կարողացաւ իւր տունը մտնել , բեկեալ , ճմլեալ , տըրորեալ : Հերակլէս մ'իսկ չէր կրնար դիմանալ այնպիսի բուռն խանդի մը . բազմութիւնը քիչ քիչ քաշուեցաւ հրապարակներէն ու փողոցներէն . ՕՏիոյի , Սիւքուէհանայի , Ֆիլատէլֆիայի և Ուաշինկթոնի չորս երկաթուղիներն , որք Պալթիմորի հետ կը հաղորդակցին , նահանգներէն եկող ժողովուրդներն իրենց տեղերը դարձուցին և քաղաքն համեմատաբար հանդարտեցաւ :

Մնաց որ սխալ կը լինի կարծել թէ այս յիշատակաց արժանի երեկոյին մի միայն Պալթիմորի մէջ տեսնուեցաւ այս յուզումը : Միութեան մեծ քաղաքները , Նիւ-Եօրք , Պոսթոն , Ալպանի , Ուաշինկթոն , Րիչմընտ , Քրէսէնթ-Սիթի (Նոր-Օրլէան) Չարլսթոն , Մօպիլ , Թէքսասէն մինչեւ Մասաքիւսէթ , և Միհիկանէն մինչեւ Ֆլորիտ , ամենն ալ այս զառանցանքէն իրենց բաժինն առին : Եւ արդարեւ , կրն-Քիւպի երսուն հազար թղթակիցները գիտէին իրենց նախագահին նամակն , և հաւասար անհամբերութեամբ կ'սպասէին հոկտեմբեր 5ի հռչակաւոր զեկոյցին : Այս պատճառաւ , նոյն իրիկունը , նախագահին բերնէն հետզհետէ փախած խօսքերը մէկ կողմէ հեռագրաթերերով Միութեան նահանգներուն մէջէն կ'ընթանային , մէկ երկվայրկեանի մէջ 248,447 մղոն արագութեամբ (այս է ելեքտրականութեան արագութիւնը) : Կրնայ ըսուիլ ուրեմն բացարձակ ստուգութեամբ թէ նոյն վայրկեանին մէջ Ամերիկայի Միացեալ-Նա-



հանգներն, որք Յրանսայէն տասնապատիկ մեծ են, միաձայն մէկ հուրա՝ դոչեցին, և թէ քսանեհինգ միլիոն սիրտ, պարծանօք ուռած, նոյն զարկով բաբախեցին:

Հետեւեալ օրն հազար հինգ հարիւր օրաթերթ, շաբաթաթերթ, կիսամսաթերթ կամ ամսաթերթ, խնդիրը ձեռք առին ու քննեցին իւր ֆիզիքական, օդերեւութական, տնտեսական կամ բարոյական այլ և այլ տեղիներով, քաղաքական առաւելակշռութեան կամ քաղաքակրթութեան տեսակէտով: Հարցուցին իրենք իրենց թէ արդեօք Ղուսինը կատարեալ աշխարհ մ'էր, և բնաւ որ և է փոփոխութիւն մը չէր կրած: Արդեօք մթնոլորտ չկեցած ժամանակ երկրիս ունեցած միճակի՞ն կը նմանէր: Արդեօք ի՞նչ տեսարան կը ներկայէր երկրական գունտին անտեսանելի եզրը այդ դէմքը: Թէպէտ առ այժմ գիշերուան լուսաւորին ուռմբ մը միայն զրկելու խնդիր կար, ամեն մարդ չուկէտ մը կը նկատէր զայս շատ մը փորձերու, ամենքն ալ կը յուսային նոր օր մը Ամերիկա պիտի թափանցէր այդ գաղտնախորհուրդ սկաւառակին վերջին դաղտնիքն, և սմանք երկիւղ իսկ կ'զգային որ անոր տիրելն զգալի կերպիւ չաւրէր եւրոպական հաւասարակշռութիւնը:

Երագրին վրայ միճաբանուելով, ոչ մի լրագիր կատարած չյայտնեց անոր իրականացման վրայ. տեսարակներն, հաւաքածոյները, մանրաթերթերն և գիտնական գրական կամ կրօնական «չտեմարաններն» անոր առաւելութիւնները ցոյց տուին, և Պոսթոնի «Բնական Պատմութեան Ընկերութիւնն», Ալպանիի «Գիտութեանց և արուեստից Ամերիկեան Ընկերութիւնը», Նիւ-Եորքի «Աշխարհագրական և Վիճակագրական Ընկերութիւնը», Ֆիլատելֆիոյ «Ամերիկեան ֆիլիսոփայական Ընկերութիւնն», Ուաշինկթոնի

«Սիթիսոնեան վարժարանն», իրենց խնդակցութիւնն յուղարկեցին կրն-Բլուպին, դրամոյ և ծառայութեան անմիջական նպաստներ առաջարկելով:

Վերջապէս, կրնայ ըսուիլ թէ երբէք առաջարկ մ'այսչափ հաւանող դտած չէր. վարանում, կասկած կամ անվստահութիւն բնաւ չտեսնուեցաւ: Իսկ ծաղրաբանութիւնները, ծաղրանկարներն և ծաղրական երգերն, որովք Եւրոպիոյ և մասնաւորապէս Յրանսայի մէջ պիտի ընդունուէր Ղուսինն ուռմբ մը զրկելու գաղափարն, յոյժ փաստակար պիտի լինէին իրենց հեղինակներուն. աշխարհի բոլոր պաշտպանողական զէնքերը չէին կրնար պահպանել զանոնք ընդհանուրին սրտմոտութեան դէմ: Սոյնպիսի բաներ կան, որոց վրայ կարելի չէ ծիծաղիլ նոր աշխարհի մէջ:

Իմբէյ Պարպիքէյն, այս օրէն ի վեր Միացեալ-Նահանգաց ամենէն մեծ քաղաքացիներէն մին եղաւ, գիտութեանց Ուաշինկթոնին պէս բան մը: Շատերու մէջէն իրողութիւն մը միայն բաւական է ցուցնելու թէ ժողովրդի մը յանկարծ մէկ մարդու մը յարելը մինչեւ ո՛ր կը համէր:

Կրն-Բլուպի հոչակաւոր նիստէն քանի մ'օր վերջն, անդրիական թատերախմբի մը տնօրէնը ծանոյց թէ Պալթիմորի թատրոնին մէջ Շէյքսպիրի Բալաւտի վան ռուէ կատակերգութիւնը պիտի ներկայացուէր: Քաղաքին ժողովուրդն այս ծանուցման մէջ Պարպիքէյն նախազահին առաջարկին դէմ վիրաւորիչ ակնարկութիւն մը տեսնելով, թատրոնը կոխեց, նրստարանները խորտակեց, և ծանուցումը փոխելու հարկադրեց դժբաղդ տնօրէնը: Սա ալ, իբրեւ մտացի մարդ, խոնարհելով հանրական կամաց առջեւ, այն ձախող կատակերգութեան տեղ Շէյքսպիրի Ինչպէս որ հաճոյ Բոնէ յեւ կատակերգութիւնը ներկայացուց, և քանի մը շաբաթ շարունակելով ամբաւ դրամ չահեցաւ:



ՔԷՄՊՐԻՃԻ ԴԻՏԱՐԱՆԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Սակայն Պարպիքէյն նախագահն իրեն եղած արտասովոր պատիւներուն մէջ վայրկեան մ'իսկ չկորսնցուց : Իւր առաջին գործն եղաւ իւր պաշտօնակիցները գումարել կըն-ֆլիւպի գրասենեակներուն մէջ, և հոն բաւական վիճարանութենէ յետոյ որոշուեցաւ աստեղագիտաց կարծիքն հարցնել առաջարկեալ ձեռնարկին աստեղագիտական մասին վրայ : Անոնց պատասխանն առնուելէ յետոյ մեքենական միջոցներուն վրայ պիտի վիճարանուէր, և այս մեծ փորձին յաջողութիւնն ապահովելու համար բան մը չպիտի զանց առնուէր :

Խնդրոյն ամեն կէտերը ճշգրտ յատուկ ծանուցագիր մը պատրաստուեցաւ հարցումներ պարունակող և Մասաչիւսէթի մէջ հաստատեալ Քէմպրիճի դիտարանին ուղղուեցաւ : Այս քաղաքն, ուր Միացեալ-Նահանգաց առաջին ճեմարանն հիմնեցաւ, արդարապէս հռչակաւոր է իւր աստեղագիտական դիտարանով : Անդ ժողովեալ կը գտնուին ամենաբարձր արժանիք ունեցող դիտնականք, անդ կը գործածուի այն հզօր դիտակն, որ թոյլ տուաւ Պոնտի (աստղագէտ) գտնել Անդրոմեդի համաստեղութիւնն, և Քլարքի այժնիկ աստեղ արբանեակն . հետեւաբար՝ այդ հռչակաւոր հաստատութիւնն ամեն մասամբ կարգարօցընէր կըն-ֆլիւպի վասահութիւնն : Երկու օր վերջը, Քէմպրիճի դիտարանէն անհամբերութեամբ սպասուած պատասխանն հասաւ Պարպիքէյն նախագահին ձեռքն :

Աւասիկ պատճէկը .

Քէմպրիճի դիտարանին Տնօրէնն — Նիւտոն կըն-ֆլիւպի  
ի Պալէիսթր .

Քէմպրիճ 7 հոկտ.

« Ստանալով ձեր հոկտ. 6 թուով պատուական նա-  
« մակն ուղղեալ առ դիտարանն Քէմպրիճի յանուն  
« անդամոց կըն-ֆլիւպին Պալթիմորի, մեր դիւանն  
« անմիջապէս գումարեցաւ և պատշաճ դատեց հե-  
« տեւեալ կերպիւ պատասխանել :

« Իրեն առաջարկեալ խնդիրներն ասոնք են .

« 1. Հնար է ուսմբ մը զրկել Լուսնին մէջ :

« 2. Ի՞նչ է երկրիս իւր արբանեակէն ունեցած ճիշդ  
« հեռաւորութիւնն :

« 3. Ո՞րչափ ժամանակէն կրնայ պէտք եղածին չափ  
« սկզբնական արագութիւն ունեցող ուսմբ մը Լուսնին  
« հասնիլ, հետեւաբար ո՞ր ժամանակ պէտք է ուսմբն  
« արձակել, որպէս զի որոշեալ կէտի մը մէջ պատահի  
« Լուսնին :

« 4. Ո՞ր ժամանակ Լուսնը նպաստաւոր դիրքի մը  
« մէջ պիտի ներկայանայ, որպէս զի ուսմբն անոր  
« գարնուի :

« 5. Երկնից ո՞ր կէտին պէտք է ուղղել ուսմբն ար-  
« ձակելու սահմանեալ թնդանօթը :

« 6. Լուսնն երկնից ո՞ր կէտին վրայ պարտի  
« գտնուիլ ուսմբին արձակուած վայրկենին : »

« Առաջին հարցման վրայ թէ « Հնար է ուսմբ մը  
« զրկել Լուսնին մէջ .

« — Այո՛, հնար է ուսմբ մ'արձակել Լուսնին մէջ,  
« եթէ մէկ մանրերկրորդի մէջ տասներկու հազար  
« եարտա սկզբնական արագութիւն կարենայ տրուիլ  
« այն ուսմբին : Հաշիւը կ'ապացուցանէ թէ այս արա-  
« գութիւնը բաւական է : Քանի որ ուսմբն երկրէն  
« հեռանայ, ծանրութեան ներգործութիւնը կը նը-  
« ւազի հեռաւորութեան քառակուսոյն խտտորնակ



« համեմատութեամբ, այսինքն թէ՛ եռապատիկ աւել-  
 « լի հեռաւորութեան մը համար այդ ներգործութիւն  
 « իննպատիկ նուազ զօրաւոր է : Հետեւաբար ուումբին  
 « ծանրութիւնն արագաբար կը նուազի, և վերջապէս  
 « բորբոքվին կ'ոչնչանայ այն միջոցին որ Լուսինն ձգու-  
 « ղութիւնն հաւասարակչութիւնը երկրի ձգողութեան հետ,  
 « այն է՝ ճանբուն 47/32րդն հասած միջոցին : Այն ժա-  
 « մանակ ուումբը բնաւ ծանրութիւն չունենար, և ե-  
 « թէ այն կէտն անցնի, Լուսինն վրայ կ'իյնայ մի մի-  
 « այն Լուսնական ձգողութեան ուժով : Ուրեմն վոր-  
 « ձին տեսական հնարաւորութիւնը բացարձակապէս  
 « ապացուցեալ է . իսկ յաջողութիւնը՝ գործածուելիք  
 « թնդանօթին զօրութենէն միայն կախումն ունի :

« Երկրորդ հարցման վրայ թէ ի՞նչ է Երկրիս իւր  
 « արբանեակէն ունեցած ճիշդ հեռաւորութիւնը :

«— Լուսինն Երկրիս շուրջը կ'որ շրջանակ չկազմեր,  
 « այլ ձուածել մը, որոյ վառարաններէն մին մեր եր-  
 « կրագունտը կը գրաւէ . ասոր հետեւանքն է որ Լու-  
 « սինը մերթ կը մօտենայ Երկրիս, և մերթ կը հեռա-  
 « նայ, կամ աստեղագիտաբար խօսելով, մերթ իւր  
 « հեռակէտին մէջ կը գտնուի, մերթ մերձակէտին :  
 « Այդ՝ իւր առաւելագոյն և նուազագոյն հեռաւորու-  
 « թեան միջեւ եղած տարբերութիւնը՝ միջոցին մէջ  
 « բաւական մեծ լինելով՝ անտես չկրնար լինիլ : Եւ ար-  
 « դարեւ, Լուսինն իւր հեռակէտին մէջ 247,332 մղոն  
 « հեռի է Երկրէն, իսկ մերձակէտին մէջ 218,657 մղոն  
 « միայն, որ 28,895 մղոնի, կամ բոլոր ճանբուն մէկ  
 « իններորդէն աւելի տարբերութիւն մը կ'ընէ : Ուրեմն  
 « Լուսինն մերձակէտական հեռաւորութիւնը պէտք է  
 « հաշուոյ հիմ բռնել :

« Երրորդ հարցման վրայ թէ « ո՞րչափ ժամանակէն  
 « կրնայ պէտք եղածին չափ սկզբնական արագութիւն  
 « ունեցող ուումբ մը Լուսինն հասնիլ, հետեւաբար ո՞ր

« ժամանակ պէտք է ուումբն արձակել, որպէս զի ո-  
 « րոշեալ կէտի մը մէջ պատահի Լուսինն :

« — Եթէ ուումբն անսահմանաբար պահէր մէկ  
 « մանրերկրորդի մէջ տասներկու հազար եարտա գնա-  
 « ՚լու սկզբնական արագութիւնն, ինն ժամէն կրնար  
 « հասնիլ իւր երթալիք տեղը, բայց որովհետեւ այս  
 « սկզբնական արագութիւնը քանի երթայ պիտի նուա-  
 « զի, ամեն հաշիւ ընելով կը գտնուի որ ուումբն երեք  
 « հարիւր հազար մանրերկրորդի, այսինքն ութսուն  
 « երեք ժամու և քսան վայրկենի մէջ պիտի կրնայ հաս-  
 « նիլ այն կէտն, ուր երկրական և լուսնական ձգողու-  
 « թիւնը հաւասարակչին, և այն կէտէն Լուսնի վրայ  
 « պիտի իյնայ յիսուն հազար մանրերկրորդի կամ  
 « տասներեք ժամու յիսուն երեք վայրկենի և քսան  
 « մանրերկրորդի մէջ : Ուրեմն պատշաճ կը լինի որ  
 « Լուսինն նշանագրեալ կէտն հասնելէն իննսուն և եօթն  
 « ժամ տասներեք վայրկեան և քսան մանրերկրորդ-  
 « առաջ արձակուի ուումբը :

« Զորորդ հարցման վրայ թէ ո՞ր ժամանակ Լու-  
 « սինը նպաստաւոր դիրքի մը մէջ պիտի ներկայանայ,  
 « որպէս զի ուումբն անոր զարնուի :

« — Ինչպէս որ վերն ըսուեցաւ, պէտք է նախ  
 « ընտրել այն ժամանակն ուր Լուսինն իւր մերձակէ-  
 « տին մէջ լինի, և միանգամայն այն վայրկեանն ուր  
 « նա գագաթնակէտն անցնի, որով ուումբին ճանբան  
 « երկրական շառաւիղին հաւասար հեռաւորութեամբ  
 « եւս կը կարճնայ, այսինքն երեք հազար ինն հարիւր  
 « տասն և ինն մղոն, այնպէս որ վերջնական ուղեու-  
 « թութիւնը կը լինի 214,976 մղոն . բայց թէեւ Լու-  
 « սինն ամեն ամիս իւր մերձակէտը կ'անցնի, նոյն մի-  
 « ջոցին զագաթնակէտն ալ չգտնուիլ միշտ . այլ երկար  
 « ժամանակամիջոց մը պէտք է անցնի, որպէս զի այս  
 « երկու պայմաններուն մէջ միանգամայն գտնուի : Ու-



«րեմն պէտք կը լինի սպասել մերձակէտին և գազաթ-  
«նակէտին մէջ անցնելու զուգադիպութեան :

«Արդ, բարեբաղդ պարագայով մը, յառաջիկայ  
«տարւոյն դեկտեմբեր 4ին Ղուսինն այս երկու պայ-  
«մանները պիտի ընծայէ . կէս գիշերուն լիւր մերձա-  
«կէտին մէջ պիտի գտնուի, այսինքն երկրէս ամենէն  
«կարճ հեռաւորութեան մէջ, և միանգամայն գա-  
«զաթնակէտէն պիտի անցնի :

«Հինգերորդ հարցման վրայ թէ «Ռումբն արձա-  
«կելու սահմանեալ թնդանօթն երկնից ս'ը կէտին  
«պէտք է ուղղել .

«—Նախընթաց դիտողութեանց ընդունուելէն յե-  
«տոյ, թնդանօթը պէտք է տեղւոյն գազաթնակէ-  
«տին(\*) վրայ ուղղուի, այս կերպիւ ռմբաձգութիւնն  
«ուղղահայեաց կը լինի հորիզոնի մակարդակին, և  
«ռումբն արագապէս կը թաքչի և դերձ կը մնայ երկ-  
«րական ձգողութեան ազդեցութենէն : Բայց որպէս  
«զի Ղուսինը տեղւոյ մը գազաթնակէտն ելնէ, պէտք  
«է որ այն տեղը Ղուսինն հակումէն աւելի բարձր  
«լայնութեան աստիճանի մէջ չգտնուի, այսինքն հիւ-  
«սիսային կամ հարաւային լայնութեան 0 և 28 աս-  
«տիճանին մէջ տեղը լինի : Ուրիշ ո՛ր և է կողմ, ուրմ  
«բաձգութիւնն հարկաւ շեղ պէտք է լինի, և այս կը  
«մլառէ գործին յաջողութեան :

«Վեցերորդ հարցման վրայ թէ Ղուսինն երկնից  
«ս'ը կէտին վրայ պարտի գտնուիլ ռումբին արձակ-  
«ուած վայրկենին .

«—Երբոր ռումբը միջոցին մէջ արձակուի, Ղու-  
«սինն, որ ամեն օր տասներեք աստիճան, տասն վայր-  
«կեան և երսուն և հինգ մանրերկրորդ յառաջ կը  
«քալէ, այս թիւէն քառապատիկ աւելի հեռացած

(\*) Գազաթնակէտն երկնից այն կէտն է, որ դիտողի մը  
զլիսուն վրայ կը գտնուի ուղղահայեաց կերպիւ :

«պիտի գտնուի գազաթնակէտէն, այնքէ յիսուն եր-  
«կու աստիճան, քառսուն երկու վայրկեան և քսան  
«մանրերկրորդ, միջոց մը, որ կը համապատասխանէ  
«ռումբին ուղեւորութեան տեւած միջոցին Ղուսինն  
«ընելիք ուղեւորութեան : Բայց որովհետեւ պէտք է  
«նաեւ ի հաշիւ առնուլ այն խոտորումը՝ զոր երկրիս  
«թաւալումն ընել պիտի տայ ռումբին, և որովհետեւ  
«ռումբը չպիտի կրնայ հասնիլ Ղուսինն մինչեւ որ եր-  
«կրական տասնևվեց շառաւիղներու հաւասար հեռա-  
«ւորութեամբ չխոտորի, և այս խոտորումն ալ Ղուսինն  
«չըջանին վրայ համբերով տասն և մէկ աստիճանի չափ  
«կ'ընէ, պէտք կը լինի այդ տասն և մէկ աստիճանն  
«ալ աւելցնել այն աստիճաններուն վրայ, զորս Ղուսինն  
«արդէն յիշուած յապաղումը կը յայտնէ, այն է վաթ-  
«սուն և չորս աստիճան՝ կտր թուանշանով : Ուրեմն,  
«ռումբն արձակելու պահուն, առ Ղուսինն տարուած  
«տեսողական շառաւիղը տեղւոյն ուղղահայեացին հետ  
«վաթսուն և չորս աստիճանի անկիւն մը կը կազմէ :

«Ասոնք են ահա կրն—Բիւլւպի անդամոց կողմէ  
«Քէմպրիճի դիտարանին առաջարկեալ հարցմանց պա-  
«տասխաններն, որոց եզրակացութիւնն է .

«1. Թնդանօթը պէտք է հիւսիսային կամ հարա-  
«ւային լայնութեան 0 և 28 աստիճաններուն մէջ տե-  
«ղը գտնուած երկրի մը մէջ զետեղի :

«2. Տեղւոյն գազաթնակէտին վրայ պէտք է ուղ-  
«ղուի :

«3. Ռումբը պէտք է մէկ մանրերկրորդի մէջ տասն  
«երկու հազար եարտա երթալու սկզբնական արագու-  
«թիւն ունենայ :

«4. Պէտք է յառաջիկայ տարւոյն դեկտեմբեր 1ին  
«արձակուի ժամը տասն և մէկին տասներեք վայրկեան  
«և քսան մանրերկրորդ մնալով :

«5. Իւր արձակուելէն չորս օր վերջը՝ դեկտեմբեր



«Կին ճիշդ կէս գիշերուն՝ Լուսինն պիտի պատահի՝ այն «միջոցին՝ ուր նա գազաթնակէտն անցնի :

«Ուրեմն կըն—Քլիւպի անդամք պարտին անյապաղ «այդպիսի ձեռնարկութեան մը հարկաւոր եղած աչ- «խատուութիւններն սկսիլ, և որոշեալ ժամուն գործելու «պատրաստ գտնուիլ, վասն զի, եթէ դեկտեմբեր 4ի «թուականն անցնի, տասն և ութ տարի և տասն և «մէկ օր պէտք է սպասեն, որպէս զի Լուսինը վերըս- «տին նոյն մերձակէտի և գազաթնակէտի պայմաններ «րուն մէջ գտնեն :

«Քէմպրիճի դիտարանին դիւանն ինքզինք կատա- «րելապէս կըն—Քլիւպի անդամոց տրամադրութեան «ներքեւ կը դնէ տեսական աստեղագիտութեան վե- «րաբերեալ խնդրոց համար, և ներկայիւս կը խըն- «դակցութիւնը կը կցորդէ բովանդակ Ամերիկայի խըն- «դակցութեան ,

« Ժ. Մ. ՊէլՅԱՍԹ

«Տնօրէն Գիտարանին Քէմպրիճի.»

ԳԼՈՒԽ Ե .

ԼՈՒՍՆԻՆ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆԸ

— 0 —

Ամենասուր տեսութեամբ բարեմասնեալ դիտող մը, կենարով այն անձանթ կեդրոնն, որոյ շուրջը կը դառ- նայ աշխարհ, կրնար տեսնել այն միլիոնաւոր հիւլէ- ներն, որք միջոցը լցուցած էին երբոր տիեզերքս քա- ոս մ՝ էր : Բայց քիչ քիչ, դարերուն հետ փոփոխու- թիւն մը յառաջ եկաւ, ձգողական օրէնք մը երեւան ելաւ, որուն հնազանդեցան մինչեւ ցայնժամ թափա- ռող հիւլէներն, և իրենց յարամերձութեան համե- մատ միմեանց հետ բազադրուելով մասնիկներ եղան,

և ձեւացուցին այն ամպամած մանր աստղիկներու բոյ- լերն, որք երկնից խորերուն մէջ ցանեւցիւր սփռեալ են :

Այն ամպամածները՝ շատ շանցած՝ իրենց կեդրո- նական կէտին շուրջը թաւալելու շարժում մ՝ ստացան կեդրոնը, տարտամ մասնիկներէ կազմուած, սկսաւ իւր վրայ դառնալ՝ հետզհետէ խտանալով . և մեքե- նականութեան անփոփոխ օրինաց համեմատ, քանի որ իւր զանգուածը խտանալով կը պզտիկնար, թաւալա- կան շարժումն արագութիւն կ'ստանար, և այս երկու արդիւնք յարատեւելով՝ գլխաւոր աստղ մը գոյացաւ, և եղաւ կեդրոն ամպամած բոյլին :

Գիտողն, ուշադրութեամբ նայելով, կրնար այն ժամանակ տեսնել որ ամպամածին միւս մասնիկներն ալ կեդրոնական աստղին ընթացքը կը բռնէին . անոր պէս կը խտանային հետզհետէ արագութիւն ստացող թաւալական շարժմամբ, և անթիւ աստղերու ձեւով անոր շուրջը կը դառնային : Մանր աստղերու ամպա- մածները, զորս աստղագէտք այժմ հինգ հազարի մօտ կը համրեն, կազմուած էին :

Այս հինգ հազար ամպամած բոյլերուն մէջ մէկ հատ մը կայ, զոր մարդիկ Յարդգող կամ Ծիր-կաթին անուանեցին, որ տասն և ութ միլիոն աստղ կը պա- րունակէ, յորոց իւրաքանչիւրն արեգակնային աշխարհի մը կեդրոն եղած է :

Եթէ դիտողն այն ժամանակ յատկապէս զննէր այդ տասնեւութ միլիոն աստեղաց ամենէն համեստ և նը- ւազ փայլուններէն մին(\*), չորրորդ կարգի աստղ մը, որ ամբարտաւանութեամբ Արեւ կը կոչուի, տիեզե- րաց կազմութեան առիթ եղող ամեն երեւոյթներն հետզհետէ կը կատարուէին իւր աչաց առջեւ :

(\* ) Ծնիկ աստղ արամազիճն, ըստ Վոլասթոնի, Արեւ- ւուն արամազիճէն տասներկու անգամ մեծ է, այն է 4 միլիոն 300,000 փարսախ :



Եւ արդարեւ, Արեւը դեռ կազային վիճակի մէջ եւ զած և շարժուն մասնիկներէ բաղկացած ժամանակ, դիտողը պիտի տեսնէր զայն որ իւր կեդրոնացման գործն ի գլուխ հանելու համար իւր առանցքին վրայ կը դառնար: Այս շարժումը, մեքենական օրինաց համեմատ արագութիւն պիտի ստանար իւր զանգուածին պզտիկնալուն հետ, և վայրկեան մը պիտի դար, ուր կեդրոնախոյս զօրութիւնը պիտի յաղթէր կեդրոնածիզ զօրութեան, որ մասնիկները դէպի կեդրոն մղելու կը ձկտի:

Այն ժամանակ ուրիշ երեւոյթ մը պիտի ներկայանար դիտողին աչաց, և հասարակածի մակարդակին մէջ կեցած մասնիկներն՝ յանկարծակի բրդած պարսառիկի մը քարին պէս պիտի երթային Արեւին շուրջը բազմաթիւ համակեդրոն մանեակներ ձեւացնելին՝ նման Երեւակի մանեակներուն: Եւ այդ մասնիկներէ բաղկացեալ մանեակները կեդրոնական մարմնոյն շուրջը թաւալական շարժումէ մը բռնուելով՝ պիտի խորտակուէին ու երկրորդական մանր աստղերու՝ այն է մոլորակներու պիտի փոխարկուէին:

Եթէ այն ժամանակ գիտողն իւր բոլոր ուշադրութիւնն այդ մոլորակաց վրայ ամփոփէր: պիտի տեսնէր որ ճշդիւ Արեւուն պէս պիտի շարժէին, և մէկ կամ բազմաթիւ մասնակազմ մանեակներ պիտի ծընանէին, որոցմէ պիտի գոյանային այն ստորին կարգի աստղերն որք Արբանեակ կը կոչուին:

Այսպէս ուրեմն, հիւլէն մասնիկի, մասնիկն ամպամածի, ամպամածը բոյլի, բոյլը համաստեղութեան, համաստեղութիւնը գլխաւոր աստեղ, գլխաւոր աստղն Արեւու, Արեւը մոլորակի, և մոլորակն ալ արբանեակի վերածուելով, աշխարհի սկիզբէն ի վեր երկնային մարմնոց կրած կերպարանափոխութեանց բոլոր դասակարգը կը տեսնուի:

Արեւը կորսուած կը թուի աստղական աշխարհին անհունութեան մէջ, և սակայն գիտութեան արդի տեսութիւններով կապուած է Յարդգողի համաստեղութեան: Կեդրոն աշխարհի մը, և որչափ փոքր երեւի եթերային վերնագաւառաց միջավայրին մէջ, սակայն և այնպէս խիստ մեծ է. վասն զի իւր մեծութիւնն Երկրի մեծութենէն մէկ միլիոն չորս հարիւր հազար անգամ արեւի է: Իւր շուրջը կը դառնան ութ մոլորակք, որք արարչութեան առաջին ժամանակներն իւր ընդերքէն ելած են: Այս մոլորակներն են, ամենէն մօտաւորէն ամենէն հեռաւորն երթալով՝ Փայլածու, Արուսեակ, Երկիր, Հրատ, Լուսնթազ, Երեւակ, Ռւրանոս և Պոսիդոն: Հրատին և Լուսնթազին մէջ տեղն ալ ուրիշ նուազ մեծ մարմիններ կը յաճին կանոնաւորապէս, որք գուցէ խորտակուելով հազարաւոր կտորներ եղած աստղի մը թափառիկ բեկորներն են, որոց ութսուներկուքը ճանչած է մինչեւ այսօր հեռագիտակը:

Ռմանք այս ծառայներէն (մոլորակներէն), զորս Արեւն իրենց թերատական (ձուածել) շրջանին մէջ կը պահէ ծանրութեան մեծ օրինօք, իրենք ալ արբանեակներ օւնին, Ռւրանոս ութ հատ, Երեւակ ութ, Լուսնթազ չորս, Պոսիդոն թերեւս երեք, Երկիր մէկ: Այս վերջինն, որ արեգակնային աշխարհին նուազ կարեւորներէն մին է, Լուսին կը կոչուի, և սա է ահա որուն Ամերիկացոց յանգուզն հանճարը տիրել կուզէր:

Գիշերաց աստղը (Լուսին), իւր յարաբերական մօտաւորութեամբն և իւր զանազան երեւոյթներուն արագապէս վերանորոգման տեսարանովը՝ ի սկզբան Արեւուն հետ հաւասարապէս գրաւեց Երկրի բնակչաց ուշադրութիւնը. բայց Արեւը նայողին աչքը կը յոգնեցնէ, և զինքը գիտողներն աչեքնին խոնարհե-



ցընելու կը հարկադրին անոր ճառագայթից պայծառութենէն :

Խարտեաչն փեթէ , ընդհակառակն , աւելի մարդասէր լինելուն , հաճութեամբ թոյլ կուտայ տեսնել զինքն իւր համեստ գեղեցկութեամբ . քաղցր է աչաց , քիչ փառասէր , և սակայն կը համարձակի երբեմն խաւարեցնել իւր եղբայրը , բոցաճաճանչն Ապողոն , առանց երբէք նա զինքը խաւարեցնելու : Մահմետականք հասկցան այն շնորհակալութիւնը , զոր կը պարտէին Երկրի այդ հաւատարիմ բարեկամին , և իրենց ամիսն անոր շրջանին վրայ կանոնաւորեցին (\*) :

Աշխարհի առաջին ազգերն յատկապէս պաշտօն կը մատուցանէին այս ողջախոհ դիցուհւոյն : Եգիպտացիք իրիս կ'անուանէին զայն Փիւնիկեցիք Աստարտէ . Յոյնք փեթէ անուամբ պաշտեցին զայն , դուստր Լատոնայի և Դիոսի , և անոր խաւարումներն՝ Արտեմիսի առ գեղանին Էնդիմիոն տուած խորհրդաւոր այցելութեամբք կը մեկնէին : Դիցարանական պատմութեանց խօսքին նայելով , Նէմեան առիւծը պտըտեր է Լուսնի դաշտերն՝ Երկրի վրայ երեւնալէն առաջ , և Ագեսիանաքս բանաստեղծը , զոր կը յիշէ Պլուտարքոս , հռչակած է իւր տաղերուն մէջ անոր քաղցր աչերը , գեղեցիկ քիթն և այն սիրուն բերանն , որ պաշտելի Սելինային (Լուսնի) լուսաւոր մասերէն կազմուած է :

Բայց թէ եւ հիները լաւ հասկցան Լուսնին բարքը , բնաւորութիւնը , միով բանիւ՝ բարոյական հանդամանքը դիցարանական տեսակէտով , մէջերնէն ամենէն գիտուններն յոյժ ազէտ մնացին Լուսնազըրութեան մէջ :

Սակայն հին ժամանակաց աստղագէտներէն ոմանք

(\*) Քսան եւ ինն ու կէս օրի չափ :

ինչ ինչ մասնաւոր պարագաներ գտած են , որք այսօր հաստատուած են : Եթէ Արկադիացիք ըսին թէ իրենք Երկրի վրայ բնակած են այն ժամանակներն՝ ուր Լուսինը դեռ գոյութիւն չունէր , եթէ Սիմպլիկիոս՝ Լուսինն երկնից բիւրեղեայ գմբեթին անշարժ կապուած կարծեց , եթէ Տատիոս՝ Արեւուն սկաւառակէն բըրդած հատուած մը նկատեց զայն , եթէ Կլէարքոս՝ Արիստոտելի աշակերտը՝ յղկեալ հայելի մը համարեցաւ զայն , որոյ վրայ Ովկիանոսի պատկերը կը ցլանար , եթէ վերջապէս ուրիշներ ալ Երկրէն վերածխեալ գոլորշիներու կոյտ մը կամ իւր վրայ դարձող կէս հրեղէն և կէս սառեղէն գունտ մը կարծեցին զայն , քանի մը գիտնականք , մի միայն իրենց հանճարեղ զննութեամբք , վասն զի տեսարանական գործիքներ ( հեռագիտակ և այլն ) չկային այն ժամանակ , կասկածեցին այն օրինաց մեծ մասն՝ որք կը կառավարեն գիշերային աստղը : Թաղէս Միլետացի , Քրիստոսէ 460 տարի առաջ կարծիք յայտնեց թէ Լուսինն Արեւէն կը լուսաւորի : Արիստարքոս Սամեցի՝ Լուսնոյ երեւոյթներուն ճշմարիտ բացատրութիւնները տուաւ : Կլէոմենէս ուսոյց թէ ցողացեալ լուսով մը կը փայլէր . Բերոզ քաղաքացին գտաւ որ Լուսնին թաւալական շարժումն հաւասար էր անոր շրջանական կամ տեղափոխական շարժման , և այս կերպիւ բացատրեց թէ Լուսինը միշտ նոյն դէմքը կը ներկայէ : Վերջապէս Հիպպարքոս , քրիստոնէական թուականէն երկու դար առաջ , քանի մը անհաւասարութիւններ գտաւ Երկրի արբանեակին յայտնի շարժմանց մէջ :

Այս գանազան դիտողութիւնք հաստատուեցան յետոյ և օգտակար եղան նոր աստղագիտաց : Պտղոմէոս երկրորդ դարու մէջ , և Ապուլ-Վէֆա Արաբացին տասներորդ դարու մէջ ամբողջացուցին Հիպպարքոսի դիտողութիւնները Լուսնի կրած անհաւասարութեանց



վրայ, երբոր իւր շրջանին անհարթ գծին կը հետեւի Սրբուհի ներգործութեան ներքեւ : Ապա կոպերնիկ, հնդեասասներորդ դարու մէջ, և թիքոյ Պրահէ վեյտասաներորդ դարու մէջ կատարելապէս ցոյց տուին աշխարհի դրութիւնն և լուսնի խաղաղ գերն երկնային մարմնոց բովանդակութեան մէջ :

Այդ դարերու մէջ լուսնի շարժմունքը գրեթէ ճշդիւ հասկցուած էին, բայց անոր ֆիզիքական կազմութիւնը քիչ ծանօթ էր : Այն ժամանակ Գալիլէոս լուսնին ինչ ինչ տեսիլներուն մէջ արտադրեալ լուսոյ երեւոյթները լեռներու գոյութեամբ մեկնեց՝ չորս հազար հինգ հարիւր գրկաչափ միջին բարձրութիւն տալով անոնց :

Անոր ետեւէն, Հելվելիոս Տանձիկցի աստղագէտ մը, երկու հազար վեց հարիւր գրկաչափի իջուց ամենէն մեծ բարձրութիւնները, բայց իւր Ռիչիոլի պաշտօնակիցն եօթն հազարի հանեց :

Ութեւասաներորդ դարուն վերջը, Հէրշել, զինեալ հղօր հեռադիտակով մը, գարմանայի կերպով նուազեցուց նախնեթաց չափերը : Հազար ինն հարիւր գրկաչափի իջուց : բայց Հէրշել ալ կը սխալէր . և Շրոթերի, լուսիլլի, Հալլէյի, Նասմիթի, Պիանքինիի, Բասթորֆի, լոհրմանի, կրիւթիւյզէնի հետազօտութիւններն և մանաւանդ Պ. Պ. Պէրի և Մէտլէրի երկայնամիտ զննութիւնները պէտք եղան խնդիրը վերջնականապէս լուծելու համար : Այս գիտնոց շնորհիւ, լուսնի լեռանց բարձրութիւնը կատարելապէս հասկըցուած է այսօր : Պ. Պ. Պէր և Մէտլէր հազար ինն հարիւր հինգ բարձունք չափեցին, որոց վեցն երկու հազար վեց հարիւր գրկաչափէ աւելի և քսանուերկուքն երկու հազար չորս հարիւր գրկաչափէ աւելի բարձր են : Ասոնց ամենէն բարձր կատարն երեք հազար ութ հարիւր և մէկ գրկաչափ բարձրութիւն ունի լուսնի սկաւառակին մակերեւութէն :

Մի և նոյն ժամանակ լուսնի ծանօթութիւնն ալ կ'ամբողջանար : Բազմաթիւ հրաբուխի բերաններ կը տեսնուէին անոր մէջ, և իւր էպպէս հրաբխային բնութիւնը կը հաստատուէր մէն մի զննութեամբ : լուսնէն ծածկեալ մոյորակաց շառաւիղներուն բեկբեկում չունենայէն կ'եզրակացնէին թէ լուսինը գրեթէ բնաւ մթնոլորտ չպիտի ունենար : Օդին այս բացակայութիւնը ջուրի բացակայութիւն յառաջ կը բերէր : Ուրեմն յայտնի կը լինէր, որ լուսնաբնակներն՝ այդ պայմանաց մէջ ապրելու համար՝ պարտէին յատուկ կազմաւորութիւն մ'ունենալ և երկրի բնակիչներէն մասնաւորապէս տարբերիլ :

Վերջապէս, իսուք նոր մեթոտներուն, առաւել կատարեալ գործիներն անդադար խուզարկեցին լուսինն առանց կէտ մը թողլու նորա դէմքին վրայ, որ հետախուզուած չլինի, և սակայն իւր տրամագիծն երկու հազար հարիւր յիսուն մղոն երկայնութիւն ունի, և իւր մակերեւոյթն երկրագունտիս մակերեւելոյթին երեքտասաներորդ մասին չափ է (երսուն և ութ միլիոն քառակուսի հազարամեթր), իւր զանգուածն երկրագունտիս զանգուածին քառսուն և իններորդ մասն է . բայց այս գաղանեաց ոչ մին չէր կրնար խուսափիլ աստղագիտաց աչքէն, և այդ սրամիտ գիտնականք աւելի հեռուն տարին իրենց հրաշալի գիտողութիւնները :

Նշմարեցին որ լուսնի լրման ժամանակ, սկաւառակին ինչ ինչ մասերուն վրայ ճերմակ գիծեր կը տեսնուին, և ուրիշ երեւոյթներուն ժամանակ սեւ գիծեր . Առաւել ճշդութեամբ զննելով յաջողեցան հասկնալ այդ գիծերու բնութիւնն : Երկար և նեղ ակունք էին զուգահեռական եզերաց միջեւ բացուած, որք ընդհանրապէս հրաբուխի բերաններու շրջանակին կը յանդէին, և տասնէն մինչեւ հարիւր հազար գրկաչափէն և անոնց շրջանակին մակերեւութէն :



կաչափ երկայնութիւն և ութ հարիւր գրկաչափ լայնութիւն ունէին : Աստղաբաշխք խոռոչ կը կոչէին զանոնք , բայց այդ անունն անոնց տալէ զատ ուրիշ բան չկրցին ընել : Գալով հասկնալու թէ այն խոռոչները ցամբած հին գետեր էին թէ ոչ , զայս չկրցին լուծել կատարելապէս : Ուստի Ամերիկացիք կը յուսային օր մը լաւ ճշդել այս երկրաբանական իրողութիւնը : Նըմանապէս իրենց կը վերապահէին Լուսնի մակերեւոյթին վրայի կարգ մը զուգահեռական ամբարտակները քննել , զոր Միւնիխի գիտնական դասատու Կրիթէյգէն գտած էր և Լուսնաբնակ երկրաչափներէ շինուած ամրութիւններ կը համարէր : Այս երկու մութ մնացած կէտերն և անշուշտ ուրիշ շատեր ալ չէին կրնար վերջնականապէս պարզուիլ , բայց միայն Լուսնին հետ ուղղակի հաղորդակցութենէ մը յետոյ :

Իսկ անոր լուսոյն զօրութեան գալով , այս մասին սովորելու բան մը չէր մնացած : Արդէն ստուգուած էր թէ Արեւուն լոյսէն երեք հարիւր հազար անգամ աւելի տկար է , և թէ իւր ջերմութիւնը գնահատելի ներգործութիւն մը չունի ջերմաչափներուն վրայ : Նըմանապէս «գորշ լոյս» անուամբ ծանօթ եղող երեւոյթըն ալ բնականաբար կը մեկնուի Արեւուն ճառագայթներուն ազդեցութեամբ , զորս երկիրը Լուսնին կը զրկէ , և որովք Լուսնին սկաւառակն ամբողջանալ կը թուի երբոր մահիկի ձեւով կը ներկայանայ իւր առաջին և վերջին երեւոյթներուն մէջ :

Այս էր Երկրիս արբանեակին վրայ ստացուած ծանօթութեանց վիճակը , զոր կըն-Քլիւպն ամբողջացնել կուզէր՝ աշխարհագրական , երկրաբանական , քաղաքական և բարոյական ամեն տեսակէտներով :

ԳԼՈՒԽ Զ.

ԻՆՉ ՈՐ ՀՆԱՐ ՁԷ ԶԳԻՏՆԱԼ ԵՒ ԻՆՉ ՈՐ ՆԵՐԵԼԻ ՁԷ ՀԱՒԱՏԱԼ ՄԻԱՑԵԱԼ-ՆԱՀԱՆԳԱՑ ՄԷՋ

Պարպիքէյն նախագահին առաջարկութեան անմիջական արդիւնքն եղած էր՝ գիշերային լուսաւորին վերաբերեալ աստղագիտական բոլոր իրողութիւնները քննութեան և ուսման նիւթ ընել : Ամեն մարդ անով կ'զբաղէր : Կարծես թէ Լուսնին առաջին անգամ երեւցած էր հորիզոնին վրայ , և թէ ոչ ոք տակաւին տեսած էր զայն երկնից մէջ : Նորածեւութիւն մ'եղաւ , օրուան առիւծն եղաւ , առանց իր համեստութիւնը կորուսանելու , և « Աստեղաց » կարգն անցաւ , առանց աւելի գոռոզութիւն մը ցոյց տալու : Լրագիրք նորագեցին հին վէպերն , որոց մէջ այդ « Գայլերուն Արեւը » դեր մը կը խաղար : Յիշեցուցին այն ազդեցութիւնները զորս կ'ընծայէր նմա առաջին դարուց տգիտութիւնն . ամեն ձայնով , ամեն եղանակով երգեցին զայն , և քիչ մնաց որ պիտի յիշէին սա բարի խօսքը թէ բովանդակ Ամերիկա լուսնամուլութենէ բըռնուած է :

Ուսումնական հանդէսներն ալ , միւս կողմէ , խօսեցան մասնաւորապէս այն խնդրոց վրայ՝ որք կրն-Քլիւպի ձեռնարկին հետ յարաբերութիւն ունէին : Քէմպրիճի դիտարանին նամակն հրատարակուեցաւ , մեկնուեցաւ և լիակատար հաւանութիւն ստացաւ այդ հանդէսներէն :

Համառօտ խօսելով , ոչ եւս ներելի եղաւ մինչեւ իսկ ամենէն անդրադէտ Եանքիին չգիտնալ իւր Արբանեակին վերաբերեալ իրողութեանց մին , ոչ ալ ամենէն տկարամիտ պառաւ տիկնանց ներելի էր այլ եւս նանրահաւատ և սխալ կարծիքներ ընդունիլ : Գի-



տութիւնն իրենց կը հասնէր իւր ամեն ձեւերով, իրենց աչերէն ու ականջներէն իրենց մտաց մէջ կը թափանցէր: Վերջապէս անհնարին էր աւանակ լինիլ . . . աստղագիտութեան մէջ:

Մինչեւ այն ժամանակ շատ մարդիկ չէին գիտեր թէ ինչպէս կարելի եղեր էր հաշուել Լուսինն երկրէս ունեցած հեռաւորութիւնը: Այս առիթէն օգուտ քաղուեցաւ հասկցնելու համար անոնց թէ այդ հեռաւորութիւնը Լուսինն տեղադրանութիւնը չափելով ձեռք կը բերուէր: Եթէ «տեղադրանութիւն» բառը զարմանք պատճառէր անոնց, կ'ըսուէր իրենց թէ երկրական շառաւղիին ժայրէն մինչեւ ի Լուսին ձգուած երկու ուղիղ գիծերէ ձեւեցած անկիւնն էր: Եթէ այս մեթոտին կատարելութեան վրայ կասկած ցոյց տրուէր, անմիջապէս կ'ազատուցանէին անոնց թէ այդ միջին հեռաւորութիւնն ոչ միայն երկու հարիւր երեսուցուց հազար երեք հարիւր քառասուն և եօթն միլիոն էր, այլ և աստղագէտք եօթանասուն միլիոն սըխայ չէին հաշուեր:

Անոնց, որ Լուսնի շարժմանց ընտելացած չէին, տրագիրք հանապազ կ'ապացուցանէին թէ Լուսինն երկու որոշ շարժում ունի. առաջինը կը կոչուի առանցքի մը վրայ թաւալում, երկրորդը շրջան երկրին բոլորովին, և այս երկու շարժումնք հաւասար ժամանակի մէջ կը կատարուին. այսինքն քսան և եօթն ատուր և մէկ երրորդի մէջ (\*):

Թաւալման շարժումն այն է որ Լուսնի մակերեւութին վրայ գիշեր և ցերեկ կը գոյացնէ: Միայն թէ Լուսնական ամսոյն մէջ մէկ օր և մէկ գիշեր միայն կայ, որոց իւրաքանչիւրն երեք հարիւր յիսուն և չորս

(\*) Այսպիսի ժամանակի մէջ Լուսինը կը վերադառնայ մի և նոյն աստեղ քով:

ժամ և մէկ երրորդ կը տեւէ: Քայց բարեբաղդաբար դէպի երկրագունտը դարձած դէմքը ասան և չորս Լուսնի յուսոյն հաւասար պայծառութեամբ կը լուսուորի անկէ: Իսկ միւս դէմքն, որ անտեսանելի է միշտ բնականաբար երեք հարիւր յիսուն և չորս ժամու բարձակ գիշեր մը ունի, որ «աստղներէն ինկած դրժգոյն լուսով» միայն կը բարեխառնի: Այս երեւոյթին պատճառն այն է որ, թաւալման և հոլովման շարժումները ճշդիւ հաւասար ժամանակի մէջ կը կատարուին, երեւոյթ մը, որ ըստ ֆասինիի և Հէրշելի՝ Լուսնի թագի արբանեակներուն և յոյժ հաւանականաբար ուրիշ ամեն արբանեկաց ալ յատուկ է:

Քանի մը բարեյօժար քայց քիչ մը կամակոր միտքեր չէին հասկնար ի սկզբան թէ Լուսինն իւր շրջանին ժամանակ ե՞թէ անփոփոխապէս նոյն դէմքն երկրիս չէր ցուցներ, պատճառն այն էր որ նոյն միջոցին ինք իւր վրայ ալ (թաւալական) պտոյտ մը կ'ընէր: Այսպիսիներուն կ'ըսէին. — Գնացէք ձեր ճաշարանն, և դարձիք սեղանին շուրջ՝ աչերնիդ անոր կեդրոնին ուղղելով միշտ. երբոր ձեր շրջագարձ պտոյտն աւարտի, թաւալական պտոյտ մ'ըրած կը լինիք ձեր վրայ, որովհետեւ ձեր աչքն հետզհետէ ճաշարանին ամեն կէտերը պտրտած կը լինի: Արդ, ճաշարանի սրահը երկինքն է, սեղանը երկիրն է, Լուսինն ալ դուք էք:» Այս բազգատութիւնը լսողներն հիանալով կը մեկնէին:

Այսպէս ուրեմն Լուսինն անդադար նոյն դէմքը կը ցուցնէ երկրի. սակայն ճիշդ լինելու համար պէտք է յաւելցնել թէ հիւսիսէն հարաւ և արեւմուտքէն արեւելք տատանում մ'ունենալուն պատճառաւ, որ ճօճումն կը կոչուի, Լուսինն իւր սկաւառակին կէսէն քիչ մ'աւելին, այն է հարիւրին յիսուն և եօթնին չափը կը ցուցնէ երկրի:

Երբոր տգէտները Լուսնի թաւալական շարժման



վրայ ֆէմպրիճի դիտարանին տնօրէնին չափ ծանօթութիւնն ստացան, անոր Երկրիս շուրջն ըրած հոլովման վրայ մեծ սրտատանջութեան մէջ էին. այս մասին ալ քսան ուսումնական հանդէսք շուտով պէտք եղած ծանօթութիւնը տուին անոնց: Այն ժամանակ սովորեցան թէ երկնից հաստատութիւնն՝ իւր անթիւ աստղերով կրնայ մեծ ժամացոյց մը համարուել, որոյ վրայ Լուսինը շրջագայելով ստոյգ ժամը ցոյց կուտայ Երկրի բնակչաց. թէ այդ շարժման մէջ է որ գիշերային աստղն իւր զանազան երեւոյթները կը ներկայէ. թէ Լուսինը լրացեալ է՝ երբոր Արեգակին հանդիպակաց է. այսինքն՝ երբոր երեք աստղերը մէկ գծի վրայ են, Երկիրը մէջ տեղը գտնուելով թէ Լուսինը նոր է՝ երբոր զուգընթացութեան մէջ է Արեւուն հետ, այսինքն՝ Երկրի ու Արեւուն մէջ տեղը կը գտնուի. վերջապէս թէ Լուսինն իւր առաջին կամ վերջին քառորդին մէջ է՝ երբոր Արեւուն ու Երկրի հետ ուղիղ անկիւն մը կը ձեւացնէ, որոյ կատարը կը գտնուի ինք:

Քանի մը սրամիտ Եանքիներ այն ժամանակ սահետեւութիւնը կը հանէին թէ խաւարումները զուգընթացութեան կամ հանդիպակացութեան ժամանակ կրնային պատահիլ, և լաւ կը խորհրդածէին: Զուգընթացութեան մէջ Լուսինը կրնայ խաւարեցնել զԱրեւն Երկրին ու Արեւուն մէջ տեղը գտնուելով, իսկ հանդիպակացութեան մէջ Երկիրն է որ կրնայ խաւարեցնել զԱրեւն. և եթէ այդ խաւարումներն ամեն Լուսնամսոյ մէջ երկու անգամ չեն պատահիր, պատճառն այս է որ Լուսնի հոլովման դիժը Ծիր խաւարմանի վրայ հակեալ է, այսինքն՝ Երկրի հոլովման զըծին վրայ:

Իսկ թէ գիշերային աստղն ի՞նչ բարձրութեան կրնայ հասնիլ հորիզոնին վրայ, ֆէմպրիճի դիտարա-

նին նամակն ամեն բան ըսած էր այս նկատմամբ: Ամեն մարդ գիտէր թէ այդ բարձրութիւնը դիտուած տեղին լայնութեան աստիճանին համեմատ կը տարբերի: Բայց երկրագունտին միակ գօտիներն, որոցմէ Լուսինը գաղաթնակէտը կ'անցնի, հարկաւ հասարակածին և քսանեւութերորդ զուգահեռականին մէջ տեղը գտնուածներն են: Այս պատճառաւ է որ փորձը երկրագունտին այդ մասին որ եւ է մէկ կէտին վրայ փորձելու կարեւոր պատուէրն ըրած է դիտարանին նամակն, որպէս զի ուումը կարենայ գաղաթնահայեաց գիրքով արձակուել և այսպէս ծանրութեան ներգործութենէն շուտով զերծանիլ: Այս բան էական պայման մ'էր ձեռնարկին յաջողութեան, և հետեւաբար մեծ մտահոգութիւն պատճառած էր հանրային կարծեաց:

Գալով այն գծին, որուն կը հետեւի Լուսինը՝ Երկրիս շուրջը դարձած միջոցին, ֆէմպրիճի դիտարանն ըստ բաւականին ուսուցած էր մինչեւ իսկ ամեն Երկրի տգէտներուն թէ այն գիժը ոլորտագիծ մ'է, ոչ թէ շրջանակ՝ այլ ձուածեւ թերատ մ'է, որոյ վառարաններէն մին կը գրաւէ Երկիրս: Այս թերատածեւ ոլորտը կը դառնան ամեն մոլորակներն, ինչպէս նաեւ արբանեակներն, և տեսական մեքենագիտութիւնը ճշդիւ կ'ապացուցանէ թէ ուրիշ կերպ չէր կըրնար լինիլ: Նմանապէս հասկցուած էր թէ Լուսինն իւր հեռակէտին մէջ Երկրէս աւելի հեռու, իսկ մերձակէտին մէջ աւելի մօտ կը գտնուէր:

Ահա այս ամենը գիտէր ամեն Ամերիկացի, կամայակամայ, և ոչ ոք կրնար չգիտնալ առանց ամաչելու: Բայց, թէեւ այս ճշմարիտ սկզբանց ծանօթութիւնն արագապէս ընդհանրացաւ, բազում սխալներ և քանի մը պատիւ երկիրներ չկրցին դիւրաւ արմատախիլ լինել: Օրինակի համար, քանի մը բարեմիտ մարդիկ



կը պնդէին թէ Լուսինն հին գիսաւոր մ'էր, որ Արեւին չուրջն իւր երկար ոլորտը պտըտած միջոցին երկրի մօտէն անցնելով՝ անոր ձգողութեան շրջանակին մէջ բռնուեցաւ մնաց: Այս դահլճական աստղագէտք այսպէս կը կարծէին մեկնել Լուսինն այրեցեալ տեւիլն, անդարմանելի դժբաղդութիւն մը, որոյ համար Արեւը կ'ամբաստանէին: Միայն թէ, երբոր դիտել կը տրուէր իրենց թէ գիսաւորք մթնոլորտ ունին, իսկ Լուսինը չունի կամ յոյժ քիչ ունի, պատասխան չէին գտներ տայու:

Ուրիշներ ալ, որք Քուէյքըրներու (\*) սերունդէն էին, ինչ ինչ երկրաւորներ կը յայտնէին Լուսնի նկատմամբ. լսած էին թէ խալիֆայից օրովն եղած զննութիւններէն ի վեր Լուսնի շրջանն համեմատաբար արագութիւն կ'ստանար. ասկէց կը հետեւցնէին, յոյժ տրամախոհաբար, թէ շարժման այդ արագութեան համեմատ՝ երկու աստեղաց հեռաւորութիւնն ալ պէտք էր նուազիլ, և թէ այս կրկին արդիւնք անսահմանաբար շարունակելով՝ վերջապէս օր մը Լուսինն երկրի վրայ պիտի իյնայ: Սակայն սիրտ առին և երկրաւոր դադրեցաւ իրենց ապագայ սերնդոց համար, երբոր հասկցուցին այդ մարդոց թէ Փռանսացի հռչակաւոր չափազէտ Լաբլասի հաշիւներուն նայելով, այդ շարժման արագութիւնն յոյժ նեղ սահմաններու մէջ ամփոփուած էր, և թէ շատ չանցած՝ համեմատական նուազում մը պիտի յաջորդէ անոր: Այսպէս ուրեմն, արեգակնային աշխարհի հաւասարակշռութիւնը չէր կրնար խանգարիլ ապագայ դարուց մէջ:

Կը մնար ի վերջոյ տղէտներուն նանրահաւատ դասն. ասոնք գոհ չեն լինիր իրենց տգիտութեամբ, այլ չե-

(\*) Այն է Վոլագոյդք, որք բողոքականաց ամենէն ծայրայեղներն են:

ղածը գիտեն, և Լուսնի վրայ ալ շատ բանջգիտէին. Ոմանք անոր սկաւառակն յղկեալ հայելի մը կը համարէին, որոյ միջոցաւ մարդիկ կրնային զիրար տեսնել երկրի այլ և այլ կէտերէն և իրենց մտքին խորհուրդը միմեանց հաղորդել: Այլք կը պնդէին թէ դիտուած հազար նոր Լուսիններէ ինն հարիւր յիսունը մեծամեծ փոփոխութիւններ բերած էին, ինչպէս են յեղափոխութիւնք, գետնաշարժք, չրհեղեղ, և այլն. հետեւաբար կը հաւատային թէ գիշերային աստղը խորհրդաւոր ազդեցութիւն մ'ունէր մարդոց բաղդին վրայ, և կենաց «ճշմարիտ հակակշիռը» կը համարէին զայն. կըսէին թէ մէն մի Լուսնաբնակ մէն մի երկրաբնակի կապուած էր համակրական կապով, և Տոբթոր Միտի հետ կը պնդէին թէ կենսական դրութիւնը կատարելապէս անոր հպատակ էր, և թէ արու տղայք աւելի Լուսնին առաջին քառորդին մէջ կը ծնանին, և աղջիկ տղայք վերջին քառորդին մէջ, և այլն, և այլն: Բայց վերջապէս հարկ եղաւ հրաժարիլ այս ուսմական մոլորութիւններէն և վերադառնալ առ ճշմարտութիւն. և եթէ Լուսինն իւր ազդեցութենէն կապտուելով՝ քանի մը շողմարարներու մտաց վրայ ունեցած բոլոր իշխանութիւնը կորոյս, եթէ քանի մը կրծակներ դարձան իրեն, անհուն մեծամասնութիւնն իւր կողմը բռնեց: Իսկ Եանքիներն ուրիշ փառասիրութիւն չունեցան այլ եւս, բայց եթէ այդ օգային նոր աշխարհի տիրել և Ամերիկայի Միացեալ-Նահանգաց աստեղազարդ դրօշն անոր ամենաբարձր գագաթին վրայ պարզել:



ԳԼՈՒԽ Է.

ՌՈՒՄԲԻՆ ՕՐՀՆԵՐԳԸ

— 0 —

Քէմպրիճի դիտարանն իւր հոկտեմբեր 7 ի հռչակաւոր նամակին մէջ խնդիրն աստղագիտական տեսակէտով լուծած էր . կը մնար մեքենագիտաբար լուծել : Ահա այն ժամանակ գործնական դժուարութիւնք անյաղթելի պիտի երեւէին Ամերիկայէն զատ ուրիշ ամեն երկիրներու մէջ : Բայց Ամերիկայի մէջ խաղ մը միայն եղաւ :

Պարպիքէյն նախագահն , առանց ժամանակ կորուսանելու , կըն-Քլիւպի անդամոց մէջէն գործադիր մասնախումբ մը կազմած էր : Այս մասնախումբն երեք նստի մէջ պիտի պարզէր թնդանօթին , ռումբին և վառօդին երեք մեծ խնդիրներն : Ուստի այս նիւթոց վրայ խորին հմտութիւն ունեցող չորս գիտնական անդամներէ կազմուեցաւ , որք էին Պարպիքէյն , որ կրկին քուէ պիտի ունենար երբոր կարծիքներն հաւատար կերպիւ բաժնուէին , Մորկան գորավար , Էլֆիաթոն հազարապետ , և վերջապէս անհրաժեշտն Ե. թ. Մասթոն , որուն յանձնուեցաւ քարտուղար-տեղեկաբերի պաշտօնն :

Հոկտեմբեր 8ին Մասնախումբը գումարեցաւ Պարպիքէյն նախագահին տունը , Ռեբելպլեքան փողոց թիւ 3 : Եւ որովհետեւ կարեւոր էր որ ստամբան իր աղաղակներով չչլիթէր այսպիսի լուրջ վիճաբանութիւն մը , կըն-Քլիւպի չորս անդամները նստան սեղանի մը շուրճն , որ սանտուիչներով և մեծամեծ թէյ-յամաններով ծածկեալ էր : Իսկոյն Ե. թ. Մասթոն իւր գրիչն իւր երկաթէ ճանկին վրայ պնդեց պատտակով , և նիստն սկսաւ :

Պարպիքէյն ամենէն առաջ խօսքի սկսելով ըսաւ .  
« Սիրելի պաշտօնակիցք իմ , Մասնախումբիս պաշտօնն է ուրախական գիտութեան ամենէն կարեւոր խնդիրներէն մին լուծել , այն մեծ գիտութեան , որ ռումբերու շարժման կ'զբաղի , այսինքն՝ որ և է մղիչ զօրութեամբ մը միջոցին մէջ արձակուած և յետոյ թողուած մարմիններու :

— Օ՛հ , ուրախութիւն , ուրախութիւն , գոչեց Ե. թ. Մասթոն յուզեալ ձայնիւ :

« Թերեւս առաւել տրամաբանական երեւէր , շարունակեց Պարպիքէյն , այս առաջին նիստը նուիրել այն գործիքին . . . :

— Արդարեւ այնպէս է պատասխանեց Մորկան զօրավարն :

— Սակայն , շարունակեց Պարպիքէյն , երկար խորհելէ յետոյ թուեցաւ ինձ թէ ռումբի խնդիրը թընդանօթի խնդրէն առաջ պարտէր անցնիլ , և թէ թընդանօթին մեծութեան չափը ռումբին մեծութեան չափէն կախում պարտ էր ունենալ :

— Խօսք կ'ուզեմ , գոչեց Ե. թ. Մասթոն : Խօսքն անմիջապէս տրուեցաւ այն մեծ փուլով որուն արժանի էր Ե. թ. Մասթոնի փառաւոր անցեալը :

« Քաջ բարեկամք իմ , ըսաւ Ե. թ. Մասթոն ներշնչեալ ձայնիւ , մեր նախագահն իրաւունք ունի ռումբի խնդրոյն նախապատուութիւն տալու ուրիշ ամեն խնդրոց վրայ . այն ռումբը , զոր մեք պիտի արձակեմք առ Լուսին , մեր պատգամաւորն է , մեր դեսպանն է , և կը խնդրեմ ձեզնէ որ ներէք ինձ պարզապէս բարոյական տեսակէտով նկատել զայն : »

Ռումբը նկատելու այս նոր եղանակը զարմանալի կերպիւ գրգռեց Մասնախումբին անդամոց հետաքրքրութիւնն , ուստի և մեծ ուշադրութիւն շնորհեցին . . . Մասթոնի խօսքերուն :



« Սիրելի՛ պաշտօնակիրք իմ, շարունակեց յ. Թ. Մասթոն, կարճ պիտի խօսիմ. մէկ կողմ պիտի թողում Ֆիզիքական ուսմբը, սպաննող ուսմբը, և միայն չափազիտական ուսմբին, բարոյական ուսմբին վրայ պիտի խօսիմ: Ռուսքն ինձ համար ամենէն պայծառ յայտնութիւնն է մարդկային զօրութեան, որ անոր մէջ կը բովանդակի ամբողջապէս. զայն ստեղծելով է որ մարդ առաւել մօտեցաւ Ստեղծողին:

— Շատ լաւ, ըսաւ Էլֆիսթոն հաղարպետը:

— Արդարեւ, գոչեց ատենաբանն, եթէ Սաստուած մոյորակներն հաստեց, մարդն ալ ուսմբը հաստեց, որ երկրաւոր արագութեանց փորձանիշն է և վերածեալն այն աստեղաց, որք միջոցին մէջ կը թափառին, և որք՝ ճշմարիտն ըսելով՝ ուսմբերէ զատ ուրիշ բան չին: Սաստուծոյ գործն է ելեքտրականութեան արագութիւնը, լուսոյ արագութիւնը, աստեղաց արագութիւնը, գիսաւորաց արագութիւնը, արբանեկաց արագութիւնը, ձայնին արագութիւնը, հովին արագութիւնը. բայց մեր գործն է ուսմբին արագութիւնը, որ հարիւրապատիկ աւելի է շոգեկառաց և ամենէն սրարշաւ երիվարաց արագութեանէն:

Ե. Թ. Մասթոն յափշտակուած էր. իւր խօսքերը քնարերգական եղանակ մ'ստացած էին ուսմբին այս նուիրական օրհներգը նուագած ժամանակ:

«Կ'ուզէ՞ք որ թուանշաններով խօսիմ, ըսաւ. ահա ձեզի ճարտարախօս թուանշաններ: Առէք պարզապէս քսան և չորսնոց (քսան և չորս լիպրա ծանրութիւն ունեցող) համեստ ուսմբ մը. թէպէտ ելեքտրականութեանէն ութ հարիւր հազար անգամ նուազ, լոյսէն վեց հարիւր քառասուն հազար անգամ նուազ, Երկրի հողովման շարժումէն եօթանասուն և վեց անգամ նուազ արագութիւն ունի, սակայն թնդանօթին բերնէն դուրս ելած ժամանակ՝ ձայնի արագութիւնը

կ'անցնի (\*), մէկ մանրերկրորդի մէջ երկու հարիւր գրկաչափ, տասն մանրերկրորդի մէջ երկու հազար գրկաչափ, մէկ վայրկեանի մէջ տասն և չորս հազար գրկաչափ, մէկ ժամու մէջ ութ հարիւր քառասուն հազար գրկաչափ, մէկ աւուր մէջ քսան միլիոն հարիւր վաթսուն հազար գրկաչափ (8640 փարսախ), այն է՝ երկրագունտին թաւալական շարժման մէջ հասարակածի կէտերուն արագութիւնն, և մէկ տարուոյ մէջ 7,336,500 մղոն (3,155,750 փարսախ) ճանրայ կ'առնէ: Ուրեմն տասն և մէկ օրէն կրնայ հասնիլ Լուսնին, տասներկու տարիէն Արեգակին, երեք հարիւր վաթսուն տարիէն Պոսիդոն մոյորակին, այն է արեգակնային աշխարհի ծայրն: Ահա գայտ կ'րնէ այդ համեստ ուսմբն՝ որ մեր ձեռաց գործն է: Ի՛նչ պիտի լինի ուրեմն երբոր այս արագութիւնը քսանապատկելով՝ մէկ մանրերկրորդի մէջ եօթն մղոն արագութեամբ արձակեմք: Ահ, ազնիւ ուսմբ, ըսքանչելի՛ ուսմբ, կը սիրեմ հաւատալ թէ վեր հասած ժամանակդ երկրաւոր դեսպանի մը պարտուպատշաճ պատիւներով պիտի ընդունուիս:»

Այս ճոռամ եզրակացութիւնն հուրաներով ընդունուեցաւ, և Ե. Թ. Մասթոն՝ զգածեալ՝ իւր տեղը նստաւ շրջապատեալ իւր պաշտօնակցաց խնդակցութիւններէն:

«Հիմա որ, ըսաւ Պարպիքէյն, բաւական մեծ բաժին մը տուինք բանաստեղծութեան, բուն խնդիրը ձեռք առնումք:

— Պատրաստ եմք պատասխանեցին Մասնախմբին անդամք, իւրաքանչիւրը կէս երկոտասանեակ Սանտուիչ ուտելով և քանի մը գաւաթ թէյ խմելով:

(\*) Թնդանօթին որոտման ձայնը լսուած ժամանակ զարնուելու վտանգն անցած է:



— Գիտէք որն է լուծելու խնդիրը, շարունակեց նախագահը. մէկ երկվայրկենի մէջ տասներկու հազար եարտա արագութիւն պիտի տրուի ռուսի մը. Ես կը կարծեմ թէ պիտի կրնամք յաջողիլ: Բայց նախ մինչեւ ցարդ ձեռք բերուած արագութիւնները քըննեմք: Մորկան զօրավարը կրնայ մեզ գոհացնել այս մասին:

— Եւ մեծ դիւրութեամբ, պատասխանեց զօրավարն, որովհետեւ պատերազմին ժամանակ՝ փորձի յանձնախումբին անդամ էի: Արդ պէտք է ըսեմ ձեզ թէ Տասկրինի հարիւրնոց թնդանօթներն՝ որք երկու հազար հինգ հարիւր գրկաչափ հասողութիւն ունէին. մէկ երկվայրկենի մէջ հինգ հարիւր եարտայի սկզբնական արագութիւն կուտային իրենց ռուսներուն:

— Լաւ, և ֆոլումպիատ (\*) Ռոտմանը, հարցոց նախագահը:

— Ֆոլումպիատ Ռոտմանը փորձուելով Համիլթոնի ամրոցին մէջ, Նիւ-Եորքի մօտ, երկու թօնոյ կշռող ռուսք մը մինչեւ վեց մղոն կը հասցնէր, ութ հարիւր եարտայի արագութիւն տալով մէկ մանրերկրորդի մէջ, արդիւնք մը, զոր Արմսթրոնկ և Բալիզէր չկըրցին երբէք ունենալ Անգլիոյ մէջ:

— Օ՛հ, Սինգլիադիք, գոչեց ժ. թ. Մասթոն իւր ահաւոր ճանկը դէպ արեւելեան հորիզոնը դարձնելով:

— Ըսել է թէ, ըսաւ Պարպիքէյն, այդ ութ հարիւր եարտան մինչեւ ցարդ ձեռք բերուած մեծագոյն արագութիւնն է:

— Այո՛, պատասխանեց Մոտկան:

— Պիտի ըսեմ սակայն թէ, ըսաւ ժ. թ. Մասթոն, եթէ իմ հրասանդս չպայթէր . . . :

(\*) Ամերիկացիք ֆոլումպիատ կը կոչէին այս անհետիւտ թնդանօթները:

— Այո՛, բայց պայթեցաւ, պատասխանեց Պարպիքէյն բարեկամական շարժումով մը: Ուրեմն այդ ութ հարիւր եարտայի արագութիւնը չուկէտ բռնեմք մեզ: Պէտք է քսանապատկել զայդ: Ուստի ուրիշ նստի մը պահելով այդ արագութիւնն արտագրելու սահմանեալ միջոցներուն քննութիւնն, այժմ ձեր ուշադրութիւնը պիտի հրաւիրեմ, սիրելի պաշտօնաւոր կիցք իմ, սա կէտի վրայ թէ քիչ մեծութիւն կը վայրէ տայ ռուսքին: Քաջ կը հասկնաք թէ կէս թռնոյէն աւելի չիչռող ռուսքերու խօսք այլ եւս չկըրնար լինիլ հոս:

— Ինչ՞՞ համար, հարցոց հազարապետը:

— Վասն զի պատասխանեց անհամբերութեամբ ժ. թ. Մասթոն, ռուսքը բաւական մեծ պարտի լինիլ, որպէս զի Ղուսնաբնակաց ուշադրութիւնը գրաւէ, եթէ ստուգիլ բնակիչը կան Ղուսնի մէջ:

— Այո՛, պատասխանեց Պարպիքէյն, և ուրիշ առաւել կարեւոր պատճառի մը համար:

— Ի՞նչ ըսել կ'ուզէք, Պարպիքէյն, հարցոց հազարապետը:

— Ըսել կ'ուզեմ թէ բաւական չէ ռուսք մը զըրկել և այլ եւս անոր վրայ չգրադիլ. պէտք է որ անոր գնացած միջոցին մեք ետեւէն դիտեմք զայն՝ մինչեւ որ հասնի նպատակին:

— Հէ՛, գոչեցին զօրավարն ու հազարապետը՝ քիչ մը զտրմանալով այս առաջարկին վրայ:

— Անշուշտ, պատասխանեց Պարպիքէյն իբրև իւր վրայ վստահ մարդ, անշուշտ, ապա թէ ոչ, մեր ընելիք փորձը բնաւ արդիւնք չունենար:

— Բայց այն ժամանակ, ըսաւ հազարապետն, այդ ռուսքին անհետիւտ մեծութիւն պիտի տաք:

— Ոչ, հաճեցէք ունկն դնել ինձ:

« Գիտէք որ, ըսաւ Պարպիքէյն նախագահը, տե-



ստաւանական գործիները մեծ կատարելութիւն ստացած են : Հեռագրիտակներ կան , որք արդէն կարող եղան դիտուած առարկայները վեց հազար անգամ մեծցնել և լուսինը մինչեւ քառասուն մղոն մտեցնել : Արդ՝ այս հեռաւորութեամբ , այն առարկաներն՝ որք վաթսուն ոտնաչափ տրամագիծ ունին , կատարելապէս տեսանելի են : Եթէ հեռագրիտակաց թափանցման զօրութիւնն աւելի հեռուն չմղուեցաւ , պատճառն այս է , որ քանի այդ գորութիւն աւելցուի , յստակութիւնը կը նուազի , և լուսինն , որ ցոյցացող հայելի մ'է , բաւական պայծառ յոյս մը չարձակեր , որպէս զի կարելի լինի խոչորացումն այդ սահմանէն անդին հասցնել :

— Ուրեմն ի՞նչ պիտի ընէք այն ժամանակ , հարցուց զօրավարը . ձեր ուումբին վաթսուն ոտք տըրամագիծ պիտի տաք .

— Ոչ :  
— Ուրեմն առաւել պայծառութիւն պիտի տաք լուսնին :

— Կատարելապէս :  
— Ահաւասիկ ամենամեծ գործ մը , գոչեց ժ. Թ. Մասթոն :

— Ամենապարզ , պատասխանեց Պարպիքէյն : Արդարեւ , եթէ յաջողիմ լուսնին անցած մթնոլորտին թանձրութիւնը նուազեցնել , այն ժամանակ անոր լոյսըն աւելի պայծառութիւն չի՞ ստանար :

— Անշուշտ :  
— Ուրեմն , այս արդիւնքը ձեռք բերելու համար բաւական կը լինի ինձ հեռագրիտակ մը հաստատել բարձր լեռան մը վրայ :

— Կը հասկնամ , կը հասկնամ , պատասխանեց հազարապետը . Դուք ամեն բան պարզելու եղանակ մը ունիք . . . : Եւ ի՞նչ մեծութիւն կը յուսար ձեռք բերել ադող :

— Քառասուն և ութ հազար անգամ , որ լուսինը մինչեւ հինգ մղոն կը մտեցնէ մեզ , և առարկայք՝ տեսանելի լինելու համար՝ ինն ոտք տրամագիծէն աւելիի պէտք չեն ունենար այլ եւս :

— Կատարեա՛լ , գոչեց ժ. Թ. Մասթոն , ուրեմն մեր շինելիք ուումբն ինն ոտք տրամագիծ միայն պիտի ունենայ :

— Ճշդիւ :  
— Ներեցէք ինձ սակայն դիտել տալ ձեզ , ըստ էլիֆիսթոն հազարապետը , թէ տակաւին այնչափ ծանրութիւն պիտի ունենայ որ . . .

— Օ՛ , հազարապետ , պատասխանեց Պարպիքէյն , անոր ծանրութեան վրայ վիճաբանելէ առաջ թոյլ տրուէք ինձ ըսել ձեզ թէ մեր հայրերն հրաշալիք կը գործէին այդ մասին : Հեռի ինձմէ այն կարծիքը թէ ռըմբաձգական դիտութիւնն յառագրիմած չէ , բայց լաւ է դիտնալ թէ միջին դարէն սկսեալ հիանալի արդիւնքներ ձեռք կը բերուէին , և պիտի համարձակիմ աւելցնել թէ մերիններէն աւելի հիանալի :

— Ի՞նչ կ'ըսէք , ըստ Մորկան :  
— Արդարացուցէք ձեր խօսքերը , գոչեց զայրացմամբ ժ. Թ. Մասթոն :

— Ատկէ դիւրին բան չկայ , պատասխանեց Պարպիքէյն , ես օրինակներ ունիմ առաջարկս պաշտպանելու համար : 1543ին Մէհէմէտ երկրորդ Կ. Պօլիսը պաշարած ժամանակ հազար ինն հարիւր լիպրա կը շուռող քարէ ուումբեր արձակուեցան , որք անշուշտ դեղեցիկ մեծութիւն մը պարտէին ունենալ :

— Օ՛ , օ՛ , ըրաւ հազարապետը , հազար ինն հարիւր լիպրա՛ , խոչոր թիւ մ'է :

— Մալթայի Մանթ-Էլմա բերդն՝ ասպետաց օրով՝ երկու հազար հինգ հարիւր լիպրա ծանրութեամբ ուումբեր արձակած է :



— Անհնարին է :

— Վերջապէս Ֆրանսացի պատմիչ մը կ'ըսէ թէ Լուի ժԱի օրով հրասանդ մը հինգ հարիւր լիպրանոց ուսմբ կ'արձակէր, բայց այդ ուսմբն արձակուելով Պասթիլէն, տեղ մը՝ ուր խենդերն զխեղացիները կը փակէին, կ'երթար կ'իյնար Շարանթոն, տեղ մը՝ ուր խեղացիներն զխենդերը կը փակեն :

— Շատ աղէկ, ըսաւ ժ. Թ. Մասթոն :

— Յետոյ՝ ի՞նչ տեսանք վերջապէս : Արմադրոնկի թնդանօթներն՝ հինգ հարիւր լիպրանոց, և Քոլում պիտղ Ռոտմանները կէս թոնոյ կշռոյ ուսմբեր կ'արձակեն : կը թուի ուրեմն թէ, ուսմբերն՝ եթէ հասողութեան կողմէ շահեցան, ծանրութեան կողմէ կորուսին՝ քան թէ շահեցան : Արդ, եթէ մեր ջանքն այդ կողմ դարձնեմք, դիտութեան յառաջդիմութեան հետ պարտիմք կարող լինիլ Մէհէմէտ Բ-ի և Մալթայի տսպետաց ուսմբերուն ծանրութիւնը տասնապատկել :

— Այդ յայտնի բան է, պատասխանեց հազարապետը, բայց ի՞նչ մետաղ պիտի գործածէք ուսմբի համար :

— Երկաթի ձոյլ պարզապէս, ըսաւ Մորկան զորավարն :

— Բէ՛հ, երկաթի ձոյլ, գոչեց ժ. Թ. Մասթոն խորին արհամարհանօք. Լուսնին երթալու սահմանուած ուսմբ մը երկաթի ձոյլէ չինեյ, ի՞նչ հասարակ բան :

— Չչափազանցեմք, պատուական բարեկամս, պատասխանեց Մորկան, ձոյլը բաւական է :

— Արդ, այն ժամանակ, ըսաւ Էլֆիոթոն հազարապետն, որովհետեւ ուսմբին ծանրութիւնն իւր մեծութեան համեմատ է, ինն ոտք արամազիծ ունեցող ձոյլէ ուսմբն ալ դարձեալ սարսափելի ծանրութիւն պիտի ունենայ :

— Այո՛, եթէ մէջը լցուն է, իսկ ո՛չ, եթէ սնամէջ է, ըսաւ Պարպիքէյն :

— Մնամէջ, ուրեմն պայթուցիկ ուսմբ պիտի լինի :

— Որոյ մէջ կրնայ նամակներ դրուիլ, ըսաւ ժ. Թ. Մասթոն, և մեր երկրային բերքերէն օրինակներ :

— Այո՛, սնամէջ ուսմբ, պատասխանեց Պարպիքէյն, և բաղարձակապէս պարտի այնպէս լինիլ : Հարիւր ութ մատնաչափ արամազիծով լցուն, ուսմբ մը երկու հարիւր հազար լիպրայէ աւելի կը կշռէ, որ ինչպէս յայտնի է՝ չափազանց մեծ ծանրութիւն մ'է, սակայն որովհետեւ մինչեւ աստիճան մը հաստատութիւն պէտք է տալ ուսմբին, կ'առաջարկեմ որ քսան հազար լիպրա ծանրութիւն արուի անոր :

— Ի՞նչ պիտի լինի ուրեմն սնամէջը շրջապատող ձոյլին հաստութիւնն, հարցուց հազարապետն :

— Եթէ կանոնադրեալ համեմատութեան հետեւիմք, ըսաւ Մորկան, հարիւր ութ մատնաչափ արամազիծ մ'առ նուազն՝ երկու ոտնաչափ շրջապատի հաստութիւն կը պահանջէ :

— Չափազանց կը լինի, պատասխանեց Պարպիքէյն, լաւ ուշադրութիւն ըրէք, մեր նպատակն երկաթէ տախտակներ ծակելու սահմանեալ ուսմբ մը չինել չէ, ուստի բաւական է այնչափ միայն շրջապատ տալ, որ վառօդի կազին ճնշմանը կարենայ դիմանալ : Ուրեմն աւասիկ լուծելու խնդիրն. ի՞նչ հաստութիւն պէտք է ունենայ ձոյլ երկաթէ սնամէջ ուսմբ մը, որպէս զի քսան հազար լիպրայէ աւելի ծանրութիւն չունենայ : Մեր հանձարեղ հաշուագետ քաջն Մասթոն պիտի հասկըցնէ մեզ այս նստի մէջ :

— Ատկէ դիւրին բան չկայ, պատասխանեց Մասնախոմբին պատուարժան քարտուղարն : Եւ զայս ըսելով քանի մը դրահաշուական ձեւեր գծեց թուղթի վրայ. իւր գրչին տակ փեր եւ թեր երեւցան երկլորդ



աստիճանի կարողութեան բարձրացած : Մինչեւ իսկ այնպէս թուեցաւ թէ խորանարդ արմատ մը հանեց առանց անոր դպչելու եւ ըսաւ .

«Շրջապատն հազիւ երկու մատնաչափ պիտի ունենայ :

— Բաւական կրնա՞յ լինիլ այդ : հարցուց հազարապետը տարահուսական դէմքով :

— Ոչ, պատասխանեց Պարպիքէյն նախագահն, անշուշտ ոչ :

— Ուրեմն ի՞նչ պիտի ընեմք այն ժամանակ, հարցուց նորէն իջֆիսթոն՝ բաւական շուարեալ դէմքով :

— Երկաթի ձոյլին տեղ ուրիշ մետաղ մը գործածել :

— Պղինձ, ըսաւ Մորկան :

— Ոչ, պղինձն աւելի ծանր է, ես անկէ լաւագոյնն ունիմ ձեզ առաջարկելու :

— Ի՞նչ է, ըսաւ հազարապետը :

— Ալիւմինիում, պատասխանեց Պարպիքէյն :

— Ալիւմինիում, գոչեցին նախագահին երեք պաշտօնակիցներն :

«Անշուշտ բարեկամք, ըսաւ նախագահը. գիտէք որ Տոանասցի նշանաւոր քիմիագէտ մի, Հանրի-Սէնթ-Բիէր-Տըվիլ, 1854 ին յաջողեցաւ Ալիւմինիումը ձեռք բերել իբրեւ կուռ և սերտ մարմին : Այս թանկագին մետաղն՝ արծաթին սպիտակութիւնն, ոսկւոյն անազարտութիւնն, երկաթին դիմացկութիւնը, պղնձին ձուլելիութիւնն և ապակիին թեթեւութիւնն ունի . դիւրաւ կը գործուի, վերջին աստիճան առատ կը գտնուի բնութեան մէջ, որովհետեւ ալիւմինը (պող-լեղի կաւ) ապառաժներուն շատին հիմը կը կազմէ . երկաթէն եռապատիկ թեթեւ է, և կարծես մեր ուսմբին նիւթը մատակարարելու համար ստեղծուած է :

Հուրաւ ալիւմինիումին համար, գոչեց Մասնախմբին

քարտուղարը, միշտ պոռոտաձայն իւր խանդավառ վայրկեաններուն մէջ :

— Բայց սիրելի նախագահս, ըսաւ հազարապետն, ալիւմինիումի գինը սաստիկ սուղ չէ՞ :

— Նոր գտնուած ժամանակները սաստիկ սուղ էր, պատասխանեց Պարպիքէյն, ալիւմինիումի լիպրան երկու հարիւր վաթսուէն երկու հարիւր ութսուն տոլար (1500 ֆրանքի չափ) կ'արժէր : յետոյ քսանեւեօթն տոլարի (150 ֆր.) իջաւ, և այսօր, վերջապէս ինն տոլար (48 ֆր. 75 սանթիմ) կ'արժէ :

— Բայց լիպրան ինն տոլարն ալ շատ մեծ գին է, ըսաւ հազարապետն, որ դիւրաւ անձնատուր չէր լիներ :

— Անշուշտ, սիրելի՛ հազարապետս, բայց ոչ անմատչելի :

— Ո՞րչափ ծանրութիւն պիտի ունենայ ուրեմն ուսմբը, հարցուց Մորկան :

— Ահա իմ հաշիւներուս արդիւնքը, պատասխանեց Պարպիքէյն . հարիւր ութ մատնաչափ տրամագիծ և տասներկու մատնաչափ հաստութիւն ունեցող ուսմբ մը, եթէ երկաթի ձոյլէ շինուած լինի, վաթսուն և եօթն հազար չորս հարիւր քառսուն լիպրա կը կշռէ . իսկ եթէ ալիւմինիումի ձոյլէ շինուի, տասներինն հազար երկու հարիւր յիսուն լիպրայի կ'իջնէ ծանրութիւնը :

— Կատարեա՛լ, կատարեա՛լ, ըսաւ հազարապետը, բայց չէ՞ք գիտեր թէ լիպրան տասներկու տոլարէն այդ ուսմբը պիտի ընէ . . .

— Հարիւր եօթանասուն երեք հազար երկու հարիւր յիսուն տոլար (928,437 ֆր. 50 սանթիմ), բայց մի՛ վախնաք, բարեկամք, մեր ձեռնարկին համար ստակ չպակսիր, ես կրնամ վստահացնել ձեզ :

— Պիտի տեղայ մեր անտուկներուն մէջ, ըսաւ ժ. Թ. Մասթոն :



— Ի՞նչ կը խորհիք ուրեմն ալիւմինիումին վրայ , հարցուց նախագահը :

— Կ'ընդունիմք , պատասխանեց Մասնախմբին և ընդ անդամները :

— Գաղով ուումբին ձեւին , ըսաւ Պարպիքէյն , այդ մեծ կարեւորութիւն չունի . որովհետեւ մթնոլորտն անցնելէ յետոյ դատարկութեան մէջ պիտի դառնուի . ես կլոր ուումբը կ'առաջարկեմ , որ իւր վրայ կը դառնայ՝ եթէ հաճայ թուի իրեն , և իւր ուղածին պէս կը վարուի :

Այսպէս վերջացաւ Մասնախմբին առաջին նիստը . ուումբի խնդիրը վերջնապէս լուծուած էր , և Ժ. Թ. Մասթոն շատ ուրախացաւ ալիւմինիումէ ուումբ մը լուսնաբնակաց զրկելու խորհրդին վրայ , որ յոյժ բարձր գաղափար մը պիտի տար անոնց՝ երկրի բնակչաց վրայ :

ԳԼՈՒԽ Ը .

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Մասնախմբին առաջին նստին մէջ եղած որոշումները մեծ ազդեցութիւն ունեցան դուրսը . քանի մ'երկչոտ մարդիկ երկելը կ'զգային լսելով որ քսան հազար լիպրա ծանրութիւն ունեցող ուումբ մը պիտի արձակուէր երկիրն ի վեր : Կը հարցնէին թէ ո՞ր թնդանօթ կրնայ երբէք այդպիսի վեթխարի ուումբի մը պէտք եղածին չափ սկզբնական արագութիւն տալ : Մասնախմբին երկրորդ նստին ատենազրուութիւնն յաղթական կերպիւ պիտի պատասխանէր այս խնդրոց :

Հետեւեալ իրիկունը կրն—բիւպի չորս անգամք Սանտուիչներու նոր շեղձակոյտերու և թէյի սկիւա—նոսի մ'առչեւ ի սեղան նստան . վիճաբանութիւնը

շատ չանցած սկսաւ իւր ընթացքն , և այս անգամ առանց յառաջաբանի :

«Սիրելի պաշտօնակիցք , ըսաւ Պարպիքէյն , այժմ պիտի զբաղիմք շինուելիք թնդանօթին , անոր ձեւին , երկայնութեան , բաղադրութեան և ծանրութեան : Հաւանական է որ յաջողինք անհեթեթ մեծութիւն մը տալ անոր , բայց որչափ և մեծ լինին դժուարութիւնք , մեր արուեստագէտ հանճարը դիւրաւ կը յաղթէ անոնց : Հաճեցէք ուրեմն ունին դնել ինձ , և մի' խնայէք ինձմէ ձեր առարկութեանց ուղղակի հարուածներն : Ես չեմ վախնար անոնցմէ : »

Հաւանութեան խանչիւն մ'ընդունեց զայս յայտարարութիւն :

« Չմոռնամք , յարեց Պարպիքէյն , թէ մեր վիճաբանութիւնն երէկ յո՞ր կէտ տարաւ մեզ . ինդիրն այժմ սա ձեւով կը ներկայանայ . մէկ մանրերկրորդի մէջ տասներկու հազար եարտայի սկզբնական արագութիւն տալ հարիւր ութ մատնաչափ տրամագիծ և քսան հազար լիպրա ծանրութիւն ունեցող մնամէջ ուումբի մը : »

—Սրդարեւ այդ իսկ է խնդիրը , պատասխանեց Էլֆիէսթոն :

—Կը շարունակեմ , յարեց Պարպիքէյն : Երբոր ուումբ մ'արձակուի միջոցին մէջ , ի՞նչ կը պատահի իրեն : Երեք անկախ զօրութիւնք կը մըցին իւր վրայ , միջավայրին ընդդիմութիւնը , երկրի ձգողութիւնն և իրեն տրուած մղման ուժը : Քննեմք այս երեք զօրութիւնները : Միջավայրին , այսինքն օդին ընդդիմութիւնը մեծ կարեւորութիւն չունենար : Արդարեւ , երկրային մթնոլորտը քառսուն մղոն միայն ունի : Արդ , տասներկու հազար եարտայի արագութեամբ ուումբն հինգ մանրերկրորդի մէջ կ'անցնի այդ միջավայրն , և այսչափ կարճ ժամանակի մը մէջ միջավայրին ընդդի-



մութիւնն աննշանց կրնայ համարուիլ : Անցնիմք հիմայ  
 երկրի ձգողութեան , այսինքն ուումբին ծանրութեան :  
 Գիտեմք որ այդ ծանրութիւն՝ հեռաւորութեանց քա-  
 ռակուսիին հետ խոտորնակ համեմատութեամբ պիտի  
 նուազի : Արդարեւ , ահաւասիկ բնագիտութեան մեզ  
 ուսուցածն : Երբոր մարմին մ'ինքնիրեն թողուելով  
 երկրի մակերեւոյթին վրայ իյնայ , իւր անկումը տաս-  
 նեւհինգ ոտնաչափ (4 մէթր և 90 սանթիմէթր) է  
 առաջին մանրերկրորդին մէջ , և թէ նոյն մարմին փո-  
 խադրի երկու հարիւր յիսուն հազար հինգ հարիւր  
 քառասունուերկու մղոն հեռի , այսինքն մինչեւ լուսնի  
 գտնուած հեռաւորութիւնն , այն ժամանակ իւր ան-  
 կումը գրեթէ կէս գծաչափի կ'իջնէ առաջին մանրերկ-  
 րորդին մէջ , որ գրեթէ անշարժութիւն է : Աւրեմն  
 խնդիրը ծանրութեան այս ներգործութիւնն յառա-  
 ջատաբար յաղթելու վրայ է : Ի՞նչպէս պիտի կըր-  
 նամք .— մղման զօրութեամբ :

— Ահա գծուարութիւնը , պատասխանեց հազարա-  
 պետը :

— Արդարեւ այս է , յարեց նախագահը , բայց կը  
 յաղթեմք , վասն զի մեզ պէտք եղած մղման ուժը  
 թնդանօթին երկայնութենէն և գործածուած վառ-  
 դին որքանութենէն պիտի արտադրի , որովհետեւ մի-  
 ոյն սահմանը միւսին ընդդիմութիւնն է : Աւրեմն թըն-  
 դանօթին տրուելու մեծութեան զբաղիմք այսօր : Ա-  
 ւելորդ է ըսել թէ մեք կրնամք զայն հաստատել գը-  
 րեթէ անսահման ընդդիմութեան պայմաններու մէջ ,  
 որովհետեւ գործածելու սահմանուած չէ :

— Այդ ամենն յայտնի ճշմարտութիւն է , պատաս-  
 խանեց զօրավարը :

“ Մինչեւ ցարդ , ըսաւ Պարպիքէյն , ամենէն եր-  
 կայն թնդանօթները , մեր ահագին փողումպիտանե-  
 րը քսան և հինգ ոտնաչափն անցած չեն . ուստի շատ

մարդիկ պիտի զարմանան մեր շինելիք թնդանօթին  
 մեծութեան վրայ :

— Է՛հ , անշուշտ , գոչեց Ժ. Թ. Մասթոն : Իմ  
 հաշուիս , ես առ նուազն կէս մղոն երկայնութեամբ  
 թնդանօթ մը կը խնդրեմ :

— Կէս մղո՞ն , գոչեցին հազարապետն ու զօրա-  
 վարը :

— Այո՛ , կէս մղոն , և տակաւին չափազանց կարճ  
 կը լինի կիսով :

— Օ՛ն , Մասթոն , պատասխանեց Մորկան , կը  
 չափազանցեք :

— Ամենեւին , ըսաւ եռանդուն քարտուղարն , և  
 ճշմարտիւ չեմ գիտեր թէ ինչո՞ւ համար չափազան-  
 ցութիւն կը համարիք ըսածս :

— Վասն զի խիստ հեռու կ'երթաք :

— Գիտցիք , Տիա՛ր , պատասխանեց Ժ. Թ. Մաս-  
 թոն խրոխտ դէմքով մը , թէ ումբաձիգ մը ուումբի  
 պէս է , չափազանց հեռու չկրնար երթալ :

Վիճաբանութիւնն անձնականութեան դառնալու  
 վրայ էր , բայց նախագահը միջամտեց :

“ Հանդարտիմք , բարեկամք , և խորհրդածեմք :  
 Տարակոյս չկայ թէ յոյժ մեծ զօրութիւն ունեցող  
 թնդանօթ մը պէտք է մեզ , որովհետեւ անոր եր-  
 կայնութիւնը պիտի աճեցնէ ուումբին ներքեւ դիզ-  
 ւած կաղին զօրութիւնը . բայց պէտք եղած սահմա-  
 նէն անդին անցնիլ անօգուտ է : ”

— Կատարելապէս , ըսաւ հազարապետն :

— Ի՞նչ են այսպիսի պարագայից մէջ գործած-  
 ուած կանոնները : Սովորաբար թնդանօթի մ'երկայ-  
 նութիւնը քսան-քսան և հինգ անգամ աւելի է ուում-  
 բին տրամագիծէն , և երկու հարիւր երսուն և հին-  
 գէն երկու հարիւր քառասուն անգամ անկէ ծանր կը  
 կշռէ :



— Այդ բաւական չէ, գոչեց ժ. Թ. Մասթոն ուժ-  
գնութեամբ :

— Ես ալ կը խոստովանիմ որ բաւական չէ, պատ-  
ուական բարեկամս, և արդարեւ այդ համեմատու-  
թեան հետեւելով, ինն ոտք լայնութիւն ունեցող և  
երսուն հազար լիպրա կշռող ռուսքի մը համար՝ թըն-  
դանօթն երկու հարիւր քսան և հինգ ոտք երկայնու-  
թիւն և եօթն միլիոն երկու հարիւր հազար լիպրա  
ժանրութիւն միայն կրնայ ունենալ :

— Ծաղրական բան է այդ, ըսաւ ժ. Թ. Մասթոն,  
աւելի լաւ է ատրճանակ մ'առնուլ :

— Իմ կարծիքս ալ այդ է, պատասխանեց Պար-  
պիքէյն, այս պատճառաւ կ'ուզեմ քառապատկել  
այդ երկայնութիւնն և ինն հարիւր ոտք երկայնու-  
թեամբ թնդանօթ մը շինել :

Զօրավարն և հաղարապետը քանի մ'առարկու-  
թիւններ ըրին, բայց և այնպէս այս առաջարկը կըն-  
ֆիլիպի քարտուղարէն զօրեղապէս պաշտպանուելով՝  
վերջնապէս ընդունուեցաւ :

— Այժմ, ըսաւ էլֆիսթոն, ի՞նչ հաստութիւն  
պիտի տրուի թնդանօթի փողին :

— Վեց ոտնաչափ պատասխանեց Պարպիքէյն :

— Անշուշտ այդպիսի ահագին թնդանօթ մը սայլի  
վրայ զետեղելու դիտաւորութիւն չունիք :

— Եւ սակայն փառաւոր բան կը լինի, ըսաւ ժ.  
Թ. Մասթոն :

— Բայց անգործադրելի, պատասխանեց Պարպի-  
քէյն. ոչ, ես կը խորհիմ այդ թնդանօթը նոյն իսկ  
գետնի վրայ ձուլել, դարբնեալ երկաթէ շրջանակնե-  
րով ամրապնդել, քարակիր հաստ գանգուածով մը  
շրջապատել, այնպէս որ շրջակայ երկրին բոլոր դի-  
մացկունութեան մասնակցի : Թնդանօթը ձուլուելէ  
յետոյ, փողը խնամով պիտի յղկուի և բերնին մե-

ծութիւնն այն կերպիւ չափուի, որ ռուսքին հոյն ար-  
գիլուի. այսպէս՝ բնաւ կազ չկորնչիր, և վառօդին  
բոլոր ուժը մղման կը գործածուի :

— Հուրա՛, հուրա՛, գոչեց ժ. Թ. Մասթոն, ահա  
ունիմք հիմա մեր ուղած թնդանօթը :

— Ո՛չ դե՛ռ, պատասխանեց Պարպիքէյն՝ ձեռքովն  
հանդարտեցնելով իւր անհամբեր բարեկամն :

— Եւ ինչո՞ւ համար :

— Վասն զի դեռ չվիճաբանեցինք ձեւին վրայ :  
Թնդանօթ պիտի լինի թէ ու՛րեքն կամ հրասանդ :

— Թնդանօթ, պատասխանեց Մորկան :

— Ռմբկէն, ըսաւ հարիւրապետը :

— Հրասանդ, գոչեց ժ. Թ. Մասթոն :

Նոր և բաւական ջերմ՝ վիճաբանութիւն մը պիտի  
բացուէր, իւրաքանչիւրն իւր սիրելի զէնքը պաշտպա-  
նելով, բայց նախագահը մէկէն արգիլեց :

— Բարեկամք, ըսաւ, ձեզ ամենդ ալ պիտի հա-  
մաձայնեցնեմ : Մեր ֆոլիմպիատն այդ երեք տեսակ  
հրանօթներէն ալ մաս պիտի ունենայ : Թնդանօթ  
պիտի լինի, որովհետեւ վառօդին ընդունարանը փո-  
ղին կամ խողովակին տրամագիծը պիտի ունենայ.  
Ռմբկէն պիտի լինի, որովհետեւ ինեսուն աստիճանի  
անկեան մը ներքեւ պիտի ուղղուի, և առանց ըն-  
կըրկման կարելութեան, անդրդուելի կերպիւ դետ-  
նին վրայ հաստատուած. իւր կողերուն մէջ կուտեալ  
բոլոր մղիչ զօրութիւնը ռուսքին պիտի հաղորդէ :

— Ընդունեցինք, ընդունեցինք, պատասխանեցին  
մասնախսբին անդամները :

— Պարզ խորհրդածութիւն մը, ըսաւ էլֆիսթոն,  
այդ թնդա-ռմբկէն-հրասանդը գծաւօր պիտի լինի :

— Ո՛չ, պատասխանեց Պարպիքէյն, ո՛չ, մեզ ըս-  
կըզբնական խիտ մեծ արագութիւն մը պէտք է. և  
դուք քաջ գիտէք թէ ռուսքը գծաւոր թնդանօթնե-



րուն մէջէն աւելի ծանր դուրս կ'երնէ՝ քան թէ ողորկափող թնդանօթներուն մէջէն :

— Ճիշդ է :

— Վերջապէս այս անգամ ունիմք մեզի պէտք եղած թնդանօթը, կրկնեց ժ. Թ. Մասթոն :

— Դեռ ո՛չ բոլորովին, պատասխանեց նախագահն :

— Եւ ինչո՞ւ համար :

— Վասն զի դեռ չեմք գիտեր թէ ի՞նչ մետաղէ պիտի շինեմք :

— Այդ ալ որոշենք շուտով :

Մասնախմբին չորս անդամներէն իւրօքանչիւրը մէկ մէկ երկոտասանեակ սանտուիչ լափեցին դաւաթ մը թէյով, և վիճաբանութիւնն սկսաւ :

— Քաջ պաշտօնակիցք իմ, ըսաւ Պարպիքէյն, մեր թնդանօթը մեծ կարծրութիւն, մեծ դիմացկունութիւն պիտի ունենայ, տաքէ չպիտի հալի, անլուծելի պիտի լինի և ժանգ չպիտի բռնէ :

— Այդ մասին տարակոյս չկայ, պատասխանեց հաղարապետն, և որովհետեւ մեծաքանակ մետաղ գործածել հարկ պիտի լինի, ընտրելու դժուարութիւն չեմք քաշեր :

— Ուրեմն, ըսաւ Մորկան, ես՝ մեր ֆուլումպիատը շինելու համար մինչեւ ցարդ ծանօթ եղած լաւագոյն բաղադրութիւնը կ'առաջարկեմ. այսինքն հարիւր մաս պղինձ, տասներկու մաս անագ և վեց մաս արոյր :

— Բարեկամ, պատասխանեց նախագահն, ես ալ կը ճանչեմ որ այդ բաղադրութիւնը գերազանց արդիւնք տուած է, բայց խիստ սուղ կ'երնէ և գործածութիւնն այ յոյժ դժուար կը լինի : Ուստի կը մըտածեմ որ պէտք է ընտիր՝ բայց արժան գնով նիւթ մ'ընդունիլ, ինչպէս է ձոյլ երկաթը : Չեք ալ կարծիքն այսպէս չէ՞, հաղարապետ :

— Կատարելապէս, պատասխանեց էլֆիսթոն :

— Արդարեւ, շարունակեց Պարպիքէյն, ձոյլ երկաթը պղինձէն տասն անգամ նուազ արժէք ունի, դիւրաւ կը ձուլի, պարզապէս կը հոսէ աւազէ կաղապարներու մէջ և դիւրաւ կը գործուի : Ըսել է որ թէ՛ դրամի և թէ՛ ժամանակի խնայութիւն կայ : Մընաց որ դերազանցապէս այ լաւ է այդ նիւթ : Կը յիշեմ որ պատերազմին ժամանակ, Սթրանթայի պաշարման միջոցին, ձոյլ երկաթէ թնդանօթներն հազարական ռուբլ արձակեցին ամեն քսան վայրկեան, առանց բնաւ վնասուելու :

— Սակայն ձոյլ երկաթն յոյժ դիւրաբեկ է, պատասխանեց Մորկան :

— Այո՛, բայց յոյժ դիմացկուն նաեւ : Մնաց որ մեր պայթելիք չունինք, այս մասին կ'ապահովցնեմ ձեզ :

— Մէկը կրնայ պայթիլ և պարկեշտ լինիլ, ըսաւ վճռաբար ժ. Թ. Մասթոն :

— Անշուշտ, պատասխանեց Պարպիքէյն : Ուրեմն պիտի աղաչեմ մեր պատուարժան քարտուղարն որ ինն հարիւր ոտք երկայնութիւն ունեցող, ինն ոտք ներքին տրամագիծ և վեց ոտք հաստութեամբ շրջապատ ունեցող ձոյլ երկաթէ թնդանօթի մը ծանրութիւնը հաշուէ :

— Հիմա, պատասխանեց ժ. Թ. Մասթոն : Եւ ինչպէս տուի որն ըրած էր, իւր ձեւերը գծեց սքանչելի արագութեամբ, և վայրկեան մը վերջն ըսաւ : « Այդ թնդանօթ վաթսուն և ութ հազար քառսուն թոնոյ պիտի կշռէ :

— Եւ լիպրան 2 սէնցէն (10 սանթիմ), պիտի ընէ...

— Երկու միլիոն հինգ հարիւր տասն հազար եօթն հարիւր տղար (13,608,000 ֆրանք) :



Ժ. Թ. Մասթոն, հազարապետն և զօրավարը սրբատառնը դէմքով նախագահին նայեցան :

— Ուրեմն, տեա՛րք, ըսաւ նախագահը, պիտի կրկնեմ ձեզ ինչ որ կ'ըսէի երէկ, անհոգ եղիք, մի լիոնները չպիտի պակսին :

Նախագահին այս հաւաստման վրայ մասնախումբը ցրուեցաւ, իւր երրորդ նիստն հետեւեալ աւուր իրիկուան թողլով :

ԳԼՈՒԽ Թ.

ԽՆԴԻՐ ՎԱՌՕԴԻ



Կը մնար լուծել վառօղի խնդիրն : Հասարակութիւնն անձկութեամբ կ'սպասէր այս վերջին որոշման, ռումբին մեծութիւնն և թնդանօթին երկայնութիւնն որոշուելէ յետոյ, մղումն արտադրելու համար պէտք եղած վառօղին քանակութիւնն ի՛նչ պիտի լինէր : Այդ սարսափելի գործիչն, որոյ արգիւնքը կրցան մարդիկ զսպել, իւր դերն անսովոր համեմատութեամբ խաղալու պիտի կոչուէր :

Յայտնի է ընդհանրապէս և կամաւ կը յեղյեղուի թէ վառօղի չորստասաներորդ դարուն մէջ հնարուած է Շուարձ անուն կոծնաւորէ մը, որ կեանքը վրայ տուեր է իւր ըրած գիւտին : Բայց այժմ դրեթէ ապացուցուած է որ այդ պատմութիւնը միջին դարու առասպելախառն պատմութեանց կարգը պէտք է դասուի : Վառօղն ոչ որ հնարեց, այլ ուղղապէս Յունական հոլրէն ելած է, որ ծծումբէ և աղբորակէ կը բաղկանար : Միայն թէ այն ժամանակէն ի վեր, այս խառնուրդն, որ հրածաւալ խառնուրդ մ'էր միայն, պայթուցիկ խառնուրդի փոխուեցաւ :

Բայց եթէ հմուտ մարդիկ կատարելապէս գիտեն վառօղին սուտ պատմութիւնը, քիչեր ծանօթ են անոր մեքենական զօրութեան : Արդ՝ զայս պէտք է գիտնայ, որպէս զի Մասնախմբին լուծման առաջարկուած խնդրոյն կարեւորութիւնն հասկցուի :

Արդ, մէկ լիտր վառօղն երկու լիպրայի (\*) (900 կուամ) չափ կը կշռէ, և երբոր բռնկի, չորս հարիւր լիտր կազ կ'արտադրէ : Այս կազն ազատ մնալով և երկու հազար չորս հարիւր աստիճան ջերմութենէ ներդործուելով՝ չորս հազար լիտրի տարածութիւն կը բռնէ : Ուրեմն վառօղին զանգուածը կամ ծաւալն՝ իւր բռնկելովն արտադրած կազի ծաւալին հետ բաղդատմամբ՝ մէկ առ չորս հազար է : Ասկից կրնայ դատուիլ թէ ի՛նչ ահագին մղում կ'ունենան այդ կազերն՝ երբոր չորս հազարապատիկ նեղ միջոցի մէջ ճնշուին :

Չոյս կատարելապէս գիտէին Մասնախմբին անդամք, երբոր հետեւեալ օրն ի նիստ դումարեցան : Պարպիքէյն խօսք տուաւ էլիֆիթոն հազարապետին, որ պատերազմին ժամանակ վառօղարանաց տնօրէն եղած էր :

« Սիրելի՛ ընկերակիցք իմ, ըսաւ այս նշանաւոր քիմիագէտ, անփխտելի թուանշաններ պիտի ներկայեմ, որք իբր հիմ պիտի ծառայեն մեզ : Քսանեւ չորսնոց ռումբն, որոյ վրայ պատուարժան Ժ. Թ. Մասթոն նախընթաց օրն այնչափ բանաստեղծական կերպիւ կը խօսէր, միայն տասնեւվեց լիպրա վառօղով դուրս կը քշուի հրանօթին բերնէն :

— Այդ թուին վրայ ապահով էք, հարցուց Պարպիքէյն :

— Բացարձակապէս, պատասխանեց հազարապետ :

(\*) Ամերիկայի լիպրան 453 կուամ է :



տրն : Արմսթրոնկն (Թնդանօթ) եօթանասուն և հինգ լիպրա վառօղ միայն կը գործածէ ութ հարիւր լիպրանոց ռումբի մը համար . և ֆոլումպիատ Ռոտման հարիւր վաթսուն լիպրա վառօղ կը գործածէ իւր կէս թոնոյ կշռող ռումբը վեց մղոն տեղ զրկելու համար : Այս իրողութիւնը կասկածի ներքեւ չեն կրնար ձգուիլ, վասն զի Թնդանօթարանի մասնախմբին աւենազրութիւններէն քաղած եմ անձամբ :

— Կատարելապէս, պատասխանեց նախագահն :

Արդ, չարունակեց հաղարապետն, այս թիւերէն հանուելիք հետեւութիւնն այս է թէ վառօղին քանակը ռումբին ծանրութեան հետ չաւելնար . արդարեւ, եթէ քսան և չորսնոց ռումբի մը համար տասն և վեց լիպրա վառօղ պէտք է, կամ ուրիշ կերպ խօսելով, եթէ հասարակ Թնդանօթներու մէջ ռումբին ծանրութեան երկու երրորդ ծանրութիւնն ունեցող քանակութեամբ վառօղ կը գործածուի, այս համեմատութիւնն անփոփոխ չէ, Հաշուեցէք և կը տեսնէք որ կէս թոնոյ կշռող ռումբին համար՝ փոխանակ երեք հարիւր երեսունուերեք լիպրա վառօղ գործածուելու՝ հարիւր վաթսուն լիպրա միայն կը գործածուի :

— Ի՞նչ եղրակացնել կ'ուզէք, հարցուց նախագահն :

— Եթէ ձեր տեսութիւնը մինչեւ վերջին ծայրը մղէք, սիրելի՛ հաղարապետս, ըսաւ Ժ. Թ. Մասթոն, սա եղրակացութեան պիտի հասնիք թէ երբոր ձեր ռումբն ըստ բաւականի ծանր լինի, բնաւ վառօղ չպիտի դնէք :

— Մասթոն բարեկամս կատակաբան է մինչեւ իսկ լուրջ խնդրոց մէջ, պատասխանեց հաղարապետը, բայց թող չվախնայ . ես վառօղի քանակութիւններ պիտի առաջարկեմ, որք իւր ռմբաձիղի ինքնասիրու-

թիւնը պիտի գոհացնեն : Միայն թէ, կ'ուզեմ հաստատել թէ պատերազմին ժամանակ, փորձերէ յետոյ, մեծ Թնդանօթաց համար վառօղին ծանրութիւնը ռումբին ծանրութեան տասներորդին վերածեցաւ :

— Շատ ճիշդ է, ըսաւ Մորկան : Բայց ռումբին մղում տալու համար պէտք եղա՞ վառօղին քանակութիւնն որոշելէ յառաջ, կարծեմ թէ լաւ կը լինի անոր տեսակին վրայ համաձայնիլ :

— Խոչորահատ վառօղ պիտի գործածեմք, պատասխանեց հաղարապետն, որովհետեւ փոշի վառօղէն աւելի արագ կը բռնկի :

— Անշուշտ, ըսաւ Մորկան, բայց յոյժ խորտակիչ է և վերջապէս Թնդանօթներուն փողը կ'աւրէ :

— Լա՛ւ . արդարեւ երկար գործածուելու սահմանեալ Թնդանօթի մը համար անպատեհութիւն մ'է այդ . բայց ոչ մեր ֆոլումպիատին համար : Մեր պայթման վտանգէ երկիւղ չունիմք . և պէտք է որ վառօղն արագապէս բռնկի, որպէս զի իւր մեքենական արդիւնքը կատարեալ լինի :

— Կրնամք, ըսաւ Ժ. Թ. Մասթոն, բաղմամբ հրածակեր շինել Թնդանօթին վրայ, որպէս զի այլ և այլ կողմերէ կրակ տրուի :

— Անշուշտ, պատասխանեց Էլֆիսթոն, բայց գործողութիւնը կը դժուարանայ : Ուստի կը դառնամ խոչորահատ վառօղիս, որ այդ դժուարութեանց առիթ չտար :

— Այդպէս թող լինի, ըսաւ զօրավարն :

— Իւր ֆոլումպիատը լցնելու համար, ըսաւ հաղարապետը, Ռոտման շագանակի խոչորութեամբ վառօղ մը կը գործածէր, որ ձոյլ երկաթէ կատասնելու մէջ պարզապէս խորովեալ ուռնուոյ ածուխով շինուած էր : Այս վառօղը կարծր և փայլուն էր .



ձեռքի վրայ բնաւ հետք չէր թողուր . մեծ համեմատութեամբ ջրածին և թթուածին կը պարունակէր . արագապէս կը բռնկէր . և թէպէտ յոյժ խորտակիչ էր , բայց հրանօթներն զգալի կերպիւ չէր մաշեցնէր :

— Ուրեմն , ինձ կը թուի թէ , պատասխանեց ժ. թ. Մասթոն , այլ եւս վարանելու պատճառ մը չունիմք , և մեր ընտրութիւնն եղած է :

— Եթէ ոսկեփոշին նախապատիւ չհամարիք , ըսաւ հազարապետը ծիծաղելով , յորմէ իւր դիւրագլուխ բարեկամը սրամտելով՝ սպառնալից շարժում մ'ըրաւ իւր ճանկով :

Մինչեւ այն ժամանակ Պարպիքէյն չէր խառնուած վիճաբանութեան : Թողուցեր էր որ խօսին . և ինք մտիկ կ'ընէր : Անշուշտ գաղափար մ'ունէր : Ուստի բաւականացաւ պարզապէս ըսելով .

« Այժմ , բարեկամք , ո՛րչափ վառօդ կ'առաջարկէք դուք : »

Կրն-Քլիւպի երեք անդամք պահ մ'իրարու երես նայեցան :

« Երկու հարիւր հազար լիպրա , ըսաւ վերջապէս Մորկան :

— Հինգ հարիւր հազար , ըսաւ հազարապետը :

— Ութ հարիւր հազար , գոչեց ժ. թ. Մասթոն :

Այս անգամ էլֆիթոն չհամարձակեցաւ չափազանցող համարիլ իւր պաշտօնակիցն , որովհետեւ խընդիրը քօան հազար լիպրա կշռող և մէկ մանրերկրորդի մէջ տասներկու հազար եարտա սկզբնական զօրութիւն ունեցող ռուսք մը մինչեւ ի Լուսին զրկելու վրայ էր : Պահ մը լուութիւն յաջորդեց երեք պաշտօնակցաց երրակի առաջարկութեան : Վերջապէս նախագահը խզեց լուութիւնը :

« Քաջ ընկերակիցք իմ , ըսաւ հանդարտ ձայնիւ , ես այս սկիզբէն ճանրայ կ'եղնեմ , թէ մեր թնդանօթը

պէտք եղած պայմաններու մէջ շինուելով՝ անսահման ընդդիմութիւն պիտի ունենայ : Ուստի պիտի զարմացնեմ զպատուարժան ժ. թ. Մասթոն՝ ըսելով իրեն թէ իւր հաշիւներուն մէջ երկչոտ վարուեցաւ : Ես պիտի առաջարկեմ կրկնապատկել իւր ութ հարիւր հազար լիպրա վառօդը : — Մէկ միլիոն վեց հարիւր հազար լիպրա , գոչեց ժ. թ. Մասթոն՝ ցատկելով իւր աթոռին վրայ :

— Այո՛ , այդչափ :

Բայց այն ժամանակ պէտք է իմ առաջարկած կէս մղոն երկայնութեամբ թնդանօթիս կայանք տալ :

— Անշուշտ , ըսաւ հազարապետը :

— Բայց մէկ միլիոն վեց հարիւր հազար լիպրա վառօդն , ըսաւ Մասնախմբին քարտուղարը , գրեթէ քսանուերկու հազար քառակուսի խորանարդ ոտնաչափ տեղ կը բռնէ . և որովհետեւ ձեր թնդանօթն յիսուն և չորս հազար խորանարդ ոտնաչափ պարունակութիւն ունի , կիսով չափ պիտի լցուի , և այն ժամանակ փողն ըստ բաւականի երկայնութիւն չունենար , որպէս զի կազին ծաւալումը բաւական մղում տայ ռումբին : »

Այս առարկութեան պատասխատն չկար : ժ. թ. Մասթոնի ըսածը ճշմարիտ էր : Ամեն ալ Պարպիքէյնի նայիլ սկսան :

— Սակայն , ըսաւ նախագահն , ես կ'ուզեմ որ վառօդն այդ քանակութեամբ լինի : Խորհեցէք անգամ մը , մէկ միլիոն վեց հարիւր հազար լիպրա վառօդը վեց երկիլիոն լիտր կազ կը ծնանի , վեց երկիլիոն , կը լսէք :

— Բայց այն ժամանակ ի՞նչպէս պիտի ընեմք , հարցուց զօրավարն :

— Յոյժ պարզ է մեր ընելիքը , պէտք է պակսեցնել վառօդին այդ քանակութիւնը . նոյն մեքենական զօրութիւնը պահել տալով :



— Լաւ , բայց ի՞նչ միջոցաւ :  
— Պիտի ըսեմ՝ ձեզ , պատասխանեց Պարպիքէյն պարզաբար :

Իւր խօսակիցք լափեցին զայն իրենց աչերով :  
— Ամենադիւրին բան մ'է , ըսաւ , վառօդին այդ քանակութիւնը քառապատիկ նուազ ծաւալի մը վերածել : Ամենքդ ալ կը ճանչէք այն նիւթն , որ բոյսերուն տարրական հիւսքը կը կազմէ , և Սէլլիւզ կը կոչուի :

Ա՛յ , գոչեց հաղարապետը , կը հասկնամ ձեր ըսածը , սիրելի Պարպիքէյն :

Այս նիւթ , ըսաւ նախագահը , զանազան մարմնոց մէջ կրնայ գտնուիլ , կատարելապէս մաքուր , գլխաւորապէս բամպակին մէջ , որ բամպակենիի հունտերուն աղուամազն է միայն և ոչ այլ ինչ : Արդ , բամպակը բաղադրուելով՝ գերազանցապէս անլուծելի , գերազանցապէս այրելի , գերազանցապէս պայթելի նիւթ մը կը լինի : Ասկէց քանի մը տարի առաջ , 1832 ին , Ֆրանտացի քիմիագէտ մը , Պրաքոնոյ , այս բաղադրութիւնը գտաւ , և ֆսիլոյիտին անուանեց : 1838 ին , ուրիշ Ֆրանտացի մը , Բըյուզ , անոր այլ և այլ յատկութիւնները զննեց , և վերջապէս 1846ին Գերմանացի քիմիագէտ մը , Շոնպէյն , զայն իբրեւ պատերազմական վառօդ գործածել առաջարկեց : Այս վառօդն է ֆոթոն-Սըթիք :

— Կամ Բիրոքսիլ , պատասխանեց Էլֆիթոն :

Կամ Ֆիւլմի-ֆոթոն , ըսաւ Մորկան :

— Միթէ չկայ Ամերիկացի անուն մը այդ գիւտին տակը դնելու , գոչեց Ժ. Թ. Մասթոն՝ աղգային ինքնասիրութեան բուռն զգացումէ մը մղեալ :

— Չկայ դժբաղդարար , պատասխանեց հաղարապետը :

— Սակայն , զո՞հ ընելու համար զՄասթոն , ըսաւ

նախագահը , պիտի ըսեմ անոր թէ մեր հայրենակցաց միոյն աշխատութիւնները կրնան կապակցիլ Սէլլիւզի ուսման . վասն զի ֆոլոտիոնն , որ լուսանկարի գլխաւոր գործիչներէն մին է , պարզապէս Ալքոլախառն էթէրի մէջ լուծուած Բիրոքսիլ է , հնարեալ է Մէյնարտէ , որ այն ժամանակ բժշկութեան աշակերտ էր Ի Պոսթոն :

— Հուրա՛ Մէյնարտի և Ֆիւլմի-ֆոթոնի համար , գոչեց կրն-Ֆիլիպի պոռոտաձայն քարտուղարը :

— Կը վերադառնամ Բիրոքսիլի , (բամպակէ վառօդ) շարունակեց Պարպիքէյն : Դուք գիտէք անոր յատկութիւններն , որով յոյժ թանկագին արժէք պիտի ունենայ մեզ համար : Ամենամեծ դիւրութեամբ կը պատրաստուի . բամպակը ծխաշունչ (\*) Ասիտ-Սըթիքի մէջ կը թաթխուի տաան և հինգ վայրկեան , յետոյ կը լուացուի , կը չորնայ և ամեն բան կը լմնայ :

— Արդարեւ ամենապարզ է , ըսաւ Մորկան : — Ասկէց զատ , Բիրոքսիլը չարուիր խոնաւութիւնէ , թանկագին հանգամանք մը մեզ համար , որովհետեւ թընդանօթը լցնելու համար քանի մ'օր պէտք պիտի լինի . իւր բորբոքելիութիւնն հարիւր ևօթանասուն աստիճանէ տեղի կունենայ փոխանակ երկու հարիւր քառասունի , և բորբոքումն ալ այնչափ արագ է , որ հասարակ վառօդի վրայ դրուելով՝ անկէ շատ առաջ կը բռնկի :

— Կատարեալ , պատասխանեց հաղարապետը :

— Միայն թէ աւելի թանկագին է :

— Ի՞նչ փոյթ ըսաւ Ժ. Թ. Մասթոն :

— Վերջապէս վառօդէն քառապատիկ աւելի արագութիւն կը հաղորդէ ուսմին : Կ'աւելցնեմ իսկ , որ եթէ իւր ծանրութեան ութ տասներորդը նիթրատ

(\*) Այսպէս կը կոչուի , վասն զի խոնաւ օդին հետ հաղորակցելուն պէս՝ թանձր սպիտակ ծուխ մը կ'արձակէ :



տը Բօթասով խառնուի, ծաւարական զօրութիւնն աւելի մեծ համեմատութեամբ կ'աւելնայ :

— Պէտք պիտի լինի՞ այդ, հարցուց հազարապետը :

— Չեմ կարծեր, պատասխանեց Պարպիքէյն. Այսպէս ուրեմն, փոխանակ մէկ միլիոն վեց հարիւր հազար լիպրա վառօդի, չորս հարիւր հազար լիպրա Յիւլմի-քօթօն (բամպակէ վառօդ) պիտի ունենամք. և որովհետեւ կրնամք առանց վտանգի հինգ հարիւր լիպրա բամպակ կոխել քսանեւեօթն խորանարդ ոտնաչափի մէջ, այս նիւթ Քոլումպիատի մէջ երսուն ձողաչափ բարձրութիւն պիտի բռնէ : Այս կերպով ուսման եօթն հարիւր ոտնաչափէն աւելի ճանրայ պիտի ընէ թնդանօթի փողին մէջ՝ վեց երկրորդն լիտր կազի բուռն ճգանց ներքեւ, իւր թուիչն առնել առաջ դէպի գիշերային աստղն : »

Այս միջոցին ժ. Թ. Մասթօն չկրցաւ իւր սրտին յուզումը զսպել, ուսման մ'ուժգնութեամբ իւր բարեկամին թեւերուն մէջ նետուեցաւ, և զայն պիտի խորտակէր, եթէ Պարպիքէյն ուսման դիմանալու կերպիւ չինուած չլինէր :

Այս միջադէպն աւարտեց Մասնախմբին երրորդ նիստը : Պարպիքէյն և իւր յանդուգն պաշտօնակիցք, որոց բան մ'անհնարին չէր թուեր, ուսման, թնդանօթին և վառօդին կնճռոտ խնդիրները լուծած էին : Իրենց ծրագիրը չինուած լինելով, գործադրել միայն կը մնար :

« Պարզ մանրամասնութիւն մը, ոչինչ բան մը » կըսէր ժ. Թ. Մասթօն :

Ծան. — Այս վիճարանութեան մէջ՝ Պարպիքէյն նախագահն իւր հայրենակիցներէն միոյն կ'ընծայէ Քոլումպիոնի գիւտը :

ԳԼՈՒԽ Ժ.

ՔՍԱՆԵՒԷՒՆԳ ՄԻՒՒՈՆ ԲԱՐԵԿԱՄԱՑ ՄԷՉ ԹՇՆԱՄԻ ՄԸ



Ամերիկացի հասարակութիւնը կըն-Քիւպի ձեռնարկին մէջ զօրեղ շահեկանութիւն մը կը գտնէր. խորին ուշադրութիւն նուիրած էր Մասնախմբին վիճարանութեանց : Այս մեծ գործին ամենապարզ պատրաստութիւններն, յարուցած թուանշանի խնդիրները, լուծուելիք մեքենական գժուարութիւնները, միով բանիւ, գործադրութիւնը, վերջին աստիճան հետաքրքրութիւն կ'ազդէին նմա :

Տարիէն աւելի ժամանակ պիտի անցնէր աշխատութեանց սկսելուն ու աւարտելուն միջեւ, բայց այս ժամանակն առանց սրտայուզութեան չպիտի անցնէր : Թնդանօթը ձուլելու համար ընտրուելիք տեղը, կաղապարին պատրաստութիւնը, Քոլումպիատին ձուլումը, լցուելու ամենավտանգաւոր գործը՝ պէտք եղածէն աւելի բաւական էին հասարակաց հետաքրքրութիւնը գրգռելու. Ռումբն, արձակուելէ յետոյ, քանի մը տասներորդ մանրերկրորդներու մէջ պիտի խուսափէր աչաց տեսութենէ. յետոյ ի'նչ պիտի լինէր, ի'նչպէս պիտի վարուէր միջոցին մէջ, ի'նչ կերպով պիտի հասնէր լուսնին, սակաւաթիւ առանձնաչնորհեալք միայն պիտի կրնային տեսնել իրենց աչօք :

Այս կարծիքը սխալ է, և երկու անուանց նմանութենէ յառաջ եկած :

1847 ին Մէյնարտ, Պոսթօնի մէջ բժշկութեան աշակերտ, Քոլումպիոնը վերաց դարմանի գործածելու գաղափար ունեցաւ, բայց Քոլումպիոնն արդէն ծանօթ էր 1846էն ի վեր : Ֆրանսացի նշանաւոր հանճար մը՝ Պ. Լուի Մէնար եղած է այս մեծ գիւտին հեղինակ : ժ. վ.



Այսպէս ուրեմն, փորձառութեան պատրաստութիւններն և գործադրութեան ճիշդ մանրամասնութիւններն անոր ճշմարիտ շահեկանութիւնը կը կազմէին :

Սակայն ձեռնարկին զուտ ուսումնական հրապոյրն յանկարծ աւելի գրգռեցաւ միջադէպով մը :

Յայտնի է թէ Պարպիքէյնի ծրագիրն ո՛րչափ ըսքանչացողներ ու բարեկամներ շահեցուցեր էր իւր հեղինակին : Սակայն, ո՛րչափ պատուաւոր, ո՛րչափ արտասովոր լինէր, այդ մեծամասնութիւնը միաձայնութիւն չպիտի լինէր : Միակ մարդ մը, միակ՝ բոլոր Միացեալ-Նահանգաց մէջ, բողոքեց կըն-ֆիլիպի ձեռնարկին դէմ, ուժգնապէս հարուածեց զայն ամեն առթիւ, և մարդկային բնութեան հարկէն, Պարպիքէյն առաւել զգածուեցաւ մէկ մարդու մը հակառակութենէն, քան միւս ամենուն ծափահարութիւններէն : Եւ սակայն քաջ գիտէր թէ ի՞նչ էր այդ հակակրութեան շարժաւիթն, ուստի՛ կուգար այդ առանձնական թշնամութիւնն, և թէ ինչո՞ւ համար անձնական էր և հին, վերջապէս թէ ի՞նչ ինքնասիրական նախանձէ ծնունդ առած էր :

Այդ անխոնջ թշնամին, կըն-ֆիլիպի նախագահը տեսած չէր երբէք, և բարեբաղդաբար, վասն զի այդ երկու մարդոց իրարու հանդիպին անշուշտ ցաւալի հետեւութիւններ պիտի ունենար : Այդ հակառակորդն էր Պարպիքէյնի պէս գիտնական մը, գոռոզ, յանդուգն, համոզեալ և բուռն բնաւորութիւն մը, ճշմարիտ Եանքի մը, որ Նիքոլ նաւապետ կը կոչուէր և Յիլատէլֆիա կը բնակէր :

Ամեն մարդ կը յիշէ այն հետաքրքրաշարժ կռիւն որ դաշնակցական պատերազմին ժամանակ ծագեցաւ ընդ մէջ ուսմբին և երկաթապատ մարտանաւերու զրահին : Մին միւսը ծակելու սահմանուած էր, և միւսն անգծելի մնալու մտադիր : Ասկից յառաջ եկաւ

երկու խաչարհաց նաւական զօրութեան հիմնովին կերպարանափոխութիւնը : Ռուսքն ու երկաթէ տախտակը կուեցան միմեանց հետ անօրինակ կատաղութեամբ, մին շարունակ խոշորնալով և միւսն ալ հաստնալով : Նաւերն, ահաւոր թնդանօթներով զինեալ, կրակի կը դիմէին՝ պատսպարեալ իրենց անգծելի զըրահներով : Մէրիմաքները, Մոնիթորները, Ռամ-թէնէսէները, Ուիքաւսէներն, հաստ զրահներով պատրասարուելէ յետոյ՝ անհեթեթ ուսմբեր կ'արձակէին : Իրենք այլոց կ'ընէին ինչ որ չէին ուզեր որ ուրիշներն ընեն իրենց, անբարոյական սկիզբ մը, որոյ վրայ հիմնեալ է բոլոր պատերազմական արուեստն :

Արդ, Պարպիքէյն նշանաւոր ուսմբ ձուլող մ'եղաւ : Նիքոլ ալ նշանաւոր տախտակ դարձնող մը : Մին գիշեր ցերեկ կը ձուլէր Պալթիմորի մէջ, միւսն ալ գիշեր ցերեկ կը դարձնէր Յիլատէլֆիայ մէջ : Իւրաքանչիւրն էապէս իրարու հակառակ գաղափարի կը ծառայէին :

Երբոր Պարպիքէյն նոր ուսմբ մը կը հնարէր, անմիջապէս Նիքոլ ալ նոր տախտակ մը կը հնարէր : Կըն-ֆիլիպի նախագահն իւր կեանքը ծակեր բանալու նուիրած էր, Նիքոլ ալ զայն արդիւելու : Աստի աւնընդհատ հակառակութիւն մը, որ մինչեւ անձնականութեան կ'երթար : Նիքոլ՝ Պարպիքէյնի երազին մէջ կ'երեւէր՝ անթափանց զրահի մը ձեւով, որուն Պարպիքէյն զարնուելով կը խորտակէր : Պարպիքէյն ալ Նիքոլի երազին մէջ կ'երեւէր իբրեւ ուսմբ մը որ զայն կը ծակէր կ'անցնէր : /

Սակայն, թէեւ երկու հակառակ գիծերու կը հետեւէին, այս գիտնականը, վերջապէս, հակառակ երկրաշարժութեան ամեն առածներուն, իրարու պիտի հանդիպէին, բայց այն ժամանակ հանդիպումը մենամարտութեան տեղոյն վրայ միայն կրնար լինիլ : Բարեբաղդաբար, իրենց երկրին այսչափ օգտակար եղող



այս երկու ընտիր քաղաքացիք յիսուն վաթսուն մղոն հեռաւորութեամբ բաժնուած էին իրարմէ, և իրենց բարեկամներն ա՛յնչափ արգելք կը դնէին ճանրուն վրայ, որ չկրցին երբէք իրարու պատահիլ :

Արդ՝ այս երկու հնարիչներէն ո՞րն յաղթեր էր միւսին, յայտնի չէր. ձեռք բերուած արգիւնքին նայելով, դժուարին էր արդարապէս գնահատել : կը թուէր թէ վերջապէս զրահը պիտի յաղթուէր ռումբէն : Սակայն ձեռնհաս մարդոց կողմէ երբակ յուժիւն կար : վերջին փորձերուն մէջ Պարպիքէյնի գլանա-կոնաձեւ ռումբերն եկան գնդաստիկ պէս վարսեցան Նիքոլի երկաթէ տախտակներուն վրայ, այն օրը Ֆիլտոնէլֆիւյ դարբնիչն՝ ինքզինք յաղթող կարծելով՝ մեծ արհամարհանք ցոյց տուաւ իւր հակառակորդին . բայց երբ այս վերջինը (Պարպիքէյն) կոնաձեւ ռումբերուն տեղ վեց հարիւր լիպրանոց պարզ պայթուցիկ ռումբեր դրաւ, Նիքոլ նաւապետին քիթն իջաւ : Արդարեւ, այս ռումբերը, թէեւ նուազ արաթութիւն ունէին, ամենալաւ մեռաղններէ շինուած տախտակները խորտակեցին ծակեցին և կտոր կտոր ըրին :

Արդ, գործն այն կէտին հասած էր, որ յաղթութիւնը ռումբին պիտի մնար, երբոր պատերազմը վերջացաւ այն օրն՝ ուր Նիքոլ դարբնեալ պողպատէ նոր զրահ մը կ'աւարտէր, որ իւր տեսակին մէջ գլուխ գործոց մ'էր, վասն զի աշխարհի բոլոր ռումբերուն ասպարէզ կը կարգար . Նիքոլ նաւապետը զայն Ուաշինկթոնի բաղմանկիւնը փոխադրել տալով հրաւեր կարգաց կըն-Քյիւպի նախագահին որ խորտակէ զայն : Պարպիքէյն, խաղաղութիւնը կնքուած լինելուն պատճառաւ՝ չուզեց փորձի մտնել :

Այն ժամանակ Նիքոլ՝ կատղած՝ առաջարկեց իւր տախտակն ամեն տեսակ կտոր, կոնաձեւ, լցուն կամ

սնամէջ ռումբերու բախման ներկայել : Նախագահը դարձեալ մերժեց, որ անշուշտ չէր ուզեր իւր վերջին յաջողութիւնը վտանգի մէջ ձգել :

Նիքոլ, աւելի գրգռեալ այս անորակելի յամառութենէ, ուզեց փորձել զիւր հակառակորդն՝ ամեն յաջողութեան հաւանականութիւն անոր թողլով : Առաջարկեց իւր տախտակը թնդանօթէն երկու հարիւր եարտա միայն հեռի դնել : Պարպիքէյն յամառեցաւ իւր մերժման մէջ :

— Հարիւր եարտա հեռի :

— Եւ ոչ իսկ եօթանասուն :

— Ուրեմն յիսուն, գոչեց Նիքոլ նաւապետը լրագրրաց բերնով, վերջապէս « ռումբէն քսան և հինգ եարտա հեռի կը դնեմ տախտակս և ես ալ անոր ետեւը կը կանգնիմ », ըսաւ Նիքոլ :

Պարպիքէյն պատասխանել տուաւ թէ մինչեւ իսկ եթէ Նիքոլ նաւապետն իւր տախտակին առջեւ կանգնի, դարձեալ ինք ռումբ չարձակեր :

Այս պատասխանին վրայ Նիքոլ ոչ եւս կրցաւ ինքզինք բռնել . սկսաւ անձնականութեան եղնել . ըսաւ թէ երկչոտութիւնն անբաժանելի էր . թէ մարդ մը, որ ռումբ մ'արձակել յանձն չառնուր, անկէ վախնալու խիստ մօտ է, թէ վերջապէս այդ ումբաձիգներն, որք այժմ՝ վեց մղոն հեռաւորութենէ կը կռուին, խոհեմութեամբ չափաբերական ձեւերը դրին մարդկային քաջարտութեան տեղ, և թէ նոյնչափ քաջութիւն պէտք է տախտակի մ'ետին կենալով ռումբի մ'սպասելու, քան թէ արուեստին ամեն կանոնաց համեմատ զայն արձակելու համար :

Պարպիքէյն բնաւ չպատասխանեց այս թշնամական ակնարկութեանց, գուցէ չիմացաւ իսկ, վասն զի այն ժամանակ իւր բոլոր ուշադրութիւնն իւր մեծ ձեռնարկին հաշիւներուն նուիրած էր :



Երբոր Պարպիքէյն իւր հռչակաւոր զեկոյցն ըրաւ առ Կըն-Քլիւպ, Նիքոլի զայրոյթը կատաղութեան հասաւ : Այդ զայրութիւն կը խառնուէր սաստիկ նախանձու հետ և անկարողութեան բացարձակ զգացում : Ինչպէս կարելի էր այդ ինն հարիւր ոտնաչափ երկայնութեամբ ֆորումպիատէն լաւագոյն բան մը հնարել : Ո՞ր զրահ կրնար երբէք դիմանալ երսուն հազար լիպրանոց ռումբի մը : Նիքոլ ի սկզբան գետնահար, բեկեալ, ոչնչացեալ մնաց այդ «թնդանօթի հարուածին» ներքեւ . յետոյ, ոտքի վրայ ելաւ, և որոշեց ջախջախել Պարպիքէյնի առաջարկն իւր փաստերուն ծանրութեամբ :

Ուստի բռուն կերպիւ յարձակեցաւ Կըն-Քլիւպի աշխատութեանց վրայ, բազմաթիւ նամակներ հրատարակեց լրագրաց մէջ, և Պարպիքէյնի դործն ուսումնապէս քանդել փորձեց : Պատերազմն սկսելուն պէս՝ իրեն օգնութեան կոչեց ամեն տեսակ փաստեր, և ճշմարիտը խօսելով, շատ անգամ խաբուսիկ և յուռի փաստեր :

Նախ Պարպիքէյնի թուանշաններուն վրայ յարձակեցաւ սաստկապէս . Նիքոլ ջանաց Ս+Բով ազացուցանել անոր երկրաչափական ձեւերուն ստութիւնն, և առաքատանեց զայն թէ ռաբաձդական արուեստին նախնական սկզբունքն անգամ չէր գիտեր : Ուրիշ սըխալներէ զատ, ըստ հաշուոց Նիքոլի, բացարձակապէս անհնար էր մէկ մանրերկրորդի մէջ տասներկու հազար եարտայի արագութիւն տալ որ և է մարմնոյ մը . գրահաշիւ ի ձեռնին կը հաստատէր թէ սյդ աւրագութեամբ իսկ, այնչափ ծանր ռումբ մը չէր կըրնար երբէք անցնիլ երկրական մթնոլորան, և ոչ իսկ ութ փարսախ երթալ : Բայց ենթադրելով իսկ թէ ռումբն այդ արագութիւնն ստանար, անհնար էր որ դիմանար մէկ միլիոն վեց հարիւր հազար լիպրա վա-

ռօդին բռնկելովը ծաւալած կազին ճնշման, և եթէ դիմանար իսկ այդ ճնշման, գոնէ չէր կրնար դիմանալ այդչափ ջերմութեան, և ֆորումպիատէն դուրս ելած ժամանակ հալելով հրածորան անձրեւի պէս անխտհեմ հանդիսատեսաց դիտուն վրայ պիտի տեղար : Պարպիքէյն այս յարձակմանց բնաւ ականջ չկախելով իւր դործը շարունակեց :

Ս,յն ժամանակ Նիքոլ խնդիրն ուրիշ կողմերէ ձեռք առաւ : Ս,ռանց անոր ամեն տեսակէտով անօդուտ լինելուն վրայ խօսելու, փորձը խիստ վտանգաւոր դատեց՝ թէ՛ այն քաղաքացեաց համար որք իրենց ներկայութեամբ պիտի քաջալերէին այդպիսի դատապարտելի տեսարան մը, և թէ՛ այդ ողբալի թնդանօթին մօտը գտնուող քաղաքաց համար : Նմանապէս գիտել տուաւ որ եթէ ռումբը չհասնէր նպատակին, արդիւնք մը, որ բացարձակապէս անհնարին էր, անտարակոյս երկրի վրայ պիտի ընկնէր, և այնպիսի վիթխարի մարմնոյ մ'անկումն, արագութեան քառակուսիով բազմապատկեալ, երկրագունտին մէկ կէտը զարմանալի կերպիւ վտանգի մէջ կը ձգէր : ուրեմն այսպիսի պարագայի մը մէջ, առանց դպչելու ազատ քաղաքացւոց իրաւանց, կառավարութեան միջամտութիւնն հարկաւոր կը լինէր, և պէտք չէր որ մէկ մարդու մը հաճոյքին համար ընդհանուրին ապահովութիւնը վտանգի մէջ իյնար :

Կը տեսնուի ահա թէ Նիքոլ նաւապետն ինչ չափագանցութեանց մէջ կ'ընկնէր : Բայց ինք մինակ էր իւր կարծեաց մէջ : Ուստի ոչ ոք ականջ կախեց անոր ձախոց մարգարէութեանց, և թողուցին որ ուզածին պէս գոչէ մինչեւ որ թողերը պատուտին, որովհետեւ այնպէս կ'ուզէր : Նիքոլ կանխաւ կորուսեալ դատի մը փաստաբան կանգնած էր . կը լսէին իւր ձայնը, բայց ոչ ոք ականջ կը կախէր . ուստի չկրցաւ Կըն-Քլ-



լիւպի նախագահին վրայ սքանչացողներէն ոչ մին խը-  
լել : Մնաց որ, Կըն-Քլիւպի նախագահն և ոչ իսկ  
յանձն առաւ իւր հակառակորդին վաստերն իրեն  
գլխուն շրջել :

Նիքոլ, իւր վերջին պատնէշներուն մէջ ապաստա-  
նած, և չկրնալով իւր անձով վճարել իւր դատն, ու-  
րոշեց իւր դրամովը վճարել : Ուստի ելաւ Րիչմընտի  
էնքուայրոր լրագրին մէջ հրապարակաւ կարգ մը գը-  
րաւներ առաջարկեց հետեւեալ ձեւերով և հետոհհե-  
տէ աւելնալու համեմատութեամբ .

Գրաւ դրաւ .

- |  |             |
|--|-------------|
| 1. Թէ Կըն-Քլիւպի ձեռնարկին հարկաւոր<br>եղած դրամագլուխը չպիտի կրնար հայթայթ-<br>թիլ, եթէ . . . . .                         | Տւր<br>1000 |
| 2. Թէ ինն հարիւր ոտնաչափ թնդանօթի մը<br>ձուլումն անգործադրելի էր և չպիտի կրնար<br>յաջողիլ, եթէ . . . . .                   | 2000        |
| 3. Թէ անհնարին էր ֆոլումպիատը լցնել և<br>թէ Բիրոքսիլն ինքնին պիտի բռնկէր ուսմբին<br>ճնշման ներքեւ, եթէ . . . . .           | 3000        |
| 4. Թէ ֆոլումպիատն առաջին անգամ ար-<br>ձակուելուն պիտի պայթէր, եթէ . . . . .  | 4000        |
| 5. Թէ ուսմբը վեց մղոն տեղ անգամ չպիտի<br>երթար, և արձակուելէն քանի մը մանրերկրորդ-<br>յետոյ վար պիտի ընկնէր, եթէ . . . . . | 5000        |

Կը տեսնուի ահա թէ նաւապետը տասն և հինգ  
հազար տոլարի պատկառելի գումար մը վտանգի կը  
դնէր իւր անընկճելի կամակորութեամբ :

Հակառակ գրաւին մեծութեան, Նիքոլ նաւապետը

մայիս 19ին կնքեալ նամակ մ'ստացաւ՝ հետեւեալ գո-  
ւող լակոնաբանութեամբ գրուած .

« Պալթիմոր 18 հոկա .

« Ա'ընդունուի :

« ՊԱՐՊԻՔԷՅՆ . »

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՖԼՈՐԻՏ ԵՒ ԹԷՔԱՍՍ

Սակայն խնդիր մը կը մնար դեռ որոշելու, այն է՝  
փորձին համար նպաստաւոր տեղ մ'ընտրել : Քէմպ-  
րիճի դիտարանին տուած հրահանգին համաձայն,  
ուսմբը հորիզոնի մակարդակին ուղղահայեաց կերպով  
պիտի արձակուէր, այսինքն դէպի գագաթնակէտն :  
Արդ՝ Լուսինը լայնութեան 0 և 28 աստիճաններուն  
միջեւ գտնուող տեղերուն մէջ միայն գագաթնակէտը  
կ'երնէ, ուրիշ կերպ խօսելով՝ իւր հորիզոնը 28 աս-  
տիճան է : Ուրեմն հարկ էր ճշդիւ որոշել երկրագուն-  
տին այն կէտն, ուր ֆոլումպիատը պիտի թափուէր :

Հոկտեմբեր 20ին, Կըն-Քլիւպն հանրական նիստ  
գումարելով, Պարպիքէյն Միացեալ-Նահանգաց գե-  
ղեցիկ քարտէս մը բերաւ, զոր Չ. Պէլթրոք շինած  
էր. բայց ժ. Թ. Մասթոն՝ առանց անոր ժամանակ  
թողու որ քարտէսը պարզէ, խօսք ուղած էր իւր սո-  
վորական ուժգնութեամբ, և այսպէս խօսեցաւ .

« Պատուարժան պաշտօնակիցք, այսօր յուզուելիք  
խնդիրն ազգային ճշմարիտ կարեւորութիւն մը ունի,  
և հայրենասիրական մեծ գործ մ'ընելու առիթ պի-  
տի մատակարարէ մեզ » :

Կըն-Քլիւպի անդամք իրարու նայեցան՝ առանց  
հասկնալու թէ ատենախօսն ո՛ւր պիտի բերէր խօսքը :



« Չեղնէ ոչ մին, շարունակեց յ. թ. Մասթոն, դիտաւորութիւն չունի իւր երկրին փառաց հետ սակարկութեան մտնելու, և եթէ կայ իրաւունք մը, զոր Միացեալ-Նահանգները կրնան իրենց սեփականել, կըն-ֆլիւպի ահեղ թնդանօթն իւր կողերուն մէջ պահելու իրաւունքն է :

« Արդ, ներկայ պարագայից մէջ . . .

— Բայ՛ Մասթոն . . . ըսաւ նախագահը :

— Ներեցէք ինձ բացատրել մտածութիւնս, ըսաւ ատենաբանը : Ներկայ պարագայից մէջ, մեր հարկադրեալ եմք հասարակածին բաւական մօտ տեղ մը ընտրել, որպէս զի փորձը լաւագոյն պայմաններու մէջ կատարուի . . . :

— Եթէ ուզէք . . . ըսաւ Պարպիքէյն :

— Ես գաղափարաց ազատ վիճաբանութիւնը կը խնդրեմ, պատասխանեց բոցեռանդն յ. թ. Մասթոն, և կը պնդեմ թէ երկրին ուստից մեր փառապանծ ումբը պիտի յարձակի, Միացեալ-Նահանգաց սեփականութիւնը պարտի լինիլ :

— Անշուշտ, պատասխանեցին քանի մ'անդամք :

— Ուրեմն, քանի որ մեր սահմանները բաւական ընդարձակ չեն, որովհետեւ հարաւի կողմէն Ովկէան անանցանելի պատուար մը կը դնէ մեր դէմ, որովհետեւ հարկ կը լինի մեզ Միացեալ-Նահանգներէն անդին և սահմանակից երկրի մը մէջ փնտռել այդ քսանեւութերորդ զուգահեռականը, պատերազմի օրինաւոր պատճառ մ'է այդ, և ես կը խնդրեմ որ պատերազմ հրատարակուի Մեքսիկայի դէմ :

— Բայց ո՛չ, բայց ո՛չ, գոչեցին ամեն կողմէ :

— Ո՛չ, պատասխանեց յ. թ. Մասթոն, ահա բաւ մը, զոր ես կը զարմանամ լսելով այս ժողովի մէջ :

— Բայց մտիկ ըրէ՛ք . . . :

— Երբէք, երբէք, գոչեց հրաշունչ ատենաբանը .

կանուխ կամ ուշ այդ պատերազմ պիտի լինի, և ես կը խնդրեմ որ այսօր բացուի :

— Մասթոն, ըսաւ Պարպիքէյն իւր զանգակն ուժգնապէս որոտացնելով, խօսքը կ'առնում քեզնէ :

Մասթոն ուզեց պատասխանել, բայց իւր պաշտօնակիցներէն ոմանք զինքը բռնեցին :

« Արդարեւ, ըսաւ Պարպիքէյն, փորձը Միացեալ-Նահանգաց երկրին մէջ միայն կրնայ և պէտք է փորձուի, բայց՝ եթէ իմ անհամբեր բարեկամս թոյլ տար ինձ խօսիլ, եթէ աչքը քարտիսի մը վրայ ձգէր, պիտի գիտնար որ կատարելագէս անօդուտ էր պատերազմ հրատարակել մեր դրացեաց դէմ, վասն զի Միացեալ-Նահանգաց սահմանագլուխներէն ոմանք քսան և ութերորդ զուգահեռականէն անդին կը տարածին : Տեսէք, թէքսասի և Ֆլորիտի բոլոր հարաւային մասը մեր տրամադրութեան ներքեւ ունիմք : »

Միջադէպն հետեւանք չունեցաւ . բայց յ. թ. Մասթոն ցաւելով համոզուեցաւ նախագահին այս անհակառակելի փաստերէն : Հետեւաբար, որոշուեցաւ որ ֆոլումպիտը թէքսասի կամ Ֆլորիտի նահանգին մէջ ձուլուի : Բայց այս որոշում անօրինակ հակառակութիւն մը պիտի հանէր այդ երկու Նահանգաց քաղաքներուն միջեւ :

Քսան և ութերորդ զուգահեռականն՝ Ամերիկեան ծովեզրին հետ պատահած ժամանակ՝ Ֆլորիտի թերակղզիէն կ'անցնի և դայն գրեթէ երկու հաւասար մասերու կը բաժնէ : Յետոյ Մեքսիկայի ծովածոցը մտնելով, Արապամայի, Միսիսիբիի և Լուիզիանայի ծովեզրներէն ձեւացած աղեղը կը կտրէ, անտի թէքսասո մտնելով, որոյ մէկ անկիւնը կը կտրէ, Մեքսիկայի մէջէն կ'երկնայ և կ'անցնի Սոնորայի երկիրն, ապա կը ցատկէ հին Բալիֆորնիոյ վրայէն, և կ'երթայ կը կորնչի Խաղաղական Ովկէանի ծովերուն մէջ :



Ուրեմն այդ զուգահեռականին տակ գտնուող թէքսասի և Ֆլորիտի մասերն են միայն, որք ֆէմպրիճի դիտարանին յանձնարարած լայնութեան աստիճանին պայմաններն ունին :

Ֆլորիտ, իւր հարաւային մասին մէջ կարեւոր քաղաքներ չունի, այլ միայն բազմաթիւ բերդեր ունի Հնդիկ կոչուած թափառական վայրենիներուն դէմ կանգնուած : Միակ քաղաք մը՝ թամբա-թաուն՝ կըրնար պահանջում ընել ի նպաստ իւր դրից և ներկայանալ իւր իրաւունքներով :

Թէքսասի մէջ, ընդհակառակն, քաղաքներն աւելի բազմաթիւ և աւելի կարեւոր են. ֆորթ-Իւս-Քրիսթի՝ Նիւսէսի գաւառակին մէջ, և Րիոյ-Պրավոյ դետին վրայ կառուցեալ բոլոր քաղաքները, Լարէտոյ, ֆոմալիթէս, Սան-Ինեպիտոյ, Ուէպի մէջ՝ Ռոմա և Րիոյ-Կրանտէ-Սիթի, Սթարի մէջ՝ Էտինպուրկ, Հիտակոյի մէջ՝ Սանթա-Րիթա և Էլ-Բանտա, և ֆամէրոնի մէջ Պրունսպիլ՝ ահաւոր միութիւն մը կազմեցին Ֆլորիտի պահանջմանց դէմ :

Հազիւ կըն-Քլիւպի որոշումն իմացուած էր, թէքսասի ու Ֆլորիտի երեսփոխանները Պալթիմոր դիմեցին. և այն վայրկեանէն, Պարպիքէյն նախագահն և կըն-Քլիւպի աղդեցիկ անդամները ցերեկ գիշեր պաշարուեցան զարհուրելի պահանջումներով : Եթէ հին Յունաստանի եօթն քաղաքներ Հոմերի ծննդավայրն եղած լինելու պարծանքն իրարու ձեռքէ յափշտակել ջանացին, այժմ երկու ամբողջ նահանգ միմեանց դէմ կռուի ելնել կ'սպառնային թնդանօթի մը պատճառաւ :

Այն ժամանակ տեսնուեցան « վայրագ եղբարք » որք քաղաքին փողոցներուն մէջ կը պտըտէին զինեալ, և ամեն անգամ իրարու պատահած ժամանակ կռիւ մը կը վախցուէր, որ յոյժ ազետալի հետեւանք կըր-

նար ունենալ : Բարերաղդարաբ՝ Պարպիքէյն նախագահին խոհեմութիւնն ու ճարպիկութիւնն այս վտանգին առաջն առին : Անձնական ցոյցերը խոտորեցուցիչ դեղ մը գտան այլ և այլ նահանգաց լրագրերուն մէջ : Նիւ-Եորք Հէրրոլտ և Թրիպիուս լրագիրք թէքսասի կողմը բռնեցին, իսկ Թայմզ և Ամերիքան Ռիվիու՝ Ֆլորիտի երեսփոխանաց դատը պաշտպանեցին : Կըն-Քլիւպի անդամք չէին գիտեր ո՞ր կողմը լսէին :

Թէքսաս գոռոզաբար կը ներկայանար իւր քսան և վեց կոմսութեամբք (գաւառակներով), զորս թնդանօթներու պէս կը շարէր. բայց Ֆլորիտ կը պատասխանէր թէ վեցպատիկ փոքր երկրի մը տասներկու կոմսութիւնները՝ թէքսասի քսան և վեց կոմսութիւններէն աւելի արժէք ունէին :

Թէքսաս իւր երեք հարիւր երսուն հազար բնիկներով կը պարծէր. իսկ Ֆլորիտ, նուազ ընդարձակ լինելուն պատճառաւ՝ իբր առաւել բազմամարդ կը պարծէր իւր յիսուն և վեց հազար բնակչօք : Ոսկէ դատ կ'ամբաստանէր զթէքսաս թէ ջերմի մենաշնորհն ունէր, որ ամեն տարի քանի մը հազար բնակիչ կը տանէր, և ճշմարիտ էր այս :

Թէքսաս ալ կը պատասխանէր թէ ջերմի մասին Ֆլորիտ իւր վրայ նախանձելու բան մը չունէր, և թէ գոնէ անխոհեմութիւն էր ուրիշ երկիրները վատաւոր ճամարիլ՝ երբոր ինք « Վոմիթոյ Նէկրոյ » (սեւ փոխումն) կոչուած հիւանդութիւնը մնայուն կերպիւ ժառանգելու պատիւն ունէր : Այս ալ ճշմարիտ էր :

« Մնաց որ, կ'աւելցնէին թէքսասցիք Նիւ-Եորք Հէրրոլտի բերնով թէ ակնածութեամբ պէտք է վարուիլ նահանգի մը նկատմամբ, ուր համայն Ամերիկայի ամենէն ընտիր բամպակը կը բուսնի. նահանգ մը, որ ամենէն ընտիր կանաչ-կաղնին կ'արտադրէ նաւալինութեան համար. նահանգ մը, որ պատուա-



կան հանքածուխ կը պարունակէ, և երկաթի հանքեր, որոց արտադրութեան հարիւրին յիսունը զուտ մետաղ է: »

Այսմ կը պատասխանէր Ամերիքան Ռըվիու թէ՛ Ֆլորիտի հողն, առանց այնչափ հարուստ լինելու, լաւագոյն պայմաններ կ'ընծայէր ֆոլումպիատը կազմարելու և ձուլելու, որովհետեւ աւազէ և կառուտ հողէ կը բողկանար:

« Բայց, կ'առարկէին թէքսասցիք, որ և է բան երկրի մը մէջ ձուլելու համար՝ պէտք է այն երկիրն երթալ. արդ՝ Ֆլորիտի հետ հաղորդակցութիւնք դժուարին են. իսկ թէքսասի ծովեզրը կարլէսթոնի ծոցն ունի, որ իւր տասն եւ չորս փարսախ ընդարձակութեամբ կրնայ բովանդակ աշխարհի նաւատորմերը պարունակել:

— Լա՛ւ, կը կրկնէին Ֆլորիտի անձնուէր լրագիրք՝ դուք մեր աչքը կը խօթէք ձեր կարլէսթոնի ծովածոցը քսան և իններորդ զուգահեռականին տակ: Միթէ մեք ալ էսբիրիթիւ-Սանթոյի ծովածոցը չունի՞մք, որ ճշդիւ լայնութեան քսան և ութերորդ առտիճանին վրայ է, և ուստից նաւերն ուղղակի թամբա-թաուն կը հասնին:

— Ի՛նչ գեղեցիկ ծովածոց, որոյ կէսն աւազով լցուած է, կը պատասխանէր թէքսաս:

— Դուք էք աւազալից, կը գոչէր Ֆլորիտ ալ: Միթէ զայդ լսողը չի՞ կարծեր թէ վայրենեաց երկիր մ'եմ ես:

— Արդարեւ Սէմինոլները տակաւին կ'արշաւեն ձեր դալարավայրերուն վրայ:

— Միթէ ձեր Աբաչներն ու Քոմանչներն աւելի՞ քաղաքակրթեալ են: »

Կռիւն սցօպէս կը շարունակէր քանի մ'օրէ ի վեր, Ֆլորիտ իւր ոստն ուրիշ կէտի մը վրայ բերել փորձեց: Առաւօտ մը թայմի ըսաւ թէ ձեռնարկն « էա-

պէս ամերիկեան » լինելով, « էապէս ամերիկեան » հողի մը վրայ միայն կրնար փորձուիլ:

Այս խօսքէն թէքսաս վեր ցատկեց զայրագին. « Ամերիկեան, գոչեց. միթէ մեք ալ ձեզ չափ Ամերիկացի չե՞մք: Թէքսաս և Ֆլորիտ 1843 ին չմիացան Միացեալ-Նահանգաց հետ:

— Անշուշտ, պատասխանեց թայմիզ, բայց մեք 1820էն ի վեր Ամերիկայի կը վերաբերիմք:

— Այո՛, պատասխանեց թրիպիոն, երկու հարիւր տարի Սպանեոլ կամ Անգլիացի լինելէ յետոյ՝ Միացեալ-Նահանգաց վաճառուեցաք հինգ միլիոն տղարի:

— Ի՛նչ կ'երէնէ աղկից, պատասխանեցին Ֆլորիտցիք, ադոր համար կարմրելու ենք: Միթէ 1803 ին Լուիզիանայի նահանգը Նաբոլէոնէն չգնուեցա՞ւ տասն և վեց միլիոն տղարի:

— Նախատինք է այս, գոչեցին այն ժամանակ թէքսասի երեսփոխանք: Ֆլորիտի պէս թշուառ հողի կտոր մը համարձակի ինքզինք բողբատել թէքսասի հետ, որ փոխանակ ինքզինք վաճառելու՝ ինքնին անկախ եղաւ, որ արտաքսեց Մեքսիկացիներն 1836 մարտ 2ին, որ ինքզինք դաշնակից հանրապետական հրատարակեց այն յաղթութենէն յետոյ՝ զոր Սամուէլ Հուսթոն տարաւ Սան-Եասինթոյի եզերքը Սանթա-Աննայի զօրաց վրայ: Երկիր մը, վերջապէս, որ կամովին Ամերիկայի Միացեալ-Նահանգաց հետ միացաւ:

— Վասն զի երկիրը ունէր Մեքսիկացիներէն, պատասխանեց Ֆլորիտ:

Երկրւզ: Այն օրէն որ այս ամենածանր բառն աւտասանեցաւ, վիճակն անհանդուրժելի եղաւ: Կ'ըսապատէր որ երկու կողմը զիրար պիտի փողոտէին փողոցներուն մէջ, ուստի հարկ եղաւ երկու նահանգաց երեսփոխանները ծածկել աչքէ:



Պարպիքէյն նախագահն ի նչ ընելիքը չէր գիտեր : Ծանուցագրերը , տեղեկագրերն , սպառնալից նամակ- ծերն անձրեւի պէս կը տեղային իւր տան մէջ : Ի՞նչ պիտի ընէր : Գետնին սեփականման , հաղորդակցու թեանց գիւրութեան և փոխադրութեանց արագու- թեան տեսակէտով երկու Նահանգաց իրաւունքն հա- լասար էր : Իսկ քաղաքական անձնաւորութիւնք գործ մը չունէին խնդրոյն մէջ :

Արդ , այս վարանումն , այս դժուարութիւնն ար- դէն երկար ժամանակէ ի վեր կը տեսէր : Պարպիքէյն որոշեց վերջ տալ այս վիճակին . ի ժողով գումարեց իւր պաշտօնակիցներն , և յոյժ իմաստուն լուծում մ'առաջարկեց , ինչպէս որ պիտի տեսնուի :

«Յլորիտի և Թէքսասի միջեւ անցած անցքը լաւ նկատելով , ըսաւ , յայտնի է որ նոյն դժուարութիւնք աւելի նպաստաւորեալ Նահանգին քաղաքաց միջեւ պիտի ծագէին : Նախանձընդդիմութիւնը Նահան- գէն քաղաքները պիտի իջնէր վերջապէս : Արդ , Թէքսաս տասն և մէկ քաղաք ունի ամեն պէտք եղած պայ- մանները պարունակող , որք մեր ձեռնարկին պատիւն իրարմէ յափշտակելու պիտի աշխատին , և նոր ձանձ- րութիւններ պիտի յարուցանեն մեր դէմ , իսկ Յլորիտ մէկ քաղաք մ'ունի : Ուստի Յլորիտն և անոր Թամ- բա-Թատն քաղաքը կ'ընտրեմք :»

Ույս որոշումն հրատարակուելով գետնահար ըրաւ Թէքսասի երեսփոխաններն : Աննկարագրելի կատաղու- թիւն մը տիրեց իրենց վրայ և յանուանէ սպառնա- լիքներ ուղղեցին կըն-Քլիւպի անդամաց : Պալթիմորի դատաւորաց մէկ բան մը մնաց ընելիք , և ըրին : Յա- տուկ կառախումբ մը բռնեցին , Թէքսասի երեսփո- խանները կամայ ահամայ անոր մէջ դրին , և քաղա- քէն մեկնեցան՝ մէկ ժամու մէջ երստն մըն արագու- թեամբ :

Բայց , որչափ և շուտով մեկնեցան , ժամանակ ու- նեցան վերջին սպառնալից երգիծանք մ'ալ ուղղելու իրենց հակառակորդաց : Յլորիտի բիչ ընդարձակու- թիւնն ակնարկելով , որ երկու ժողերու մէջ սեղմուած պարզ թերակղզի մ'է , աւարկեցին թէ ումաձը- դութեան ցնցմանը չպիտի կրնար դիմանալ և առա- յին թնդանօթի հարուածէն օդը պիտի ելնէր :

«Թող օդն ելնէ» պատասխանեցին Յլորիտցիք՝ վաղ ժամանակաց արժանի լակոնականութեամբ :

ԳԼՈՒԽ ԺԲ .

ԱՇԽԱՐՀ ԱՄԵՆԱՅՆ



Աստղագիտական , մեքենական և երկրագրական դժուարութեանց միանգամ լուծուելէն յետոյ՝ կարգն եկաւ դրամի խնդրոյն : Ծրագրին գործադրութեան համար ահագին գումար մը հայթայթել հարկ էր : Ոչ մի մասնաւոր անհատ , ոչ մի պետութիւն իսկ չէր կրնար տալ պէտք եղած միլիոնները :

Պարպիքէյն նախագահն որոշեց , թէ և ձեռնարկն ամերիկեան էր , տիեզերական շահու վերաբերեալ գործ մ'ընել զայն , և ամեն ազգաց դրամական գոր- ծակցութիւնը խնդրել : Բալանդակ Երկրի իրաւունքն և միանգամայն պարտականութիւնն էր իւր Արբան- եակին գործերուն միջամտել : Ուստի այս նպատակաւ բացուած հանգանակութիւնը Պալթիմորէն յընդհա- նուր աշխարհ տարածեցաւ :

Այս հանգանակութիւն յուսացուածէն աւելի պի- տի յաջողէր : Սակայն տրուելիք գումարները նուէր պիտի լինէին և ոչ փոխ : Գործողութիւնը զուտ ան- շախնդրական էր՝ բառին տառական նշանակութեամբ . շահու հաւանականութիւն բնաւ չէր ընծայեր :



Բայց Պարպիքէյնի գեկոյցին ազդեցութիւնը Մի-  
ացեալ-Նահանգաց սահմաններուն մէջ փակեալ մնա-  
ցած չէր : Ատլանտեան և Խաղաղական ովկիանոսներն  
անցած , Ասիա , Եւրոպա , Ափրիկէ և Ովկիանիա մի-  
անգամայն տարածուած էր : Միացեալ-Նահանգաց  
գիտարաններն անմիջական յարաբերութեան սկսան  
օտար երկիրներու գիտարանաց հետ , ոմանք , այն է՝  
Փարիզի , Բեռլինի , Բարեյուսոյ , Պէրլինի , Ալ-  
թոնայի , Սթոքոլմի , Վարշաւոյ , Համպուրկի , Պու-  
տայի , Պոլոյնի , Մալթայի , Լիզպոնի , Պէնարէսի ,  
Մատրասի , Բէքինկի գիտարաններն իրենց ուրախակ-  
ցութիւնն յայտնեցին Կըն-Քլիպի . մնացեալք ալ  
խոհական սպասողութեամբ լռութիւն պահեցին :

Իսկ Կրինուիչի (Անգլիա) գիտարանը՝ Մեծին Բրի-  
տանիոյ քսաներկու գիտարանաց հաւանութեամբ՝ բա-  
ցարձակապէս ժխտեց գործին յաջողութեան հնարա-  
ւորութիւնն , և Նիքոլ նաւապետին տեսութեանց կող-  
մը բռնեց : Հետեւաբար , մինչդեռ այլ և այլ գիտնա-  
կան ընկերութիւնք կը խոստանային պատուիրակներ  
ղրկել ի Թամբա-Թաուն , Կրինուիչի գիտարանը՝ նիստ  
գումարելով՝ Պարպիքէյնի առաջարկը բրտաբար մեր-  
ժեց : Այս բանը պարզապէս Անգլիական նախանձու-  
թիւն մ'էր , և ոչ այլ ինչ :

Միով բանիւ , գործը գերազանց ազդեցութիւն  
մ'ունեցաւ գիտնական աշխարհին մէջ , և անտի ան-  
ցաւ ժողովրդոց մէջ , որք ընդհանրապէս համակրե-  
ցան խնդրոյն : Ամենակարեւոր իրողութիւն . որովհե-  
տեւ այդ ժողովուրդք մեծ զբամազլուի մը հանգա-  
նակելու կոչուած էին :

Պարպիքէյն նախագահն , հոկտ. 8 ին խանդավառ  
յայտարարութիւն մը հրատարակած էր , որոյ մէջ  
հրաւէր կը կարգար « երկրի վրայ գտնուած ամեն  
բարեյօժար մարդոց : » Սոյն յայտարարութիւնն ա-

մեն լեզուաց թարգմանուելով՝ մեծ յաջողութիւն  
գտաւ :

Հանգանակութիւնը բացուեցան Միութեան ամեն  
գլխաւոր քաղաքաց մէջ , և կեդրոն ցոյց տրուեցաւ  
Պալթիմորի պանքան , թիւ 9 , Պալթիմոր Սթրիթ փո-  
ղոց . յետոյ հանգանակութիւն բացուեցաւ երկու աշ-  
խարհաց այլ և այլ երկիրներու մէջ :

- Վիէննա , Ս. Մ. Ռօչիլտի տունը .
- Բեռլինի , Սթրիկկից և Ընկ .
- Սթոքոլմ , Թոթթի և Արֆիւրէտսոն .
- Լոնտրա , Ն. Ն. Ռօչիլտ և որդի .
- Թուրին , Արտուէն և Ընկ .
- Պէրլին , Մանտէլսոհն .
- Ճինէվրա , Լոմպար Օտիէ և Ընկ .
- Կ. Պոլիս , Օսմանեան Պանքա .
- Փարիզ , Քրէտի Մոպիլիէ .
- Պրիւսէլ , Ս. Լամպեր .
- Մատրիտ , Տանիէլ Վէյպլէլլէր .
- Ամսթրտամ , Քրէտի Նէէրլանտ .
- Հռոմ , Թորլոնիա և Ընկ .
- Լիզպոն , Լըսէզնի ,
- Քորէնհակ , Առանձնական Պանքա .
- Պուէնսս-Այրէս , Մաուս Պանքա .
- Ռիոյ-տը-Եանէյրոյ , նոյն Պանքան .
- Մանթէվիտէոյ , նոյն Պանքան .
- Վալբարէզոյ , Թոմաս Լա Շամպլըր և Ընկ .
- Մեքսիկա , Մարթէն Տիւրան և Ընկ .
- Լիմա , Թոմաս Լա Շամպլըր և Ընկ .

Պարպիքէյն նախագահին յայտարարութեան հրա-  
տարակումէն երեք օր յետոյ չորս միլիոն տոլար հա-  
ւաքուեր էր Միութեան այլ և այլ քաղաքաց մէջ :  
Այսպիսի թերհաշիւով մը կրնար արդէն Կըն-Քլիպը  
քալել :



Բայց քանի մ'որ յետոյ հեռագիրք կը ծանուցանէին Ամերիկայի թէ՛ օտար երկիրներու մէջ բացուած հանգանակութիւնք մեծ փութով կ'ստորագրուէին : Քանի մ'երկիրներ նշանաւոր կը հանդիսանային իրենց առատածեռնութեամբ, ուրիշներ ալ նուազ դիւրութեամբ կը բանային իրենց քսակը : Բնաւորութեան գործ :

Մնաց որ, թուանշանները խօսքերէն աւելի ճարտարախօս են, և ահա հանգանակեալ դրամաց պատօնական ցուցակն, որ կըն-Քիւպի առնելեաց կողմը դրուեցան ստորագրութեան փակուելէն յետոյ :

Ռուսիա՝ իւր բաժնին՝ երեք հարիւր վաթսուներու թ հազար եօթն հարիւր երսուներեք բուլլի զըրկեց : Ասոր վրայ զարմանալու համար՝ պէտք է ուրանալ Ռուսաց ուսումնասիրական ճաշակն և ստորագրատան ուսմանց մէջ ըրած յառաջգիմութիւնն՝ իրենց բազմութիւ գիտարանաց շնորհիւ, որոց գլխաւորին համար երկու միլիոն բուլլի ծախք ըրած են :

Ֆրանսա նախ ծիծաղիլ սկսաւ Ամերիկացոցոց յաւակնութեան վրայ : Լուսինն հազարումէկ հինորեայ ծաղրաբանութեանց և քսանի չափ երգերու պատըրուակ մ'եղաւ, որոց մէջ յոռի ճաշակը կը մրցէր տըգիտութեան հետ : Բայց՝ ինչպէս որ Ֆրանսացիք ժամանակաւ երգելէ յետոյ վճարեցին, այս անգամ ալ ծիծաղելէ յետոյ վճարեցին, մէկ միլիոն երկու հարիւր յիսուն երեք հազար ինն հարիւր ֆրանք հանգանակելով : Այս գնով Ֆրանսացիք իրաւունք ունէին քիչ մը խնդալու :

Աւստրիա բաւական առատածեռն եղաւ իւր ելմը տական դժուարութեանց մէջ : Իւր բաժնին՝ հանրային հանգանակութեամբ՝ երկու հարիւր տասներկեց հազար ֆիօրինի հասաւ, որ գէշ չէր :

Շուէտի և Նորվեկիոյ հանգանակութիւնն եղաւ

յիսուներկու հազար ըիքստայ (294,320 ֆրանք) : Այս գումարն համեմատաբար մեծ էր այդ երկրին համար : Բայց աւելի մեծ կը լինէր՝ եթէ հանգանակութիւնն Սթոքոլմի հետ միանգամայն ֆրիսթիանայի մէջ լինէր : Վասն զի, Նորվեկիացիք, այս կամ այն պատճառաւ, չեն ուզեր իրենց դրամը Շվէտի երկիրը զրկել :

Բրուսիա, երկու հարիւր յիսուն հազար թալէր (937,500 ֆրանք) զրկելով՝ իւր բարձր հաւանութիւնն յայտնեց առաջարկեալ ձեռնարկին համար : Իւր այլ և այլ դիտարանները փութացին կարեւոր գումար մը հանգանակել, և ամենաջերմ եռանդով քաջալերեցին Պարպիքէյն նախագահը :

Թուրքիա վեհանձնաբար վարուեցաւ. բայց անձնապէս շահ ունէր գործին մէջ. որովհետեւ, ինչպէս յայտնի է, Լուսինն անոր տարիներուն ընթացքն և բամազանի ծոմը կը կանոնաւորէ : Չէր կրնար մէկ միլիոն երեք հարիւր եօթանասուն ու երկու հազար վեց հարիւր քառսուն զրուշէն պակաս տալ. և տուաւ այնպիսի եռանդով մը, որ Դրան կառավարութեան կողմէ մինչեւ մէկ աստիճան ճնշման արդիւնք լինելու երեւոյթ ունէր :

Պելճիա նշանաւոր եղաւ երկրորդ կարգի ամեն պետութեանց մէջ՝ հինգ հարիւր տասներեք հազար ֆլորանք տալով, իբր տասներկու սանթիմ մէն մի բընակչի համար :

Հոլանտա և իւր գաղթականք հարիւր տասն հազար ֆիօրինով մասնակցեցան, և խնդրեցին որ հարիւրին հինգ զեղչ մը լինի իրենց, որովհետեւ կանխիկ կը վճարէին :

Տանիմարքա, թէ եւ քիչ մը սեղմեալ իւր հողին մէջ, բայց և այնպէս ինն հազար տուքաթ (117,414 ֆր.) տուաւ, յորմէ կը տեսնուի թէ Տանիմարքացիք կը սիրեն գիտնական արշաւանքները :



Գերմանական դաշնակցութիւնն երսուն և չորս ձազար երկու հարիւր ութսուն և հինգ ֆիորին տալ խոստացաւ , և ասկէց աւելի չէր կրնար ուղուիլ իր մէ . ինք ալ չէր տար :

Թէ եւ դրամական մեծ նեղութեան մէջ , իտալիա երկու հարիւր հազար ֆրանք գտաւ իւր որդւոց դըրպանին մէջ . բայց անոնց մէջի երեսը դուրս դարձունելով : Եթէ վենետիկն առած լինէր , աւելի կուտար . բայց վերջապէս վենետիկն իւր ձեռքը չէր :

Եկեղեցւոյ երկիրներն ալ եօթն հազար քառսուն էքիւէն (38,016 ֆր.) պակաս տալ արժան չհամարեցին , և ֆորթուկալ՝ իւր առ գիտութիւնն ունեցած անձնուիրութիւնը՝ մինչեւ երսուն հազար քրիզաւի (113,200 ֆր.) հասուց :

Մեքսիկայի տուածն՝ այրիին լուման էր . 86 ուէալ (1727 ֆր.) : Բայց նոր հիմնեալ պետութիւնը քիչ մը դրամական նեղութիւն կ'ունենան միշտ :

Երկու հարիւր յիսուն և եօթն ֆրանք , այս եղաւ Զուլցերիոյ համեստ բաժինն ամերիկեան գործին մէջ . Անկեղծաբար պէտք է ըսել Զուլցերիա խնդրոյն գործնական կողմը չէր տեսներ . կը թուէր իրեն թէ լուսնի մէջ ուումը մը զրկելու գործողութիւնը գիշերային աստղին հետ գործի յարաբերութիւն հաստատելու բնութիւն չունէր , և անխոհեմութիւն կ'երեւէր իրեն իւր դրամագլուխներն այսպիսի անստոյգ ձեռնարկի մը մէջ դնել : վերջապէս , Զուլցերիա թերեւս իրաւունք ունէր :

Գալով Սպանիոյ , անհնար եղաւ իրեն հարիւր տասն ուէալէն (39 ֆր. 48 սանթիմ) աւելի հաւաքել : Ասոր պատրուակ ցոյց առաւ իւր երկաթուղեաց շինութիւնն աւարտելու հարկը : Ճշմարիտն այս է որ գիտութիւնն յարգ չունի այդ երկրի մէջ : Սպանիա քիչ մը ետ մնացած է տակաւին : Ասկէց դաս , նոյն լոկ

ուսեալ Սպանիացիք ոմանք չէին կրնար ճշդիւ հասկընալ ուումին զանգուածին լուսնի զանգուածին հետ ունեցած համեմատութիւնը : կը վախնային որ ուումը չերթայ լուսնի շրջանն աւրէ , անոր արբանեկութեան դերը չիթթէ և նորա երկրի վրայ իյնալուն պատճառ լինի : Այս պարագայի մէջ լաւագոյն էր ետ կենալ գործէն , և այնպէս ըրին՝ քանի մը ուէալ միայն վճարելով :

կը մնար Անգլիա : Ընթերցողք գիտեն այն արհամարհոտ հակակրութիւնն որով ընդունեց Պարպիքէնի առաջարկն : Անգլիացիք մի և նոյն հոգին ունին Ամերիկայի պարունակած քսան և հինգ միլիոն բնակչաց համար : Պատասխանեցին թէ կրն-Քիլուպի ձեռնարկն հակառակ էր անմիջամտութեան ս'ղբան , և բնիոն մ'անդամ չտուին :

կրն-Քիլուպ , երբոր այս պատասխանը լսեց , բաւական համարեցաւ ուսերը թոթովել , և դարձաւ իւր մեծ գործին զբաղիլ : Իսկ հարաւային Ամերիկա , այսինքն Բէրու , Քիլի , Պրէզիլ , Բլաթայի նաւահանգիստներն և Քոլումպիա իրենց բաժնին երեք հարիւր հազար տոլար (1,626,000 ֆր.) վճարեցին , որով կրն-Քիլուպ 3,446,673 տոլարի դրամագլուխ մ'ունեցաւ իւր ձեռք , 4,000,000 տոլարը Միացեալ-Նահանգներէն հանգանակեալ , և 1,446,673 տոլարն ալ օտար երկիրներէ :

Այս գումարին մեծութեան վրայ պէտք չէ զարմանալ : Զուլցու , Ժակելու , որմնադրական գործողութեանց , գործաւորաց փոխադրութեան , անոնց գրեթէ անբնակ երկրի մը մէջ բնակութեան , փուռներու և այլ շէնքերու կառուցման , գործարանաց համար պէտք եղած գործիքներու , վառօդի , ուումի և այլ մանր մունր պիտոյից համար լինելիք ծախքերն այդ գումարը գրեթէ ամբողջապէս պիտի կլնէին :



Ամերիկայի պատերազմին ժամանակ քանի մը թնդա-  
նօթաց մէն մի հարուածն հազար տոլարի եղաւ : Իսկ  
Պարպիքէյն նախագահին արձակելիք թնդանօթի հար-  
ուածն, որ թնդանօթի պատմութեան մէջ տեսնուած  
չէր, կրնար հինգ հազար անգամ աւելի ծախք պատ-  
ճառել :

Հոկտ. 20 ին դաշնադրութիւն մը կնքուեցաւ Նիւ-  
հորքի մօտ Կոլտսբրինկի երկաթի գործարանին հետ, որ  
պատերազմին ժամանակ Բէրոթի լաւագոյն ձու-  
լածոյ թնդանօթները շինած էր :

Պայման դրուեցաւ դաշնադիր կողմանց մէջ թէ  
Կոլտսբրինկի գործարանը պարտականութիւն կ'ըս-  
տանձնէր՝ ֆոլուսպիատի ձուլման համար պէտք ե-  
ղած ամեն նիւթերն հարաւային Ֆլորիտի թամբա-  
թառն քաղաքը փոխադրել :

Այս գործողութիւնը մինչեւ յառաջիկայ հոկտեմբեր  
13 անպատճառ պիտի աւարտէր և թնդանօթը լաւ  
վիճակի մէջ պիտի յանձնուէր. ապա թէ ոչ, Կոլտս-  
բրինկի գործարանն օրական հարիւր տոլար պիտի  
տուժէր մինչեւ այն օրն, յորում Լուսինը վերստին  
նոյն պայմաններուն մէջ ներկայանար, այսինքն տասն  
եւ ութ տարի և տասն և մէկ օր անցնելէ յետոյ :

Գործաւորաց վարձումն, անոնց թոշակին վճարումն  
և այլ պիտոյից մատակարարութիւնը Կոլտսբրինկի  
ընկերութեան վրայ էր :

Այս դաշնադրութիւնը կրկին օրինակ չինուելով  
ստորագրեցաւ կըն-ֆլիւպի նախագահ Պարպիքէյնէն  
և Կոլտսբրինկի գործարանին տնօրէնէն, երկու կող-  
ման հաւանութեամբ :

Այն օրէն ի վեր որ կըն-ֆլիւպի անդամները նա-  
խապատուութիւն տուին Ֆլորիտի, ամեն մարդ Ամե-  
րիկայի մէջ Ֆլորիտի աշխարհագրութիւնն ուսնել սկսաւ :  
Գրապատճառք երբէք չէին վաճառած այնչափ Պերթրոֆ-  
Ուզ-որ-Բէն-ի Ֆլորէր. Ռոմանէ՛ Բնական Պարտ-Բէն-ի Ուրե-  
-Էլեան և Արե-Տրեան Ֆլորէր. Ուլե-Էլե-Է՛ն Երեւե Ֆլորէր, Քե-  
-Էլեանէ՛ Մշակ-Բէն-ը շատեղեքան Պերե-Էլեան Ֆլորէր : Այս  
գիրքերն սպառելով նորէն տպուեցան : Կարդալու մու-  
լեզնութիւն մը տիրած էր :

Պարպիքէյն կարդալէ լաւագոյն գործ ունէր ընե-  
լիք : Կուղէր իւր աչօք տեսնել ու նշանակել ֆոլում-  
պիատին շինուելու տեղն : Ուստի, առանց վայրկեան  
մը կորուսանելու, հեռագրիտակ մը շինելու համար  
պէտք եղած դուճարը ֆէմպրիճի դիտարանին տրամա-  
դրութեան ներքեւ դրաւ, և Ալպանիի Պրիտուիլ և  
ընկերութեան տան հետ ալ պայմանագրութիւն կնքեց  
Ալիմինիուէ ուսմբը շինելու համար. յետոյ ժ. Թ.  
Մասթոնի, Էլֆիթոն հաղարապետին և Կոլտսբրինկի  
գործարանին տնօրէնին հետ մեկնեցաւ Պալթիմորէն :

Հետեւեալ օրն, այս չորս ուղեկիցք Նոր-Օրլէան  
հասան, և անմիջապէս պետական թամբիքոյ շողենաւը  
նստելով, զոր կառավարութիւնն իրենց տրամադրու-  
թեան ներքեւ դրած էր, հեռացան Լուիզիանայի ե-  
զերքէն :

Երկային ուղեւորութիւնն երկար չեղաւ : Թամբի-  
քոյ՝ երկու աւուր մէջ չորս հարիւր ութսուն մղոն  
ճանբայ առնլով՝ Ֆլորիտի ծովեզրին ճանօթացաւ :

(\*) Քարալուր :



Յամաքին մօտեցած ժամանակ՝ Պարպիքէյն տեսաւ որ  
ցած , տափարակ և բաւական անբեր երեւութով եր-  
կիր մ'էր : Թամբիքոյ՝ ոստրէներով ու խեցգետիննե-  
րով լի խել մը ծովախորշեր անցնելէ յետոյ՝ Էսբի-  
րիւթիւ-Սանթոյի ծովածոցը մտաւ :

Այս ծովածոցն երկու երկայն նաւահանգիստներու  
բաժնուած է . Թամբայի և Իլիսպորոյի նաւահանգիստ-  
ներն , որոց բերնէն ներս մտաւ շոգենաւը : Շատ չան-  
ցած Պրուքի բերդին ծովեզերեայ մարտկոցները տեռ-  
նուեցան , և Թամբա քաղաքն , որ անհոգապէս պառ-  
կած էր Իլիսպորոյ գետակին բերնով ձեւացած բնա-  
կան նաւահանգստին ծայրը :

Հոն երկաթ նետեց Թամբիքոյ հոկտեմբեր 22 ին  
իրիկուան ժամը 7ին : Չորս ուղեւորը անմիջապէս ցա-  
մաք ելան :

Պարպիքէյնի սիրտն ուժգնապէս բաբախել սկսաւ  
երբոր Ֆլորիտի հողն ոտք կոխեց : Կըթուէր թէ կը  
զննէր զայն իւր ոտքով , ինչպէս որ ճարտարապետ մը  
կ'ընէ՝ երբոր տան մը ամրութիւնն հասկնալ ուզէ :

« Տիա՛րք , ըսաւ Պարպիքէյն , կորսնցնելու ժամա-  
նակ չունիմք , վաղը պէտք է ձի նստիմք և երկիրն  
աչքէ անցունեմք » :

Երբոր Պարպիքէյն ցամաք ելաւ , Թամբա-Թաունի  
երեք հազար բնակիչները զինքը դիմաւորեցին , ար-  
ժանավայել պատիւ կըն-Քիւլպի նախագահին , որ իւր  
ըրած ընտրութեամբ պատուած էր զիրենք : Կեցցէ-  
ներու ահագին աղաղակներով ընդունեցին զայն . բայց  
Պարպիքէյն դրուատեաց ցոյցերէ փախչելով՝ Ֆրանքլին  
օթեւանին մէջ սենեակ մը բռնեց և մարդ ընդունիլ  
չուզեց : Հռչակաւոր մարդու արուեստն իրեն անվայել  
կը համարէր :

Հետեւեալ օրը , 13 հոկտեմբեր , Սպանիական փոք-

րիկ՝ բայց ուժեղ ու կրակոտ ձիեր՝ սիգալով կը ճեմէին  
իւր պատուհաններուն առջեւ : Բայց փոխանակ չորսի՝  
յիսուն ձի կային հանդերձ հեծելօք : Պարպիքէյն վար  
իջաւ իւր երեք ընկերաց հետ և ի սկզբան զարմացաւ  
ինքզինք այնչափ ձիաւորաց մէջ տեսնելով : Նշմարեց  
նաեւ որ ամենն ալ ուսերնին հրացան և մէջքերնին  
ատրճանակներ ունէին : Այս զօրեղ պատրաստութեան  
պատճառն հասկցուց իրեն Ֆլորիտցի երիտասարդ մը ,  
ըսելով թէ Սէմինոլներուն համար էր :

— Ո՞վ են այդ Սէմինոլներն , հարցուց Պարպիքէյն :  
— Վայրենիներ , որ արօտավայրերը կը պտըտին ,  
և խոհեմութիւն համարեցինք ընկերակցիլ ձեզ :

— Բէ՛հ , ըսաւ Ժ. Թ. Մասթոն իւր ձին վերելա-  
կելով :

— Վերջապէս աւելի ապահով է այսպէս , ըսաւ  
Ֆլորիտցին :

— Տիա՛րք , պատասխանեց Պարպիքէյն , շնորհա-  
կալ եմ ձեր ուշադրութենէն , այժմ ճանբայ ելնեմք :

— Փոքր զօրախումբն իսկոյն ճանբայ ելնելով անե-  
րեւութացաւ փոչիի ամպերու մէջ : Ժամն առաւօտ-  
եան հինգն էր : Արեւն արդէն իւր բոլոր պայծառու-  
թեամբ կը ճաճանչէր , և ջերմաչափը 28 աստիճան  
ջերմութիւն կը նշանակէր . բայց ծովուն զով հովերը  
կը մեղմացնէին այս սաստիկ ջերմութիւն :

Պարպիքէյն , Թամբա-Թաունէն մեկնելով՝ իջաւ  
դէպի հարաւ , և ծովեզերքին հետեւեցաւ՝ Ալիֆիայի  
գետակն հասնելու համար , որ Իլիսպորոյի ծովածոցը  
կը վազէ Թամբա-Թաունէն տասներկու մղոն վար :  
Պարպիքէյն և իւր ուղեկիցք անոր աջ եզերքէն վեր  
ելան դէպ արեւելք : Շատ չանցած՝ ծովածոցին կո-  
հակներն աներեւութացան երկրի ծալքերուն ետին ,  
և Ֆլորիտի դաշտերը միայն տեսնուիլ սկսան :

Ֆլորիտ երկու մասի կը բաժնուի . մին հիւսիսա-



ինն, որ աւելի բազմամարդ է, և մայրաքաղաք ունի թալլահասէ, և Բանաստեղծ, որ Միացեալ-Նահանգաց գլխաւոր ծովային զինարաններէն մին է. միւսն Ամերիկայի և Մեքսիկեան ծոցին մէջ տեղը բարակ թերակղզի մ'է, փոքրիկ արշիպելագոսի մը մէջ երկընցած, զոր պատելով կ'անցնին Պահամայի ջրանցքին բազմաթիւ նաւերն, և որ ծովածոցին յառաջացեալ պահարանն է մեծ փոթորիկներու դէմ: Այս նահանգին ընդարձակութիւնն է տասնևհինգ միլիոն երեք հարիւր վաթսուներկինգ հազար չորս հարիւր քառսուն էքթա, որոց մէջ պէտք էր ձեռնարկին յարմար տեղ մ'ընտրել քսանեւութեորդ զուգահեռականէն ասդին ուստի Պարպիքէյն ձիաւարած ժամանակ՝ ուշադրութեամբ կը քննէր երկրին մակերեւոյթն ու բաժանումները:

Յլորիտ, զոր ժուան Բոնսէ Տը Լէոն գտած է 1512ին Երազմոս Կոլումբոսին օրը, նախ Երազմոս Կոլումբոսին կը կոչուէր: Այս գեղեցիկ անուան շատ արժանի չէր իւր չոր ու բոցակէզ ծովեզերաց վրայ: Բայց ծովեզերէն քանի մը մղոն անդին, գետնին բնութիւնը տակաւ փոխուեցաւ, և իւր անուան արժանի երեւոյթ մը ցոյց տալ սկսաւ. երկիրը լի էր վտակներով, առուակներով ու լճակներով: Ուղեւորն ինքզինք Հոլանտայի կամ Կիւանայի մէջ կը կարծէր. բայց դաշտն զգալապէս բարձրացաւ և իւր մշակեալ անհուն արտերը ցուցնել սկսաւ, ուր հիւսիսային և հարաւային ամեն տունկերը կը բուսնէին, ուր այրեցեալ գօտիի արեւն և գետնի կաւին մէջ պահուած ջուրերը մշակութեան ամեն պիտոյքը կը լեցնէին, և ուր վերջապէս իւր անանասի, ըրկնամի (\*), ծխախոտի, բրինձի, բամպակի և շաքարեղեգի արտերն, որք աչք չը տեսնելու չափ կը տարածուէին, իրենց հարստութիւն-

(\*) Տեսակ մը տունկ:

ներն անհոգ շուայութեամբ կը պարզէին տեսնողին աչաց:

Պարպիքէյն մեծապէս գոհ երեւցաւ երկրին հետքհետէ բարձրանալը տեսնելով. և երբոր Ժ. Թ. Մասթոն հարցուց զայս իրեն.

« Պատուակա՛ն բարեկամս, պատասխանեց Պարպիքէյն, մեզ համար առաջին կարգի շահեկանութիւն մ'ունի մեր ֆոլումպիտաք բարձր երկիրներու մէջ ձուլել:

— Լուսնին աւելի մօտ լինելո՞ւ համար, գոչեյ կըն-  
-փլուպի քարտուղարն:

— Ոչ, պատասխանեց Պարպիքէյն ժպտելով. ի՞նչ կ'ելնէ քանի մը ձողաչափ աւելի կամ նուազ բարձրութենէ, բայց բարձր գետններու վրայ մեր աշխատութիւններն աւելի դիւրութեամբ յառաջ կերթան. ջուրերուն հետ կուուելու չեմք պարտաւորիր, որով ազատ կը մնամք երկար և բազմածախ աշխատութիւններէ, և այս ալ նկատողութեան արժանի է՝ երբոր ինն հարիւր ոտնաչափ խորութեամբ ջրհոր մը պեղել հարկ է:

— Իրաւունք ունիք, ըսաւ այն ժամանակ Միւրքիսոն երկրաչափը, պէտք է որ հնար եղածին չափ հեռի գտնուիմք առուներէ՝ երկիրը փորած ժամանակնիս. բայց երբոր ջրոց աղբիւրներու հանդիպինք, զանոնք կ'սպառեմք մեր մեքենայներով կամ անոնց ճանքան կը դարձունեմք: Մեք Արդեսեան ջրհորներ չպիտի բանամք (\*) նեղ և մութ, ուր՝ ծակողին բոլոր գործիքները կուրաբար կ'աշխատին, ո՛չ. մեք յայտնի պիտի աշխատիմք բրիչ կամ մուրճ ի ձեռին, և ականն ալ օգնելով մեր գործը շուտով կը կատարեմք:

— Սախայն, ըսաւ Պարպիքէյն, եթէ գետնին բարձ-

(\*) Կըրնէլի ջրհորին բացուելն ինն տարի աւելց, եւ հինգ հարիւր քառսուն եւ եօթն մէթրոյ խորութիւն ունի:



րութեան կամ բնութեան պատճառաւ պէտք չունե-  
նամք ստորերկրեայ ջրոց հետ կռուելու, աշխատու-  
թիւնն աւելի արագ և աւելի կատարեալ կրնայ լինիլ :  
Ուրեմն մեր փոսը ծովէն քանի մը հարիւր ձողաչափ  
բարձր գետնի մը վրայ բանամք :

— Իրաւունք ունիք, Տիա՛ր Պարպիքէյն, և եթէ  
չեմ սխալիր, շատ չանցած յարմար տեղ մը կրնամք  
գտնել :

— Ա՛հ, կը փափաքէի որ առաջին բրիչը զարնէի,  
ըսաւ նախագահը :

— Ես ալ վերջինը, գոչեց ժ. Թ. Մասթոն :

— Պիտի հասնիմք ադոր, Տիա՛րը, պատասխանեց  
երկրաչափն, և հաւատացէք ինձ թէ կոլտարրինկի ըն-  
կերութիւնը չպիտի վճարէ ձեզ յապաղման տուգանքը :

— Կ'երդնում որ իրաւունք պիտի ունենաք, ըսաւ  
ժ. Թ. Մասթոն, օրը հարիւր տոյար մինչեւ որ լու-  
սինը միեւնոյն պայմաններուն մէջ ներկայանայ, այ-  
սինքն մինչեւ տասնեութ տարի և տասնեւմէկ օր,  
գիտէ՞ք որ վեց հարիւր յիսուն և ութ հազար հարիւր  
տոյար (3,366,902 ֆրանք) կ'ընէ :

— Ոչ, Տիա՛ր, մեք չեմք գիտեր զայդ, պատաս-  
խանեց երկրաչափն, և սորվելու ալ պէտք չունիմք :

Սուաւօտեան ժամը տասնին (ըստ Եւրոպացւոց)  
միջոցները Պարպիքէյնի խումբը տասն մլոնի չափ  
ճանբայ առած էր. այն ժամանակ յուռթի դաշտո-  
րէից կը յաջորդէին անտառք, որոց մէջ ամենազան  
հիւթեր պարունակող ծառեր կ'աճէին՝ տաք երկիր-  
ներու սեփական եղող առատութեամբ : Նոննիք,  
թղենիք, ծիրանենիք, պանանենիք, մեծամեծ որ-  
թատունկք, որոց ծաղիկներն ու պտուղները կը մըր-  
ցէին գոյներով և անուշահոտութեամբք. ասոնք էին  
այն անթափանցելի անտառները կազմող ծառերն,  
որոց քաղցրաբոյր հովանոյն ներքեւ կը գեղգեղէին ու  
կը թռչտէին երկններանց թռչնոց երամներ :

ժ. Թ. Մասթոն և հազարապետը կ'զմայլէին այս  
մեծահարուստ բնութեան շքեղապանծ դեղեցկու-  
թեան վրայ :

Բայց Պարպիքէյն նախագահն, առանց ուշ դնելու  
այս հրաշալեաց, կը փութար միշտ յառաջ քալել,  
այս արդաւանդ երկիր անհաճոյ էր իրեն նոյն իսկ  
իւր արդաւանդութեան պատճառաւ : Սուանց ջրադի-  
տակ լինելու, շուրն իւր քայլերուն ներքեւ կ'զգար,  
և ի գուր կը փնտռէր անժխտելի չորութեան մը նշան-  
ները :

Սակայն յառաջ կերթային. հարկ եղաւ քանի մը  
գետեր անցնիլ ոչ առանց վտանգի, վասն զի տասն և  
հինգ—տասնեութ ոտք երկայնութեամբ կայմաններ  
(կոկորդիլոսի տեսակ մը) շատ կային այն գետերուն  
մէջ : ժ. Թ. Մասթոն արիաբար սպառնացաւ անոնց  
իւր ահաւոր ճանկով, բայց միայն հաւալուսները,  
փայետոններն և այլ վայրի թռչունները կրցաւ վախ-  
ցընել, որք այդ գետեզերաց բնակիչներն էին, մինչ-  
դեռ կարմրափետուր յաղթանդամ ֆլամաններն ապ-  
շութեամբ իրեն կը նայէին :

Վերջապէս խոնար երկիրներու այս հիւրերն ալ  
անհետացան : Յանցառ անտառներ սկսան տեսնուիլ  
ցան և ցիր մանր ծառերով, տեղ տեղ ալ առանձին  
մանր պուրակներ կը տեսնուէին անեղր դաշտերու մէջ,  
ուր ահաբեկեալ էչայծեմանց ջուրներ կ'անցնէին :

«Վերջապէս», գոչեց Պարպիքէյն կանգնելով իւր  
ասպանդակներուն վրայ, աւասիկ եղևիններու գա-  
ւառն :

— Եւ վայրենիներուն, պատասխանեց հազարա-  
պետն :

Սրդարեւ հորիզոնին կողմը քանի մը Սէմինոք կը  
տեսնուէին, որք իրենց սրարչաւ ձիերով կը վազվզէին,  
երկար նիզակներ կը ճօճէին կամ իրենց հրացանները



կը պարպէին : Բայց այս թշնամական ցոյցերով բաւականացան , առանց անհանգստութիւն մը տալու Պարպիքէյնի և անոր ընկերաց :

Ասոնք այն միջոցին ժայռալից դաշտի մը միջավայրը կը գտնուէին , քանի մ'էքթառ ընդարձակութեամբ բաց տեղ մը , զոր արեւը կ'ողողէր իւր բոցակէջ ճառագայթներով և որ ձեւացած էր գետնի ընդարձակ ուռցոյով մը , որ կը թուէր թէ ամեն պէտք եղած պայմանները կ'ընծայէր կրն-Քլիւպի անդամոց , իրենց Քոլումպիատը շինելու համար :

« Կեցէ՛ք , ըսաւ Պարպիքէյն կանգ առնելով : Այս տեղն անուն մ'ունի՞ երկրին մէջ :

— Սթոն'ս Հիլ (քարաբլուր) կը կոչուի , պատասխանեց Ֆլորիտցի մը :

Պարպիքէյն առանց խօսք մ'արտասանելու ձիէն իջաւ , իւր գործիքներն առաւ , և սկսաւ այն տեղին դիրքը չափել ծայրագոյն ճշդութեամբ . խմբակն անոր շուրջը շարուած , կը դիտէր զայն՝ խորին լուսթեամբ :

Նոյն միջոցին արեւը միջօրէականը կ'անցնէր : Պարպիքէյն քանի մը վայրկեան վերջն իւր գննութեանց արդիւնքն արագապէս թուադրեց և ըսաւ .

« Այս տեղ՝ ծովու մակերեւոյթէն երեք հարիւր գրկաչափ բարձր է , լայնութեան 27° 7' աստիճանով և արեւմտեան երկայնութեան 5° 7' աստիճանով . ինձ կ'երեւի որ իւր չոր և ժայռոտ բնութեամբ մեր փորձին համար պէտք եղած ամեն պայմանները կ'ընծայէ . ուրեմն այս դաշտին մէջ պիտի շինուին մեր մթերանոցները , գործարանները , փուռերը , մեր գործաւորաց հիւղերը . և աստից , նոյն իսկ աստից , կրկնեց ոտքովը զարնելով Սթոն'ս Հիլի կատարին , մեր ուսմբը պիտի թռչի դէպի արեգակնային աշխարհին անեղը միջոցները : »

ԳԼՈՒԽ ԺԻ.

Բ Ի Ի Չ Ե Ի Ծ Ե Փ Ի Չ

— 0 —

Նոյն իրիկունը , Պարպիքէյն և իւր ընկերք թամբա-թառուե Վերադարձան , և Միւրքիսոն երկրաչափը թամբիքոյ շողենաւը նստելով Նոր-Օրլէան դնաց գործաւորաց բանակ մը վարձելու , և պէտք եղած նիւթեղինաց մեծ մասը բերելու : Կրն-Քլիւպի անդամք թամբա-թառուն մնացին , որպէս զի սկզբնական աշխատութիւնները կազմաւորեն , երկրին մարդոցն օժանդակութեամբ :

Թամբիքոյ շողենաւն՝ ութ որ յետոյ էսբիրիթու-Սանթոյի ծովածոցը վերադարձաւ բազմաթիւ չոգենաւերով : Միւրքիսոն հազար հինգ հարիւր գործաւոր բերած էր : Եթէ ստրկութեան վատ ժամանակները լինէր , իւր ամեն ջանք և աշխատութիւնք ի դերեւ կ'երնէին : Բայց քանի որ Ամերիկա , ազատութեան երկիր լինելով , իւր ծոցն ազատ մարդիկ միայն կը համրէր , ասոնք ամեն կողմ՝ կը դիմէին , ուր որ առատ վարձք գտնէին : Արդ՝ դրամ չէր պակսեր կրն-Քլիւպի : Իւր մարդոց առատ վարձ առաջարկեց , մեծամեծ պարգեւներով : Ֆլորիտ երթալու թելադրեալ գործաւորն , աշխատութեանց աւարտելէն յետոյ դրամաւորուի մը պիտի ունենար՝ իւր անունով Պալմիտորի Պանքան դրուած : Ուստի պէտք եղածէն աւելի գործաւորք ներկայացան Միւրքիսոնի , նա ալ ամենէն հանճարեղներն ու ճարտարներն ընտրեց : Իրաւունք կայ կարծելու թէ մեքենագործներուն , ջերաւունք կայ կարծելու թէ մեքենագործներուն , հանուուցիչներուն , ձուլիչներուն , կրեփեացներուն , հանքահաններուն , աղիւսագործներուն և ամեն ատեսիկ գործաւորաց ընտրելագոյնները վարձեց , սեւ կամ



սպիտակ, առանց գոյնի խտրութեան : Շատերն իրենց ընտանիքն հետերնին կը բերէին : Վերջապէս կատարեալ գաղթականութիւն մ'էր :

Հոկտեմբեր 31/ին, առաւօտեան ժամը տասնին, այս բազմութիւնը թամբա-թառնի ծովափն ելաւ : Դիւրին է հասկնալ այն շարժումն ու գործունէութիւնն որ տիրեցին այդ փոքր քաղաքի մէջ, որոյ ժողովուրդը մէկ աւուր մէջ կրկնապատկեցաւ : Ապաքէն թամբա-թառն մեծ շահ պիտի ընէր կըն-Քլիւպի այս նախաձեռնութենէն, ո՛չ թէ եկած գործաւորաց բազմութեան պատճառաւ, որք անմիջապէս Սթոն'ս-Հիլ զրկուեցան, այլ հետաքրքիրներու բազմութեան պատճառաւ, որք աշխարհի ամեն կողմերէն Ֆլորիտեան թերակղզին կը դիմէին :

Առաջին օրերը, շոգեշարժ նաւախմբին բերած գործիքները ցամաք հանուեցան, ինչպէս նաեւ երկաթի տախտակներէ բազմաթիւ տուններն, որոց մէն մի մասերը քակուած և թուահամարներով նշանակուած էին : Միանգամայն Պարպիքէյն տասնեւհինգ մղոն երկայնութեամբ երկաթուղւոյ մը գծին ձողերը կը տնկէր, որով Սթոն'ս-Հիլ թամբա-թառնի հետ պիտի կապուէր :

Ամեն մարդ գիտէ թէ ի՛նչ պայմաններով կը շինուի Ամերիկեան երկաթուղի մը. կամազնաց իւր պըտոյտներուն մէջ, յանդուգն իւր ելեւէջներուն մէջ, ոչ յենարան կը ճանչէ և ոչ ուրիշ արուեստական գործեր, բլուրները կը վերելակէ, ձորերն ի վար գահավէժ կ'իջնէ, միով բանիւ, կուրաբար կը վազէ առանց ուշ դնելու ուղիղ գծին. գիւրագին է, և բնաւ նեղութիւն չտար, միայն թէ յաճախ գծէն դուրս կ'իյնայ և սղեւորն ամենայն ազատութեամբ շոգեկառքէն ներս կամ դուրս կը ցատկէ : Թամբա-թառնէն Սթոն'ս-Հիլ երթալու ճանբան ոչինչ բան մ'էր.

ուստի և շինուելու համար՝ ոչ երկար ժամանակ պահանջեց, ոչ ալ բազում դրամ :

Մնաց որ, Պարպիքէյն իւր ձայնին դիմող այսչափ բազմութեան հոգին էր : Կ'ոգեւորէր զանոնք, իւր շունչն, իւր խանդն, իւր համոզումն անոնց կը հաղորդէր. ամեն տեղ կը գտնուէր, որպէս թէ ամենուրեքեանի ձիրքն ունեցած լինէր, և միշտ իւր հետն էր ժ. թ. Մասթոն, այդ բզզացող ճանճն : Իւր գործնական միտքն հազար ու մէկ հնարք կը մտածէր. իւր առջեւ բնաւ խոչ, բնաւ դժուարութիւն, երբէք կընծիւ չկար. որչափ թնդանօթաձիգ, նոյնչափ և հանքահան, որմնադիր և մեքենագործ էր. ամեն հարցմանց պատասխան և ամեն խնդրոց լուծում ունէր : Անդադար կը թղթակցէր կըն-Քլիւպի անդամոց կամ Կոլտաբրինկի գործարանին հետ, և գիշեր ցերեկ, կըրակները վառած, և շոգին ճնշման ներքեւ, թամբաքոյ անոր հրամաններուն կ'սպասէր իլլիսպորոյի նաւահանգստին մէջ :

Պարպիքէյն, նոյեմբեր 1/ին մեկնեցաւ թամբա-թառնէն իւր աշխատաւորաց բանակին հետ, և հետեւեալ օրէն սկսեալ մեքենագործ տուններէ քաղաք մը բարձրացաւ Սթոն'ս Հիլի շուրջը : Ցցապատնէշներով շրջապատեցին զայն, և ցոյց տրուած եռանդին ու շարժման նայելով, շատ չանցած՝ միութեան մեծ քաղաքներէն մին պիտի կարծուէր : Կենսավարութիւնը կանոնաւորեցաւ կարգապահական կերպիւ, և աշխատութիւնք սկսան կատարեալ բարեկարգութեամբ : Երկրին բնութիւնն հասկնալու համար գետնին խորերը զննուեցան մեծ խնամով, և պեղումը նոյ. 4/ին ըսկըսաւ : Նոյն օրը Պարպիքէյն իւր գործաւորաց գըլուխները գումարելով ըսաւ .

«Գիտէք ամենքդ ալ, բարեկամք, թէ ինչո՞ւ համար ձեզ գումարած եմ Ֆլորիտի այս խոպան մասին



մէջ : թնդանօթ մը պիտի ձուլուի ինն ոտնաչափ ներքին տրամագծով, վեց ոտնաչափ հաստ փողով և տասըն և ինն ու կէս ոտնաչափ քարէ շրջապատով . ըսել է թէ վաթսուն ոտք լայնութեամբ և ինն հարիւր ոտք խորութեամբ հոր մը պիտի պեղուի : Այս մեծ գործութ ամսոյ մէջ պիտի աւարտի . արդ գուք երկու միլիոն հինգ հարիւր քառսուն երեք հազար չորս հարիւր խորանարդ ոտնաչափ հող պիտի հանէք երկու հարիւր յիսուն և հինգ աւուրց մէջ . այն է՝ օրը տասն հազար խորանարդ ոտնաչափ : Ինչ որ դժուարին չէ ընդարձակ տեղի վրայ աշխատող հազար գործաւորաց , բնական նաբար տաժանելի կը լինի անձուկ միջոցի մը մէջ աշխատողաց : Այսու ամենայնիւ , որովհետեւ այս աշխատութիւնը պարտի կատարիլ , պիտի կատարի , և ես վստահ եմ , ինչպէս ձեր ճարտարութեան , նոյնպէս և ձեր քաջասրտութեան վրայ :

Առաւօտեան ժամ ութին , (կէս օրէն չորս ժամ առաջ) բրչի առաջին հարուածը տրուեցաւ Ֆլորիտի հողին , և այն պահէն սկսեալ այդ անխոնջ գործիքը վայրկեան մ'իսկ պարապ չկեցաւ գործաւորաց ձեռքին մէջ : Աշխատաւորք օրը չորս անգամ կը փոխուէին :

Մնաց որ , ինչչափ և հսկայական լինէր գործը , մարդկային գորութեան սահմանները չէր անցներ : Ընդհակառակն : Որչափ աւելի իրական դժուարութիւններ ունեցող աշխատութիւնք , որոց մէջ տարբերաց դէմ ուղղապէս կուրիլ հարկ եղած էր , յաջողութեամբ ի գլուխ ելած են : Այսպիսի գործոց մէջէն բաւական է յիշել Հայր Յովսէփի ջրհորը , զոր սուրբ թան Սալահէատին շինել տուած է յեգիպտոս , Գահրէի մօտ , այնպիսի ժամանակ մը , ուր մեքենայք դեռ եկած չէին մարդոց ոյժն հարիւրապատկելու : Յիշեալ ջրհորը , Նեղոսի հաւասարութենէն մինչեւ ե-

րեք հարիւր ոտնաչափ խորութիւն կիջնէ : Նմանապէս կոպլէնցի ջրհորը , զոր Պատի Ժան իշխանը պեղել տուած է . վեց հարիւր ոտք խորութիւն ունի գետնին տակ : Արդ Պարպիքէյնի շինել տալիքն ի՞նչ էր , եռապատկել այդ խորութիւն՝ տասնապատիկ լայնութեան վրայ , որով պեղումն աւելի կը դիւրանայ : Ուստի և չկար վարպետ մը , գործաւոր մը , որ գործին յաջողութեան վրայ կասկածէր :

Կարեւոր որոշում մը , զոր Միւրքիսոն երկրաչափն ըրաւ Պարպիքէյն նախագահին հետ խորհրդակցութեամբ , աշխատութեանց ընթացքն առաւել փութացընելու նպատեց : Քաշնադրութեան մէկ յօդուածը կը տրամադրէր որ ֆոլումպիատն երկաթէ շրջանակներով պիտի ամրապնդուէր . անօգուտ նախազգուշութիւն մը , որովհետեւ տարակոյս չկար որ այդ ճընշիչ մանեակներն աւելորդ էին : Ուստի այդ պայմանն ի բաց թողուեցաւ , որով ժամանակի մեծ խնայութիւն մը յառաջ եկաւ : Վասն զի այն ժամանակ կրցին պեղման այն նոր դրութիւնը գործածել , որ այժմ ի գործ կը դրուի ջրհոր շինելու համար , որով հոր մը պեղուած ժամանակ շրջապատող որմն ալ միանգամայն կը շինուի : Այս ամենապարզ գործողութեան շնորհիւ հարկ չլինիր այլ եւս հողերը մոյթերով բռնել . պատը զանոնք կը բռնէ անդրդուելի ուժով , և իւր սեփական ծանրութեամբ ինքնին վար կ'իջնէ :

Այս գործողութիւն այն ժամանակ պիտի սկսէր , երբ բրիչը գետնին հաստատուն մասին հասնէր :

Նոյեմբեր 4ին , յիսուն գործաւորք , ցցապատնէչով պատած շրջափակին կեդրոնն , այսինքն Սթոն'ս-Հիլի վերի մասին մէջ , վաթսուն ոտնաչափ լայնութեամբ կրոր ծակ մը պեղեցին :

Բրիչը նախ բուսային սեւ հողի մը հանդիպեցաւ վեց մատ հաստութեամբ , զոր դիւրաւ պեղեց : Անոր



յաջորդեց երկու ոտնաչափ բարակ աւազ, որ խնամով հանուեցաւ, վասն զի ներքին կաղապարին պատրաստութեան պիտի ծառայէր։ Այս աւազէն յետոյ ճերմակ կաւ մ'երեւան ելաւ Անգլիոյ կրակոյց հողին նման, որ չորս ոտք թանձրութիւն ունէր։

Յետոյ մուրճին երկաթը փայլատակեց հողին կարծր խաւին վրայ, որ տեսակ մը ժայռի կը նմանէր, քարացեալ խեցիներէ կազմուած, յոյժ չոր, յոյժ պինդ, զոր գործիքներն ոչ եւս պիտի կրնային թողուլ։ Այս կէտին, ծակը վեց ու կէս ոտք խորութիւն ունէր, եւ որմնադրական աշխատութիւնը սկսան։

Փորուած փոսին յատակը կաղնի փայտէ չրջանակ մը շինուեցաւ, տեսակ մը սկաւառակ՝ խոշոր բեւեռներով ամրապնդեալ, այս չրջանակին մէջ տեղը ծակ մը բացուած էր, որ ֆորումպիատին արտաքին տրամագծին հաւասար տրամագիծ մ'ունէր։ Շրջանակին վրայ բազմեցաւ որմին քարերուն առաջին շարքն, որոյ ջրաբաշխական շաղախը քարերն իրարու կը կապէր անընկճելի ամրութեամբ։ Գործաւորք չրջապատէն կեդրոնն որմելէ յետոյ, քսան և մէկ ոտք լայնութեամբ հորի մը մէջ կը փակուէին։

Երբոր այս գործն աւարտեցաւ, պեղիչք նորէն ձեռք առին բրիչն ու մուրճն, և չրջանակին տակի ժայռը փորել սկսան՝ դիմացկուն նեցուկներ դնելով անոր ներքեւ, և ամեն անգամ որ ծակն երկու ոտք խորութիւն կ'ստանար, նեցուկներն հետզհետէ կը հանէին, չրջանակը քիչ քիչ վար կ'իջնէր, և անոր հետ որմնադրեալ մանեկաձեւ զանգուածն, որոյ վերին երեսին վրայ որմնադիրք անդադար կ'աշխատէին, շրջաչահան ծակեր պահելով, որպէն զի ձուլման գործողութեանց ժամանակ ելած կազերը փախուստի ճանբայ ունենան։

Այս գործը վերջին ծայր ճարտարութիւն կը պա-

հանջէր գործաւորաց կողմէ և անդուլ ուշադրութիւն քանիներ՝ չրջանակին ներքեւ աշխատած ժամանակ վտանգաւոր և մինչեւ իսկ մահացու կերպիւ վիրաւորեցան ցատկած քարի կտորներէ։ Բայց եռանդն և ոչ իսկ վայրկեան մը չթուլցաւ ցերեկ և գիշեր. ցերեկն արեւուն ճառագայթից տակ, որ քանի մ'ամիս յետոյ քառսուն աստիճան (սանթիկրատ) ջերմութիւն պիտի թափէր այդ խանձատեալ դաշտերուն վրայ, գիշերն ալ ելեքտրական սպիտակասփիւռ լուսոյն ներքեւ մուրճերուն թողիւնը ժայռերուն վրայ, ականներուն որոտածայն պայթիւնը, մեքենայից ճռնչիւնն և ծուխերուն օդին մէջ ցրուեալ ամպերն՝ Սթոն'ս Հիլի բոլորտիքը զարհուրանաց չրջանակ մը գծեցին, զոր վայրի եզները կամ Սէմինոյներն ոչ եւս կ'իշխէին անցնիլ։

Սակայն աշխատութիւնը կանոնաւորագէտ կը յառաջանային։ Շոգեշարժ մեքենայք կը փութացնէին շինուածանիւթոց բարձունքն. անակնկալ արգելքներ դէմ չելան. այլ միայն նախատեսեալ դժուարութիւնք, զորս ճարտարութեամբ կը հարթէին։

Առաջին ամիսը լրացաւ. հորն այնչափ ժամանակի համար նշանակեալ խորութեան հասած էր, այն է հարիւր տասներկու ոտնաչափի։ Դեկտեմբերի մէջ այս խորութիւնը կրկնապատկեցաւ և Յունվարի մէջ եռապատկեցաւ։ Փետրվար ամսոյ մէջ գործաւորք գետնի կեղեւին մէջէն ելած ջուրի մը հետ մաքառեցան։ Հարկ եղաւ հզօր ջրհաններ և օդաճնշիկ մեքենայներ գործածել ջուրն սպառելու և աղբերականց բերանները խցելու համար, ինչպէս որ նաւերու մէջ ջուրի ծակերը կը խցին։ Վերջապէս այդ ձախող հոսանքներուն առաջքն առնուեցաւ։ Միայն թէ երկրին շարժունութեան պատճառաւ, չրջանակը մատամբ կ'քեցաւ, և մասնական փլում մը տեղի ունեցաւ։ Կրնայ երեւակայուիլ այդ եօթանասուն և հինգ գրկաչափ քարուկիր



սկաւառակին սարսափելի մղումն : Այս դէպքը քանի մը գործաւորաց մահուան պատճառ եղաւ : Երեք շաբաթ պէտք եղաւ քարէ պատուարները մոյթերով բռնելու և շրջանակն իւր առաջին ամբողջութեան վիճակին վերածելու համար : Բայց շնորհիւ ճարտարութեան երկրաչափին և գործածուած մեքենայից զօրութեան, շէնքը՝ պահ մը վտանգի մէջ իյնալէ յետոյ՝ նորէն իւր ուղղութիւնը գտաւ և պեղումը շարունակեց :

Այնուհետեւ ոչ մի նոր միջադէպ չարգիլեց գործողութեան ընթացքն, և յունիս 10ին, այն է Պարպիքէյնի որոշած պայմանաժամէն քսան օր առաջ, հորըն՝ ամբողջապէս իւր քարեղէն զգեստն հագած՝ ինն հարիւր ոտք խորութեան հասած էր . քարուկիւր շրջապատին վարի ծայրն երսուն ոտք թանձրութեամբ խորանարդ գանգուածի մը վրայ կը նստէր . իսկ վերի ծայրը գետնին կը հաւասարէր :

Պարպիքէյն նախադահն և Կըն-Բլիւպի անդամք ջերմ խնդակցութիւն յայտնեցին Միւրքիտոն երկրաչափին, որոյ հսկայական ձեռնարկութիւնն արտասովոր արագութեան պայմաններով կատարուած էր :

Այս ութ ամսոց միջոցին, Պարպիքէյն վայրկեան մը չմեկնեցաւ Սթոն'ս-Հիլէն . պեղման գործողութեանց ի մօտոյ հսկած ժամանակ, անդաբար հոգ կը տանէր իւր գործաւորաց առողջութեանն ու բարեկեցութեան, և բաւական բարեբաղդութիւն ունեցաւ որ կրցաւ առաջքն առնուլ այն համաճարակ հիւանդութեանց, որք սովորական են ամեն մարդակոյտերու համար, և յոյժ աղետաբեր երկրագունտին այն մասերուն մէջ, որք այրեցեալ գօտիներու ամեն ազդեցութեանց ենթակայ են :

Ճշմարիտ է որ քանի մը գործաւորք այս վտանգալից աշխատութեանց յարակից եղող անխոհմութեանց

զոհ եղան՝ իրենց կեանքը վրայ տալով, բայց այս ողբալի դժբաղդութիւնք անխուսափելի են, և այնպիսի մանրամասնութիւնք են, որոց համար Ամերիկացիք շատ հոգածութիւն չունին : Առաւել ընդհանուր մարդկութեան հոգ կը տանին՝ քան թէ մասնաւոր անհատի : Սակայն Պարպիքէյն հակառակ սկզբունք կը դաւանէր և ամեն առթիւ կը գործադրէր : Ուստի և, իւր խընամոց, իւր իմաստութեան, դժուարին պարագայից մէջ իւր օգտաւէտ միջամտութեան, և իւր հրաշալի և մարդասէր ուշմութեան շնորհիւ, աղետալի պատահարաց միջին թիւը չկրցաւ անցնիլ ամենէն զգուշաւոր անդրածովեայ երկիրներուն միջին թիւն, և մասնաւորապէս Տրանսայի, ուր սալթրաբար մէկ արկած կը համրուի երկու հարիւր հազար ֆրանքի աշխատութեան վրայ :

ԳԼՈՒԽ ԺԵ .

ՁՈՒԼՄԱՆ ՏՕՆ



Պեղման գործին նուիրեալ ութ ամսոց միջոցին՝ ձուլման պատրաստութիւններն ալ միանգամայն յառաջ տարուած էին ծայրագոյն արագութեամբ : Օտարական մը, եթէ Սթոն'ս-Հիլ երթար, պիտի ապշեր իւր աչքին ներկայացեալ տեսարանին վրայ :

Հորէն վեց հարիւր եարտա անգին շրջանակած ետրամադրեալ հազար երկու հարիւր փուռ շինուած էր, իւրաքանչիւրը վեց ոտք լայնութեամբ և իրարմէկէս գրկաչափ հեռի : Այս հազար երկու հարիւր փուռներուն բռնած գիծն երկու մղոն (իւր 3600 մէթրոյ) երկայնութիւն ունէր : Ամենն ալ մի և նոյն ձևով շինուած էին իրենց բարձր և քառակուսի ծխանով և խիստ զարմանալի երևոյթ մ'ունէին : Ժ. Թ. Մասթոն



սքանչելի կը գտնէր այս ճարտարապետական տրամադրութիւնն, որ Ուաշինկթընի հանրային նշանաւոր շէնքերը կը յիշեցնէր, չկար իրեն համար ասկէց աւելի գեղեցիկ շէնք, մինչև իսկ Յունաստանի մէջ, ուր կ'ըսէր բնաւ ոտք կոխած չէր :

Կը յիշեն ընթերցողք թէ կրն—ֆրիւպի մասնախորհուրդն իւր երրորդ նստին մէջ որոշած էր երկաթի ձոյլ գործածել ֆոլումպիատի համար, և մասնաւորապէս մոխրագոյն ձոյլն : Արդարեւ այդ մետաղն աւելի տոկուն, աւելի ծաւալական, աւելի կակուղ, աւելի ողորկելի, աւելի յարմար է կաղապարման ամեն գործողութեանց, և հանքածուխով բանուած ժամանակ գերազանց առաւելութիւն ունի մեծ դիմացկունութեան պէտք ունեցող մարմնոց համար, ինչպէս են թնդանօթները, շոգեչարժ մեքենայից գլանները, ջրաբաշխական մամուլն և այլն :

Բայց ձոյլ երկաթն եթէ մէկ անգամ միայն հալած է, խիստ քիչ անգամ համասեռ է. ուստի երկրորդ հալեցմամբ մը՝ իւր հողային վերջին դիրտերէն ազատելով կը մաքրուի, կը զտուի :

Արդ, երկաթի մետաղը թամբա—թաուն զրկուելէ առաջ, Կոլտսքրինկի մեծ փուռերուն մէջ անխոյ և սիլիսիումի հետ հազորդակցութեան դրուելով և հալելով ձոյլի փոխարկուած էր : Այս առաջին գործողութենէն յետոյ, մետաղն Սթոն'ս—Հիլ զրկուած էր : Բայց պէտք եղած հարիւր երսուն և վեց միլիոն լիպրա երկաթի ձոյլն երկաթուղիով զրկուելու համար յոյժ ծանր ծախուց կը կարօտէր, որով մետաղին գինը կը կրկնապատկէր : Ուստի լաւագոյն երեւցաւ Նիւ—Եորքէն նաւեր վարձել և երկաթի ձողաձեւ ձոյլերն աւսոնց միջոցաւ փոխադրել : Ասոր համար վաթսուն և ութ հատ հազար թոնելաթոնոց նաւ պէտք եղաւ, ճշմարիտ նաւատորմ մը, որ մայիս 3ին Նիւ—Եորքէն

մեկնելով Ովկէանի ճանքան բունեց, Ամերիկեան ծովեզրներէն անցաւ, Պահամայի ջրանցքը մտաւ, Յլորիտի թերակղզոյն հրուանդանը պատեց, և նոյն ամսոյ 10ին Էսքիթիթիւ—Սանթայի ծովածոցէն վեր ելնելով անմիաս հասաւ թամբա—թաունի նաւահանդիստն : Հոս երկաթները նաւերէն հանուելով Սթոն'ս—Հիլի երկաթուղոյն կառքերը պարպուեցան, և յունիսի մէջերն այս ահագին քանակութեամբ մետաղն իւր տեղը ժամանեց :

Դիւրաւ կը հասկցուի որ հազար երկու հարիւր փուռ շատ չէր այդ վաթսուն և ութ հազար թոնոյ ձոյլ երկաթը միահաղոյն հալեցնելու համար : Փուռերուն իւրաքանչիւրը կրնար հարիւր տասնեւչորս հազար լիպրա մետաղ պարունակել . Ուստի մեծ թնդանօթը ձուլելու ծառայող փուռերուն նման տրապիզիտեայ ձեւով շինուած էին : Չուլարանի հալոցն ու ծխանն հընոցին երկու ծայրերը կը գտնուէին, այնպէս որ հընոցն իւր բոլոր տարածութեամբ կը տաքնար : Այս փուռերը գիմացկուն աղիւսներով շինուած, միայն հանքածուխը վառելու կասկարայէ մ'եւ երկաթածոյլի ձողերը վրան դրուելու պատուանդանէ մը կը բաղկանային, այս պատուանդանը քսանեւհինգ աստիճան անկիւնի մը ներքեւ հակած լինելով, թոյլ կուտար հալած մետաղին՝ ընդունարանաց մէջ հոսելու, ուստից հազար երկու հարիւր համակէտ առուակներէ կամ անցքերէ դէպի կեդրոնական հորը կ'երթար :

Պեղման և որմնադրութեան աշխատութիւններուն աւարտման հետեւեալ օրը Պարպիքէյն ներքին կաղապարին շինութիւնն սկսել տուաւ : Հորին մէջ տեղն և անոր առանցքին համեմատ ինն հարիւր ոտք երկայն և ինն ոտք լայն գլան մը պիտի կանգնուէր, որ ֆոլումպիատի փողամէջին վերապահեալ ճիշդ միջոցը կը լցնէր : Այս գլանը կը բաղկանար կաւոտ հողի և ա-

\*> երկաթալիւսի քանակութիւնը



լազի խառն չաղախէ մը , որոյ մէջ խոտ և յարդ աւելցած էր : Մոյն կողապարին և շրջապատին միջեւ պարապ մնացած անձրպետն հալած մետաղով պիտի լցուէր , և այսպէս թնդանօթին վեց ոտք հաստութեամբ խողովակը պիտի կազմուէր :

Գլանն՝ հաւասարակշուութեան մէջ մնայու համար , հարկ եղաւ երկաթէ կաղամածներով ամրացնել և տեղ տեղ ալ շրջապատի քարերուն մէջ հաստատեալ գերաններով պնդել . ձուլումէն յետոյ այս գերանները մետաղին հատորներուն մէջ պիտի մնային , որ բնաւ անպատահութիւն մը չունէր :

Այս գործողութիւնն յուլիս ծին աւարտեցաւ , և ձուլման համար երրորդ օրն որոշուեցաւ :

«Գեղեցիկ արարողութիւն մը պիտի լինի ձուլման այս տօնն , բաւ ժ. թ. Մասթոն իւր Պարպիքէյն բարեկամին :

Սնչուչտ , պատասխանեց Պարպիքէյն , բոյց հանրային տօն չպիտի լինի :

— Ի՞նչ , միթէ շրջափակին դուռները չպիտի բանաք ամեն եկողներուն :

— Ամենեւին , Մասթոնն , ֆուլումպիատի ձուլումը փափուկ գործողութիւն մ'է , չըսեմ վտանգաւոր , և լաւագոյն կը համարիմ որ դռնփակ կատարուի : Ռումբըն արձակուած ժամանակ , հանդէս թող լինի , եթէ ուզուի , բայց մինչեւ այն ժամանակ , ո՛չ :

Նախագահն իրաւունք ունէր . գործողութիւնը կըրնար անակնկալ վտանգներ ունենալ , որոյ առաջին առնչու արդելք կրնար լինիլ հանդիսատեսաց մեծ բազմութիւն մը : Պէտք էր պահել իւր շարժմանց ազատութիւնը : Ուստի ոչ ոք ընդունուեցաւ շրջափակին մէջ , բայց միայն կընթիւպի անդամոց կողմանէ , յատկապէս թամբա—թարուն եկած պատուիրակութիւնն : Անդ տեսնուեցան աշխոյժն Պիլսպի , թում—

Հընթըր , Պլոմպէրի գնդապետն , Էլֆիսթոն հաղարապետը , Մորկան զօրավարն և այլք , որոց համար ֆուլումպիատի ձուլումն անձնական գործ մ'եղած էր : Գ. թ. Մասթոն անոնց ուղեցոյց եղած էր , ամեն մանրամասնութիւն ծանոյց անոնց , ամեն տեղ պտըտցուց , մթերանոցները , գործարանները , մեքենայներուն մէջ , և ոտիպեց զանոնք մի առ մի տեսնել հազար երկու հարիւր փուռերն : Վերջին փուռն այցելած ժամանակնին քիչ մը ձանձրացած էին :

Չուլումը ճիշդ կէս օրին պիտի կատարուէր : Նախորդ օրը , մէն մի փուռն մէջ հարիւր տասնեւչորս հազար լիպրա մետաղի ձող լցուած և խաչաձեւ իրարու վրայ դիզուած էին , որպէս զի ջերմ օդը կարենայ ազատաբար շրջագայիլ անոնց մէջ : Ուսուօտէն սկսեալ , հազար երկու հարիւր ծխանները մթնոլորտն ի վեր կը ժայթքէին իրենց բոցի հեղեղներն , և գետինը խորունկէն դողալով կը ցնցուէր : Չուլուելիք մետաղներուն լիպրային հաւասար քանակութեամբ հանքածուխ պիտի վառէր , այսինքն վաթսուռն և ութ հազար թոնէլաթոյ ածուխ , որ սեւ ծուխի թանձր վարագոյր մը կը ձգէր արեւուն սկաւառակին առջեւ :

Շատ չանցած՝ տաքութիւնն անտանելի եղաւ փուռերուն այդ շրջանակին մէջ , որոց խորդիւնը փայլակի որոտման կը նմանէր : Մեծամեծ օդափոխ մեքենայք իրենց շարունակեալ փչիւնն այդ որոտման հետ կը միացնէին և առատ թթուածին կուտային այս ամեն հնոցներուն , որոց մէջի հրատը ջերմութեան սաստկութենէն ճերմկացած էր :

Չուլման գործողութիւնն՝ յաջողելու համար՝ պէտք է որ արագութեամբ կատարուէր : Թնդանօթի հարուած մը նշան պիտի տար գործողութիւնն սկսելու , և իւրաքանչիւր փուռ ճանբայ պիտի տար հալած ձող երկաթին , և ամբողջապէս պիտի պարպուէր :



Այս պատրաստութիւններէն յետոյ, գործաւորք և պետք որոշեալ ժամուն կ'սպասէին բունն անհամբ-  
րութեամբ, և մինչեւ աստիճան մը սրտայուզութեամբ :  
Շրջափակին մէջ մարդ չէր մնացած, և ձուլիչ վար-  
պետներուն ամենն ալ հարած մետաղին ճանբայ տա-  
լու սահմանեալ ծակերուն քով կանգնած կ'սպասէին :

Պարպիքէյն և իւր պաշտօնակիցք, մօտակայ բարձ-  
րաւանդակի մը վրայ նստած էին գործողութեան ներ-  
կայ գտնուելու համար . իրենց առջեւ թնդանօթ մը  
պատրաստ կեցած՝ կրակ ընելու համար երկրաչափին  
նշան տալուն կ'սպասէր :

Կէս օրէն քանի մը վայրկեան առաջ, մետաղին ա-  
ռաջին կաթիլները ծորիլ սկսան, ընդունարանները  
քիչ քիչ լցուեցան, և երբոր ձոյլ երկաթն ամբողջա-  
պէս հալեցաւ, քանի մը վայրկեան հանգիստ տուին,  
որպէս զի օտար նիւթերը բաժնուին :

Կէս օրը զարկաւ, յանկարծ թնդանօթը պայթե-  
լով իւր շէկ փայլակն օդին մէջ շողացուց : Հսկար եր-  
կու հարիւր ծակ միանգամայն բացուեցան, և հազար  
երկու հարիւր կրակէ օձեր սողալ սկսան դէպի կեղ-  
րոնական հօրն, իրենց բոցավառ օղակները պարզե-  
լով : Հոն ահեղ շառաչմամբ վիժեցան յինն հարիւր  
ոանաչափ խորութիւն : Արդարեւ սրտայայտ և դեղե-  
ցիկ տեսարան մ'էր : Գետինը կը դողար, մինչդեռ  
ձոյլի կոհակները, ծուխի մրրիկներ արձակելով դէպի  
երկինք, միանգամայն կաղապարին խոնառութիւնը կը  
ցնդեցնէին և քարէ պատուարին շնչահաններէն դուրս  
կը ձգէին անթափանցելի շողիներու ձեւով : Այս ար-  
ուեստական ամպերն իրենց թանձր ոլորտագիծը կը  
պարզէին դէպի դադաթնակէտ ելնելով մինչեւ հինգ  
հարիւր գրկաչափ բարձրութեամբ : Հորիզոնին սահ-  
մաններէն անդին թափառող վայրենի մը կրնար կար-  
ծել թէ Ֆլորիտի մէջ նոր հրաբուլխ մը ձեւացած էր :

և սակայն ոչ հրաբուլխ էր, ոչ թաթառ, ոչ փոթո-  
րիկ, ոչ տարերաց կախ, ոչ ալ այն սարսափելի օղե-  
րեւոյթներէն մին՝ զորս ընութիւնը կրնայ արտաբերել,  
ոչ . մարդիկ միայն ստեղծած էին այդ կարմիր շողի-  
ներն, այդ հրաբուլխի մ'արժանի բոցերն, այդ շուք-  
դալից դղրդիւնն, որ երկրաչարժի ցնցման կը նմանէր,  
այդ բռնաշունչ հողմոց և մրրկաց հակընդդէմ մուր-  
չիւններն, և մարդոց ձեռքն էր որ իւր ձեռօք բաց-  
ուած անդունդի մը մէջ հարած մետաղի Նիակարա  
(գետ) մը կը դահալիժէր :

ԳԼՈՒԽ ԺԶ.

ՔՈՒՆԻՄՊԻՍ

Չուլման գործողութիւնն յաջողած էր. այս մասին  
պարզ ենթագորութիւնը միայն կային : Սակայն ամեն  
հաւանականութիւն յաջողութեան կողմն էր, որով-  
հետեւ կաղապարն ամբողջապէս կընած էր փուռե-  
րուն մէջ հարած մետաղն : Ինչ որ ալ էր, ուղղապէս  
ստուգելն երկար ժամանակ անհնարին էր :

Արդարեւ, երբոր Ռոտման հաղարապետն իւր վաթ-  
սուն հազար լիպրանոց թնդանօթը ձուլեց, տասն և  
հինգ օր պէտք եղաւ զայն պաղեցնելու : Ուրեմն ո՛ր-  
չափ ժամանակ վիթխարի ֆուլումպիտան՝ իւր շողիկ  
ամպերով ծածկուած և իւր սաստիկ ջերմութեամբ  
արգելուած՝ պիտի թաքչէր իւր վրայ սքանչացողաց  
հայեացքէն : Յոյժ դժուարին էր հաշուել :

Կրն-Քլիւպի անդամոց անհամբրութիւնը դժնդակ  
փորձի մ'ենթարկուած էր այս սպասման երկար ժա-  
մանակին մէջ : Բայց ի՞նչ կրնային ընել : Ժ. Թ. Մաս-  
թոն մագ մնաց որ պիտի խորովէր անձնուիրաբար :



Չուլումէն տասն և քսինգ օր յետոյ, տակաւին ծովն  
երկար ցցունքի նման դէպի երկինք կը բարձրա-  
նար, և գետինը կոխողին ոտքը կ'այրէր Սթոն'ս-Հիլի  
գագաթէն մինչեւ երկու հարիւր քայլ հեռի :

Օրերը կ'անցնէին, շաբաթներն իրարու վրայ կ'ա-  
ւերնային, հնարք մը չկար ահագին դւանը պաղեցնե-  
լու : Հարկ էր սպասել, և կըն-՝ ֆըլլուպի անդամք իրենց  
սանձը կը կրժէին :

— Ահա օգոստոսին տասն է այսօր, ըսաւ առաւօտ  
մը ժ. Թ. Մասթոն, հազիւ չորս ամիս կը մնայ դեկ-  
տեմբեր 1 ին : Ներքին կաղապարը վերցնել, թնդա-  
նօթին փողամէջը յղկել, կանոնաւորել, ֆուլումպիատը  
լցնել, այս ամենը կատարուելիք գործեր են. և եր-  
բէք չպիտի կրնամք պատրաստ լինիլ : Դեռ թնդանօ-  
թին մօտն անգամ չեմք կրնար երթալ : Արդեօք չպի-  
տի՞ պաղի երբէք : Ահաւասիկ դառն պատրանք մը :

Ի դուր կը ջանային անգործել անհամբեր քարտու-  
ղարին սիրտը : Պարպիքէյն չէր խօսեր, բայց իւր լը-  
ռութիւնը ներքին գրգռութիւն մը կը ծածկէր : Ինք-  
զինք բացարձակապէս արգիլեալ տեսնել այնպիսի խո-  
չէ մը, որուն ժամանակը միայն կրնար յաշթել. —  
ժամանակն, որ ներկայ պարագային մէջ ահաւոր թըշ-  
նամի մ'էր, — և թշնամիի մը տրամագրութեան ներ-  
քեւ գտնուիլ, անտանելի էր պատերազմական մար-  
դոց համար :

Սակայն հանապազօրեայ դիտողութեամբք տես-  
նուեցաւ որ գետնին վիճակն օր ըստ օրէ կը փոխուէր :  
Օգոստոս 15ին, վերածխեալ շոգիներուն թանձրու-  
թիւնն զգալի կերպիւ պակասած էր : Քանի մ'օր յե-  
տոյ գետնէն թեթեւ գոլորշի մը միայն կ'երնէր, որ  
իւր բարէ դազողին մէջ փակուած հրէշին վերջին  
շունչն էր : Քիչ քիչ գետնին դողալը դադրեցաւ, և  
ջերմութեան չըջանակը նեղցաւ : Հանդիսատեսաց ա-

մենէն անհամբերներն սկսան մօտենալ, օր մը երկու  
գրկաչափ, հետեւեալ օրը չորս, և օգոստոս 22ին  
Պարպիքէյն, իւր պաշտօնակիցք և երկրաչափը կրցին  
կենալ ձոյլին վրայ, որոյ մակերեւոյթն Սթոն'ս-Հիլի  
կատարին հետ հարթ հաւասար էր, յոյժ ողջպահիկ  
տեղ մը, ուր տակաւին ներելի չէր պաղ առնուլ ոտ-  
քէ :

— Վերջապէս, գոչեց կըն-՝ ֆլլուպի նախագահը,  
գոհութեան երկար հառաչով մը :

Աշխատութիւնք վերսկսան նոյն օրն : Անմիջապէս  
ձեռք զարկին ներքին կաղապարը դուրս հանելու, որ-  
պէս զի թնդանօթին փողը բացուի, բրիչը, մուրճն  
և ծակելու գործիներն անդադար բանեցան. կաւոտ  
հողն ու աւազը վերջին աստիճանի կարծրութիւն ըս-  
տացած էին ջերմութեան ազդեցութենէն. բայց գոր-  
ծաւորները մեքենայից օգնութեամբ այդ խառնուրդին  
ալ յաղթեցին, որ ձոյլին չըջապատին հաղորդակցու-  
թենէն տակաւին սաստիկ տաք էր : Դուրս հանուած  
նիւթերն արագապէս վերցան շոգեչարժ սայլերով, և  
ա'յնչափ եռանդով ու ճարտարութեամբ աշխատուե-  
ցաւ, ա'յնչափ Պարպիքէյնի միջամտութիւնն ստիպող  
եղաւ, և ա'յնչափ իւր փաստերը մեծ զօրութեամբ  
ներկայացան տոյարներու ձեւին տակ, որ սեպտեմբեր  
3ին օրը կաղապարին հետքը չէր մնացած :

Անմիջապէս յղկման գործողութիւնն սկսաւ. մե-  
քենաներն արագապէս զեռեղուեցան, և զօրաւոր  
յղկիչներ բանիլ սկսան, որոց սայրերը սկրդեցին մաք-  
րեցին ձոյլին բոլոր խորտուբորտերը, քանի մը շաբաթ  
յետոյ անհեթեթ փողին ներքին մակերեւոյթը կա-  
տարելապէս կլոր և յղկեալ էր :

Վերջապէս սեպտեմբեր 22ին, Պարպիքէյնի դե-  
կոյցին վրայ դեռ տարի մը չանցած, վիթխարի հը-  
րանօթը կատարելապէս ճշդուած, բացարձակապէս



գաղաթնահայեաց դրից մէջ և փափուկ գործիներու միջոցաւ վեր հանուած, պատրաստ էր գործելու : Կը մնար միայն լուսնին սպասել, բայց տարակոյս չկար որ չպիտի վրիպէր ժամադրութենէն :

Ժ. Թ. Մասթոնի ուրախութիւնն անսահման էր . քիչ մնաց որ թնդանօթին ինն հարիւր ոտնաչափ փուղամէջը դիտած ժամանակ սարսափելի անկում մը պիտի ունենար : Առանց Պլումպէրիի աջ բազուկին, զոր պատուարժան գնդապետը բարեբաղդաբար ողջ պահած էր, կըն-Քիլլապի քարտուղարն, իբրեւ մի նոր երոստրատ, ֆուլմպիատի խորոց մէջ իւր մահը պիտի գտնէր :

Թնդանօթը շինուած լմնցած էր և իւր յօրինուածին կատարելութեան վրայ կասկած չկար այլ եւս . ուստի հոկտեմբեր ճին, Նիքոլ նաւապետն, իւր աւաջարկած գրաւներէն մին վճարեց, և Պարպիքէյն նախադահն՝ իւր տուժարներուն մէջ՝ հասութից կողմը՝ երկու հազար տղարի գումար մ'արձանագրեց : Ներքի է հաւատալ թէ Նիքոլ նաւապետը զայրոյթէն ու որտին ցաւէն հիւանդացաւ : Սակայն տակաւին երեք գրաւ ունէր, երեք հազար, չորս հազար և հինգ հազար տղարի, որոց եթէ երկուքը շահէր, իւր գործը գէշ չէր, առանց գերազանց լինելու : Բայց դրամը չէր մտներ իւր հաշուոց մէջ, և իւր հակառակորդին ձեռք բերած յաջողութիւնն այնպիսի թնդանօթ մը ձուլելու մասին, որուն տասն գրկաչափ հաստութեամբ երկաթի տախտակներ չէին կրնար դիմանալ, սարսափելի հարուած մը կուտար իրեն :

Սեպտեմբեր 23 էն ի վեր Սթոնս-Հիլի շրջափակը լիարձակ բացուած էր հասարակութեան, և դիւրաւ կը հասկցուի թէ ի նչ կրնար լինիլ այցելուաց բազմութիւնն :

Անթիւ հետաքրքրիք, Միացեալ Նահանգաց ամեն

կողմերէն Ֆլորիտայի դիմէին : Թամբա քաղաքն հրաշալի կերպիւ մեծցած էր այս մէկ տարուան մէջ, որ ամբողջապէս կըն-Քիլլապի աշխատութեանց նուիրուած էր, և այս միջոցիս հարիւր յիսուն հազար բնակիչ ունէր . Պրուքի բերդը փոլոցներու ցանցով մը շրջապատելէ յետոյ, այժմ կ'երկննար այն հողալեզուին վրայ, որ Էսթրիլիթիւ-Սանթոյի ծովածոցին երկու նաւահանգիստներն իրարմէ կը բաժնէ : Նոր թաղեր, նոր հըրապարակներ, տուներու համակ անտառ մը բուսած էին այն երբեմն ամայի և արեւակէզ աւազուտներուն վրայ : Ընկերութիւնը կազմուած էին՝ եկեղեցիներ, դպրոցներ, մասնաւորաց բնակարաններ շինելու համար, և մէկ տարիէն պակաս ժամանակի մէջ քաղաքը տասնապատկեցաւ :

Յայտնի է որ Եանքիները վաճառական ծնած են . ուր որ բաղդը շիրենք նետէ, սառուցեալ գօտիէն մինչեւ այրեցեալ գօտին, պէտք է որ իրենց առեւտրական բնազդումն օգտակարապէս գործածուի : Այս պատճառաւ է որ պարզ հետաքրքիրներ, կըն-Քիլլապի գործողութիւնները տեսնելու միակ նպատակաւ Ֆլորիտ եկող մարդիկ, Թամբայի մէջ նստելուն պէս, առեւտրական գործողութեանց ձեռնարկեցին : Քուլմպիատին համար նիւթ և գործաւոր բերելու նըպատակաւ վարձեալ նաւերն անօրինակ գործունէութիւն մը տուած էին նաւահանգստին : Շատ չանցած, ուրիշ նաւեր ալ, ամեն ձեւով և մեծութեամբ, նըպար, հանդերձանք, վաճառք բարձած, ծովածոցին և երկու նաւահանգիստներուն մէջ կ'երթեւեկէին . նաւայորդարաց ընդարձակ տուններ, միջնորդներու գրասենեակներ հաստատուեցան քաղաքին մէջ, և Շիբբինկ կազէթը (ծովային լրագիր) նորանոր նաւերու Թամբայի նաւահանգիստն հասնելը կը ծանուցաւ էր նամեն օր :



Մինչդեռ ճանապարհները կը շատնային քաղաքին շուրջը, քաղաքն ալ իւր ժողովրդեան և առուտուրին տարապայման բազմանալուն պատճառաւ վերջապէս երկաթուղիով մը կապուեցաւ Միւթեան հարաւային նահանգաց հետ: Նախ երկաթուղի մը Մօպիլ քաղաքը Բէնսաքոլայի հետ կապեց, որ հարաւային նահանգաց ժովային մեծ զինարանն է: Յետոյ այս կարեւոր կէտէն հասաւ մինչեւ Թալահասէ, ուր արդէն երկաթուղոյ փոքր հատուած մը կար քսան և մէկ միոն երկայնութեամբ, որով Թալահասէ կը հաղորդակցէր ժովեզերեայ Սէնթ-Մարքս քաղաքին հետ: Ահա այս հատուածն էր որ երկնցաւ մինչեւ ի Թամբա-Թաուն, ողեւորելով և արթնցնելով իւր անցած ճանքուն վրայ կեդրոնական Յլորիտի մեռած կամ քնացած մասերը: Հետեւաբար Թամբա, շնորհիւ ճարտարութեան այն հրաշալեաց, որ օրին մէկը մարդու մը խելապատակին մէջ ծնունդ առած գաղափարի մ'արդիւնքն էին, մեծ քաղաքի մը դէմք առաւ արդար իրաւամբ: Զինքը մականուանած էին «Մուն-Սիթի» (Ղուսնաքաղաք), և Յլորիտի մայրաքաղաքն այնպիսի ամբողջական խաւարում մը կը կրէր, որ աշխարհի ամեն կողմերուն տեսանելի էր:

Ամեն մարդ պիտի հասկնայ այժմ թէ ինչո՞ւ համար այնչափ մեծ մրցում եղաւ Թէքսասի և Յլորիտի միջեւ, և այնչափ բարկացան Թէքսասցիք՝ երբոր իրենց պահանջումը մերժուած տեսան իրեն-Քիլիպի ըրած ընտրութեամբ: Իրենց նախատես ուշմութեամբ հասկցած էին ինչ որ երկիր մը պիտի շահէր Պարպիլքէյնի փորձած փորձով, և այն բարիքն որ այսպիսի թնդանօթի հարուած մ'իւր հետ պիտի բերէր: Թէքսասն այս պարագայիս մէջ կը կորուսանէր առուտուրի ընդարձակ կեդրոն մը, երկաթուղի մը, և ժողովրդեան մեծ աճում: Այս ամեն բարիք կը վերա-

դառնային Յլորիտեան թշուառ կղզւոյն, որ Թումբի մը նման ձգուած էր ծովածոցին ալիքներուն և Ատլանտեան Ովկէանին կոհակներուն միջեւ: Ուստի և Պարպիլքէյն Սանթա-Սննա զօրավարին հետ՝ Թէքսացոց սաստիկ հակակրութիւնն հրաւիրած էր իւր վրայ:

Սակայն, Թամբա-Թաունի ժողովուրդը, թէև իւր առեւտրական և արուեստական բուռն եռանդին անձնատուր եղած, կըն-Քիլիպի հետաքրքրաշարժ գործողութիւնները չմոռցաւ: Ընդհակառակն, անոր ձեռնարկին ամենամանր պարագաներն, ամենաթեթեւ թշնհարուածն անոր շերտ համակրութիւնը կը գրաւէին, քաղաքին և Սթոն'ս-Հիլի միջեւ անդուլ երթեւեկ կար, թափօր կամ մանաւանդ ուխտադնացութիւն:

Արդէն կրնար նախատեսուիլ թէ փորձին օրը, հանդիսատեսաց բազմութիւնը միլիոններով պիտի համրուէր, վասն զի արդէն աշխարհի ամեն կողմերէն կուգային կը խռնէին անձուկ թերակղզւոյն վրայ: Եւրոպա յԱմերիկա կը գաղթէր:

Բայց, մինչեւ այն ժամանակ, ճշմարիտն ըսելով, եկողներուն հետաքրքրութիւնն ըստ բաւականի գոհ չէր եղած: Շատեր թնդանօթին ձուլումը տեսնելու կը փափաքէին և միայն անոր մուխերը տեսան, որ քաղցեալ աչքերու համար յոյժ բիչ էր. բայց Պարպիլքէյն չուզեց մարդ ընդունիլ այս գործողութիւնը տեսնելու. Աստից քրթմնջիւն, դժգոհութիւն, տըրտունջ ծագեցաւ նախագահին դէմ. զինքը բամբասեցին իբրև արձակպետական, և իւր վարմունքը «նըւազ ամերիկեան» յայտարարեցին: Գրեթէ խռովութիւն մ'եղաւ Սթոն'ս-Հիլի ցցապատնէջներուն շուրջը: Պարպիլքէյն, ինչպէս գիտեն ընթերցողք, անդրդուելի մնաց իւր որոյման վրայ:



Բայց երբոր ֆուլումպիատն ամբողջապէս շինուեցաւ, դռնփակը չկրցաւ այլ եւս շարունակիլ, և իրօք անպատեհ և դժպհի գործ մը կը լինէր իւր դռնները փակել, և չարագոյն եւս, մեծ անխոհեմութիւն կը լինէր դժգոհացնել և գրգռել հասարակաց զգացմունքն: Ուստի Պարպիքէյն բացաւ իւր շրջափակն ամեն եկողներուն. բայց իւր գործնական խելքէն մըղուելով, որոշեց դրամական շահ մը հանել հասարակաց հետաքրքրութենէն:

Յիրաւի, փոքր բան չէր տեսնել ահաւոր ֆուլումպիատը, բայց Ամերիկացւոց համար ծայրագոյն երջանկութիւն կը թուէր անոր խորերն իջնել. Հետեւաբար չկար հետաքրքիր մը, որ չուզէր այդ մետաղեայ անդունդին ներսի կողմը զննելու հաճոյքը վայելել: Ուստի շոգեշարժ մեքենայէ մը կախուած գործիքներու միջոցաւ հանդիսատեսք կրցին յազեցնել իրենց հետաքրքրութիւնը: Կանայք, տղայք, ծերունիք, ամենն ալ պարտք համարեցան վիթխարի թնդանօթին բերնէն մինչեւ յատակն իջնելով անոր գաղտնիքը թափանցել: Իլման գինը մարդ գլուխ հինգ տողար որոշուեցաւ. և հակառակ այս գնոյն բարձրութեան, մինչեւ փորձին օրը մնացած երկու ամսոց միջոցին ներկայացեալ այցելուաց բազմութիւնն հինգ հարիւր հազար տողարի շափ դրամ շահեցուց կրն-ֆիլպի անտուկին:

Աւելորդ է ըսել թէ ֆուլումպիատին առաջին այցելուներն եղան կրն-ֆիլպի անդամք, պատիւ մը, որուն իրաւամբ արժանի էր այդ հոյակապ ժողովն: Այս հանդիսաւոր այցելութիւնը սեպտ. 23 ին կատարեցաւ: Պատուոյ սնտուկ մը վար իջեցուց նախ Պարպիքէյն նախագահը, ժ. թ. Մասթոն, էլֆիլսթոն հազարապետը, Մոտկան զօրավարը, Պլոմպպէրի գնդապետը, Միւրքէսոն երկրաչափն և մեծահամբաւ ֆիլ-

պին ուրիշ նշանաւոր անդամներն. ընդ ամենը տասնի չափ: Տակաւին յոյժ տաք էր մետաղին երկար խողովակին յատակն: Այցելուք կը խեղդուէին քիչ մը, բայց ինչ ուրախութիւն, ինչ սքանչազում: Տասն հոգւոյ սեղան մը պատրաստուած էր այն քարայտակին վրայ, որոյ վրայ կանգնած էր ֆուլումպիատն, պայծառապէս լուսադարձեալ ելեքտրական լուսով: Բազմութիւ ընտիր համագամներ, որք երկինքէն իջած կը թուէին, իրարու ետեւէ եկան կոչնականաց առջև շարուեցան, և Ֆրանսայի լաւագոյն գինիներն առատապէս խմուեցան այս փառաւոր ճաշին մէջ, որ ինն հարիւր ոտնաչափ գետնին տակը կը տրուէր:

Կոչուեքն յոյժ զուարթ և մինչեւ իսկ յոյժ աղաղակալից եղաւ. բազմութիւ բաժակներ իրարու բողխեցան. Երկրագունտին համար, անոր Արքանեակին համար, կրն-ֆիլպին համար, Միացեալ-Նահանգաց համար, Լուսնին համար, Փեպէի համար, Ունահիտի համար, Սէլէնէի համար, Գիշերային աստղին համար, Համաստեղութեան խաղաղ սուրհանդակին համար դինի խմուեցաւ: Երկայն լսելափողին ձայնական կոհակներէն տարուելով այս ամեն հուրրաները որոտման պէս անոր վերի ծայրը կը հասնէին, և բազմութիւնն Մթոնս-Հիլի շուրջը շարուած, սրտիւ և ձայնիւ կը միանար վիթխարի ֆուլումպիատին յատակը ծածկուած կոչնականաց հետ:

ժ. թ. Մասթոն ինքզինք կորուսած էր: Արդեօք ձեռքով ու ոտքով շարժումներ ընելէ աւելի կը պօռա՞ր, արդեօք ուտելէ աւելի խմե՞ց, այս կէտը դժուարին է հաստատել: Ինչ որ ալ լինէր, տարակոյս չկար որ իւր տեղը թաղաւորութեան մը հետ չէր փոխանակեր. «մինչեւ իսկ եթէ թնդանօթը լցուէր, կրակ տրուելով իսկոյն բռնկէր, և զինքը կտոր կտոր մտրակային միջոցներուն մէջ զրկէր»:

Այս գրքի համար շնորհակալութիւններով շնորհակալ եմ լինում իմ հարազատներին և իմ հարազատներին:



ԳԼՈՒԽ ԺԷ.

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Մ Ը

Կըն-Քիւլպի ձեռնարկած մեծ աշխատութիւնը գրեթէ աւարտած էր, և սակայն տակաւին երկու ամիս պիտի անցնէր մինչեւ այն օրն՝ յորում ռուսը պիտի արձակուէր դէպի Լուսին, երկու ամիս, որ տարիներու չափ երկայն պիտի երեւնային ընդհանուր աշխարհի անհամբերութեան: Մինչեւ այն ժամանակ գործողութեան ամենափոքր մանրամասնութիւններն ամեն օր հրատարակուած էին լրագրաց մէջ, և ամեն մարդ քաղցեալ և խանդավառ աչօք կը լսփէր զանոնք: Բայց կը վախցուէր որ այսուհետեւ ժողովրդեան բաշխուած « շահու բաժինը » շատ չնուազէր, և ամեն մարդ կը սարսափէր խորհելով որ իւր հանապազօրեայ սրտայուզութեան բաժինն ոչ եւս պիտի ստանար:

Սակայն այնպէս չեղաւ. ամենէն անակնկալ, ամենէն արտասովոր, ամենէն անհաւատալի, ամենէն անհաւանական միջադէպն եկաւ նորէն մոլեգնեցուց թատեն միաբերն, և բովանդակ աշխարհ սաստիկ զըրդուութեան մէջ ձգեց:

Օր մը, սեպտ. 30, իրիկուան ժամ 3ը քառասուն և ութ վայրկեան անցած, վալէնթիայի (իրլանտա) Թէրնէօլի և Ամերիկեան ծովեզրին միջեւ ընկուղեալ պարանին միջոցաւ հեռագիր մը հասաւ ի Թամբա-Թաուն, ուղղեալ առ Պարպիքէյն նախագահ:

Պարպիքէյն պատեանը խզելով կարդաց հեռագիրն, և որչափ որ ինքզինք բռնելու կարող էր, շըրթունքը դեղնեցաւ և աչերը խուփեցան՝ երբոր հեռագրին բնաւ կարդաց:

Աւասիկ հեռագրին պատճէնն, որ այժմ կըն-Քիւլպի դիւանին մէջ պահուած է:

« ՏՐԱՆՍԱ . ՓԱՐԻՉ

« 30) Սեպտ. ժամ 4 առաւօտ .

« Պարպիքէյն, Թամբա, Տլորիտ,

« Միացեալ-Նահանգք .

« Կիր ռուսին տեղ գլանա-կոնաձեւ ռուսը դրէք: Մէջը « պիտի երթամ: Աթլանթա շողենաւով կուգամ:

« ՄԻՇԷԼ ԱՐՏԱՆ . »

Եթէ այս շանթաճարիչ լուրը, փոխանակ ելեքտրական թելերու վրայ թռչելու՝ պարզապէս թղթաբերով և կնքեալ նամակի ձեւով եկած լինէր, եթէ Ֆրանսացի, իրլանտացի, Թէր-Նէօլիցի և Ամերիկացի հեռագրական պաշտօնեայք հարկաւ իմացած չլինէին այս հեռագրին գաղտնիքը, Պարպիքէյն վայրկեան մ'իսկ չէր վարաներ: Խոհեմութեամբ լուծիւն կը պահէր, որպէս զի իւր գործին յարգը չկոտրէ: Այս հեռագիրը կրնար խաբէութիւն մը ծածկել, մանաւանդ երբոր Ֆրանսացիէ մը կուգար: Ի՞նչ հաւանականութիւն կար թէ մարդ մը կրնար բաւական յանդուգն լինիլ այսպիսի ուղեւորութեան մը գաղափարն անգամ յղանալու: Եւ եթէ այդ մարդը գոյութիւն ունէր, արդեօք խելագար մը չէ՞ր, արդեւանոցի՞ քան թէ ռուսի մը մէջ փակելու արժանի:

Բայց հեռագրին իմացուած էր, վասն զի փոխադրիչ գործիները բնականապէս շատ խորհրդապահ չեն, և Միշել Արտանի առաջարկն արդէն Միլոթեան այլ և այլ նահանգներուն մէջ իմացուած էր: Հետեւաբար Պարպիքէյն այլ եւս լռելու բնաւ պատճառ մը չունէր: Ուստի Թամբա-Թաուն գտնուող իւր պաշտօնակիցներն ի խորհուրդ գումարեց, և առանց իւր կարծիքը նշմարել տալու, առանց հեռագրին քիչ կամ շատ վրտասահութեան արժանի լինելը բնենելու՝ անոր լակոնական բնագիրը կարդաց անոնց:



«Շնոր չէ : — Հաւանական չէ : — Պարզ կատակ մ'է : — Մեր վրայ ծիծաղեր են : — Ծաղրական է : — Անտեղի է : » Վերջապէս երկբայութիւն, թերեհաւատութիւն, տխմարութիւն, խենդութիւն, յայտնելու ծառայող ամէն խօսքերն ու բառերը պահ մ'իրարու յաջորդեցին, հանդերձ այսպիսի պարագայից մէջ սովորական եղած շարժումներով : Ամեն ոք կը ծիծաղէր, կը խնդար, ուսերը կը թոթվէր, իւր բնաւորութեան համեմատ . միայն Ժ. Թ. Մասթոն գեղեցիկ խօսք մ'ըսաւ .

«Գաղափար մ'է այս, գոչեց :

— Այո՛, պատասխանեց հազարապետը, բայց եթէ երբեմն ներքի է ունենայ այսպիսի գաղափարներ, այն պայմանաւ է որ և ոչ իսկ մտքէ պէտք է անցունել անոնց գործադրութիւնը :

— Ինչո՞ւ համար, հարցուց բարկութեամբ կրն-Քր լիւպի քարտուղարը, վիճաբանելու պատրաստութեամբ : Բայց չուզուեցաւ ակելի յառաջ մղել զայն :

Սակայն Միշէլ Արտանի անունը կը շրջագայէր թամբ բայի մէջ : Օտարականներն ու բնիկներն իրարու երես կը նայէին, հարցումներ կ'ընէին ու կը ծաղրէին, ոչ թէ այդ Եւրոպացի, որ առասպելեալ էակ մը, մտացածին անհատ մ'էր, այլ Ժ. Թ. Մասթոն, որ կրցած էր հաւատալ այդ անձին գոյութեան : Երբ որ Պարպիքէյն առաջարկեց ռումբ մը զրկել Լուսնին, ամեն ոք այդ առաջարկը բնական, գործադրելի և ումբաձգական արուեստին վերաբերեալ պարզ գործ մը նրկատեց, բայց բանաւոր մարդ մ'առաջարկէ ռումբին մէջ նստիլ և այդ անհաւանական ուղեւորութիւնը փորձել, քմածին առաջարկ մ'էր, կատակ մ'էր, ծաղրաբանութիւն մ'էր. և այնպիսի բառ մը գործածելով, որոյ՞ ճիշդ թարգմանութիւնն ունին Ֆրանսացիք իրենց ընտանի լեզուին մէջ, հի-սի-ի (խաբէութիւն մ'էր :

Ծաղրանքը մինչեւ իրիկուն տեւեց անընդհատ, և կրնայ հաստատուիլ թէ ամբողջ Միացեալ-Նահանգները մարեցան խնդալէ, որ սովորական բան չէր այնպիսի երկրի մը, ուր անհնարին ձեռնարկները կամաւորապէս ջատագովներ, զիտակներ, կուսակիցներ կը գտնեն :

Սակայն Միշէլ Արտանի առաջարկն, ինչպէս ամեն նոր գաղափար, ոմանց միտքը կ'զբաղեցնէր : Այս բանը սովորական սրտայուզութեանց ընթացքը կ'աւրէր : «Մէկու մը մտքէն անցած չէր այս բանն : » Այս միջադէպը՝ շատ չանցած՝ մտքերը պաշարեց նոյն իսկ իւր տարօրինակութեամբ : Ուստի խորհրդածութեան նիւթ եղաւ : Ո՛րչափ բաներ, առջի օրն ուրացուած, բայց հետեւեալ օրն իրականութիւն եղած են : Ինչո՞ւ համար այդ ուղեւորութիւն չը պիտի կրնար օր մը կատարուիլ : Բայց տարակոյս չկար, որ այդ մարդ, որ ինքզինք այդպէս վտանգի մէջ կը դնէր, անպատճառ յիմար լինելու էր, վասն զի իւր առաջարկը չէր կրնար լուրջ համարուիլ . ակելի լաւ կրնէր լուել, քան թէ ամբողջ ժողովուրդ մը խռովել իւր ծաղրական բանդադուչանօք :

Բայց նախ, այդ անձն ստուգիւ գոյութիւն ունէ՞ր : Ահա մեծ խնդիր մը : Այդ « Միշէլ Արտան » անունն անծանօթ չէր Ամերիկայի : Իւր յանդուգն ձեռնարկներով յիշուած Եւրոպացւոյ մ'անուն էր : Ասկէց զատ, Ատլանտեան Ովկէանի խորերէն արձակուած այդ հեռագիրն, այդ շոգենաւին անունն, որով այդ Ֆրանսացին ճանբայ ելած եմ կ'ըսէր, իւր մօտ օրէն հոս հասնելուն համար նշանակեալ թուականը, վերջապէս այս ամեն պարագայք հաւանականութեան կերպարանք մը կուտային այդ առաջարկին : Ուստի պէտք էր ճիշդ գաղափար մ'ունենալ այս իրողութեան վրայ : Շատ չանցած, առանձին անհատները խմբակներ ձե-



ւացան, խմբակներն ալ հետզհետէ մեծցան հետաքրքրութեան ազդեցութեամբ, ինչպէս որ շամանդադները կը խտանան մասնիկներու ձգողութեամբ. և ի վերջոյ՝ հոծ բազմութիւն մը կազմելով՝ Պարպիքէյն նախագահին բնակարանը գնացին :

Պարպիքէյն, հեռագրին գալէն ի վեր կարծիք յայտնած չէր. թողուցեր էր որ ժ. թ. Մասթոն իւր կարծիքն յայտնէ՝ առանց հաւանութիւն տալու կամ հերքելու. հանդարտ նստած՝ կուզէր դէպքերուն սպասել. բայց հասարակաց անհամբերութիւնն ի հաշիւ չէր առած : Ուստի խոփուեցաւ երբոր թամբայի ժողովուրդն իւր պատուհաններուն ներքեւ խոնեալ տեսաւ : Շատ չանցած՝ տրտունջներն, աղաղակներն ու գոչիւնները զինք հարկադրեցին պատուհանն ելնել : կը տեսնուի ահա, որ Պարպիքէյն՝ հուշակին ամեն պարտականութիւններն և հետեւաբար ամեն ձանձրութիւնները կը կրէր :

Ուստի երեւեցաւ ամբոխին. ձայները դադրեցան, լռութիւնը տիրեց, և քաղաքայի մը՝ խօսք առնելով՝ հետեւեալ բացարձակ հարցումն ըրաւ իրեն. — Հեռագրին մէջ Միշէլ Արտան անուամբ նշանակեալ անձը ճանբայ ելած է Ամբրիկա դալու համար, այո՞ կամ ո՞չ :

— Տիւրք, պատասխանեց Պարպիքէյն, ևս ալ ձեզնէ աւելի չեմ գիտեր :

— Պէտք է գիտնալ, գոչեցին անհամբեր ձայներ :

— Ժամանակը պիտի իմացնէ մեզ, պատասխանեց նախագահը պաղութեամբ :

Ժամանակն իրաւունք չունի բովանդակ երկիր մ'անստուգութեան մէջ պահելու, ըսաւ ատենախօս քաղաքացին : Փոխեցի՞ր ռումբին ձեւն, ինչպէս որ կը խնդրէ հեռագիրը :

— Ո՛չ դեռ, տիւրք, բայց իրաւունք ունիք .

պէտք է գիտնամք մեր ընկերք : Հեռագիրն, որ բոլոր այս սրտայուզութեան պատճառ եղաւ, կը հաճի անշուշտ ամբողջացնել իւր տեղեկութիւններն :

— Ուրեմն ի հեռագրատուն, ի հեռագրատուն, գոչեց ամբոխը :

Պարպիքէյն վար իջաւ և ամբոխին առջեւն իյնալով հեռագրատունը գնաց .

Քանի մը վայրկեան յետոյ հեռագիր մը դարնուեցաւ լիվէրբուլի նաւական միջնորդաց գործակատարին, և հետեւեալ հարցմանց պատասխան խընդրուեցաւ :

« Ի՞նչ է Աթլանթա անուն նաւն : — Ե՞րբ մեկնեցաւ Եւրոպայէն : — Մէջը Ֆրանսացի մը կա՞յ Միշէլ Արտան անուն : »

Երկու ժամ յետոյ Պարպիքէյն պատասխան ստացաւ իւր հարցմանց, այնպիսի ճշգրութեամբ մը, որ ամենադոյզն կասկածի տեղի չէր թողուր :

« Լիվէրբուլի Աթլանթա շոգենաւն հոկտ. 2 ին ճանբայ ելաւ, — թամբա-թաուն երթալու համար, — մէջն ունենալով Ֆրանսացի մը, որ Միշէլ Արտան անուամբ նշանակուած է ուղեւորաց տումարին մէջ : »

Առաջին հեռագրին այսպէս հաստատուելուն վրայ, նախագահին աչերն յանկարծ բոցավառեցան, բռունքն ուժգնապէս փակեցան. և սկսաւ մրմուալ .

« Ճշմարիտ է եղեր. հնարաւոր է ուրեմն, այդ Ֆրանսացին գոյութիւն ունի՞ եղեր, և տասն և հինգ օրէն հո՞ս պիտի լինի : Բայց այդ մարդը խելագար մ'է, այրած ուղեղ մ'է . . . երբէք չպիտի հաճիմ . . . »

Եւ սակայն նոյն իրիկունը գրեց Պրիտփիլ և ընկերութեան, և աղաչեց որ ռումբին ձուլումը դադրեցընեն մինչեւ ի նոր տնօրէնութիւն :



Այժմ, պատմել թէ ո՞րչափ մեծ եղաւ համայն Ամերիկայի սրտայուզութիւնն, որ Պարպիքէյնի զեկոյցին ազդեցութիւնը տասնապատիկ անցաւ, թէ ի՞նչ ըսին միութեան լրագրերն, ի՞նչպէս ընդունեցին այս լուր, և թէ ի՞նչ ձեւով երգեցին հին աշխարհէն եկող այդ դիւցազնը . նկարագրել այն բուռն յուզումն, որոյ մէջ ամեն ոք ապրեցաւ՝ ժամերը, վայրկեաններն ու մանրերկրորդներն համրելով . դադափար մը տալ, մինչեւ իսկ տկար, այս միակ մտածութեամբ պաշարուած ամեն ուղեղներու անդուլ յողնութեան վրայ, ցուցնել՝ ամեն զբաղմանց մէկ կողմ մնալը միակ մը տահոգութեան մ'առջեւ, աշխատութեանց դադարումը, վաճառականութեան առկախումը, ճանբայ ելնելու վրայ եղող նաւերուն անշարժ մնալը նաւահան դրստին մէջ, որպէս զի Աթլանթայի հասած ժամանակ ներկայ գտնուին . երկաթուղոյ կառախումբերուն լցուն դալն ու դատարկ ետ դառնալն, Խաբրիթիւ-Սանթոյի նաւահանգստին մէջ ամեն տեսակ շոգենաւերու անդադար չրջագայութիւնը, վերջապէս համրել այն հաղարաւոր հետաքրքիրներն, որք տասն և հինգ աւուր մէջ քառապատկեցին թամբա-թառնի ժողովուրդն, և պարտաւորեցան վրաններու տակ բընակիլ, պատերազմական բանակի մը պէս . այս ամենը պատմել ու նկարագրել՝ մարդկային զօրութենէ վեր գործ մ'է, որում կարելի չէ ձեռնարկել առանց յանդգնութեան :

Հոկտ. 20ին, առաւօտեան ժամ իննին, Պահամայի ջրանցքին ազդարարներն իմացուցին թէ հորիզոնէն

թանձր ծուլ մը կը տեսնուէր : Երկու ժամ յետոյ մեծ շոգենաւ մը ծանուցման նշաններ կը փոխանակէր անոնց հետ : Իսկոյն Աթլանթայի անունը թամբա-թառն զրկուեցաւ : Ժամ չորսին Անգլիական շոգենաւը Խաբրիթիւ-Սանթոյի ծովածոցը մտաւ . Ժամ հինգին Հիլլիսպոթոյի նաւահանգստին բերնէն ներս մտաւ : Ժամ վեցին թամբայի նաւահանգիստն երկաթ նետեց : Դեռ խարխալը նաւահանգստին յատակը չէր հասած, հինգ հարիւր մակոյկ պաշարեցին Աթլանթա շոգենաւն, և յարձակմամբ պռին զայն : Ամենէն առաջ Պարպիքէյն, շոգենաւն ելաւ, և այնպիսի ձայնով մը, որուն յուզմունքն ի զուր ծածկել կուզէր, «Միչէլ Արտա՛ն» գոչեց :

— Ես եմ, պատասխանեց նաւին դռնակին վրայ ելած մարդ մը :

Պարպիքէյն, ձեռնամած, հարցական աչօք, համր բերնով և անթարթ աչօք Աթլանթայի այդ ուղեւորին նայեցաւ : Քառսուն ու երկու տարեկան մարդ մ'էր, յաղթահասակ, բայց արդէն քիչ մը կորաքամակ, նըման այն պատկերաց՝ որք պատշգամներ կը կրեն իրենց թիկանց վրայ : Գլուխն ուժեղ, առիւծի ճշմարիտ կառափ մը, մերթ ընդ մերթ կը թոթվէր իւր երկայն մազերն, որք ձիու բաշի կը նմանէին : Կարճ դէմք մը, քունքերուն կողմը լայն, կատուի մորուաց նման ցցուեալ ընչացք մը, այտերուն վրայ բուսած դեղին մազերու մանր փունջեր . կլոր և քիչ մ'արտուղեալ աչեր, և կարճատես նայուած մը կ'ամբողջացնէր այդ գերազանցապէս կատուական դէմքը : Բայց քիթը համարձակ ձեւ մ'ունէր, բերանը մասնաւորապէս մարդկային էր, ճակատը բարձր, հանճարեղ և մշակեալ արախ մը պէս ակոսածեւ գիծերով : Վերջապէս յաղթ իրան մը՝ երկար սրունքներու վրայ ուղղաձիգ զետեղուած, զօրեղ և քաջայօղ լծակներու նման մը-



կանուտ թեւեր, հաստատուն ընթացք մը, որով այս եւրոպացին հուժկու կազմ մ'ունէր «առաւել դարձնեալ բան ձուլեալ», եթէ կը ներուի մետաղագործական բանաձեւերէն մին գործածել :

Հավաթէրի կամ կրաթիոյէի աշակերտք դիւրաւ կրնային կարգաւ այս անձին գանկին և դէմքին վրայ վտանգի մէջ քաջասրտութեան և ամեն արգելք խորտակելու ձկտման անվիճելի նշաններն, ինչպէս նաեւ բարեսրտութեան և հրաշականութեան նշանները, բընազդում մը, որով բնաւորութիւնը ոմանք գերբնական բաներու սիրահար են, բայց ասոր փոխարէն, ստացողականութեան այտուցները, այն է ստանալու և շահելու պէտքը, բացարձակապէս կը պակսէին :

Աթլանթայի ուղեւորին ֆիզիքական տիպն ամբողջացնելու համար, կը վայրէ նաեւ անոր լայնաձեւ և դիւրաշրջելի հագուստներն ալ նշանակել, իւր տափատըն և վերարկուն ա՛յնչափ լայն էին, որ Միշէլ Արտան ինքզինք «չուխայի թշնամի» կ'անուանէր. փողպատը թոյլ, շապիկին օձիքը բաց, ուստից կորովի պարանոց մը դուրս կ'երէնէր, և թեւնոցները չկոճկուած, որոց մէջէն տաք ձեռքեր դուրս ելած էին : Կ'զգացուէր որ այս մարդը, մինչեւ անգամ սաստիկ ձմեռներու և վտանգաց մէջ չէր մտեր և ոչ իսկ աչերէն :

Մնաց որ շոգենաւին տախտակամածին վրայ, բազմութեան մէջ, անդադար կ'երթեւեկէր, առանց տեղ մը կենալու, «քարշերով իւր խարխիւներն», ինչպէս կ'ըսէին նաւաստիք, ձեռքն ու գլուխը շարժելով, եղակի խօսելով ամենուն հետ և իւր եղունգները կըրծելով անյադարար : Վերջապէս այն տարօրինակ էակներէն մին էր, զորս Արարիչը կը հնարէ իւր մէկ հաճոյից վայրկենին, և անոր կաղապարն ալ իսկոյն կը խորտակէ :

Արդարեւ, Միշէլ Արտանի բարոյական անձնաւու-

րութիւնն ընդարձակ ասպարէզ կ'ընծայէր վերլուծչի մը զննութեանց : Այս զարմանալի մարդը չափազանցութեան մշտնջենաւոր տրամադրութիւն մ'ունէր, և դեռ չէր անցած գերադրականներու դարն, իրերը տարապայման մեծութեամբ կը նկարուէին իւր աչաց թաղանթներուն մէջ, ասկից անհեթեթ գաղափարաց ընկերակցութիւն մը յառաջ կուգար իւր մտաց մէջ. հետեւաբար ամեն բան մեծ կը տեսնէր, ի բաց առեալ մարդիկն ու դժուարութիւնները :

Միւս կողմէ չափազանց բեղմնաւոր բնութիւն մ'էր, բնազդմամբ գեղարուեստագէտ և հանճարաբան մարդ մը : Վիճարանութեանց մէջ շատ հոգ չէր տաներ տրամաբանութեան. հաւաքաբանութեան գլուխ չէր ծռեր. ինքն իւր սեփական հարուածներն ունէր ճըշմարիտ ապակի կոտորոջ մը, անվրէպ ազդեցութիւն ունեցող փաստեր կ'արձակէր իւր ընդդիմախօսաց կուրծքին, և կը սիրէր անյոյս դատերը կաուցով ու թաթերով պաշտպանել :

Ուրիշ մենամուտութիւններէ զատ, «վսեմ տգէտ մը» կ'անուանէր ինքզինք Շէյքսպիրի պէս, և արհեստ մ'ըրած էր իրեն արհամարհել գիտնականներն ըսելով, «մարդիկ, որք կէտեր միայն կը նշանակեն, մինչ մեք ամբողջին վրայ կը խաղանք» : Վերջապէս լերանց և հրաշալեաց երկրէն Պոհեմիացի մ'էր, գիմագրաւ բայց ոչ արկածախնդիր, իրահամարձակ, արեւուն կառքը սրարչաւ տանող ֆայետոն մը, պահեստի թեւերով իկարոս մը : Մնաց որ, իւր անձովը կը վճարէր, և լաւ կը վճարէր. գլխամբարձ կը նետուէր անխորհուրդ ձեռնարկներու մէջ, Ագաթիկէսէն աւելի զուարթութեամբ իւր նաւերը կ'այրէր (գործի մը ձեռնարկելէ յետոյ բնաւ չէր կասեր), և ամեն ժամ իւր երկիւստունքը կոտորել տալու պատրաստ, ամեն անգամ իւր ոտքերուն վրայ կ'իյնար :



Երկու բառով, իւր նշանաբանն էր «անպարճառ»,  
և անկարելիին սէրն՝ իւր տիրուհի կիրքն էր, ըստ  
գեղեցիկ ասութեան Բորի :

Բայց ասոնց հետ մէկտեղ, այդ յանդուգն ձեռ-  
ներէցն իւր լու հանգամանքներուն թերութիւններն  
ալ ունէր : « Ով որ վտանգէ կը վախնայ, բան մը չի  
կրնար ունենալ » կ'ըսեն : Արտան ինքզինք յաճախ  
վտանգի ենթարկած էր, բայց դարձեալ բան մը չու-  
նէր : Գրամի դահիճ մ'էր . Դանայեան տակառ մը .  
կատարելապէս անշահախնդիր, այնչափ սրտի հար-  
ուած կ'ընէր՝ որչափ գլխոյ (անխորհրդաբար կը դոր-  
ծէր) . ուրիշի օգնող և վեհանձն էր . իւր ամենէն ու-  
խերիմ թշնամուոյն կախուիլը չէր ուզեր, և սեւամորթ  
մ'ազատելու համար ինքզինք կը վաճառէր իբրեւ  
ստրուկ :

Ֆրանսայի մէջ, Եւրոպիոյ մէջ, ամեն մարդ կը  
ճանչէր այս փայլուն և պոռոտաձայն անձը : Միթէ  
շարունակ իւր վրայ խօսիլ չէ՞ր տար Համբաւին հա-  
րիւր ձայներով, որք իրեն ծառայութեան մէջ կէս  
մարած էին : Միթէ ապակիէ տան մը մէջ չէ՞ր բնա-  
կեր, իւր ամենէն ներքին գաղտնիքներն համայն աշ-  
խարհի տեղեկացնելով : Բայց և միանգամայն թշնամ-  
եաց սքանչելի հաւաքածոյ մ'ունէր այն մարդոց մէջ,  
զորս բազմութեան մէջ իրեն ճանբայ բանալու համար  
արմուկը խաղցուցած ժամանակ քիչ շատ ցաւցուցած,  
վիրաւորած և տապալած էր անխնայ :

Սակայն ընդհանրապէս կը սիրէին զինքը, երես  
առած աղու սը պէս կը վարուէին իրեն հետ : Ըստ  
ժողովրդական ասութեան « առելու կամ թողելու  
մարդ մ'էր » և կ'առնուին : Ամեն ոք կը համակրէր  
անոր համարձակ ձեռնարկութեանց, և սրտատանջ  
աչօք զինքը կը դիտէր : Գիտէին որ անխոհեմաբար  
յանդուգն էր : Երբոր բարեկամ մ'ուզէր զինքն ար-

գելուլ՝ մօտալուտ աղետ մը գուշակելով . — « Մնտա-  
ռըն իւր սեփական ծառերովը միայն կ'այրի » կը պա-  
տասխանէր սիրալիր ժպիտով մը, առանց կասկածե-  
լու թէ Արաբացոց ամենէն գեղեցիկ առածը կը յի-  
շէր :

Այսպիսի անձ մ'էր Աթլանթայի ուղեւորը, միշտ  
յուզեալ, միշտ եռանդուն՝ ներքին կրակի մ'ազդե-  
ցութեամբ, միշտ զգածեալ, ոչ թէ Ամերիկայի մէջ  
ընելիք դործին պատճառաւ, — զայն միտքն անգամ  
չէր բերեր, — այլ իւր տենդոտ կազմաւորութեան  
ազդեցութեամբ : Եթէ երբէք անհատներ աչքի զար-  
նող հակապատկեր մ'ընծայած են, Միշէլ Արտան  
Ֆրանսացին և Պարպիքէյն Եանքին էին, երկուքն ալ  
ձեռներէց, յանդուգն և խիզախ՝ իրենց յատուկ ե-  
ղանակաւ :

Այսպիսի հակառակորդի մ'առջեւ, որ կըն-Բլիւ-  
պի նախագահն երկրորդական դրից մեջ դնելու կու-  
զար, Պարպիքէյնի մտահոգութիւնները շուտով ընդ-  
միջեցան ժողովրդեան հուրաներովն ու կեցցէներով :  
Այս աղաղակներն ա'յն աստիճան մոլեգին եղան, և  
հիացումն ա'յնչափ անձնական ձեւեր առաւ, որ Մի-  
շէլ Արտան, հազարի չափ ձեռք սեղմելէ յետոյ, որոց  
մէջ մնազ մնաց իւր տասն մատները պիտի թողուր,  
պարտաւորեցաւ իւր խցիկն ապաստանիլ :

Պարպիքէյն անոր ետեւէն գնաց՝ առանց խօսք  
մ'արտասանելու :

« Դուք Պարպիքէյնն էք, հարցուց անոր Միշէլ Ար-  
տան, երբոր երկուքը մինակ մնացին, և այնպիսի  
ձայնիւ մը, որով կարծես թէ քսան տարուան բարե-  
կամի մը կը խօսէր :

— Այո՛, պատասխանեց կըն-Բլիւպի նախագահն :

— Ուրեմն ողջոյն Պարպիքէյն, ինչպէ՞ս էք, լաւ  
էք, ո՛ն, շա՛տ աղէկ, շա՛տ աղէկ :



— Է՛, ըսաւ Պարպիքէյն առանց որ և է նախա-  
բանի, մտադիր էք երթալու :

— Բացարձակապէս մտադիր :

— Այ մի բան չպիտի արդելու ձեզ :

— Այ մի բան : Ձեր ուռմբին ձեւը փոխեցի՞ք, ինչ-  
պէս որ կը նշանակէր իմ հեռագիրս :

— Ձեր գալուն կ'սպասէի. բայց, հարցուց Պար-  
պիքէյն, վերատին պնդելով, լաւ խորհեցա՞ք . . . :

— Խորհի՛ր, միթէ ես կորսնցնելու ժամանակ ու-  
նի՞մ : Երբոր առիթ կը գտնեմ երթալու Լուսնին մէջ  
պտոյտ մ'ընելու, օգուտ կը քաղեմ այդ առիթէն,  
լմնցաւ գնաց : Կը թուի ինձ թէ երկար խորհելու  
բան մը չկայ :

Պարպիքէյն ապշած կը նայէր այս մարդուն, որ  
իւր առաջարկած ուղեւորութեան վրայ ա'յնչափ թե-  
թեւութեամբ, ա'յնչափ անհոգութեամբ, և ա'յնչափ  
հանդարտ սրտով կը խօսէր :

« Բայց դո՛նէ, ըսաւ նախագահը, ծրագիր մը գոր-  
ծադրութեան միջոցներ ունի՞ք . . . » :


— Անշուշտ, սիրելի՛ Պարպիքէյն. բայց ներեցէք  
ինձ դիտողութիւն մ'ընել ձեզ : Ես կը սիրեմ իմ  
պատմութիւնս միանգամ ընդ միշտ պատմել ամենուն,  
որպէս զի այլ եւս անոր խօսքը չլինի : Ասով ազատ  
կը մնամք կրկնութիւններէ : Ուստի, եթէ լաւագոյն  
միջոց մը չգտնուի, գումարեցէք ձեր բարեկամները,  
ձեր պաշտօնակիցները, բոլոր քաղաքը, համայն Ֆլօ-  
րիտ, բովանդակ Ամերիկա, եթէ կ'ուզէք, և վազն  
ես պատրաստ եմ իմ ունեցած միջոցներս մանրամաս-  
նօրէն հասկցնելու և ամեն առարկութեանյ պատաս-  
խանելու : Այնհոգ եղէք, ես զանոնք կ'սպասեմ առանց  
ընկրկելու : Այս առաջարկս կուգա՞յ ձեր գործին :

— Կուգայ, պատասխանեց Պարպիքէյն :  
Ասոր վրայ նախագահը խցիկէն դուրս ելաւ, և

Միշէլ Արտանի առաջարկն հաղորդեց բազմութեան :  
Ամբոխն ուրախութեան աղաղակներով և կայթերով  
ընդունեց նախագահին խօսքերն : Այս բան կարճ կը  
կտրէր ամեն դժուարութիւն : Հետեւեալ օրն ամեն  
մարդ պիտի կրնար ուղածին պէս դիտել Եւրոպացի  
դիւցազնը : Սակայն դաս մը յամառ հետաքրքիրը չու-  
զեցին շոգենաւէն դուրս ելնել, և գիշերն հոն անցու-  
ցին : Ժ. Թ. Մասթոն իւր ճանկը դունակին կողնոցին  
անցուցեր և պտուտակն այնպէս պնդեր էր, որ կոր-  
զելու համար անուորդ պէտք կը լինէր :

« Գիւցա՞ղն մ'է, դիւցա՞ղն, կը գոչէր անդադար,  
և մեք խեղճ կնամարդիներ եմք այս Եւրոպացիին քով :  
Իսկ նախագահն, այցելունները մեկնելու հրաւիրե-  
լէ յետոյ, վերստին ուղեւորին խցիկը մտաւ, և մին-  
չեւ որ շոգենաւէն զանգակը չհնչեց, չմեկնեցաւ քովէն :

Բայց այն ժամանակ՝ ժողովրդականութեան մասին  
իրարու հակառակորդ եղող այս երկու անձինք շերմու-  
թեամբ իրարու ձեռք սեղմեցին, և Միշէլ Արտան ե-  
զակի դէմքով կը խօսէր Պարպիքէյն նախագահին հետ :



ԳԼՈՒԽ ԺԹ.

Մ Ի Թ Ի Ն Կ



Հետեւեալ օրը ցերեկուան աստղը (արեւը) շատ ուշ  
ծագեցաւ հասարակաց անհամբերութեան նայելով :  
Ջայն ծոյլ գտան այսպիսի տօնի մը համար : Պարպի-  
քէյն՝ Միշէլ Արտանի համար անխորհուրդ հարցումնե-  
րէ վախնալով, անշուշտ իւր ունկնդրաց թիւը նուա-  
զեցնել, սակաւաթիւ խերամուտներու, օրինակի հա-  
մար՝ իւր պաշտօնակիցներուն վերածել կուղէր : Բայց  
այս բանը նիսակարայի առջեւ թումբ կանգնելու կը



նմանէր, ուստի պարտաւորեցաւ ետ կենալ իւր այգ խորհրդէն և թողուլ իւր նոր բարեկամն որ հասարակային բանախօսութեան մը հաւանական հետեւանքներուն ինքզինք ենթարկէ : Թամբա-թաունի Պորտային նոր դահլիճն, հակառակ իւր ընդարձակութեան, անբաւական դատուեցաւ այս արարողութեան համար, վասն զի առաջարկեալ գումարումը ճշմարիտ միթինկի մը մեծութիւն կ'ստանար :

Ընտրուած տեղն ընդարձակ դաշտ մ'էր քաղաքէն դուրս . քանի մը ժամու մէջ՝ արեգակն ճառագայթներէն պահպանելու վիճակի մէջ դրուեցաւ : Նաւահանգստին մէջ խարսխեալ նաւերուն առաջաստները, կայմերն ու ձողակներն՝ ընդարձակ վրան մը շինելու համար պէտք եղած նիւթերը մատակարարեցին, այնպէս որ երեք հարիւր հազար մարդ նստելու տեղ գրտան և քանի մը ժամ դիմացան հեղձուցիչ տաքութեան մը, Ծրանոացիին դալուն սպասելով : Հանդիսականաց այսչափ բազմութեան երրորդ մասը միայն կրնար տեսնել ու լսել . երկրորդ մասը քիչ մը կը տեսնէր, բայց չէր լսեր . իսկ մնացեալ մասն ոչ կը տեսնէր, ոչ կը լսէր, բայց ծափահարելու մասին միւսներէն ետ չէր մնար :

Ժամ երեքին Միշէլ Արտան երեւան ելաւ կրն-Քըլիւպի անդամոց ընկերակցութեամբ : Իւր աջ թեւը Պարպիքէյն նախագահին տուած էր, և ձախը Ժ. Թ. Մասթոնի, որ միջօրէի արեւէն աւելի պայծառափայլ և գրեթէ նոյնչափ ճաճանչափառ էր :

Միշէլ Արտան գարեւանդակի մը վրայ ելաւ, ուստից իւր հայեացքը սեւ փեղոյրներու Ոփկէանի մը վրայ կը տարածուէր : Բնաւ վարանում չէր ցուցներ . գրեթէ իւր տան մէջ էր հոն, զուարթ, ընտանի և սիրուն : Զինքն ողջունող հուրաններուն շնորհալի ողջունով մը պատասխանեց . յետոյ, ձեռքովը լուսութիւն լանդրելով, հետեւեալ խօսքերն ըսաւ Անգլիերէն :

«Տի'արք, ըսաւ Միշէլ Արտան, թէ և օդը խիստ տաք է, ձեր վայրկեանները պիտի զոհեմ քանի մը բացատրութիւններ տալով այն առաջարկութեանց վերայ, որ ձեր ուշագրութիւնը գրաւած կ'երեւին : Ես ոչ ատենաբան մ'եմ, ոչ դիտուն, և դիտաւորութիւն չունէի հրապարակաւ խօսելու, բայց Պարպիքէյն բարեկամն ըսաւ ինձ թէ այս բան հաճոյք կը պատճառէ ձեզ . ես ալ անձնուիրութիւն ըրի : ուրեմն մտիկ ըրէք զիս ձեր վեց հարիւր հազար ականջներով, և իմ սխալներս ներելու հաճեցէք :»

Այս սկզբնաւորութիւն մեծապէս հաճոյ եղաւ ունկնդրաց, որք իրենց գոհութիւնն յայտնեցին անհուն մրմումամբ :

«Տի'արք, ըսաւ, հաւանութեան կամ անհաւանութեան նշաններն արգիլեալ չեն բնաւ : Զայս դիտնալէ յետոյ կ'սկսիմ : Եւ նախ՝ մի՛ մոռնաք թէ ձեր գործը ազէտի մը հետ է, բայց իւր ազիտութիւնն այնչափ հեռի կ'երթայ, որ դժուարութիւններն իսկ չգիտէ : Արդ, իրեն այնպէս երեւցաւ թէ պարզ, բնական և դիւրին բան մ'էր ուսմբի մը մէջ նստիլ և երթալ առ լուսին : Այս ուղեւորութիւն ուշ կամ կանուխ պիտի կատարուէր . և ուղեւորութեան համար ընտրուած եղանակը պարզապէս յառաջդիմութեան օրինաց կը հետեւի : Մարդիկ նախ սկսան յախսիթերս ուղեւորիլ, յետոյ, երկու ոտից վրայ, յետոյ սայլով, յետոյ կառքով, յետոյ նաւակով, յետոյ երկաթուղիով : Արդ, ուսմբն ապագային կառքն է, և ճշմարիտը խօսելով, մոլորակներն ալ թնդանօթի պարզ ուսմբեր են՝ Արարչին ձեռքով արձակուած : Բայց դառնանք մեր ուղեգործիին : Տի'արք, ձեզնէ ոմանք կրցին հաւատալ թէ անոր տրուելիք արագութիւնը չափազանց է : Ամենեւին ոչ, աստեղաց ամենն ալ արագութեան մասին կը գերազանցեն դայն, և նոյն իսկ երկիրն ա-



րեւուն շուրջն իւր թաւալական շարժումն ըրած ժամանակ, մեզ աւելի արագութեամբ կը տանի: Ահաւասիկ քանի մ'օրինակներ: Միայն թոյլտուութիւն կը խնդրեմ ձեզնէ՝ փարսախով բացատրել, վասն զի Ամերիկայի չափերը շատ ընտանի չեն ինձ, և կը վախնամ որ չչփոթիմ հաշիւներուս մէջ:»

Այս խնդիրը պարզ երեւցաւ, և բնաւ դժուարութեան չենթարկեցաւ: Ատենաբանը նորէն սկսաւ շարունակել իւր խօսքն:

«Աւասիկ, տե՛ղք, այլ և այլ մոլորակաց արագութիւնը: Պիտի պարտաւորիմ խոստովանիլ թէ, իմ արգիտութեամբս հանդերձ՝ ճշդիւ գիտեմ այս աստեղագիտական փոքրիկ մանրամասնութիւնը. բայց երկու վայրկեան չանցած՝ դուք ալ ինձ չափ գիտուն պիտի լինիք: Սովբեցէք ուրեմն թէ Պոսիդոն հինգ հազար փարսախ կ'առնու մէկ ժամու մէջ. Ուրանոս կամ Հէրշէլ՝ եօթն հազար. Երեւակ՝ ութ հազար ութ հարիւր յիսուն. Լուսընթազ՝ տասնեւմէկ հազար վեց հարիւր եօթանասուն և հինգ. Հրատ՝ քսանուերկու հազար տասնեւ մէկ. Երկիր՝ քսան և եօթն հազար հինգ հարիւր. Արուսեակ՝ երսունուերկու հազար հարիւր ինըսուն. Փայլածու՝ յիսունուերկու հազար հինգ հարիւր քսան: Կան մոլորակներ ալ, որք մէկ միլիոն չորս հարիւր հազար փարսախ կ'առնուն իրենց արեւամերձ կէտին մէջ: Իսկ մեք, ճշմարիտ ընդվայրայածք, դանդաղ մարդիկ, մեր արագութիւնը չպիտի կրնայ ինն հազար ինն հարիւր փարսախն անցնիլ, և հետզհետէ պիտի նուազի միշտ: Կը հարցնեմ ձեզ թէ հիանալու բան մը կա՞յ ասոր մէջ, և յայտնի չէ՞ թէ այս ամենն օր մը պիտի դերագանցին աւելի մեծ արագութեամբ, որոց մեքենական գործիչները պիտի լինին հաւանականաբար լոյսն ու ելքարականութիւնն:»

Ոչ ոք երկբայութիւն ցուցուց Միշէլ Արտանի այս յայտարարութեան վրայ:

«Սիրելի՛ ունկնդիրք իմ, յարեց Միշէլ Արտան, եթէ հաւատանք քանի մը սահմանափակ միտքերու, — այս ածականը կը վայլէ անոնց, — մարդկութիւնը Պոպիլիոսեան շրջանակի մը մէջ փակուած է, յորմէ չկրնար դուրս ելնել, և այս երկրագնտիս վրայ բուսական կեանք վարելու դատապարտեալ է՝ առանց կարենալ յարձակելու մոլորակային միջոցներուն մէջ: Լուսնին քով պիտի երթամք, մոլորակներուն քով պիտի երթամք, աստղերուն քով պիտի երթամք, ինչպէս որ այսօր Լիվերբուլէն Նիւ-Եօրք կերթամք դիւրութեամբ, արագապէս և ապահովապէս. և շատ չանցած՝ մթնոլորտական Ովկէանս ալ պիտի անցնիմք, ինչպէս երկրի Ովկէանը կ'անցնիմք: Հեռուորութիւնն յարաբերական բառ մ'է միայն, և ի վերջոյ զրոյի պիտի իջնէ:»

Ժողովը թէև Ֆրանսացի դիւցազնին համակիր արամադրութիւն մ'ունէր, բայց և այնպէս քիչ մը ապշած մնաց այս յանդուգն տեսութեան առջեւ: Միշէլ Արտան կը թուի թէ հասկցաւ զայս:

«Գուք համոզուած չէք երեւիր, քաջ հիւրընկալք իմ, յարեց սիրուն ժպիտով մը: Ուրեմն խորհրդածեմք քիչ մը: Գիտէ՞ք ս'ըչափ ժամանակ պէտք է արագընթաց շոգեկառքի մը՝ լուսնին քով հասնելու համար: Երեք հարիւր օր. ոչ աւելի: Ութսուն և վեց հազար չորս հարիւր տասն փարսախի ճանբայ. բայց ի՞նչ է այս: Եւ ոչ իսկ ինն անգամ աշխարհի շուրջը պտըտելու չափ երկայնութիւն, և չկայ ժիր նաւաստի մը կամ ուղեւոր մը, որ իւր կենաց մէջ ասկէց աւելի ճանբայ քալած չլինի: Խորհեցէք ուրեմն թէ, ես ինըսուն և եօթն ժամու ուղեւորութիւն մը միայն պիտի ընեմ: Ա՛, դուք կ'երեւակայէք թէ լուսինն երկրէս հեռի է, և թէ այս արկածական ուղեւորութիւնը փորձելը դիւրին գործ չէ: Բայց ի՞նչ պիտի ընէինք»



եթէ Պոսիդոն մուրակին քով երթայ պէտք լինէր, որ հազար հարիւր քառասուն և եօթն միլիոն փարսախ Սրբեւէն հեռի կը դառնայ: Ահա ուղեւորութիւն մը, զոր քիչ մարդիկ պիտի կրնային ընել՝ եթէ միայն հինգ սու ծախք ընել հարկ լինէր մէն մի քիլոմէթրի համար. Պարոն Ռոչիլտ անգամ, իւր մէկ երկիլիոն հարստութեամբ, չպիտի կրնար իւր բռնելիք տեղը վճարել, և հարիւր քառասուն և եօթն միլիոն պակաս ունենալուն համար ճանաչան պիտի մնար:»

Խորհրդածութեան այս ձեւն յոյժ հաճելի թուեցաւ ժողովին: Միւս կողմէ, Միչէլ Ռոտան, իւր բոլոր երեւակայութիւնն իւր ճառած նիւթին տուած, յախուռն և սէգ եռանդով մ'անոր մէջ կը նետուէր, և զգալով որ անյազարար մտիկ կ'ըլլուէր, սքանչելի վստահութեամբ մը յարեց.

«Արդ, բարեկամք իմ, Պոսիդոնէն մինչեւ Սրբեւէն եղած այս հեռաւորութիւնն ալ բան մը չէ՝ աստեղաց հեռաւորութեան հետ բաղդատելով: Ասոնց հեռաւորութիւնն հաշուելու համար, հարկ կը լինի այնպիսի շացուցիչ թուումներու մէջ մտնել, ուր ամենէն փոքր թիւն ինը թուանշան ունի, և երկիլիոնը միութեան տեղ առնուլ: Ներում կը խնդրեմ՝ այսչափ խիստ լինելու համար այս խնդրոյս վրայ, բայց սըրտաարտի չահեկանութիւն մ'ունի: Լսեցէք և դատեցէք: Կենտաւրոսի համաստեղութեան Ալֆան ութ հազար երկիլիոն փարսախ հեռաւորութիւն ունի. վէկա՝ յիսուն հազար երկիլիոն. Շնիկ աստղն՝ յիսուն հազար երկիլիոն. Արքտորոս՝ յիսունուերկու հազար երկիլիոն. Բեւեռական աստղն՝ հարիւր տասնեւեօթն հազար երկիլիոն. Սմայթայժ՝ հարիւր եօթանասուն հազար երկիլիոն. միւս աստղերն ալ հազարաւոր, միլիոնաւոր և երկիլիոնաւոր երկիլիոն փարսախներով հեռաւորութիւն ունին: Եւ պիտի գան մուրակներ

րուն Սրբեւէն հեռաւորութեան խօսքն ընեն մեզ, և պնդեն թէ կայ այդ հեռաւորութիւն: Սխալ, ստուծութիւն, զգայութեանց մուրո՞ւմ: Գիտէ՞ք ի՞նչ կը խորհիմ այս աշխարհի վրայ, որ լուսաճաճանչ աստղէն կ'սկսի և Պոսիդոնի քով կը վերջանայ: Կուզէ՞ք իմանալ իմ տեսութիւնս: Յոյժ պարզ է: Ինձ համար արեգակնային աշխարհո համասեռ մարմին մ'է: Չայն կազմող մուրակներն իրարու կը միտենան, կը դպչին, կը կպչին, և իրենց միջեւ կեցած միջոցն ուրիշ բան չէ, բայց եթէ ամենասերտ մետաղի մը, արծաթի կամ երկաթի, ոսկոյ կամ բյւթի մասնիկներն իրարմէ բաժնող միջոցն: Ուրեմն իրաւունք ունիմ հաստատելու, և կը կրկնեմ այնպիսի համոզմամբ մը, որ ձեր ամենուն ալ միտքը պիտի թափանցէ: — Հեռաւորութիւնը սին բառ մ'է. հեռաւորութիւն չկայ:

— Շատ աղէկ խօսեցաւ, կեցցէ՛ հուրա՛, գոչեց ժողովը միաձայն, ելեքտրացեայ ատենաբանին շարժմունքէն, ձայնէն և մտածութեանց համարձակութենէն:

— Ո՛չ, գոչեց ժ. Թ. Մասթոն ուրիշներէն աւելի ուժով, հեռաւորութիւն չկայ:

Եւ յափշտակուելով իւր շարժմանց ուժգնութենէն, իւր մարմնոյն թռիչքէն զոր դժուարաւ կրցաւ զսպել, մազ մնաց որ դարաւանդակին վրայէն դետինը պիտի ընկնէր: Բայց յաջողեցաւ իւր հաւասարակչութիւնը վերստին գտնել, և ինքզինք ազատել անկումէ մը, որ բիրտ կերպով պիտի ապացուցանէր իրեն թէ հեռաւորութիւնը սին բառ մը չէր: Յետոյ դրաւիչ ատենաբանը շարունակել սկսաւ:

«Բարեկամք, ըսաւ, կը կարծեմ որ այս խնդիր լուծուած է այժմ: Եթէ ձեզ ամենգ ալ չհամոզեցի, պատճառն այս է որ ապացուցութիւններս երկչու եղան, փաստերս տկար, և ասոր համար ալ ուսմանցս



անբաւականութիւնը պէտք է ամբաստանել, ինչ և իրէ, կը կրկնեմ ձեզ թէ երկրին իւր արբանեակէն հեռաւորութիւնն իրապէս մեծ բան չէ, և անարժան է լուրջ մտք մ'ըբաղեցնելու: Ուրեմն չեմ կարծեր որ չափազանց յառաջ գնացած լինիմ ըսելով թէ մօտ ժամանակէն ռումբերէ կառախումբեր պիտի սահմանուին, որոց մէջ հանգիստ ուղեւորութիւն պիտի լինի երկրէ ի Լուսին: Ոչ բազում պիտի լինի, ոչ ցնցում, ոչ ալ դժէն դուրս իյնալու երկիւղ, և արագապէս, առանց յողնութեան, ուղիղ գծով, «մեղուի թռիչով» նպատակին պիտի հասնին: Քսան տարի չանցած, երկրի կէսը Լուսնին այցելութիւն տուած պիտի լինի:

— Հուրա՛, հուրա՛ Միշէլ Արտանի համար, գոչեցին ունկնդիրք, մինչեւ իսկ նուազ համոզեալք:

— Հուրա՛ Պարպիքէյնի համար, գոչեց ատենախօսն համեստաբար:

Չեռնարկութեան հեղինակին նկատմամբ Միշէլ Արտանի ըրած այս երախտագիտական գործը միահամուռ ծափահարութեամբք ընդունուեցաւ:

«Այժմ, բարեկամք, չարունակեց Միշէլ Արտան, եթէ ինձ ուղղելիք հարցում մ'ունիք, անշուշտ պիտի շփոթեցնէք ինձ պէս խեղճ մարդ մը, բայց սակայն պիտի ջանամ պատասխանել ձեզ:

Մինչեւ հոս, կըն-Քլիւպի նախագահը շատ դուրս պէտք էր լինիլ փիճաբանութեան ընթացքէն, որ միայն հայեցողական տեսութեանց վրայ կը դառնար, որոց մէջ Միշէլ Արտան իւր ջերմ երեւակայութենէն ձգուելով՝ յոյժ փայլուն կ'երեւէր: Ուստի պէտք եղաւ արգելուլ զայն գործնական ինդրոց մէջ ընկնելէ, ուստից անշուշտ չէր կրնար յաջողութեամբ դուրս ելնել: Պարպիքէյն փութաց խօսք առնուլ, և հարցուց իւր նոր բարեկամին թէ կը կարծէ՞ր որ Լուսինը կամ մուրակները բնակիչ ունենային:

«Մեծ խնդիր մ'է այդ զոր կառաջարկէք ինձ, պատուարժան նախագահս, պատասխանեց ատենաբանը ժպտելով. սակայն, եթէ չեմ սխալիր, մեծահանճար մարդիկ, Պլուտարք, Սուէտէնպորկ, Պէրնարտէն տը Սէն Բիէր և այլք բազումք հաստատողական կարծիք յայտնած են: Բնական իմաստասիրութեան տեսակէտէն նկատելով, անոնց պէս խորհելու կը հակամիտիմ: Կ'ըսեմ թէ աշխարհիս մէջ բնաւ անօգուտ բան չկայ, և ուրիշ հարցմամբ մը պատասխանելով Ձեր հարցման, սիրելի՛ Պարպիքէյն, կը հաստատեմ, որ եթէ աշխարհները բնակելի են, կամ բնակիչ ունին, կամ ժամանակաւ ունեցած են, կամ պիտի ունենան:

— Շատ աղէ՛կ, գոչեցին ունկնդրաց առաջին կարգերն, որոց կարծիքն օրինաց զօրութիւն ունէր վերջիններուն համար:

— Ասկէց աւելի՛ տրամաբանութեամբ և ճշդութեամբ պատասխանել անկարելի է, ըսաւ Կըն-Քլիւպի նախագահն: Ուրեմն խնդիրը սա կէտին կը յանդի. — Աշխարհները բնակելի՞ են: — Իմ մասին, ես այնպէս կը կարծեմ:

— Ես անտարակոյս եմ, պատասխանեց Միշէլ Արտան:

— Սակայն, ըսաւ ունկնդիրներէն մին, աշխարհաց բնակելիութեան դէմ վստտեր կան: Տարակոյս չկայ որ աղոնց շատին մէջ կենաց սկզբունքները փոխուած պէտք է լինին: Միայն մոլորակաց վրայ խօսելով, արեւէն աւելի կամ նուազ հեռի լինելուն համեմատումանց մէջ բնակիչք պէտք է այրին, ոմանց մէջ ալ ստուին:

— Կը ցաւիմ, պատասխանեց Միշէլ Արտան, որ անձնապէս չեմ ճանչեր պատուարժան ընդդիմախօսը, վասն զի կողքի պատասխանել իրեն: Իւր առարկու-



Թիւնն արժէք ունի . բայց կը կարծեմ որ կարելի է յաջողութեամբ հերքել զայն , ինչպէս նաեւ այն ամեն առարկութիւններն որ եղած են աշխարհաց բնակելիութեան դէմ : Եթէ Ֆիզիքագէտ լինէի , կ'ըսէի թէ որովհետեւ արեւուն մօտ եղող մոլորակաց մէջ նուազ ջերմութիւն կայ , և ընդհակառակն՝ հեռաւոր մոլորակաց մէջ աւելի կայ , այս պարզ երեւոյթը բուսկան է ջերմութիւնն հաւասարակչելու և այդ աշխարհաց կլիմայն հանդուրժելի ընելու մեզ պէս կազմաւորեալ էակաց : Եթէ բնագաւառում լինէի , կ'ըսէի յետ բազմաթիւ հոյակապ դիտնոց թէ՛ բնութիւնն երկրի վրայ կենդանեաց օրինակներ կը մատակարարէ մեզ , որք բնակելիութեան յոյժ տարբեր պայմաններու մէջ կ'ապրին . թէ ձուկերն ուրիշ կենդանեաց մահաբեր եղող միջավայրի մէջ կը չնչեն . թէ երկակենցաղները կրկնատեսակ կեանք մ'ունին , որ բաւական դժուարին է մեկնել . թէ ծովային կենդանիներ կան , որք յոյժ խորին խաւերու մէջ կ'ապրին , և յիսուն կամ վաթսու միջնորտներու ճնշմանց կը դիմանան առանց ջախջախուելու . թէ զանազան ջրային միջատներ , անըզգայ օդային տարբերութեանց , եռացող հանրային ջուրերու և բեւեռային Ովկէանի սառուցեալ դաշտերուն մէջ միանգամայն կը տեսնուին . վերջապէս թէ բնութիւնն իւր գործողութեան միջոցներուն մէջ այլազանութիւն մը ունի , յաճախ անհասկանալի , բայց ոչ նուազ իրական , որ մինչեւ ամենազօրութեան կը հասնի : Եթէ քիմիագէտ լինէի , կըսէի իրեն թէ օդաքարերն , որք այս երկրէս դուրս ձեւացած մարմիններ են անշուշտ , լուծուելով , ամխոյ անվիճելի հեաքեր երեւան հանած են . թէ այդ գոյանիւթ կազմաւորեալ էակներէ միայն ծագում առած է , և թէ , ըստ Ռէյխենպալտի փորձերուն , հարկաւ «կենդանացեալ» պէտք էր լինէր : վերջապէս , եթէ աստ-

ուածարան լինէի , կ'ըսէի իրեն թէ Աստուածային փրկութիւնն , ըստ Պօղոսի առաքելոյն , ոչ միայն երկրի , այլ և ամեն երկնային աշխարհաց վրայ կատարուած է : Բայց ես ոչ աստուածաբան եմ , ոչ քիմիագէտ , ոչ բնախօս , ոչ Ֆիզիքագէտ : Հետեւաբար , տիեզերքը կառավարող մեծ օրինաց կատարելապէս տգէտ , բաւական կը համարիմ սա պատասխանը տալ . — Չեմ գիտեր թէ աշխարհները բնակիչ ունին , և որովհետեւ չեմ գիտեր , պիտի երթամ տեսնել : »

Միշէլ Արտանի տեսութեանց ընդդիմախօսն ուրիշ վաստեր կըրցաւ արդեօք առարկել , անհնար է ըսել , վասն զի բազմութեան մոլեղին աղաղակներուն մէջ կարելի չէր կարծիք լսելի ընել : Երբոր լուսութիւնը վերահաստատեցաւ մինչեւ իսկ հեռաւոր խմբակաց մէջ , յաղթող ատենաբանն հետեւեալ նկատողութիւններն աւելցուց .

«Կը մտածէք անշուշտ , քաջ Եանքիներս , թէ այսպիսի մեծ խնդրոյ մը վրայ այսչափ հարեւանցի կը խօսիմ : Ես հասարակային դասախօսութիւն ընելու և այս ընդարձակ նիւթիս վրայ ճառելու չեմ եկած հոս : Աշխարհաց բնակելիութեան ի նպաստ բազում փաստեր կան , զանոնք մէկ կողմ կը թողում : Ներեցէք ինձ միայն պնդել կէտի մը վրայ : Այն մարդոց , որք կը պնդեն թէ մոլորակները բնակելի չեն , պէտք է սա պատասխանը տալ . — կրնաք իրաւունք ունենալ եթէ ապացուցուի թէ երկիրն աշխարհաց լաւագոյնն է . բայց այնպէս չէ , ինչ և ալ ըսած լինի վրթէր : Երկելը մէկ արբանեակ մ'ունի , մինչ լուսութագը , Հէրշելը , Երեւակը , Պոսիդոնը բազմաթիւ արբանեակներ ունին . առաւելութիւն մը , որ արհամարհելի չէ : Բայց այն որ մեր երկրագունտին մէջ ապրիլը կը դժուարացնէ , իւր առանցքին հակումն է իւր ուրտագծին վրայ : Ասկից յառաջ կուգան ցերեկներ-



րուն և գիշերներուն անհաւասարութիւնն և եղանակաց ցաւալի այլազանութիւնը : Մեր դժբաղդ գունտին վրայ միշտ չափազանց տաք կամ չափազանց ցուրտ կ'ընէ . ձմեռը կը սառի մարդ և ամառը կ'այրի . գլխու և ուղեղի հարբուխներուն և թոքատապի մոլորակն է . մինչդեռ՝ օրինակի համար՝ Լուսնթագի մակերեւութին վրայ , ուր առանցքը խիստ քիչ ծըռած է , բնակիչք կրնային անփոփոխ եղանակներ վայելել : Գարուններու գօտի , ամառներու գօտի , աշուններու գօտի և մշտնջենաւոր ձմերանց գօտի կայ . մէն մի բնակիչ կրնայ իրեն հաճելի կլիման ընտրել և իւր բոլոր կենաց մէջ ազատ մնալ եղանակաց փոփոխութիւններէ : Ուստի առանց դժուարութեան դուք ալ կը խոստովանիք Լուսնթագին գերազանցութիւնը մեր մոլորակին վրայ , առանց խօսելու անոր տարիներուն վրայ , որոց իւրաքանչիւրը տասներկու տարի կը տեւէ : Ասկէց զատ , տարակոյս չկայ ինձ համար , թէ այս առաւելութեանց շնորհիւ և կենաց այս հրաշալի պայմաններու մէջ , այդ երջանիկ աշխարհի բնակիչները բարձրագոյն էակներ են . գիտուններն աւելի գիտուն են , արուեստագէտք աւելի ճարտար են , չարերը նուազ չար են , և բարիները լաւագոյն : Աւագ , ինչ կը պակսի մեր գունտին՝ այդ կատարելութեան հասնելու համար . քիչ բան . թաւալման առանցք մը , որ նուազ հակեալ լինի իւր ոլորտագծին վրայ :

— Ուրեմն , գոչեց բուռն ձայն մը , միացնենք մեր ջանքերը , մեքենաներ հնարենք և ուղղենք երկրիս առանցքը :

Երափահարութեան որոտում մ'ելաւ այս առաջարկին վրայ , որոյ հեղինակը Ժ. Թ. Մասթոն միայն կրնար լինիլ և ան էր : Հաւանական է որ ամեհի քարտուղարն իւր երկրաչափական բնազդումներէն յափըշտակուելով՝ այս յանդուգն առաջարկն ըրած էր :

Բայց , պէտք է ըսել , — վասն զի ճշմարտութիւն է , — շատեր հաւանութիւն տուին իրենց աղաղակներով և անշուշտ , եթէ Արքիմիդէսի պահանջած յենակէտն ունենային , Սմերիկացիք , աշխարհս և անոր առանցքըն ուղղելու կարող լծակ մը կը շինէին . բայց յենակէտը միայն կը պակսէր այդ յանդուգն մեքենագիտաց :

Այսու ամենայնիւ , այս «գերազանցապէս գործնական» գաղափարը մեծ յաջողութիւն ունեցաւ . վիճարանութիւնն ամբողջ քառորդ մը դադրեցաւ , և երկար , յոյժ երկար ժամանակ Միացեալ-Նահանգաց մէջ խօսքի նիւթ եղաւ կրն-Քլիւպի մշտնջենաւոր քարտուղարին այնչափ ազդուապէս ներկայած առաջարկը :

ԳԼՈՒԽ Ի.

ՅԱՐՁԱԿՈՒՄ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆ

Այս միջադէպը կը թուէր թէ վախճան պիտի տար վիճարանութեան : Վերջին խօսքը պիտի լինէր , և ասկից լուագոյն բան չէր կրնար լինիլ : Սակայն երբոր յուղումն հանդարտեցաւ , զօրեղ և խիստ ձայն մը հետեւեալ խօսքերն արտասանեց .

« Ի՛յժմ որ ատենաբանն ընդարձակ բաժին մը տըլաւ երեւակայութեան , կը հաճի՞ արդեօք վերստին իւր նիւթին վրայ ճառել , բայց տեսականը մէկդի թողլով՝ իւր ընելիք ուղեւորութեան գործնական մասին վրայ ճառել : »

Ամեն հայեացք այս խօսքերն ընող անձին վրայ ուղղուեցան : Նիհար , չոր , աղքու դէմքով և Սմերիկեան թաւ մարութիւն մարդ մ'էր , որ ժողովին մէջ ծա-



գած այլ և այլ յուզմանց շնորհիւ քիչ քիչ հանդիսա-  
տեսաց առաջին կարգն անցած էր : Սնդ , թեւերը  
խաչածեւ կուրծքին դրած , իւր վայրուն և խիզախ  
աչերը միթիսկին դիւցազնին վրայ սեւեռած էր : Իւր  
հարցումն ընելէ յետոյ լուեց և բնաւ չզգածուեցաւ  
իւր վրայ ուղղուած հազարաւոր նայուածներէն , ոչ ալ  
իւր խօսքերուն գրգռած դժգոհութեան քրթմնջիւն-  
ներէն : Պատասխանն յապաղելով , նորէն առաջարկեց  
իւր հարցումը նոյն յստակ և կտրուկ ձայնիւ : Յետոյ  
աւելցուց .

— Մեք հոս եկած եմք Լուսնին վրայ զբաղելու և  
ոչ երկրի :

— Իրաւունք ունիք , Տիա՛ր , պատասխանեց Միշէլ  
Արտան , վիճաբանութիւնը մոլորեցաւ , վերադառնանք  
առ Լուսին :

— Տիա՛ր , ըսաւ անծանօթը , դուք կը պնդէք թէ  
մեր Արբանեակին մէջ բնակիչ կայ : Լաւ : Բայց եթէ  
լուսնաբնակներ կան , այդ մարդիկ , անշուշտ առանց  
չնչելու կ'ապրին , վասն զի կ'իմացնեմ ձեզ՝ ձեր շա-  
հուն համար թէ՛ Լուսնի մակերեւոյթին վրայ օդի ա-  
մենամանր մասնիկ մ'իսկ չկայ :

Այս յայտարարութեան առջեւ , Արտան տնկեց  
իւր խարտեաչ մագերն , և հասկցաւ որ խնդրոյն հո-  
գիին վրայ կռիւը պիտի բացուէր այս մարդուն հետ :  
Ուստի ինք ալ անոր երեսը նայեցաւ անքթիթ և ը-  
սաւ .

— Ա՛ , Լուսնի մէջ օդ չկա՛յ եղեր : Եւ ո՞վ է զայդ  
ըսողը , հաճեցէք յայտնել :

— Գիտունք :

— Իրա՛ւ :

— Իրաւ :

— Տիա՛ր , ըսաւ Միշէլ , կատակը մէկգի . ես մե-  
ծապէս կը յարգեմ այն գիտուններն որ գիտեն , բայց

մեծապէս կ'արհամարհեմ այն գիտուններն որ չեն  
գիտեր :

— Կը ճանչէ՞ք այնպիսի գիտուններ որ այդ վերջի  
դասակարգին վերաբերին :

— Մասնաւորապէս : Ֆրանսայի մէջ կայ գիտուն  
մը , որ կը պնդէ մատեմատիքական հաշուով թէ թըու-  
շունը չկրնար թռչիլ , և ուրիշ մ'ալ , որոյ տեսու-  
թիւնը կ'ապացուցանեն թէ ձուկը շուրի մէջ ապրելու  
համար ստեղծուած չէ :

— Խնդիրն ադո՞նց վրայ չէ , Տիա՛ր , և ես կրնամ  
ի հաստատութիւն առաջարկութեանս՝ այնպիսի ա-  
նուններ յիշել , զորս չէք կրնար մերժել :

— Այն ժամանակ , Տիա՛ր , յոյժ կը նեղէք խեղճ  
տղէտ մը , որ աւելի կը սիրէ իւր չգիտցածը սորվիլ :

— Ուրեմն ինչո՞ւ կը մերձենաք գիտական խնդրոց ,  
եթէ չէք ուսած զանոնք , հարցուց անծանօթը բաւա-  
կան բրտութեամբ :

— Ինչո՞ւ , պատասխանեց Արտան , այս պատճա-  
ռաւ է որ այն մարդն է միշտ քաջ , որ վտանգի կաս-  
կած չունի : Ես բան մը չեմ գիտեր , ճշմարիտ է , բայց  
ճշդիւ իմ այս տկարութեանս մէջ է իմ ուժս :

— Ձեր տկարութիւնը մինչեւ յիմարութեան կը  
հասնի , դոչեց անծանօթը սրտմտեալ ձայնիւ :

— Աւելի լաւ , պատասխանեց Ֆրանսացին , եթէ  
յիմարութիւնս մինչեւ ի Լուսին տանի զիս :

Պարպիքէյն և իւր պաշտօնակիցք ակնապիչ կը  
նայէին այս ինքնեկին , որ այսպէս համարձակաբար  
կուգար կը միջամտէր . ոչ ոք կը ճանչէր զայն . և նա-  
խադահն երկիւղ զգալով այս անկեղծ վիճաբանու-  
թեան հետեւանքէն , կասկածով կը նայէր իւր նոր բա-  
րեկամին : Ժողովն ուշադիր և քիչ մ'ալ անհանգիստ  
էր , վասն զի այս կռուին արդիւնքն էր իւր ուշադ-  
րութիւնն հրաւիրել առաջադրեալ ուղեւորութեան  
վտանգներուն կամ անհնարութեանց վրայ :



« Տիար, ըսաւ Միշէլ Արտանի հակառակորդը, բազմաթիւ և անվիճելի են այն փաստերն՝ որք լուսնի շուրջը բնաւ մթնոլորտ չկենալը կը հաստատեն. հետեւաբար կ'ըսեմ իսկ, որ եթէ այդ մթնոլորտն երբէք գոյութիւն ունեցած է, երկիրը ծնած է զայն քիչ քիչ՝ Բայց ես լաւագոյն կը համարիմ անհերքելի իրողութիւններ առարկել ձեզ :

— Շարունակեցէք, Տիար, պատասխանեց Միշէլ Արտան կատարեալ քաղաքավարութեամբ, առարկեցէք որչափ հաճոյ թուի ձեզ :

— Գիտէք, ըսաւ անծանօթը, թէ երբոր լուսաւոր ճառագայթք օդի պէս միջավայրէ մը կ'անցնին, ուղիղ գծէն կը խոտորին, կամ ուրիշ կերպ խօսելով՝ բեկբեկում մը կ'ստանան : Արդ, երբոր աստեղք լուսնէն ծածկուած են, իրենց ճառագայթներն սնոր սկաւառակին եղբրքէն անցած ժամանակ՝ ամենագոյն շեղում մը չեն կրած, ոչ ալ բեկբեկման ամենաթեթեւնչան մը տուած : Ասկից սա յոյտնի հետեւանքը կ'ելնէ թէ լուսինը մթնոլորտէ շրջապատեալ չէ :

Ամեն մարդ սկսաւ ֆրանսացոյն նայլ, վասն զի այս դիտողութիւնն եթէ անգամ մ'ընդունուէր, հետեւանքը ծանր էր :

« Արդարեւ, պատասխանեց Միշէլ Արտան, այդ է ձեր լաւագոյն և միակ փաստն, և դիտուն մը դուցէ վարանի պատասխանելու. ես սա միայն կ'ըսեմ՝ թէ այդ փաստը բացարձակ զօրութիւն մը չունի, վասն զի լուսնին անկիւնաւոր տրամագիծը կատարելապէս որոշուած կ'ենթադրէ, որ այնպէս չէ : Բայց անցնիմք, և ըսէք ինձ, սիրելի Տիար, թէ լուսնի մակերեւութին վրայ հրաբուլիս կենալը կ'ընդունի՞ք :

— Շիջեալ հրաբուլիսներ՝ այո՛, բորբոքեալ՝ ոչ :

— Թոյլ տուէք ինձ սակայն հաւատալ, առանց տրամաբանութեան սահմաններն անցնելու, թէ այն հրաբուլիք ժամանակ մը բորբոքեալ էին :

— Ստոյգ է այդ, բայց որովհետեւ բորբոքման համար հարկ եղած թթուածինն իրենք կրնային մատակարարել, ուստի և անոնց բորբոքումը բնաւ չկրնար լուսնական մթնոլորտի մը ներկայութիւնն ապացուցանել :

— Անցնիմք ուրեմն, պատասխանեց Միշէլ Արտան, և մէկ կողմ թողլով այս տեսակ փաստերն՝ ուղղակի դիտողութեանց հասնիմք : Բայց կանխաւ կը ծանուցանեմ ձեզ թէ անուններ յառաջ պիտի դնեմ :

— Դրէք :

— Կը դնեմ : 1715 ին, լուվիլ և Հալլէյ աստղագէտք մայիս 3 ի լուսնական խաւարումը դիտելով, արագ և յաճախ կրկնուած տարօրինակ փայլատակումներ նշմարեցին, որք լուսնի մթնոլորտին մէջ ծագած փոթորիկներու վերագրեցան :

— 1715 ին, պատասխանեց անծանօթը, լուվիլ և Հալլէյ աստղագէտք՝ լուսնական երեւոյթ կարծեցին պարզ երկրական երեւոյթներ, ինչպէս են այն հրեղէն օդերեւոյթներն՝ որք մեր մթնոլորտին մէջ կը պատահին : Ահա այս պատասխանը տուին դիտնականք այդ իրողութեանց, և ես ալ այս պատասխանը կուտամ անոնց հետ :

— Այդ ալ անցնիմք, պատասխանեց Արտան առանց խռովելու այս պատասխանէն : Միթէ 1787 ին Հէրշէլ ալ բազմաթիւ լուսաւոր կէտեր չդիտեց լուսնի մակերեւութին վրայ :

— Անշուշտ, բայց առանց մեկնելու այդ լուսաւոր կէտերուն ծագումը : Նոյն ինքն Հէրշէլ ալ այդ երեւոյթներէն լուսնական մթնոլորտ չեղրակացուց :

— Լաւ պատասխանեցիք, ըսաւ Միշէլ Արտան դովելով իւր հակառակորդը. կը տեսնեմ որ յոյժ քաջ էք լուսնագրութեան մէջ :

— Յոյժ աջ, Տիար, և պիտի աւելցնեմ որ ամե-



նէն ճարտար դիտողք, անոնք որ ամենէն լաւ ուսումնասիրեցին դիչերուան աստղը, Տ. Տ. Պէր և Մէտլէր, Լուսնի մակերեւութին վրայ օդ չգտնուելու մասին համաձիտ են:»

Շարժում մ'եղաւ ունկնդրաց մէջ, որք յուզեալ կ'երեւէին այս զարմանալի մարդուն փառաբերէն:

«Անցնիք այդ ալ, պատասխանեց Միշէլ Արտան ամենամեծ հանդարտութեամբ, և դամբ կարեւոր իւրողութեան մը: Ֆրանսացի ճարտար աստղագէտ մը, Տ. Լուսէտա, 1860 յուլիս 18 ի խաւարումը դիտելով ստուգեց որ արեգակնային մահէիկին եղջիւրները կը որ և ծայրատեալ էին: Արդ, այս երեւոյթ մի միայն Լուսնի մթնոլորտին մէջ արեգակնային ճառագայթից խտորումէն կը պայծառ է յառաջ գալ, և չունի ուրիշ հնարաւոր մեկնութիւն:

— Բայց այդ իրողութիւնն ստոյգ է, հարցուց անձանօթը կիրքով:

— Բացարձակապէս ստոյգ:

Ժողովն հակադարձ շարժմամբ մ'իւր սիրելի դիւցազնին վերադարձաւ, սրոյ հակառակորդը լուռ կեցաւ: Արտան խօսքին թելը նորէն ձեռք առաւ, և առանց իւր վերջին յաջողութեան վրայ սնամառութեամբ ըսաւ պարզապէս.

« Կը տեսնէք անհա, սիրելի Տիա'ր, թէ պէտք չէ բացարձակ վճիռ տալ Լուսնի մակերեւութին վրայ մթնոլորտ գտնուելուն դէմ. այդ մթնոլորտն հաւանականաբար շատ խտութիւն չունի, բաւական անօր է, բայց այսօր դիտութիւնն ընդհանրապէս կ'ընդունի ադոր դոյութիւնն:

— Ոչ թէ լերանց վրայ, եթէ չէք դժգոհիր, պատասխանեց անձանօթն, որ չէր ուզեր խաժածը թողուլ:

— Ոչ, բայց ձորերուն մէջ, և քանի մը հարիւր օտնաշափէն աւելի բարձրութիւն չունի:

— Ինչ և ալ է, լաւ կը լինի որ զգուշութեան միջոցներ ձեռք առնուք, վասն զի այդ օդը սարսափելի կերպով անդայտացած պիտի լինի:

— Օ՛, բարեմիտ Տիա'ր, մէկ մարդու մը բաւելու չափ կը գտնուի միշտ: Միւս կողմանէ, անդամ մ'որ հոն հասնիմ, կրցածիս չափ խնայութեամբ կը գործածեմ օդն, և մեծ առիթներու մէջ միայն կը շնչեմ:

Ահագին ծիծաղ մ'որոտաց անձանօթ վիճաբանին ականջին, որ իւր աչքը ժողովին վրայ պտըտցուց խրոխտ նայուածքով:

« Ուրեմն, յարեց Միշէլ Արտան զուարթ դէմքով, որովհետեւ մթնոլորտ մը գտնուելուն վրայ համաձայնեմք, ուստի և կը հարկադրիմք ընդունիլ թէ Ղուր ալ կայ հոն: Հետեւութիւն մ'է այս, որոյ վրայ շատ կ'ուրախանամ ես: Մնաց, որ սիրելի ընդդիմախօսս, ներքեցէք ինձ դիտողութիւն մ'ալ ներկայիչ ձեզ: Մեր Լուսնի սկաւառակին մէկ կողմը միայն կը ճանչեմք, և եթէ մեզ նայող դէմքին վրայ քիչ օդ կայ, հնար է որ միւս երեսին վրայ շատ լինի:

— Եւ ի՞նչ պատճառաւ:

— Վասն զի Լուսնն, երկրին ձգողականութեան ներգործութեամբ հակիթի մը ձեւ առած է, զոր մեր փոքր ծայրէն կը տեսնեմք: Աստից այն հետեւանքը զոր Հանսէն հաշուած է թէ նորա ծանրութեան կեդրոնը միւս կիսագունտին մէջ է. աստից այն եզրակացութիւնը թէ բոլոր օդն ու ջուրը մեր արբանեկին միւս երեսը քաշուած են ստեղծման առաջին օրերը:

— Պարզ երեւակայութիւն, գոչեց անձանօթը:

— Ոչ, պարզ տեսութիւն, որ մերքնականութեան օրինաց վրայ յեցած է, և ինձ դժուարին կ'երեւի հերքել, ուստի այս ժողովին դատողութեանը կը դի-



մեմ և իւր քուէին կը յանձնեմ սա խնդիրը թէ երկ-  
րի վրայ կեցած կեանքն հնարաւոր է լուսնի մակե-  
րեւութին վրայ ։ ”

Երեք հարիւր հազար ունկնդիրք միահողոյն ծա-  
փահարութեամբ ընդունեցին այս առաջարկ ։ Միչէլ  
Սրտանի ոսոխը կ'ուզէր տակաւին խօսիլ , բայց չէր  
կրնար իւր խօսքը լսել տալ ։ Աղաղակներն ու սպառ-  
նալիքները կարկուտի պէս կը տեղային իւր վրայ ։

“ Բաւական է , բաւական ” կըսէին ոմանք ։

— Վաւանեցէք այդ ինքնեկը , կը գոչէին այլք ։

— Դ՛ո՛ւրս , դ՛ո՛ւրս , կը պոռար գրգռեալ բազմու-  
թիւնը ։

Բայց անծանօթն , անյողդողդ , դարաւանդակին  
փակած , տեղէն չէր շարժեր , և փոթորկին անցնե-  
լուն կ'սպասէր , որ կրնար ահաւոր կերպիւ սաստկա-  
նալ , եթէ Միչէլ Սրտան իւր մէկ շարժմամբ չհան-  
դարտեցնէր ։ Իւր վեհանձն բնաւորութիւնը չէր ներեր  
իրեն իւր հակառակորդը լքանել այսպիսի տազնա-  
պալից վայրկենի մը մէջ ։

— Կը փափաքի՞ք քանի մը խօսք աւելցնել , հարցուն  
ամենաքաղցր ձայնիւ ։

— Այո՛ , հարիւր հազար , պատասխանեց անծա-  
նօթը բարկութեամբ , կամ մանաւանդ միակ խօսք մը ։  
Չեր ձեռնարկին մէջ յարատեւելու համար , պէտք է  
որ դուք . . .

— Անխօհե՛մ , ի՛նչպէս կրնաք այդպէս խօսիլ ինձ ,  
որ դլանա-կոնաձեւ ուումք մ'ուզեցի Պարպիքէյն բա-  
րեկամէս , որպէս զի ճանքան սկիւռի պէս չդառնամ ։

— Բայց , դժբա՛ղդ մարդ , ահագին հակահարուա-  
ծը ձեզ կտոր կտոր պիտի ընէ ճանքայ ելած ժամա-  
նակնիդ ։

— Սիրելի ընդդիմախօս , ըսաւ Սրտան , ահա այժմ  
ձեր մատը ճշմարիտ և միակ դժուարութեան վրայ

կը դնէք . սակայն ես այնչափ լաւ կարծիք ունիմ  
Ամերիկացւոց ճարտարարուեստ հանճարին վրայ , որ  
այդ դժուարութիւնը լուծելնուն վրայ բնաւ տարա-  
կոյս չունիմ ։

— Բայց ուումքն օդին խաւերէն անցած ժամանակ  
միթէ իւր արագութեամբ օդին տաքութիւնը չի  
սաստկացնե՞ր ։

— Օ՛ , իւր չըջապատը շատ հաստ է , և ես ալ վեր-  
ջին արագութեամբ պիտի անցնիմ մթնոլորտը ։

— Բայց ուտելի՞ք , շո՞ւր ։

— Հաշուած եմ որ կրնամ մէկ տարւոյ համար  
հետս տանիլ , և իմ ուղեւորութիւնս չորս օրջպիտի  
տեւէ ։

— Բայց ճանքան շնչելու համար օ՞դ ։

— Քիմիական միջոցներով կը գոյացնեմ ։

— Բայց լուսնին վրայ ձեր անկո՛ւմն , եթէ երբէք  
մօտն հասնիք ։

— Երկրի վրայ անկումէ մը վեցպատիկ նուազ ա-  
րագ կը լինի , որովհետեւ ծանրութիւնը վեցպատիկ  
նուազ է լուսնի մակերեւութին վրայ ։

— Բայց այն ալ բաւական է ձեզ ապակիի պէս  
փշրելու ։

— Եւ ո՞վ կարգելու զիս՝ պատշաճապէս պատրաս-  
տուած և յարմար ժամանակ բռնկած օդաձիգ փամ-  
փուշտներու միջոցաւ անկումս յապաղելէ ։

— Բայց վերջապէս , ենթադրելով որ ամեն դըժ-  
ուարութիւնք լուծուին , ամեն արգելք հարթօրին ,  
յաջողութեան ամեն հաւանականութիւնք ինպատ  
ձեզ միանան և դուք ողջ առողջ լուսնին մէջ հասնիք ,  
ի՛նչպէս ես պիտի դառնաք ։

— Ետ չպիտի դառնամ ։

Այս պատասխանին վրայ , որ իւր պարզու-  
թեամբը վսեմ էր , ժողովն համը մնաց ։ Բայց իւր



լուսթիւնն իւր ցնծութեան աղաղակներէն աւելի  
ճարտարախօս էր : Անծանօթն աստից օգուտ քաղե-  
լով՝ վերջին անգամ մ'ալ բողոքեց :

— Ինքզինքնիդ անշուշտ պիտի սպաննէք, գոչեց, և  
ձեր մահն, որ անմտի մը մահ պիտի լինի, գո'նէ  
գիտութեան ալ օգուտ մը պիտի չընէ :

— Շարունակեցէք, ազնուախո'հ անծանօթ . վասն  
զի ստուգիւ յոյժ հաճոյական նախագուշակութիւններ  
կ'ընէք :

— Ա՛, չափը կ'անցունէք, գոչեց Միշէլ Արտանի  
հակառակորդն, և չեմ գիտեր թէ ինչո՛ւ կը շարու-  
նակեմ վիճաբանութիւն մը, որ լուրջ լինելէ հեռի է :  
Յառաջ տարէք ուրեմն ձեր յիմար ձեռնարկն ուզած  
նուդ պէս : Դուք յանդանք չունիք . ձեր որածին պա-  
տասխանատուութիւնն ուրիշ մէկու մը վրայ է :

— Որո՞ւ վրայ է, հարցուց Միշէլ Արտան՝ հրամա-  
յական ձայնիւ :

— Այն տգէտին՝ որ այդ անհնարին և միանգա-  
մայն ծաղրաչարժ փորձը կազմաւորեց :

Հարուածն ուղղակի էր : Պարպիքէյն, անծա-  
նօթին միջամտութենէն ի վեր բուռն ճիգ կը թափէր  
ինքզինք բռնելու և կատսաներու վառարանաց պէս  
« իւր ծուխը վառելու » . բայց երբոր ինքզինք այս-  
պէս նախատական կերպիւ նշաւակեալ տեսաւ, իս-  
կոյն ցատկեց, ոտքի վրայ ելաւ, և երբոր իւր դէմ  
կեցած խիզախ հակառակորդին վրայ պիտի դիմէր,  
յանկարծ ինքզինք բաժնուած տեսաւ անկէ :

Հինգ կորովի բազուկներ դարաւանդակը մէկէն  
վերցուցին, և կրն-Քլիւպի նախագահը՝ Միշէլ Արտա-  
նի հետ՝ յաղթանակի պատիւները վայելեց : Բեռը  
ծանր էր, բայց տանողներն անդադար կը փոխուէին,  
և իւրաքանչիւր ոք իւր ուսերուն օղնութիւնը նուր-  
բել ուղերով այս ցոյցին, միմեանց հետ կը մրցէին և  
մինչեւ իսկ կը կռուէին :

Սակայն անծանօթն այս ժխտէն օգուտ քաղելով  
մեկնելու փորձ չէր ըրած . բայց պիտի կրնար յաջո-  
ղիլ այն թանձրախիտ ամբոխին մէջ : Անշուշտ ոչ .  
ուստի միշտ իւր առաջին տեղը բռնած կեցած էր՝  
թեւերը խաչաձեւ կուրծքին դրած և աչքը Պարպի-  
քէյն նախագահին վրայ յառած :

Պարպիքէյն ալ չէր կորսուենցներ զայն իւր տ'սու-  
թենէն, և այս երկու մարդոց հայեացքն իրարու հետ  
բռնուած էին իբրեւ երկու քստմնածածան սուրեր :

Բազմաբիւր ամբոխին գոչիւնն իւր ծայրագոյն աս-  
տիճանին մէջ մնաց այս յաղթական թափորին Գամա-  
նակ : Միշէլ Արտան յայտնի հաճոյքով մ'անձնատուր  
եղած էր . դէմքը դուարթութիւն կը ցայտէր : Երբե-  
մին դարաւանդակն այեկոծ նաւու մը պէս կը տա-  
տանէր . բայց միթիւնկին երկու դիւցազունները նա-  
ւաստիի ոտք ունէին, չգայթեցին, և իրենց նաւն  
անվրաս թամբա-թաունի նաւահանդիստն հասաւ :

Միշէլ Արտան բարեբաղդաբար յաջողեցաւ ինք-  
զինք ազատել իւր ուժեղ սքանչացողաց վերջին գըր-  
կախառնումէն : Ֆրանքլին օթեւանը փախաւ, արա-  
դապէս իւր սենեակը սպրդեցաւ և անկողնին մէջ  
մտաւ . մինչդեռ հարիւր քսան հազար մարդոց բա-  
նակ մը կը հսկէր իւր պատուհաններուն առջեւ :

Նոյն միջոցին ուրիշ կարճ ծանր և վճռական տե-  
սարան մը տեղի կ'ունենար ընդ մէջ անծանօթ մար-  
դուն և կրն-Քլիւպի նախագահին :

Պարպիքէյն վերջապէս ազատ մնալով՝ ուղղապէս  
իւր հակառակորդին քով զնացած էր :

« Եկէք » ըսաւ ցած ձայնիւ :

Անծանօթն անոր հետ գնաց ծովեզերքին վրայ, և  
շատ չանցած՝ երկուքն առանձին մնացին ճօն-Ֆալի  
վրայ բացուած նաւամատոյցի մը մուտքին մէջ :



Արդ, այս երկու թշնամիք, դեռ անծանօթ միմեանց, իրարու երես նայեցան:

— Ո՞վ էք դուք, հարցուց Պարպիքէյն:

— Նիբոլ նաւապետն եմ:

— Մտքէս կ'անցնէր: Մինչեւ ցարդ դիպուածը ձեզ իմ ճամբուս վրայ չէր ձգած երբէք. . . .

— Ահա ես եկայ ձգելու:

— Դուք նախատեսիք զիս:

— Հրապարակաւ:

— Եւ հատուցում մը պիտի տաք այն թշնամանաց համար:

— Հիմա:

— Ոչ, ես կը փափաքիմ որ ամեն բան դադտնապէս լիննայ մեր մէջ: Թամբայէն երեք միոն հեռի անտառ մը կայ, Սքէրսնավի անտառը. գիտէ՞ք:

— Գիտեմ:

— Կը հաճի՞ք վաղ առաւօտ ժամ հինգին հսն մըտնել մէկ կողմէն. . . .

— Այո՛, եթէ նոյն պահուն դուք ալ միւս կողմէն մտնէք:

— Եւ ձեր կարճ հրացանը չէք մոռնար, ըսաւ Պարպիքէյն:

— Դուք ալ ձերը չէք մոռնար, պատասխանեց Նիբոլ:

Այս խօսքերէն յետոյ, որ վերջին աստիճանի պաղուծեամբ փոխանակեցան, կրն-ֆլիւպի նախագահն և նաւապետը բաժնուեցան իրարմէ: Պարպիքէյն իւր բնակարանը վերադարձաւ. բայց փոխանակ քանի մը ժամ հանգչելու. գիշերն ի բուն խորհեցաւ միջոց մը գտնել ռումբին հակահարուածէն ազատելու և Մի-թինկին վիճաբանութեան մէջ Միշէլ Արտանի առաջարկած դժուարին խնդիրը լուծելու:

ԳԼՈՒԽ ԻԱ.

Թէ ԻՆՉՊԷՍ ՖՐԱՆՍՍՅԻ ՄԸ ԿԸ ԿԱՐԳԱԴՐԷ ԳՈՐԾ ՄԸ

Մինչ նախագահն ու նաւապետը մենամարտին պայմաններուն վրայ կը վիճաբանէին, սարսափելի և վայրագ մենամարտ մը, որոյ մէջ երկու հակառակորդը մէկ մէկ մարդորս պիտի դառնային. Միշէլ Արտան հանգիստ կ'առնուր յաղթանակին յողնութիւններէն: Հանգիստն անշուշտ ուղիղ բառ մը չէ, վասն զի Ամերիկացուց անկողինները կարծրութեան կողմէ կրնան մըցիլ մարմարեայ կամ կրանիթեայ սեղաններու հետ:

Արդ, Արտան բաւական գէշ կը ննջէր, անդադար դառնալով անձեռոցներուն մէջ, որք վերմակի տեղ կը ծառայէին, և կը խորհէր աւելի հանգիստ անկողին մը դնել իւր ռումբին մէջ. յանկարծ բուռն աղմուկ մը կորզեց զայն իւր երազներուն ձեռքէն: Անկարգ հարուածներ կը դըրդէին իւր խցիկին դուռը. կարծես թէ երկաթեայ գործիքով կը զարնէին, և ահաւելի ձայներ կը խառնուէին այն յոյժ կանխաժամ ժխորին հետ:

« Բա՛ց, կը գոչէր ձայն մը, յանուն երկնից բա՛ց » Արտան՝ այսպիսի աղմկալից խնդիր մը կատարելու բնաւ պատճառ չունէր. բայց և այնպէս տեսնելով որ դուռը չպիտի կրնար դիմանալ յամառ այցելուին անդու հարուածոց, ելաւ բացաւ:

Կրն-ֆլիւպի քարտուղարը մէկէն ներս խուժեց: Ռումբ մը չէր կրնար աւելի նուազ քաղաքավարութեամբ ներս մտնել:

« Երէկ իրիկուն, գոչեց մէկէն Ժ. Թ. Մասթոն, մեր նախագահն հրապարակաւ նախատուեցաւ Մի-թինկին մէջ, և ի մենամարտ հրաւիրեց իւր հակա-



աւակորդն , որ Նիքոյ նաւապետն է եղեր . այս առաւօտ պիտի մենամարտին Սքէրսնալի անտառին մէջ : Ես ամեն բան իմացայ նոյն իսկ Պարպիքէյնի բերնէն : Եթէ նա սպաննուի , մեր ընելիք ձեռնարկութիւնը բովանդակապէս կ'ոչնչանան : Ուստի պէտք է արգելուի զայդ մենամարտ : Արդ , աշխարհի մէջ միակ մարդ մը կրնայ բաւական ազդեցութիւն ունենալ Պարպիքէյնի վրայ և զայն արգելուի , և այն մարդն է Միշէլ Արտան :

Երբոր յ. Թ. Մասթոն այս խօսքերը կ'ըսէր , Միշէլ Արտան , զայն ընդմիջելէ հրաժարելով , իւր լայն տախտակն մէջ նետուեցաւ , և երկու վայրկեան չըջած , երկու բարեկամը վազելով Թամբա-Թաունի արուարձաններն հասան :

Այս արագընթաց ուղեւորութեան միջոցին Մասթոն ամեն բան հասկցուց Արտանի , Պարպիքէյնի և Նիքոյի թշնամութեան ճշմարիտ պատճառները պատմեց . ինչպէս ծագում առած էր այդ հին թշնամութիւն , ինչպէս մինչեւ դարդ՝ երկու կողման բարեկամաց ջանքով նախագահն և նաւապետը դէմ առ դէմ չէին եկած երբէք . աւելցուց թէ գործը մի միայն տախտակի և ուռմբի հակամրցում մ'էր , և թէ վերջապէս Միթինկին մէջ անցած վերջին անցքն առիթ մ'էր միայն , զոր Նիքոյ երկար ժամանակէ ի վեր կը փնտռէր՝ իւր հին ոխը գոհացնելու համար :

Չկայ առաւել սարսափելի բան մը՝ քան զայն մենամարտներն որք Ամերիկայի յատուկ են , և որոց մէջ երկու ոսոխք զիրար կը փնտռեն խիտ թուփերու և մացառներու մէջ , զիրար կը հետազօտեն կը դիտեն թփուտներու խորշերն , և վայրի գաղանաց պէս թաւուտներու միջավայրերը բերել ձգելու կ'աշխատին : Այն ժամանակ է որ իւրաքանչիւրն Հնդիկներուն (\*)

(\*) Ամերիկայի վայրենիներն այսպէս կը կոչուէին :

բնական եղող սքանչելի ձիրքերուն կը նախանձէին , այն է անոնց սուր արագամտութեան , հանճարեղ դարանակարութեանց , ճարտար հետախուզութեանց և հոտառութեանց : Սխալ մը , վարանում մը , վրիպում մը , կրնայ մահաբեր լինիլ : Այս կռուոց մէջ Եանքիները շատ անգամ իրենց որսի շուներն ալ հետ կը տանին , և իբր որսորդ և միանգամայն որսական կենդանի , ժամերով զիրար կը հալածեն :

« Ինչ տեսակ սատանորդի մարդիկ էք դուք , գոչեց Միշէլ Արտան երբոր իւր ընկերն այս ամեն բաներն ազդուապէս նկարագրեց :

— Մեք այսպէս եմք , պատասխանեց համեստաբար յ. Թ. Մասթոն . բայց աճապարեմք :

Սակայն Միշէլ Արտան և Մասթոն ի զուր սրացան դաշտին մէջէն , որ դեռ խոնաւ էր առաւօտեան ցողէն , ի զուր անցան բրնձի արտերն ու առուներն , ի զուր ամենէն կարճ ուղիներն ընարեցին . չկրցին ժամ հինգ ու կէսէն առաջ հասնիլ Սքէրսնալի անտառը : Պարպիքէյն կէս ժամէ ի վեր հոն մտած լինելու էր :

Ծեր փայտահար մը տեսան , որ իւր կտրած ծառերը մանրելով տրցակներ կը կապէր :

Մասթոն անոր քով վազեց գոչելով .

« Կարճ հրացանով զինեալ մարդ մը տեսա՞ք , որ այս անտառը մտաւ , Պարպիքէյն նախագահն . . . իմ լաւագոյն բարեկամն . . . »

Կըն-Քիլուպի պատուարժան քարտուղարը պարզմըտաբար կը կարծէր որ իւր նախագահը բովանդակ աշխարհի ծանօթ մարդ մ'էր : Բայց փայտահարն անոր ըսածն հասկնալու դէմք չուներ :

— Որսորդ մը տեսա՞ք , ըսաւ այն ժամանակ Արտան :

— Որսորդ մը , այո՛ , պատասխանեց փայտահարը :

— Շատո՞նց :



— Գրեթէ ժամ մ'առաջ :  
 — Շատ ո՛ւշ մնացած եմք , գոչեց Մասթոն :  
 — Հրացանի ձայներ լսեցի՞ք , հարցուց Միշէլ Արտան :  
 — Ո՛չ ,  
 — Բնաւ չլսեցի՞ք :  
 — Բնաւ : Այն որսորդը լաւ որս ընելու երեւոյթ չունէր :  
 — Ի՞նչ ընեմք հիմա , ըսաւ Մասթոն :  
 — Անտառը մտնեմք , մեզ չուղղուած գնտակէ մը զարնուելու վտանգն աչուրնիս առնլով :  
 — Ահ , գոչեց Մասթոն այնպիսի ձայնով մը , որուն անկեղծութեան վրայ ոչ ոք կրնար սխալիլ , աւելի կը սիրեմ՝ տասն գնտակ իմ գլխուս , քան մէկ հատ մը Պարպիքէյնի գլխուն :  
 — Յառաջ քօլեմք ուրեմն , ըսաւ Արտան իւր ընկերին ձեռքը սեղմելով . քանի մը մանրերկրորդ յետոյ երկու բարեկամք աներեւութացան անտառին մէջ . թաւուտ մ'էր յոյժ թանձրախիտ , խոշոր նոճիներէ , ժանտաթգենիներէ , ձիթենիներէ , դամարենիներէ , կաղնիներէ և մանգոլիաներէ :  
 Այս զանազան ծառերուն ոստերն ա՛յնչափ իրարու հետ չաղապատեալ էին , որ անոնց մէջէն հեռուն բան մը տեսնել անհնարին էր : Միշէլ Արտան և Մասթոն քովէ քով կ'երթային , լուութեամբ բարձր խոտերու մէջէ կ'անցնէին , ճանբայ բանալով բիւրոստեան ուժեղ բազեղներու մէջէ , իրենց հայեացքով՝ մացառները կամ թանձրախիտ տերեւներու մթութեան մէջ կորսուած ոստերն հարցաքննելով , և մէն մի քայլափոխի՝ հրացանին ահեղ պայթիւնն սպասելով : Իսկ Պարպիքէյնի անցած լինելուն հետքը , զոր անշուշտ թողած պիտի լինէր անտառին մէջ , անհնարին էր ճանչել . ուստի կուրաբար կը քալէին այն հազիւ բացուած շա-

ւիղներուն մէջ , ուր Հնդիկ մը քայլ առ քայլ կրնար հետեւիլ իւր հակառակորդին ընթացից :  
 Մէկ ժամ ունայն հետախուզութենէ յետոյ , երկու ընկերք կանգ առին . իրենց սրտատանջութիւնը կ'աւերնար :  
 « Այժմ՝ ամեն բան լմնցած պէտք է լինի , ըսաւ Մասթոն վհատեալ : Պարպիքէյնի պէս մարդ մ'անշուշտ հնարքներ չէ նիւթած իւր թշնամոյն դէմ , ոչ որողայթներ լարած , ոչ ալ դաւեր ի գործ դրած : Յոյժ անկեղծ , յոյժ քաջասիրտ է : Ուղղակի յառաջ քալած է վտանգին դէմ , և անշուշտ փայտահարէն բաւական հեռացած լինելով , հրացանին պայթման բռնիւնն հովն առած տարած է :  
 — Բայց մեք , մեք , պատասխանեց Միշէլ Արտան , անտառը մտնելէս ի վեր կրնայինք լսել . . . :  
 — Եթէ շատ ուշ հասանք , գոչեց Մասթոն յուսահատական ձայնիւ :  
 Միշէլ Արտան չկրցաւ պատասխանելու բառ մը գտնել : Նորէն շարունակել սկսան իրենց ընդհատեալ ընթացքը , ժամանակ առ ժամանակ ձայն կ'արձակէին , Պարպիքէյն , Նիքոլ կը կոչէին , բայց երկու հակառակորդաց ոչ մին պատասխանեց ասոնց ձայնին : Միայն թռչնոց կայտառ երամներ՝ ասոնց աղաղակէն զարթնելով ծառոց ոստերուն մէջ կ'աներեւութանային , և քանի մ'այժեամբեր պակչելով խուճապաւ կը փախչէին ծառերուն մէջէն :  
 Հետադասութիւնը տակաւին ժամ մ'երկարեցաւ : Անտառին ամենամեծ մասը խուզարկուած էր . բայց մենամարտիկներուն ներկայութիւնն յայտնող նշան մը չկար : Սկսան երկբայիլ փայտահարին տուած տեղեկութեան վրայ , և Արտան ետ պիտի կենար այս անօգուտ հետախուզութիւնը շարունակելէ , յանկարծ Մասթոն կանգ առաւ : « Լ՛ուս , մարդ մը կայ հոս : »



— Մարդ կայ, պատասխանեց Միշէլ Արտան :

— Այո՛, մարդ մը կայ, որ անշարժ կը թուի : Հրացանը ձեռքը չէ : Ի՞նչ կ'ընէ արդեօք :

— Բայց կը ճանչէք զինքը, հարցուց Միշէլ Արտան, որոյ կարճատեսութիւնն յոյժ վատ ծառայութիւն կ'ընէր այսպիսի պարագայից մէջ :

— Այո՛, այո՛, այս կողմ կը դառնայ, պատասխանեց Մասթոն :

— Եւ է . . .

— Նիքոլ նաւապետն :

— Նիքոլ, գոչեց Միշէլ Արտան, արտի բռուն սեղմում մ'զգայով :

Նիքոլ անդէն : Ուրեմն ի՞նչ ոտխէն վախնալու բան մը չունի այլ եւս :

« Երթամք իւր քով, ըսաւ Միշէլ Արտան, և հասկընամք գործը : »

Բայց ի՞նչ և ընկերն յիսուն քայլ չընացած, կանգ առին՝ նաւապետն աւելի ուշադրութեամբ զննելու համար : Կը կարծէին որ արեան ծարաւի և բովանդակապէս իւր ռիսակալութեան զբաղեալ մարդ մը պիտի գտնէին : Բայց զայն տեսնելնուն պէս ապշեցան մնացին :

Խիտ թելերով ցանց մը լարուած էր երկու խոշոր ծառերու միջեւ, և ցանցին մէջ տեղը փոքրիկ թըռչուն մը՝ թեւերը ցանցին վերտերուն մէջ բռնուած կը թալթէր՝ ողբագին ճիչեր արձակելով : Այս անել ուտայնը լարով թռչնորսը մարդկեղէն էակ մը չէր, այլ երկրին յատուկ թռնաւոր սարդ մը, աղանուոյ ձուի մեծութեամբ և ճանկածեւ երկար թաթերով : Ժանտատեսիլ կենդանին, իւր որսին վրայ ինկնելու վայրկենին հարկադրուեր էր ճանբէն խոտորիլ և ծառին բարձր ոտերէն միոյն վրայ ապաստան փնտռել, վասն զի ահաւոր թշնամի մ'ալ իւր վրայ եկեր էր :

Նիքոլ նաւապետ, հրացանը գետինը դրած, մոռնալով իւր կացութեան վտանգները, վիթխարի սարդին ցանցերուն մէջ բռնուած խեղճ թռչնիկն հնարեղածին չափ փափկութեամբ ազատելու կ'ըբաղէր : Երբոր ազատեց, թող տուաւ թռչնիկն որ ուրախութեամբ թեւերը բախելով աներեւոյթ եղաւ :

Նիքոլ խանդաղատանօք կը դիտէր անոր փախուստը ծառերուն մէջէն, յանկարծ սա խօսքերը լսեց յուզեալ ձայնիւ մ'արտասանուած :

« Դուք բարի մարդ մ'էք դ՞՞ռք » :

Ետին դարձաւ, Միշէլ Արտան կեցած էր իւր առջեւ, կրկնելով « Եւ սիրուն մարդ մը՛ : »

— Միշէլ Արտան, գոչեց նաւապետն. ի՞նչ ընելու եկած էք հոս, Տիա՛ր :

— Չեր ձեռքը սեղմելու, Նիքո՛լ, և թող չտալու որ Պարպիբէյն սպաննէք կամ անկէ սպաննուիք :

— Պարպիբէյն, գոչեց նաւապետը, զոր երկու ծամէ ի վեր կը փնտռեմ ու չեմ գտներ : Ո՛ւր պահուրտած է . . .

— Նիքո՛լ, ըսաւ Միշէլ Արտան, այդ ըրածնիդ մարդավարութիւն չէ, պէտք է միշտ յարգել իւր ստիւն, անհոգ եղիք, եթէ Պարպիբէյն ողջ է, կը գտնեմք զայն, և աւելի դիւրութեամբ, որովհետեւ, եթէ նա ալ ձեզ պէս հարստահարեալ թռչնոց օգնելու չէ ըզբաղած, անշուշտ ձեզ պիտի փնտռէ : Բայց երբոր զայն ալ գտնեմք, ահա Միշէլ Արտան կ'ըսէ ձեզ թէ այլ եւս մենա մարտի խօսք չկար լինիլ ձեր մէջ :

— Պարպիբէյն նախագահին և իմ առջեւ, պատասխանեց Նիքոլ ծանրութեամբ, այնպիսի նախանձընդդիմութիւն մը կայ, որ երկուքէս միոյն մահ . . .

— Մ'ն անդր, ըսաւ Միշէլ Արտան, ձեզ պէս քաջ և բարի մարդիկ կրնան զիրար առել, բայց զիտեն նաեւ յարգել : Դուք չպիտի մենամարտիք :



— Պիտի մարանչիմ, Տիա՛ր :

— Ամենեւի՛ն :

— Նաւապե՛տ, ըսաւ այն ժամանակ յ. թ. Մասթոն քաջարար, ես նախագահին բարեկամն եմ, նորա բէն եմ, եթէ անպատճառ մէկն սպաննել կ'ուզէք, պարպեցէք ձեր հրացանն իմ վրայ, և ճշդիւ նոյն բանը կատարուած կը լինի :

— Տիա՛ր, ըսաւ Նիքոլ իւր հրացանը սեղմելով ձգտեալ ձեռամբ, այդ կատակները . . .

— Մեր Մասթոն բարեկամը կատակ չընէր, պատասխանեց Միշէլ Արտան, և կը հասկնամ իւր սիրած մարդուն համար ինքզինք սպաննել տալու դաշտարը : Բայց ոչ նա՛ ոչ Պարպիքէ՛յն չպիտի ընկնին Նիքոլ նաւապետին գնտակներէն . վասն զի այնպիսի հրապուրիչ առաջարկ մը պիտի ընեմ երկու հակառակորդաց, որ ամենայն փութով պիտի ընդունին :

— Ի՞նչ առաջարկ . հարցուց Նիքոլ ակներեւ թե՛րահաւատութեամբ :

— Համբերեցէ՛ք, պատասխանեց Արտան, Պարպիքէ՛յնի ներկայութեամբ միայն կրնամ յայտնել :

— Փնտուածք զայն ուրեմն, գոչեց նաւապետը :

Իսկոյն երեքը մէկէն ճանբայ ելան . նաւապետն իւր հրացանին կայծհանը թուլցնելէ յետոյ ուր զարկաւ և առանց բառ մ'արտասանելու երթալ սկսաւ դեղեկոս քայլերով :

Կէս ժամու չափ եւս հետախուզութիւնք անողուտ եղան : Մասթոն չարագոյժ նախազգացումներէ բռնուել սկսաւ : Խստիւ նաւապետը կը դիտէր, հարցընելով մտովի թէ արդեօք նաւապետն իւր սիր չէ՞ր յազեցուցած, և տարաբաղդ Պարպիքէ՛յն գնտակէ մը զարնուելով՝ դիտապաստ ինկած չէ՞ր արիւննուշտ թաւուտի մը խորը : Միշէլ Արտան ալ նոյն մտածութիւնն ունենալ կը թուէր . հայեայքով Նիքոլ նաւա-

պետը կը հարցաքննէին արդէն, յանկարծ Մասթոն կանգ առաւ :

Քսան քայլ հեռի յաղթարերձ կատալպենի մ'արմին կրթնած մարդու մը կէս մէջքէն վերի մասը կը տեսնուէր՝ կիտով չափ խոտերէ ծածկուած :

« Նոյն ինքն է՛ » ըսաւ Մասթոն :

Պարպիքէ՛յն անշարժ կեցած էր : Արտան՝ իւր հայեացքը նաւապետին աչաց մէջ մխեց, բայց սա ամենեւին չդրդուեցաւ : Արտան քանի մը քայլ յառաջ գնաց գոչելով .

« Պարպիքէ՛յն, Պարպիքէ՛յն : »

Պատասխան չկար : Արտան վազեց իւր բարեկամին քով, բայց երբ անոր թեւը բռնելու վրայ էր, մէկէն կանգ առաւ զարմացական աղաղակ մ'արձակելով :

Պարպիքէ՛յն, մատիտը ձեռքն երկրաչափական ձեւեր կը գծէր, փոքրիկ տետրակի մը վրայ, մինչդեռ հրացանն ոչ-դինեալ կը կենար գետնին վրայ . իւր աշխատութեան զբաղած, գիտնական նախագահն ալ նաւապետին պէս մոռցեր էր իւր մենամարտն ու վրէժխնդրութիւնն, և այս պատճառաւ բան մը տեսած ու լսած չէր :

Բայց երբ Միշէլ Արտան իւր ձեռքն անոր ձեռքին վրայ դրաւ, Պարպիքէ՛յն ելաւ նստաւ և զարմացեալ աչօք անոր նայեցաւ .

« Ա՛, գոչեց վերջապէս, դո՛ւ հո՛ս : Գտայ, բարեկամ, գտայ :

— Ի՞նչ :

— Փնտուած միջոցս :

— Ի՞նչ միջոց :

— Առմէրին արձակուած ժամանակ ունենալիք հակահարուածին արդիւնքն ոչնչացնելու միջոցը :

— Ստուգի՛ւ, ըսաւ Միշէլ՝ աչքին ծայրովը նաւապետին նայելով :



— Այո՛, ջուր, պաղ ջուր, որ առաձգութիւն պիտի տայ . . . Ա՛, Մասթոն՛, գոչեց Պարպիքէյն, դո՛ւք ալ . . . :

— Նոյն ինքն, պատասխանեց Միշէլ Արտան, և ներէ որ քեզ ներկայացնեմ միանգամայն և պատուարժան Նիքոլ նաւապետը :

— Նիքո՛լ, գոչեց Պարպիքէյն ոտքի վրայ ցատկելով իսկոյն : Ներեցէք, նաւապետ ըսաւ, մտքեր էի . . . պատրաստ եմ . . . »

Միշէլ Արտան միջամտեց առանց ժամանակ թողուերկու թշնամեաց որ իրարու հետ վիճին :

« Ստուգիւ, ըսաւ, բարեբաղդութիւն մ'է որ ձեզ պէս ընտիր մարդիկ աւելի առաջ չպատահեցան իրարու : Այժմ ձեր մին կամ միւսը պիտի սղբայինք : Բայց գոհութիւն Աստուծոյ որ մէջ մտաւ, և այժմ վտիմնալու բան մը չունինք :

Երբոր մէկն իւր առելութիւնը մտնուողով մեքենական խնդիրներ լուծելու կամ սարդերուն որսերն ազատելու կ'զբաղի, ըսել է որ այդ առելութիւն բընաւ վասնգաւոր չէ : »

Զայս ըսելով Միշէլ Արտան՝ նաւապետին անցքը պատմեց նախագահին :

Կը հարցնեմ ձեզ քիչ մը, ըսաւ ի վերջոյ, թէ ձեզ պէս բարի էակներ հրացանով միմեանց գլուխ ջախջախելու համար ստեղծուած են :

Այո՛ փոքր ի շատէ ծաղրական վիճակին մէջ այն աստիճան անակնկալ բան մը կար, որ Պարպիքէյն և Նիքոլ չէին գիտեր ինչ ընթացք բռնել միմեանց դէմ : Միշէլ Արտան՝ զգալով զայս՝ սրոչեց հաշտութիւնը փութացնել :

« Բա՛ջ բարեկամք իմ, ըսաւ իւր լաւագոյն ժպիտը փայլեցնելով իւր չրթանց վրայ, ձեր մէջ թիւրիմացութենէ զատ ուրիշ բան մ'եղած չէ երբէք : Ուրեմն

ցուցնելու համար որ ամեն բան վերջացած է ձեր մէջ, և որովհետեւ ձեր կեանքը վտանգի մէջ դնող մարդիկ էք, ընդունեցէք անկեղծաբար իմ ձեզ ընելիք առաջարկս :

— Խօսեցէք, ըսաւ Նիքոլ :

— Բարեկամ Պարպիքէյն կը կարծէ թէ իւր ռումբըն ուղղապէս լուսնին մէջ պիտի երթայ :

— Այո՛, անշուշտ, պատասխանեց նախագահն :

— Եւ բարեկամ Նիքոլ համոզուած է թէ երկրի վըրայ պիտի իյնայ :

— Ադոր տարակոյս չունիմ, գոչեց նաւապետը :

— Լաւ, պատասխանեց Միշէլ Արտան, ես ձեր կարծիքն համաձայնեցնելու յաւակնութիւնը չունիմ՝ բայց կ'ըսեմ ձեզ պարզապէս. — Դուք ալ ինձ հետ ուղեորեցէք, և կը տեսնէք թէ ճանրան պիտի մնամք :

— Հէ՛, ըսաւ Ժ. Թ. Մասթոն ապշած : Այս անակնկալ առաջարկին վրայ երկու հակառակորդը աչերնին իրարու վրայ դարձուցին և ուշադրութեամբ դիւրար կը դիտէին : Պարպիքէյն՝ նաւապետին պատասխանին կ'սպասէր, Նիքոլ ալ նախագահին խօսքերուն :

« Պատասխան տուէ՛ք, ըսաւ Միշէլ իւր ամենէն հըրապուրիչ ձայնիւ, քանի որ հակահարուածի երկիւղ չէ մնացած . . . »

— Կ'ընդունիմ, գոչեց Պարպիքէյն : Բայց որչափ և շուտ արտասանեց այս բառը, Նիքոլ ալ անոր հետ միանգամայն անարտած էր :

« Հուրբա՛, պրափո՛յ, վիվա՛, հի՛ր, հի՛ր, գոչեց Միշէլ Արտան ձեռքն երկնցնելով երկու հակառակորդաց : Եւ հիմա որ գործը կարգադրեցաւ, բարեկամք իմ, ներեցէք ինձ որ Ֆրանսացիաբար վարուիմ ձեզ հետ : Օ՛ն երթա՛նք նախաճաչ ընեմք : »



Նոյն օրը բովանդակ Ամերիկա իմացաւ Նիքոյ նաւապետին և Պարպիքէյն նախագահին գործն և ստացած տարօրինակ վախճանն : Այս հանդիպման մէջ ասպետաբարոյ Եւրոպացւոյն խաղցած դերն , ըրած անակնկալ առաջարկն որ դժուարութիւնը կը կտրէր , երկու ոսոխաց միանգամայն ընդունիլը , Լուսնական աշխարհի տիրապետութիւնն , առ որ Ֆրանսա և Միացեալ-Նահանգք համաձայնութեամբ պիտի քալէին , այս ամենը միանալով առաւել եւս մեծցուցին Միչէլ Արտանի ժողովրդականութիւնն : Ամեն մարդ գիտէ թէ Էանքիներն ինչ աստիճան մոլեգնութեամբ կը համակրին մարդու մը : Երկրի մը մէջ , ուր ամենէն ծանրաբարոյ պաշտօնատարք և պատկառելի դատաւորք պարուհւոյ մը կառքին կը լծուին և յաղթանակաւ կը քաշեն , կրնայ դատուիլ յանդուգն Ֆրանսացւոյն ազգած խանդն : Եթէ իւր կառքին ձիերը չքակեցին , հաւանականաբար չունենալուն համար էր , բայց բուռն համակրանաց ուրիշ ամեն նշանք չուայլեցան անոր : Չկար քաղաքացի մը որ հոգւով ու սրտով չմիանար անոր հետ : Ի քաղաքացիական ըստ նշանաբանի Միացեալ-Նահանգաց :

Այն օրէն յետոյ Միչէլ Արտան պահ մը հանգիստ չունեցաւ : Միութեան ամեն կողմերէն պատգամաւորութիւնը կուգային անդադար կը ձանձրացնէին զայն , և կամայ ակամայ պարտաւորեցաւ ընդունիլ զանոնք : Սեղմած ձեռքերուն , եզակի դէմքով խօսակցած մարդոց համրանքը չկար : Շատ չանցած սաստիկ խոնջեցաւ , ձայնը անթիւ բանախօսութիւններէ մարելով նհասկանալի հնչմամբ կ'արտաբերէր չրթունքէն ,

միութեան ամեն մասնախմբերուն կենացը գինի խըմելու պարտաւորուելով մազ մնաց որ աղեաապէ բռնըւէր : Այսչափ յաջողութիւն կրնար ուրիշ մէկն զգլխել առաջին օրէն , բայց Արտան կրցաւ ինքզինք աշխոյժ և սիրուն կիսարբեցութեան մը մէջ բռնել :

Ձինքը պաշարող ամեն տեսակ պատգամաւորութեանց մէջէն « Լուսնոտ » ներունը չմոռցաւ իւր պարտքըն առ ազագայ աշխարհակալն Լուսնի : Օր մը , քանի մը խեղճ լուսնոտք , որք բաւական բազմութիւն են Ամերիկայի մէջ , եկան զինքը գտան և խնդրեցին իրենց ծննդեան երկիրը դառնալ իրեն հետ : Մէջերունէն ոմանք կը պարծէին թէ « Լուսներէն » խօսիլ գիտէին և ուղեցին ուսուցանել Միչէլ Արտանի : Նա ալ յօժարութեամբ անձնատուր եղաւ անոնց անմեղ մըտամբութեան , և յանձնարարութիւններ ստանձնեց անոնց լուսնաբանակ բարեկամաց համար :

« Տարօրինակ յիմարութիւն , ըսաւ Պարպիքէյնի , զանոնք ճանբելէ յետոյ , յիմարութիւն մը , որ շատ անգամ աշխոյժ խելքերը կը վարակէ : Մեր ամենէն հոյակապ գիտնոց մին Արակոյ կ'ըսէր ինձ թէ բազմութիւն իմաստուն և յոյժ զգուշաւոր անձինք իրենց մտածութեանց մէջ մտային մեծ գրգռութեան և անհաւատալի այլանդակութեանց մէջ կ'իյնային ամեն անգամ որ Լուսնը կը զբաղեցնէր զիրենք : Դու չե՞ս հաւատար հիւանդութեանց վրայ Լուսնի ունեցած ազդեցութեան :

— Չեմ հաւատար , պատասխանեց կըն-Քիլուպի նախագահն :

Ես ալ չեմ հաւատար , և սակայն պատմութիւնը զարմանալի իրողութիւններ արձանագրած է : Այսպէս , 1693 ին , համաճարակ հիւանդութեան մը ժամանակ , յունվար ամսոյ Ձինն , Լուսնի խաւարման մը միջոցին , աւելի շատ մարդիկ մեռան : Հոչակաւորն



Պարոն կը մարէր Լուսնի խաւարմանց միջոցին, և մինչեւ որ Լուսինը վերստին չլուսաւորուէր, ինքն ալ չէր կենդանանար: Կարողոս Զ. թագաւորը վեց անգամ խեղաթափեցաւ 1399 ին, Լուսնի ծնած և լրացած ժամանակ: Բժիշկները վերնոտութեան ախտը Լուսնի երեւոյթներուն հետեւող հիւանդութեանց կարգը դասեցին: Զոյային հիւանդութիւնը ալ շատ անգամ անոր ազդեցութիւնը կրելու երեւոյթ ունեցած են: Միտ՝ տղու մը վրայ կը խօսի, որ շղաձգութենէ կը բռնուէր երբոր Լուսինն հանդիպակացութեան գծին մէջ կը մտնէր: Կալլ՝ նշմարած էր որ տկար մարդոց մտային գրգռութիւնն ամիսն երկու անգամ կը սաստկանար Լուսնին ծնած և լրացած ժամանակները: Վերջապէս տակաւին հազար այս տեսակ դիտողութիւնք կան գլխու պտոյտներու, ժանտաւտենդերու և քնաշարժիկութեանց վրայ, ապացուցանելու համար թէ գիշերային աստղը խորհրդաւոր ազդեցութիւն մ'ունի երկրաւոր հիւանդութեանց վրայ:

— Բայց ի՞նչպէս, ինչո՞ւ համար, հարցուց Պարպիքէյն:

— Ինչո՞ւ համար, պատասխանեց Արտան, ես ալ նոյն պատասխանը կուտամ քեզ, ինչ որ Արակոյ կը կրկնէր Պլուտարքէն տասն և ինն դար յետոյ. — « Գուցէ անոր համար որ ճշմարիտ չէ: »

Իւր յաղթանակին մէջ Միշէլ Արտան չկրցաւ զերծ մնալ այն ճրի յոգնութիւններէն, որք անբաժան են հուշակաւոր մարդոցմէ: Յաջողութեանց ձեռնարկուներն ուղեցին ի տես հասարակաց հանել զայն: Պարնոմ մէկ միլիոն տոլար առաջարկեց իրեն՝ քաղքէ քաղաք բոլոր Միացեալ-հասանգները պտըտցնելու և հասարակութեան ցուցնելու համար իբրեւ մի հետաքրքրաշարժ կենդանի: Միշէլ Արտան՝ փղապանի տեղ դրաւ զայն և վաճառեց ըսելով որ երթայ ինքզինք պտըտցնէ:

Սակայն, թէ և յանձն չառաւ հասարակաց հետաքրքրութիւնը գոհացնել, գոնէ իւր լուսանկարները բոլոր աշխարհ պտրտեցան, և այլոսներու մէջ պատուաւոր տեղը բռնեցին: Ամեն ձեւով և մեծութեամբ օրինակներ հանուեցան, բնական մեծութենէ սկսեալ մինչեւ թղթատարութեան դրոշմաթուղթի փոքրութիւն. ամեն ոք կրնար իւր դիւցազունն իւր քով ունենալ ամեն երեւակայելի ձեւերով. լոկ դլուխ, կիսանդրի, ոտքի վրայ, ամբողջ դէմք, կէս դէմք, երեք քառորդ դէմք, կրնակ: Մէկ միլիոն հինգ հարիւր հազար օրինակէն աւելի տպուեցաւ, և դեղեցիկ առիթ մը կար ինքզինք իբրեւ մասունք վաճառելու, բայց օգուտ չքաղեց: Եթէ միայն իւր մազերը վաճառէր հաար մէկ տոլարի, կրնար մեծ հարստութիւն դիզել:

Արդարը խօսելով, այս ժողովրդականութիւն անհաճոյ չէր իրեն. ինքզինք հասարակաց տրամադրութեան ներքեւ կը դնէր և համայն աշխարհի հետ կը թղթակցէր: Իւր զուարճաբանութիւնները բերնէ բերան կը կրկնուէին ու կը տարածուէին, մանաւանդ այն խօսքերը զորս չէր ըներ և իրեն կը վերագրուէին, ըստ սովորութեան, որովհետեւ հարուստ էր այս կողմէ:

Ոչ միայն այրերն իւր կողմն ունեցաւ, այլ և կիւներն: Անթիւ գեղեցիկ ամուսնութիւններ կրնար ընել եթէ Ամերիկա բնակելու հաճոյքն ունենար: Մանաւանդ պառաւ օրիորդներն՝ որք քառսուն տարիէ ի վեր ոտքի վրայ կը չորնային, գիշեր ցերեկ երազ կը տեսնէին անոր լուսանկարներուն առջեւ:

Միշէլ Արտան, անտարակոյս, հարիւրաւոր ամբողջութիւն կրնար գտնել հետերնին ամուսնանալու համար, մինչեւ իսկ եթէ պայման դնէր որ օղբերուն մէջ իրեն ուղեկցէին: Կանայք անվեհեր են երբոր բնաւ երկիւղ չունենան: Բայց ինք դիտաւորութիւն չունէր



Լուսնական աշխարհին մէջ նոր սերունդի մ'արմատ լինելու և Ֆրանսացիներէ ու ամերիկացիներէ խառնածին ցեղ մը հոն փոխադրելու. ուստի յանձն չառաւ.

« Երթալ վերը Լուսնին մէջ Ադամի դեր կատարել Եւայի դստեր մը հետ, գործիս չգար կ'ըսէր. դէմս օձեր միայն պիտի ելնեն. . . »

Երբոր յաղթանակին չափազանց կրկնուած ուրախութիւններէն ինքզինք կրցաւ ազատել, գնաց իւր բարեկամաց հետ այցելութիւն մը տալ Քոլումպիատին : Այս այցելութիւնը պարտական էր անոր, մանաւանդ որ ումբաձգական գիտութեան մէջ մեծ յառաջդիմութիւն ըրած էր քանի որ Պարպիքէյնի, Ժ. Թ. Մասթոնի և ընկերաց հետ կը կենակցէր : Իւր ամենամեծ բերկրութիւնն էր կրկնել այդ քաջ ումբաձիգներուն թէ սիրուն և գիտնական մարդասպաններ միայն էին : Այս մասին զուարճաբանելէ չէր յագենար : Քոլումպիատին այցելութիւն տուած օրն սքանչացաւ անոր վրայ, և մինչեւ յատակն իջաւ այն անհեթեթ հրասանդին, որ քիչ ժամանակէն զինքը դէպի գիշերային աստղը պիտի նետէր :

« Գոնէ, ըսաւ, այս թնդանօթը մարդու վնաս չը պիտի տայ, որ արդէն բաւական զարմանալի է թընդանօթի մը կողմէ. խի ձեր այն հրանօթներուն համար որք կը քանդեն, կ'այրեն, կը ջախջախեն, կ'ըսպաննեն, խօսք մի ընէք ինձ, և մանաւանդ մի՛ դաբ երբէք ըսել ինձ թէ « հողի (\*) մը » ունին, չպիտի հաւտամ ձեզ :

Հոս պէտք է յիշել Ժ. Թ. Մասթոնի վերաբերեալ առաջարկ մը : Երբոր կըն-Քլիւպի քարտուղարը տեսաւ որ Պարպիքէյն և Նիքոլ ընգուենցին Միչէլ Արտանի առաջարկն, որոշեց անոր հետ միանալ և « խա-

(\*) Ֆրանսացիք « հողի » կը կոչեն թնդանօթաց փողամէջը :

ղը չորս հողիով խաղալ » : Օրին մէկը խնդրեց որ ինք ալ մասնակցի ուղեւորութեան : Պարպիքէյն ցաւով սրտի հասկուց անոր թէ ուումը չէր կրնար այնչափ բազում ուղեւոր տանիլ : Ժ. Թ. Մասթոնն զայրոտնալով Միչէլ Արտանի դիմեց. նա ալ ըստ Ֆրանսացի փաստեր յառաջ բերելով՝ համբերատարութեան յորդորեց զայն :

« Կը տեսնե՞ս, ծերունի՛ Մասթոնս, ըսաւ անոր, պէտք չէ իմ խօսքերս դէլ մոռի տանիլ. այո՛, ստուգիւ, խօսքը մէջերնիս, դու շատ անկատար ես Լուսնի մէջ ներկայանալու համար :

— Անկատար, գոչեց արի խեղանդամը :

— Այո՛, քաջ բարեկամս, մտածէ այն պարագայն, երբ բնակիչներ գտնեմք Լուսնին մէջ : Կուզե՞ս որ տըխուր գաղափար մը տամք անոնց՝ այս աշխարհի մէջ անցած իրողութեանց վրայ, հասկցնել անոնց պատերազմին ինչ լինելը, ցուցնել անոնց թէ մեր լաւագոյն ժամանակը զիրար ուտելու, միմեանց թեւերն ու սրունքները կտորտելու կը գործածեմք, և այս՝ այնպիսի հողագունտի մը վրայ որ կրնար հարիւր երկիւիոն բնակիչ սնուցանել, և ուր հազիւ հազ երկու հարիւր միլիոն կայ : Օ՛ն անդր, պատուական բարեկամս, մեզ արտաքսել կուտաք Լուսնի մէջէն :

— Բայց թէ որ դուք ալ կտոր կտոր եղած հոն հասնիք, դուք ալ ինձ չափ անկատար կը լինիք :

— Անշուշտ, պատասխանեց Միչէլ Արտան, բայց կտոր կտոր եղած չպիտի հասնիմք հոն :

Արդարեւ հոկտ. 18 ին եղած նախապատրաստական գործ մը լաւագոյն արդիւնք տուած և յոյժ արդար յոյսեր ներշնչած էր : Պարպիքէյն՝ ուումի մ'արձակման պահուն ունեցած հակահարուածին արդիւնքն հասկնալու համար, երսունուերկու մատնաչափ հրասանդ մը բերել տուաւ Բէնսաքոլայի զինարանէն : Չայն Հիլիսպորոյի նաւահանգստին եզրը զետեղեցին, որ-



պէս զի ուսմբը ծովուն մէջ ընկնի և անկման թափը մեղմանայ : Բայց խնդիրը ուսմբին արձակման պահուն ունենալիք ցնցման վրայ էր և ոչ իր տեղն հասած ժամանակ ունենալիք բախման :

Այս հետաքրքրաշարժ փորձին համար սնամէջ ուսմբ մը պատրաստուեցաւ ամենամեծ խնամով : Լաւագոյն պողպատեայ զսպանակներէ ցանցի մը վրայ անցած մետաքսեայ հաստ պատեանով մը պատեցին ուսմբին ներսի կողմը, որ կակուղ բարձով պատած ճշմարիտ բոյնի մը կերպարանք առաւ :

« Ափսոս որ չեմ կրնար մէջը նստիլ, կ'ըսէր յ. Թ. Մասթոն՝ ցաւելով որ իւր հասակը թոյլ չէր տար իրեն այս արկածական ուղեւորութիւնը փորձել : Այն սիրուն ուսմբին մէջ, որ պտուտակաւոր խուփով մը կը փակուէր. նախ մեծ կատու մը գրին, յետոյ սկիւռ մը (սինճապ), որ կրն-ֆլիւպի քարտուղարինն էր, և զոր յ. Թ. Մասթոն շատ կը սիրէր : Բայց կ'ուզէին գիտնալ թէ այդ փոքրիկ կենդանին, որ գլխու պտոյտի շատ ենթակայ չէր, ի՞նչպէս պիտի դիմանար այս փորձառական ուղեւորութեան :

Հրասանդը լցուեցաւ հարիւր վաթսուն լիպրա վառօդով, և ուսմբը մէջը դրուելէ յետոյ կրակ տըրուեցաւ :

Իսկոյն ուսմբն արագապէս բարձրացաւ, իւր կոր գուգորդը փառատորապէս դժեց, իբր հարիւր ոտնաչափ բարձրութեան հասաւ և շնորհալի կոր դժով մը գնաց ծովուն մէջ ընկաւ :

Առանց վայրկեան մը կորուսանելու, մակոյկ մը գնաց ուսմբին ինկած տեղը, ճարտար լուսորդներ ծովուն տակն իջան, պարաններ անցուցին ուսմբին ունկերուն, և իսկոյն ուսմբը վեր քաշուելով մակոյկին մէջ առնուեցաւ : Հինգ վայրկեան չէր անցած կենդանիներուն փակուելէն մինչեւ անոնց բանտին դրան բացուիլը :

Արտան, Պարպիքէյն, Մասթոն, Նիքոյ, մակոյկին մէջ էին և գործողութիւնը կը գիտէին դիւրահասկանալի հետաքրքրութեամբ : Ռուսը բացուելուն պէս, կատուն դուրս յարձակեցաւ քիչ մը շփուած, բայց քաջաւողջ և առանց օգային ուղեւորութենէ մը վերադարձած լինելու երեւոյթի : Իսկ սկիւռին հետքն անգամ չկար : Հարկ եղաւ այն ժամանակ ճանչել ճշմարտութիւնը. կատուն կերեր էր իւր ուղեկիցը :

Կ. Թ. Մասթոն տրտմեցաւ իւր խեղճ սկիւռին կորստեան վրայ, և որոշեց գիտութեան մարտիրոսներուն կարգը դասել զայն :

Ինչ և իցէ, այս փորձէն յետոյ ամեն երկիւղ, ամեն վարանում վարատեցաւ. միւս կողմէ Պարպիքէյնի ծրագրերն աւելի պիտի կատարելագործէին ուսմբըն, և հակահարուածին ազդեցութիւնը գրեթէ իսպառ ոչնչացնէին : Ուստի ճանրայ ելնելէ զատ ուրիշ գործ չէր մնար :

Երկու օր յետոյ Միչէլ Արտան պատգամագիր մ'ըստացաւ Միացեալ-Նահանգաց նախագահէն, պատիւ մը, յորմէ մասնաւոր գոհութիւն մ'զգաց :

Ըստ օրինակի իւր քաջարի հայրենակից Լաֆայէթ մարքիզին, կառավարութիւնն Ամերիկայի Միացեալ-Նահանգաց քաղաքացւոյ տիտղոսը կ'ընծայէր անոր :

ԳԼՈՒԽ ԻԳ.

Ռ Մ Ռ Ա Կ Ա Ռ Ք

— 0 —

Մեծանուն ֆոլուսպիատի ձուլման աւարտումէն յետոյ հասարակաց հետաքրքրութիւնն անմիջապէս ուսմբին վրայ ինկաւ, որ երեք յանդուզն արկածախնդիրներ անսահման միջոցին մէջէն փոխադրելու սահմանուած էր : Ոչ ոք մտացած էր թէ Միչէլ Ար-



տան իւր սեպտեմբեր 30 ի հեռագրով փոփոխութիւն մը կը խնդրէր Մասնախմբին անդամոց որոշած ծրագրին մէջ :

Պարպիքէյն նախագահը կը խորհէր յայնժամ իրաւամբ թէ ռուսներն ձեւը մեծ կարեւորութիւն չունէր . վասն զի մթնոլորտը քանի մը մանրերկրորդի մէջ անցնելէ յետոյ , ռուսներն ընթացքը բացարձակ դատարկութեան մէջ պիտի կատարուէր : Ուստի Մասնախումբը կը որոշէր ընտրած էր , որպէս զի ռուսները կարենար իւր վրայ դառնալ և ուղածին պէս վարուիլ : Բայց երբոր մարդ փոխադրելու պիտի ծառայէր , այն ժամանակ գործը կը փոխուէր : Միշէլ Արտանի համար հոգ չէր սկիւռներու պէս ուղեւորիլ . բայց կ'ուզէր գլուխը բարձր բռնել և ոտքերը վար , նոյն արժանապատուութեամբ՝ որով կը նստի մարդօգապարիկի մը մակոյկին մէջ , անշուշտ առաւել արագ , բայց առանց անպատշաճ ուտոստումներ ընելու :

Ուստի նոր ծրագրերը ղրկուեցան Ալպանիոյ Պրիտւիլ և Բնկ . գործարանը՝ պատուիրելով որ անյապաղ գործադրի : Իրումբն այսպէս ձեւափոխուելով՝ նոյեմբեր 2ին ձուլուեցաւ և անմիջապէս Սթոնս-Հիլ ղրկուեցաւ արեւելեան երկաթուղիներով :

Նոյեմբեր 10ին անփաստ հասաւ իւր տեղը՝ Միշէլ Արտան , Պարպիքէյն և Նիքոլ ամենաբուռն անհամբերութեամբ կ'սպասէին ռաբակառքին , որոյ մէջ նըստած նոր աշխարհ մը գտնելու պիտի սրանային :

Ճշմարիտն ըսելով , մետաղեայ փառաւոր մարմին մ'էր . մետաղագործական արտադրութիւն մը , որ մեծ պատիւ կը բերէր Ամերիկացուց արուեստագէտ հանճարոյն : Առաջին անգամ ալիւմինիումի այնչափ մեծ զանգուած մը ձեռք բերուած էր , որ կրնար իրաւամբ հրաշալի արդիւնք մը համարուիլ : Այս պատուական ռումբը պայծառափայլ կը շողշողէր արեգական ճառագայթ-

ներէն իւր ահաւոր ձեւերն և իւր կոնաձեւ գլխարկը տեսնողք՝ այն պղպեղամանի ձեւով փոքր բայց հաստ աշտարակներէն մին կը կարծէին , զորս միջին դարու ճարտարագետը՝ դղեակներուն անկիւնը կը կախէին : Ուրիշ բան մը չէր պակսեր , բայց միայն հրացանի ծակեր և հողմացոյց մը :

« Կ'սպասեմ , կը գոչէր Միշէլ Արտան , որ մէջէն սպառազէն մը դուրս ելնէ իւր կարճ հրացանով և պողպատեայ լանջապանակով : Մեք ազոր մէջ առատական իշխաններու պէս կը բազմիմք , և քիչ հրազիտութեամբ կրնամք դէմ դնել ամեն լուսնաբնակ ճամբարներու , եթէ ստուգիւ կան Լուսնի մէջ :

— Ըսել է որ այս ռաբակառքն հաճոյ է քեզ :

— Այո՛ , այո՛ , անշուշտ , պատասխանեց Միշէլ Արտան , որ իբրեւ զեղարուեստագէտ կը քննէր զայն : Կը ցաւիմ՝ միայն որ ձեւն աւելի սրածայր և կոնն աւելի վայելչաձեւ չէ . պարտ էր անոր ծայրն ընդելուզեալ մետաղէ զարդուց փունջով մ'աւարտել , օրինակի համար վիշապառիւծով մը , վիթխարի օձով մը , կրակի մէջէ դուրս ելնող թեւատարած և երախաբաց սալամանդրով մը . . . :

— Ի՞նչ օգուտ ունին , ըսաւ Պարպիքէյն , որոյ դրական միտքն զգայուն չէր արուեստական գեղեցկութեանց :

— Ի՞նչ օգուտ ունին , սիրելի Պարպիքէյն . աւա՛ղ , որովհետեւ կը հարցնես զայդ ինձ , կը վախնամ որ երբեք չես հասկնար :

— Ըսէ , մի՛ վախնար , քա՛ջ ընկերակիցս :

— Ըսա իմ կարծեաց , պէտք է միշտ քիչ մը գեղարուեստ դնէ մարդ իւր ըրածին մէջ . աւելի լաւ է այս : Գիտե՞ս հնդկական թատերախաղ մը , որ Մանչուստրը կը կոչուի :

— Անունն իսկ լսած չեմ , պատասխանեց Պարպիքէյն :

\*) Կ'սպասեմ զայն



— Չեմ գարմանար, ըսաւ Միշէլ Արտան. սովրէ ուրեմն թէ այն թատերախաղին մէջ գող մը կայ, որ տան մը պատը ծակելու միջոցին կը հարցնէ ինքնիրեն թէ արդեօք քնարի ձեւ տայ բանալիք ծակին, թէ ծաղկի, թռչնոյ կամ երկունկեայ սափորի. Արդ, ըսէ՛ ինձ, բարեկա՛մ Պարպիքէյն, եթէ այն ժամանակ դատաւոր եղած լինէիր, կը դատապարտէիր այդ գողը:

— Առանց վարանելու, պատասխանեց կըն-Քլիւպի նախագահն. և պատ ծակելու կամ դուռ կոտրելու ծանրացուցիչ պարագայով:

— Ես անպարտ կ'արձակէի զայն, բարեկա՛մ Պարպիքէյն: Ահա այս պատճառաւ է որ դու երբէք չպիտի կրնաս զիս հասկնալ:

— Եւ ոչ իսկ փորձ կ'ընեմ, իմ՝ արի՛ գեղարուեստագէտս:

— Բայց գո՛նէ, ըսաւ Միշէլ Արտան, որովհետեւ մեր ռաբակառքին ներքսակողմը լաւ վիճակի մէջ չէ, թոյլ տրուի ինձ զայն ուղածիս պէս կահաւորել և երկրի դեպքաններուն արժանավայել կերպիւ զարդարել:

— Այդ մասին, քա՛ջ Միշէլս, պատասխանեց Պարպիքէյն, քու հաճոյիցդ հետեւէ. և մեք կը թողումք քեզ որ ճաշակիդ համեմատ ընես:

Բայց, հաճոյականին անցնելէ առաջ, կըն-Քլիւպի նախագահն օգտակարը խորհած էր, և հակահարուածին ազդեցութիւնը նուազեցնելու համար իւր հնարած միջոցները կատարեալ ճարտարութեամբ գործադրեցան:

Պարպիքէյն մտածեր էր իրաւամբ, թէ ոչ մի զրուանակ չէր կրնար քնդհարումը թուլցնելու չափ գորեղ լինիլ, և Սքէրսնալի անտառին մէջ ըրած հռչակաւոր պտոյտի միջոցին յաջողեր էր վերջապէս հանճարեղ եզանակաւ մը լուծել այս մեծ դժուարութիւնս:

Ջուրէն պիտի խնդրէր այդ նշանաւոր ծառայութիւն: Եւ ահա ի՛նչպէս:

Ռումբը երեք ոտնաչափ ջուր պիտի ունենար իր մէջ, որ ճշդիւ իւր ներքին ընդարձակութեան համապատասխանող լաստի մը ձեւ պիտի ունենար, և ուղեւորը անոր վրայ պիտի նստէին: և այսպէս հակահարուածին թափը պիտի չէզոքանար:

Ճշմարիտ է որ յիսուն և չորս քառակուսի ոտնաչափ մակերեւութի մը վրայ երեք ոտնաչափ ջուրը տասնեւմէկ հազար հինգ հարիւր լիդրայի մօտ ծանրութիւն պիտի ունենար, բայց ֆոլումպիատին մէջ մը թերեալ կազերուն ծաւալումը պիտի բաւէր յաղթելու ծանրութեան աճման, և բախումն՝ այն բոլոր ջուրը մէկ մանրերկրորդէն պակաս ժամանակի մէջ վանելով, ռումբը չուտով իւր կանոնաւոր ծանրութիւնը պիտի գտնէր:

Ահա զայս երեւակայած էր կըն-Քլիւպի նախագահըն հակահարուածի ծանր խնդիրը լուծելու համար: Մնաց որ, այս աշխատութիւնը Պրիտուիլի գործարանին մեքենագէտներէն հանճարեղապէս հասկցուելով, սքանչելապէս գործադրուած էր:

Այսպէս ահա ամեն երեւակայելի նախագողչութիւնը ձեռք առնուած էին առաջին հակահարուածը մեղմացնելու համար. ուստի ինքզինք ջախջախել տալու համար, կ'ըսէր Միշէլ Արտան, յոյժ վատ կազմութիւն պէտք էր ունենալ:

Ռումբը դուրսէն ինն ոտնաչափ լայնութիւն և տասներկու ոտնաչափ բարձրութիւն ունէր: Որպէս զի նշանակեալ ծանրութիւնը չանցնի, չըջապատին հաստութիւնը քիչ մը պակսեցուցած և վարի կողմն ուժովցուցած էին, որ բիրտքսիլի բռնկելէն ծաւալեալ կազին բոլոր ուժգնութիւնը պիտի կրէր: Այսպէս կ'ընեն պայթուցիկ և գլանակոնաձեւ ռումբերուն համար, այսինքն տակի կողմը միշտ աւելի հաստ:



Այս մետաղեայ աշտարակին մէջ մտնելու համար նեղ ծակ մը կար կոնին շրջապատին մէջ բացուած, նման շոգեշարժ կատսաներու ծակին, որ ալիւմինիումէ տախտակով մը կը փակուէր և ներսէն զօրեղ պլատտակներով կը պնդուէր: Ուստի ուղեւորք կրնային ուղած ժամանակնին դուրս ելնել իրենց շարժական բանտէն, երբոր գիշերային աստղին մէջ հասնէին:

Բայց ումբակաւորին մէջ նստելով երթալը բաւական չէր. պէտք էր նաեւ ճանքան տեսնել: Այս ալ ամենադժուրին բան մ'էր: Ուումբին մէջը սլատոյ զսպանակաւոր մետաքսեայ բարձին տակ ոսպնածեւ հաստ ապակիէ կըր ծակեր կային, երկուքը ուումբին շրջապատին մէջ, երրորդ մը ստորին մասին մէջ, չորրորդ մ'ալ կոնտածեւ գլխարկին մէջ: Այսպէս ուղեւորք կարող կը լինէին իրենց ուղեւորութեան միջոցին դիտել երկիրն՝ յորմէ կը մեկնէին, լուսինն՝ որում կը մատենային, և երկնից աստեղազարդ միջոցը: Միայն թէ այս ապակեայ փոքրիկ պատուհաններն հակահարուածին բախուսէն պահպանուած էին ամրապէս ագուցեալ տախտակներով, զորս դիւրին էր դուրս ձգել ներսէն պտուտակները քակելով: Այս կերպիւ ուումբին մէջ պարփակեալ օդը չէր կրնար փակուիլ, և գիտողութիւնք հնարաւոր կը լինէին:

Այս ամեն ճարտարարուեստ կազմածք, սքանչելապէս զետեղեալ, ամենամեծ դիւրութեամբ կը ծառայէին իրենց նպատակին, և ճարտարագէտք ոչ նուազ հանճարով ումբակաւորին ամեն պիտոյքն հոգացած էին:

Ամրապէս զետեղուած ընդունարաններ՝ երեք ուղեւորաց պէտք եղած պարէնն ու ջուրը պահելու սահմանուած էին. մինչեւ իսկ ուղեւորք կրնային հուր և լոյս ունենալ յատուկ ընդունարանի մը մէջ մթերեալ կազի միջոցաւ՝ քանի մը մթնոլորտներու ճնշման ներքեւ: Բաւական էր ծորակ մը դարձունել, և կազը

վեց օր շարունակ պիտի լուսաւորէր ու տաքցնէր այս հանգստաւէտ ումբակաւորք: Կը տեսնուի ահա թէ կենաց և մինչեւ իսկ բարեկեցութեան հարկաւոր եղող բան մը չէր պակսեր: Եւ որ առաւելն է: Միշէլ Արտանի բնագրմանց շնորհիւ, հաճոյականն ալ եկաւ օգտակարին հետ միացաւ գեղարուեստական նիւթոց ձեւին տակ: Արտան իւր ուումբը գեղարուեստագէտի ճշմարիտ դործարան մը պիտի ընէր՝ եթէ քիչ մ'ընդարձակ տեղ ունենար:

Մնաց որ կը սխալին ընթերցողք՝ եթէ կարծեն թէ երեք ուղեւորք պիտի նեղուէին այս մետաղեայ աշտարակին մէջ: Թիտուն և չորս քառակուսի ոտնաչափի մօտ մակերեւոյթ մ'ունէր՝ տասն ոտնաչափ բարձրութեան վրայ, որով մէջի հիւրերը շարժելու բաւական ազատութիւն կունենային, այնպէս որ Միացեալ-Նահանգաց ամենէն ընտիր շոգեշարժ կաւքին մէջ այնչափ հանգիստ չէին կրնար լինել:

Պարէնի և լուսոյ խնդիրը լուծուելէ յետոյ, կը մնար օդի խնդիրը: Յայտնի է որ ուումբին մէջ պարփակեալ օդը չորս օր չէր բաւեր ուղեւորաց շնչառութեան. մէն մի մարդ, հարիւր լիտր օդի մէջ գլանուած բոլոր թթուածինը գրեթէ մէկ ժամու մէջ կըսպառէ: Պարպիքէյն, իւր երկու ընկերք, և երկու շունք զորս հետը տանելու մտադիր էր, քսան և չորս ժամու մէջ երկու հազար չորս հարիւր լիտր օդի մէջ գանուած կամ գրեթէ եօթն լիպրա ծանրութեամբ թթուածին պիտի սպառէին: Ուրեմն ուումբին մէջի օդը նորոգել պէտք էր: Ի՞նչպէս: Ամենապարզ միջոցով մը. այն է Տ. Տ. Բէյլէթի և Ուէնեյի հնարած եղանակաւ, զոր Միշէլ Արտան Միթինկին վիճարանութեան միջոցին ցոյց տուած էր:

Գիտեն ընթերցողք թէ օդը կը բաղկանայ գլխաւորապէս քսան և մէկ մաս թթուածինէ և եօթանա-



սուն և ինն մաս բորակածինէ : Արդ ի՞նչ կը կատարուի շնչառական գործողութեան մէջ : Ամենապարզ երեւոյթ մը : Մարդիկ կը ծծեն օդին մէջ գտնուած թթուածինն, որ կեանքը պահելու հական յատկութիւնն ունի, և դուրս կը ձգեն ամբողջ բորակածինն : Արտաշնչեալ օդն իւր թթուածինին հարիւրին հինգին մօտը կորուսած է և այն ժամանակ գրեթէ նոյն քանակութեամբ ածխածին կը պարունակէ, որ ներշնչեալ թթուածինն զօրութեամբ արեան ատրերաց այրելուն վերջնական արտադրութիւնն է : Ուրեմն գոց միջավայրի մը մէջ, օդին բոլոր թթուածինը ժամանակէ մը յետոյ կ'սպառի և անոր տեղ ածխածին թուն կ'անցնի, որ հապէս մահաբեր կազմ'է :

Այն ժամանակ խնդիրն հոս կը յանդիւրանա բորակածինն ամբողջ մնալով, 1° ձծուած թթուածինը վերաշինել, 2° արտաշնչեալ ածխածինն ջնջել : Այս ալ ամենադժուարն է բնական մ'է բոթասի քլորատին և կիզիչ բոթասին միջոցաւ :

Բոթասի քլորատն ազմ'է ճերմակ շիւղերու ձեւով. երբոր չորս հարիւր աստիճանէն բարձր ջերմութեան հասնի, բոթասիումի քլորիւրի կը փոխուի, և պարունակած թթուածինն ամբողջապէս դուրս կելնէ մէջէն : Արդ՝ տասնևութ լիպրա բոթասի քլորատն եօթն լիպրա թթուածին կուտայ, որ է մեր ուղեւորաց քսան և չորս ժամու մէջ հարկաւոր եղած քանակութիւնը :

Իսկ կիզիչ բոթասն յոյժ սիրող է օդին հետ խառնուած ածխածինի, և բաւական է յուզել զայն, որպէս զի զայն ծծելով բոթասի երկբնածխաս կը ձեւացնէ : Ասով ալ ածխածինն կը ջնջուի :

Այս երկու միջոցները զուգադրելով՝ ապականեալ օդն իւր կենդանարար վիճակին վերադարձնելու տարակոյս չկար : Ահա ասոր փորձն ըրած էին յաջողութեամբ Տ. Տ. Բէյքէթ և Բէնեոյ քիմիագէտք :

Բայց պէտք է ըսել, թէ փորձը մինչեւ այն ժամանակ անասուններու վրայ եղած էր : Ինչ որ ալ լինէր փորձին գիտնական ճշդութիւնը, մարդոց վրայ ունենալիք ազդեցութիւնը դեռ բացարձակապէս անծանօթ էր :

Այս դիտողութիւնն եղաւ ոյն նստին մէջ, ուր այս կարեւոր խնդրոյն վրայ խօսուեցաւ : Միշէլ Արտան չէր ուզեր բնաւ կասկած ունենալ այս արուեստական օդի միջոցաւ ապրելու հնարաւորութեան վերայ, և առաջարկեց ճանբայ ելնելէ առաջ փորձ մ'ընել : Բայց այս փորձն ընելու պատիւը Ժ. Թ. Մասթոն պահանջեց ամենայն զօրութեամբ :

« Որովհետեւ ձեզ հետ չպիտի երթամ, ըսաւ, այս քաջ թնդանօթածիղբը, դոնէ ութ օր մը բնակիմ այդ ուումբին մէջ : »

Այսպիսի խնդիր մը զլանալն անպատեհ պիտի լինէր, ուստի ընդունուեցաւ : Բաւական քանակութեամբ բոթասի քլորատ և կիզիչ բոթաս գրուեցաւ ումբին մէջ հանդերձ ութօրեայ նպարով. յետոյ նոյեմբեր 12ին, ժամն առաւօտեան Յին (կէս օրէն 6 ժամ առաջ), Ժ. Թ. Մասթոն իւր բարեկամաց ձեռքը սեղմելով, և յատկապէս պատուիրելով որ նոյեմբեր 20ին օրն իրիկուան ժամը Յէն առաջ իւր բանտը չը բանան, սպրդեցաւ ումբին մէջ, որոյ խուփն ամրապէս փակեցաւ :

Ինչ անցաւ ումբին մէջ այն ութ օրն, անհնարին է ըսել. ումբին շրջապատին հաստութիւնը չէր թողուր որ ներսէն ձայն մ'երնէր դուրս :

Նոյեմբեր 20ին ժամը ճիշդ Յին խուփը բացուեցաւ : Ժ. Թ. Մասթոնի բարեկամները քիչ մ'անհանդիստ էին անոր համար, բայց շուտով սիրտերնին հանդարտեցաւ. երբոր լսեցին անոր ուրախական ձայնն որ զարհուրելի հուրա՛ մը կ'արձակէր :



Իսկոյն կըն-ֆլիւպի քարտուղարը կոնին գագաթն երեւցաւ յաղթական դիրքով մը :

Գիրքեր էր :

ԳԼՈՒԽ ԻԴ.

ԱՊՍՏՈՒԱԺՈՒՏ ԼԵՐԱՆՑ ՀԵՌԱԴԻՏԱԿԸ

— 0 —

Նախընթաց տարւոյն հոկտեմբեր 20 ին, հանգա նակութեան փակուելէն յետոյ, կըն-ֆլիւպի նախագահը տեսողական ընդարձակ գործիք մը շինելու համար պէտք եղած գումարները ֆէմպրիճի դիտարանին տրամադրութեան ներքեւ դրած էր : Այս գործիք, դիտակ կամ հեռացոյց, բաւական զօրեղ պիտի լինէր, որպէս զի Լուսնի մակերեւոյթին վրայ տեսանելի ընէր առ առաւելն ինն ոտնաչափ լայնութիւն ու նեցող առարկայ մը :

Գիտակին ու հեռացոյցին միջեւ կարեւոր տարբերութիւն մը կայ, զոր լաւ կը լինի յիշեցնել հոս : Գիտակը կը կազմուի փողէ մը, որոյ վերին ծայրն ոսպնածեւ կորընթարդ ապակի մը կայ, որ Առարկական կը կոչուի, և վարի ծայրն ալ երկրորդ ոսպնածեւ ապակի մը կայ, Աչամերձ կոչուած, որուն կը դնէ դիտողն իւր աչքը : Լուսաւոր առարկայէն ելած շառաւիղներն առաջին ապակիէն անցնելով կերթան բեկբեկմամբ գլխիվայր պատկեր մը կը ձեւացնեն անոր փառարանին (\*) մէջ : Այս պատկերն աչամերձէն կը դիտուի, որ զայն կը մեծցնէ՝ ինչպէս խոշորացոյցը : Ուստի դիտակին փողըն երկու ծայրերէն փակուած է առարկականով և աչամերձով :

(\*) Այն կէտն, ուր լուսաւոր շառաւիղները բեկբեկուելէ յետոյ կը միանան :

Իսկ հեռացոյցին փողն՝ ընդհակառակն՝ բաց է վերի ծայրէն : Գիտուած առարկայէն ելած շառաւիղներն ազատութեամբ կը թափանցեն անոր մէջ և կերթան կը զարնեն մետաղեայ գողաձեւ այսինքն համակէտ հայելոյ մը : Անկից այն ցոյացեալ շառաւիղները փոքրիկ հայելոյ մը կը հանդիպին, որ զանոնք աչամերձ ապակիին կը զրկէ, որ ձեւացեալ պատկերը խոշորցնելու կերպիւ տրամադրեալ է :

Այսպէս դիտակներուն մէջ բեկբեկումը գլխաւոր դերը կը խաղայ, իսկ հեռացոյցներուն մէջ ցոլացումը : Այս պատճառաւ է որ առաջինները բեկբեկիչ կը կոչուին և վերջինները Յոլացուցիչ : Այս տեսաբանական գործիքները շինելու բոլոր գիտարութիւնն առարկականաց յօրինման մէջ է, թէ՛ ապակիներէ շինուին և թէ՛ մետաղեայ հայելիներէ :

Սակայն, այն ժամանակ, երբ կըն-ֆլիւպն իւր մեծ փորձն ըրաւ, այս գործիքները զարմանալի կերպիւ կատարելագործուած էին, և դերադանց արդիւնք կուտային : Հեռի էր այն ժամանակն, ուր Գալիլէոս աստղերն իւր խեղճուկ դիտակովը կը դիտէր, որ առաւելն եօթնապատիկ կը մեծցնէր առարկաները : Վեշտասաներորդ դարէն ի վեր, տեսաբանական գործիքները մեծապէս լայնցան ու երկնցան, և թոյլ տուին աստղական միջոցները չափել մինչև այն ժամանակ անձանթ խորութեամբ : Այն ժամանակները գործածուած բեկբեկիչ գործեաց մէջ նշանաւոր էին Բուլքովայի (Ռուսիա) դիտարանին դիտակն, որուն առարկականը տասներեւից մասնաչափ լայնութիւն ունէր, Ֆրանսացի Լըրուպուր դիտակագործին շինած դիտակն, որ հաւասար մեծութեամբ առարկական մ'ունէր, և վերջապէս ֆէմպրիճի դիտարանին դիտակն, որոյ առարկականը տասներեւինն մասնաչափ տրամադրիւ ունէր :



Հեռացոյցներու մէջ, երկուք միայն ծանօթ էին իրենց անհեթեթ մեծութեամբ և նշանաւոր զօրութեամբ: Առաջինն էր, Հէրշէլի շինածն, երեսուն և վեց ոտք երկայնութեամբ, որ չորս ու կէս ոտնաչափ լայն հայելի մ'ունէր, և կրնար դիտելի առարկաները վեց հազար-պատիկ խոշորցնել: Երկրորդն էր Լորտ Ռոսի հեռացոյցն, որ իրլանտայի Բարսօնսթաուն քաղաքին ծառաստանին մէջ դրուած էր, և որոյ փողը քառսունեւութ ոտք երկայնութիւն և հայելին վեց ոտնաչափ լայնութիւն ունէր: Գիտուած առարկաները վեց հազար չորս հարիւր-պատիկ կը խոշորցնէր: Սոյն հեռացոյցը քսան և ութ հազար լիպրա ծանրութիւն ունէր, և յատուկ մեքենայներու միջոցաւ կը գործածուէր, որոց ղետեղման համար քարուկիր մեծ շէնք մը կառուցանել հարկ եղած էր:

Բայց, ինչպէս կը տեսնուի, այս տարապայման մեծութեան հակառակ, ձեռք բերուած խոշորացումը կը թուով վեց հազար-պատիկը չէր անցներ. արդ, այսչափ խոշորացում մինչեւ երեսուն և ինն մղոն կըրնայ մօտեցնել Լուսինն, հետեւաբար առ նուազն վաթսուն ոտք տրամագիծ ունեցող առարկաները միայն կրնայ ցուցնել, եթէ շատ երկայն չլինին:

Արդ, մեր դիտելի առարկայն ինն ոտք լայնութեամբ և տասնեւհինգ ոտք երկայնութեամբ ուսմբ մ'էր. հարկ էր ուրեմն Լուսինը գո'նէ մինչեւ հինգ մղոն մօտ բերել, և ասոր համար քառսունեւութ հազար-պատիկ խոշորցնել:

Այս էր ահա Քէմպրիճի դիտարանին առաջարկեալ խնդիրը: Գրամական դժուարութիւնք արդելք չէին կրնար լինել այս խնդրոյն լուծման, ուստի կը մնային նիւթական դժուարութիւնք:

Եւ նախ պէտք եղաւ ընտրութիւն ընել ընդ մէջ հեռացոյցին և դիտակին: Գիտակն առաւելութիւն

ներ ունի հեռացոյցին վրայ: Հաւասարաչափ առարկականներով աւելի մեծ խոշորացում կրնայ ձեռք բերել տալ, որովհետեւ ապակիներէն անցնող լուսաւոր շառաւիղք՝ նուազ կը կորսնցնեն ծծմամբ, քան հեռացոյցին մետաղեայ հայելոյն վրայ ցոյցցմամբ: Բայց ապակիի մը տրուելիք հաստութիւնը սահմանաւոր է, վասն զի երբոր խիստ հաստ լինի, լուսաւոր շառաւիղները չեն կրնար թափանցել: Ասկէ զատ, այդ լայն ապակիներուն շինուիլը վերջին ժայր դժուարին է, և երկար ժամանակ կը պահանջէ, որ տարիներով կը չափուի:

Ուրեմն, թէ և պատկերներն աւելի լաւ կը լուսաւորուին դիտակաց մէջ, և այս ալ անգին առաւելութիւն մ'է Լուսինը դիտելու համար, որոյ լոյսը պարզապէս կը ցոյանայ, որոշուեցաւ հեռացոյց գործածել, որ աւելի շուտ կրնայ շինուիլ և աւելի մեծ խոշորացում ձեռք բերել տալ: Միայն թէ, որովհետեւ լուսաւոր շառաւիղները՝ մթնոլորտէն անցած ժամանակ՝ իրենց զօրութիւնը մեծ մասամբ կը կորսնցնեն, կըն-ֆլիւպն որոշեց իւր դիտակը Միացեալ-Նահանգաց ամենաբարձր լեռներէն միոյն վրայ զետեղել, որով օդային խաւերուն թանձրութիւնը նւազի:

Հեռացոյցներուն մէջ, ինչպէս տեսնուեցաւ, աչաւ մերձն, այսինքն դիտողին աչքին դրուած խոշորացոյցը, խոշորացում կ'արտադրէ, և այն առարկականն. որ ամենէն մեծ խոշորացումները կը կրէ, ամենամեծ տրամագիծ և տեղական ամենամեծ հեռաւորութիւն ունեցողն է: Քառսուն և ութ հազար անգամ խոշորցնելու համար՝ պէտք էր զարմանալի կերպիւ գերազանցել Հէրշէլի և Լորտ Ռոսի առարկականներուն մեծութիւնը: Հոն էր դժուարութիւնը, վասն զի այդ հայելիներուն ձուլումը խիստ դժուարին գործողութիւն մ'է:



Բարերազգութեամբ, քանի մը տարի առաջ Ֆրանսայի գիտութեանց ճեմարանին գիտնական անդամներէն լէոն ֆուբոյ՝ եղանակ մը հնարած էր, որ մեծ դիւրութիւն ու արագութիւն կուտար առարկականներուն յղկման, մետաղեայ հայելիին տեղ արծաթազօծ հայելիներ դնելով։ Ասոր համար բուական էր ապակիի կտոր մը թափել ուղուած մեծութեամբ և ապա մետաղացնել զայն արծաթի աղով, Այս գերազանց արդիւնք տուող եղանակն էր որ ընդունուեցաւ առարկականին շինութեան համար։

Ասկէջ զատ, առարկականն՝ իւր հեռացոյցներուն համար Հէրշելի խորհած մեթոտին համեմատ յարդարեցաւ։ Սլուցի աստղագէտին շինած մեծ գործիքին մէջ առարկայից պատկերը, փողին տակը ծռած հայելիէն ցոլանալով, կուգար կը ձեւանար անոր միւս ծայրն, ուր զետեղուած էր աչամերձն։ Այսպէս դիտողը՝ փոխանակ փողին վարի կողմը կենալու, անոր վերի մասը կ'եղնէր, և անդ, իւր խոշորացոյցն ի ձեռին, կը մտնէր ահագին գլանին մէջ։ Այս եղանակին առաւելութիւնն էր ջնջել այն փոքր հայելին, որ պատկերն աչամերձին յղելու սահմանեալ էր։ Այն ժամանակ այս վերջինը՝ փոխանակ երկուքի՝ մէկ ցոլացում կը կրէր։ Ուրեմն, աւելի քիչ լուսեղէն շառաւիղք կային մարած. ուրեմն պատկերը նուազ տկարացեալ էր. ուրեմն, վերջապէս, աւելի պայծառութիւն ձեռք կը բերուէր, որ անգին առաւելութիւն մ'էր կատարուելէ գիտութեան մէջ։

Այս որոշումները լինելէ յետոյ՝ աշխատութիւնը սկսան։ Քէմպրիձի գիտարանին հաշիւներուն նայելով, նոր ցոլացուցչին փողը պիտի ունենար երկու հարիւր ութսուն ոտք երկայնութիւն, և իւր հայելին տասն և վեց ոտք տրամագիծ։ Այսպիսի գիտակ մը, որչափ և վիթխարի լինէր, չէր կրնար բաղբատուիլ այն տասն

հազար ոտք երկայնութիւն ունեցող հեռացոյցին հետ, զոր հուք աստղագէտը կ'առաջարկէր ասկէց քանի մը տարի առաջ. Այսու ամենայնիւ, այսպիսի գործիք մը զետեղելը մեծամեծ դժուարութեանց ենթակայ էր։ Իսկ հեռացոյցը զետեղելու տեղին գալով, այս խնդիրը շուտ լուծուեցաւ։ Բարձր լեռ մ'ընտրել հարկ էր, և բարձր լեռինք ալ շատ չեն Միութեան Նահանգաց մէջ։

Արդարեւ այդ մեծ երկրին լեռնագրական գրութիւնն երկու լեռնագօտի միայն կը պարունակէ միջակ բարձրութեամբ, որոց մէջէն կը հոսէ այն մեծաչուք Միսիսիբին, զոր Ամերիկացիք «թագաւոր գետոց» պիտի անուանէին՝ եթէ որ և է թագաւորութիւն մը ընդունէին։

Արեւելեան կողմն Աբալայ լեռներն են, որոց ամենաբարձր կատարը, Նիւ-Համբչայրի մէջ, հինգ հազար վեց հարիւր ոտնաչափը չանցնիր, որ յոյժ համեստ բարձրութիւն մ'է։

Արեւմտեան կողմն, ընդհակառակն, Սպառաժուտ կոչուած լեռներն են, անհուն գօտի մը, որ Մաճէլլանի նեղուցէն կ'սկսի, հարաւային Ամերիկայի արեւմրտեան ծովեզրէն կը շարունակէ Սնտէս կամ Բորտիլէր անուամբ։ Բանամայի պարանոցը կ'անցնի, և Հիւսիսային Ամերիկայի մէջէն կ'երթայ կը հասնի մինչեւ բելեռային ծովուն եզերքն։

Այս լեռներն յոյժ բարձր չեն. Ալպեան լեռները կամ Հիմալայա՝ գոռող արհամարհանօք կը նային ասոնց վրայ իրենց մեծութեան բարձրութենէն։ Արդարեւ, ասոնց ամենաբարձր կատարը տասն հազար եօթն հարիւր մէկ ոտք է, մինչդեռ Մօն Պլան (Ալպեան) հարիւր մէկ ոտք է, մինչդեռ Մօն Պլան (Ալպեան) լեռը տասնեւչորս հազար չորս հարիւր երսուն և ինն ոտք բարձրութիւն ունի, և Քինչինտօթինկա (Հիմալայայի ամենաբարձր կատարը) քսան և վեց հազար եօթն



հարիւր եօթանասուն և վեց ոտք բարձրութիւն ունի ծովու մակերեւութէն :

Բայց որովհետեւ կըն-ֆիւսպ կ'ուզէր որ հեռացոյցն, ինչպէս նաեւ Քոյումպիատ, Միւթեան նահանգաց մէջ զետեղին, հարկ եղաւ գոհ լինիլ Ապառաժուտ լեռներով, և ամեն հարկաւոր նիւթերը լոն'ս Բիք լեռան գագաթը զրկուեցան Միսուրիի նահանգին մէջ :

Պատմել այն ամեն տեսակ դժուարութիւններն՝ որոց յաղթելու հարկադրեցան ամերիկացի երկրաչափք, յանդգնութեան ու ճարտարութեան սքանչելիքները, զորս կատարեցին, գրչով կամ խօսքով հընարին չէ : Ճշմարիտ մեծագործութիւն մ'էր : Անհեթեթ վէմեր, դարբնեալ ամենածանր հատորներ, սարսափելի ծանրութեամբ խողովակներ, գլանի լայն կտորներ, առարկական մը, որ միայնակ երեսուն հազար լիպրայի մօտ կը կշռէր, լեռան մշտնջենաւոր ձիւնով ծածկեալ սահմաններէն աւելի վեր հանել պէտք եղաւ, տասն հազար ոտքէն աւելի բարձրութիւն, յետ անցնելոյ ամացի դաշտեր, անթափանցելի անտառներ, դարհուրելի գահավէժներ, հեռի ժողովրդական կեդրոններէ, վայրենի երկիրներու մէջէ, ուր կենաց մէն մի մանրամասնութիւն գրեթէ անլուծանելի խնդիր մը կը դառնար : Եւ սակայն, ամերիկեան հանճարն յաղթեց այս հազար տեսակ խոչերուն : Աշխատութեանց սկսելէն ի վեր տարի մը չանցած, սեպտեմբեր ամսոյ վերջին օրերը, վիթխարի բեկբեկիչն օդին մէջ կը կանգնէր իւր երկու հարիւր ութսուն ստնաչափ փողը : Երկաթէ ահագին գերանէ մը կախուած էր. ճարտարարուեստ կազմած մը թոյլ կուտար դիւրութեամբ դարձունել զայն դէպի երկնից ամեն կողմն, և միջոցին մէջ ասաղեւրուն ընթացից հետեւիլ՝ մէկ հորիզոնէն միւսը :

Չորս հարիւր հազար տղարէն աւելի ծախքով ելած էր : Առաջին անգամ որ Լուսնի վրայ ուղղուեցաւ, դիտողք հետաքրքիր և միանգամայն տատամտ սրտայուզութիւն մ'զգացին : Ինչ պիտի դտնէին հեռացոյցին դաշտին մէջ, որ քառսուն և ութ հազար — պատիկ կը խոչորցնէր դիտեալ առարկայներն : Արդեօք Լուսնական ժողովուրդներ, կենդանեաց հօտեր, քաղաքներ, լիճեր, ովկիաններ : Ո՛չ, այլ միայն ինչ որ դիտութիւնն արդէն դիտէր, և սկաւառակին ամեն կէտերուն վրայ Լուսնի հրաբխային բնութիւնը կրցաւ ստուգուիլ բացարձակ ճշդութեամբ :

Բայց Ապառաժուտ լեռանց հեռացոյցը, կըն-ֆիւսպի ծառայելէ զատ, ամբաւ սպաս մատոյց աստղագիտութեան : Շնորհիւ անոր խորաթափանց զօրութեան, երկնից խորերը զննուեցան մինչեւ վերջին սահմանները, բազմաթիւ աստեղաց առերեւոյթ տրամագիծերը ճշդիւ չափուեցան, և ֆէմպրիճի դիտարանին անգամ Տ. Բլարք՝ Յուլի (համաստեղութիւն) խեցդետին տարբադադրեց, զոր Լորտ Ռոսի բեկբեկիչը չէր կրցած երբէք լուծել :

ԳԼՈՒԽ ԻԵ .

ՎԵՐՋԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՔ

Նոյեմբերի 22 ն էր : Վերջնական ուղեւորութիւնը տասն օր յետոյ պիտի կատարուէր : Միակ գործողութիւն մը կը մնար կատարելիք, անսահման նախազգուշութիւններ պահանջող փափուկ և վտանգաւոր գործողութիւն մը, որոյ յաջողութեան դէմ՝ Նիքոլ նաւապետն իւր վերջին գրաւը դրած էր : Այս գործողութիւնն էր՝ ֆոլումպիատը լցնել, չորս հարիւր



հազար լիպրա բամպակ-վառօղ մտցնելով անոր մէջ : նիքոլ մտածեր էր , գուցէ ոչ առանց իրաւանց , թէ այնչափ ահագին քանակութեամբ բամպակ-վառօղի գործածութիւնը ծանր վտանգներ կրնար պատճառել , և թէ այդչափ պայթուցիկ կոյտ մը կրնար ինքնին բռնկիլ ռումբին ճնշման ներքեւ :

Այս ծանր վտանգներն առաւել կը մեծնային Ամերիկացոց անհոգութեամբն ու թեթեւամտութեամբ , որք դաշնակցական պատերազմին ժամանակ գլանիկը (սիկար) բերաննին պայթուցիկ ռումբեր կը լցնէին : Բայց Պարպիքէյն ամեն ջան ի գործ կը դրնէր յաջողելու և նաւահանգստին մէջ չխրելու համար , ուստի իւր լաւագոյն գործաւորներն ընտրեց , և իւր աչաց առջեւ աշխատեցուց զանոնք , առանց վայրկեան մ'իւր տեսութենէն վրիպեցնելու , և այսպէս խոհեմութեամբ և նախազգուշութեամբք գիտցաւ իւր կողմը դնել յաջողութեան ամեն հաւանականութիւն :

Նախ բոլոր վառօղն Սթոն'ս Հիլի շրջափակը բերել շտուաւ , այլ մասն մասն ամրափակ արկղերու մէջ : Չորս հարիւր հազար լիպրա բամպակ-վառօղն հինգ հարիւր լիպրանոց ծրարներու բաժնուած էր , որ ութ հարիւր խոշոր փամփուշտ կ'ընէր՝ խնամով շինուած Բէնսաքոլայի ամենէն ճարտար հրարուեստիկներէ : Իւրաքանչիւր արկղ կրնար տասն փամփուշտ պարունակել , որք իրարու ետեւէ Սթոն'ս Հիլ կը հասնէին թամբա-թառուի երկաթուղիով . այս կերպիւ երբէք հինգ հազար լիպրայէն աւելի բամպակ-վառօղ միանգամայն չէր գտնուեր շրջափակին մէջ : Մէն մի արկղ հոն հասնելուն պէս կը պարպուէր բոկոսն պտըտող գործաւորաց ձեռամբ , և մէն մի փամփուշտ ֆոլում պիտաի բերանը կը փոխադրուէր , և խորդակներու միջոցաւ անոր մէջ կ'իջնէր :

Շողեչարժ մեքենայք հեռացած էին , և ամենադոյզն կրակները մարած էին մինչեւ երկու մղոն հեռի : Արդէն փոքր բան չէր այսչափ բամպակ-վառօղի կոյտն արեւուն տաքէն պահպանել մինչեւ իսկ նոյեմբեր ամսոյ մէջ : Ուստի գիշերը կ'աշխատէին՝ դատարկութեան մէջ արտադրեալ լուսով մը , որ Բիւհմբորֆի գործիքներու միջոցաւ արուեստական լոյս մը կը ծաւալէր մինչեւ Քոլումպիատին յատակը : Հոն փամփուշտները կատարեալ կանոնաւորութեամբ շարուած և իրարու կապուած էին մետաղեայ թելի մը միջոցաւ , որ ելեքտրական հուրը միահասոյն իւրաքանչիւրին կեդրոնը տանելու սահմանեալ էր :

Եւ արդարեւ ելեքտրական սիւնակի (բիլ) միջոցաւ կրակը պիտի հաղորդուէր այդ մեծաքանակ բամպակ-վառօղին . բոլոր թելերը զատուցիչ նիւթով մը պատած կուգային կը միանային նեղ ծակի մ'առջեւ , որ ռումբը դրուելու տեղոյն բարձրութեամբ ծակուած էր , և հոն ձոյլին հաստ պատուարին մէջէն անցնելով մինչեւ վերի գետինը կ'ելնէին այս նպատակաւ պահուած քարէ պատնէշին շնչահաններուն մէկուն մէջէն : Սթոն'ս Հիլի գագաթն հասնելէ յետոյ , թելը ձողերու վրայ առնուելով կ'երթար երկու մղոն հեռի Պունդէնի ելեքտրական զօրեզ սիւնակի մը կը կցուէր՝ ընդմիջիչ գործիքի մը մէջէ անցնելով : Ուստի բաւական էր մատով կոխել այն գործիքին կոճակն , որպէս զի հոսանքն անմիջապէս հաստատուէր և չորս հարիւր հազար լիպրա բամպակ-վառօղ բռնկցնէր : Աւերորդ է ըսել թէ ելեքտրական սիւնակը վերջին վայրկենին միայն պիտի գործէր :

Նոյեմբեր 28 ին , ութ հարիւր փամփուշտները պատրաստ դրուած էին ֆոլումպիատին յատակն , և գործողութեան այս մասն յաջողած էր : Բայց սրչափ անհանգստութիւն , սրտատանջութիւն , կռիւ և տագ-



նապ կրած էր Պարպիքէյն : Ի զուր արգելքեր էր Սթոն՝ս  
 Հիլի մուտքն : Ամեն օր հետաքրքիր մարդիկ ցցապատ-  
 նէչներուն վրայէն կ'անցնէին, և ոմանք՝ անխոհեմու-  
 թիւնը մինչեւ ի յիմարութիւն հասցնելով՝ կուգային  
 կը ծխէին բամպակ-վառօղի հակերուն քով : Պարպի-  
 քէյն ամեն օր զայրութի մէջ էր : Ժ. Թ. Մասթոն կըը-  
 ցածին չափ կ'օգնէր անոր, ուժգնապէս հալածելով  
 այդ ինքնամուտներն, և հաւաքելով դեռ վառած գը-  
 լանիկներու ծայրերը, զորս Եանքիներն ասդին անդին  
 կը նետէին : Դժնդակ աշխատութիւն . վասն զի երեք  
 հարիւր հազարէն աւելի անձինք կը խռնէին ցցապատ-  
 նէչներուն շուրջը : Միշէլ Արտան առաջարկած էր ու-  
 ղեկցել արկղներուն մինչեւ ֆոլումպիատի բերանը,  
 բայց Պարպիքէյն զայն ալ բռնեց խոշոր գլանիկ մը  
 բերանը, որով հալածել ուզած անխոհեմներուն ինքը  
 չար օրինակ կուտար . հասկցաւ որ չէր կրնար  
 վստահութիւն դնել այս յանդուգն ծխողին վրայ, և  
 պարտաւորեցաւ զայն ալ հսկողութեան ենթարկել :

Վերջապէս, որովհետեւ յատուկ Աստուած մը կայ  
 թնդանօթածիգներուն համար, բնաւ պայթիւն մը չը-  
 պատահեցաւ, և ֆոլումպիատն յաջողութեամբ լըց-  
 ուեցաւ : Հետեւաբար Նիքոլ նաւապետն իւր երրորդ-  
 գրան ալ կորսնցուց : Կը մնար ուումը ֆոլումպիատին  
 մէջ մտցունել և բամպակ-վառօղին ստուար շեղակոյ-  
 տին վրայ զետեղել :

Բայց, այս գործողութեան ձեռնարկելէ առաջ,  
 ումբակառքին մէջ կարկաւ զետեղուեցան ուղեւորու-  
 թեան հարկաւոր եղած նիւթերը, որք բաւական բաղ-  
 մաթիւ էին. և եթէ գործը Միշէլ Արտանի մնար, տա-  
 կաւին այնչափ բան պիտի լցնէր, որ ուղեւորներուն նըս-  
 տելու տեղ չպիտի մնար : Կարելի չէ երեւակայել թէ այդ  
 սիրուն ֆրանսացիին ինչե՞ր տանել կ'ուզէր լուսնին մէջ,  
 Շատ մը անօգուտ բաներ : Բայց Պարպիքէյն չթողուց :

և միայն ամենահարկաւորներն առնուեցան : Քանի մը  
 ջերմաչափներ, օդաչափներ և դիտակներ դրուեցան  
 գործիքներուն արկղին մէջ : Ուղեւորք հետաքրքրու-  
 թիւն ունէին գնացած ժամանակին լուսնը դիտե-  
 լու, և այդ նոր աշխարհին ծանօթութիւնը դիւրացը-  
 նելու համար՝ Պիր և Մէտլէրի ընտիր քարտէս մը կը  
 տանէին Աւստրալիոյ Լոնտոնի կողմ : որ չորս  
 տախտակի վրայ տպուած էր, և իրաւամբ ճշմարիտ  
 գլուխ գործոց մը կը համարուի հետազննութեան և  
 համբերութեան : Խղճամիտ ճշգրութեամբ կը նկարագ-  
 րէր Լուսնին դէպ յաշխարհ դարձած մասին ամենա-  
 փոքր մանրամասնութիւնները . լեռներ, ձորեր, կըը-  
 կէսներ, մարած հրաբուխի բերաններ, խոռոչներ եւ-  
 այլն կը տեսնուէին անդ իրենց ճիշդ ձեւերով, գիր-  
 քով, իրենց անուամբ, Տէրովէլ և Լէյպնից լեռներէն  
 սկսեալ, որոց բարձր կատարը ցցուած է սկաւառակին  
 արեւելեան մասին մէջ, մինչեւ Մուէ Թընիւրե, որ հիւ-  
 սիային շրջաբեւեռեան սահմաններուն մէջ կը տարա-  
 ծի : Վերջապէս թանկագին գործ մ'էր ուղեւորաց  
 համար, վասն զի երկրին մէջ ոտք չկոխած՝ կրնային  
 կատարելապէս ծանօթանալ անոր :

Կը տանէին նաեւ երեք կարճ և երեք որսի հրա-  
 ցան, պայթուցիկ ուումբերով, և ասոնց հետ մեծա-  
 քանակ վառօղ և կապար :

« Չեմք գիտեր թէ որո՞ւ հետ գործ պիտի ունե-  
 նամք, կ'ըսէր Միշէլ Արտան : Մարդիկ կամ գազանք  
 կրնան դժգոհ լինիլ մեր այցելութենէն . ուստի պար-  
 տիմք նախազգուշական միջոցներ ձեռք առնուլ : »

Մնաց որ, անձնական պաշտպանութեան գործեաց  
 հետ կային մուրճեր, բրիչներ, սղոցներ և այլ ան-  
 հրաժեշտ գործիներ, առանց յիշելու ամեն եղանա-  
 կաց յարմար զգեստներ, բուռեային կողմանց սաս-  
 աիկ ցուրտէն սկսեալ մինչեւ այրեցեալ գօտիի տա-  
 քերուն համար պէտք եղածները :



Միշէլ Արտան կուզէր բաւական թուով կենդանիներ ալ տանիլ հետ, ոչ թէ ամեն տեսակներէն մէկ մէկ գոյգ, վասն զի հարկ չէր տեսներ լուսնին մէջ ընդերայնել օձերը, վագրերը, մշկատիտեռներն և այլ մնասակար կենդանիները:

«Ո՛չ, կ'ըսէր Պարպիքէյնի, բայց քանի մը բեռնաբարձ կենդանիներ, եղն, կով, էջ կամ ձի, լաւ զարդ մը կը լինին լուսնի գաշտերուն, մեզ ալ մեծապէս օգտակար»:»

— Շատ լաւ, սիրելի՛ Արտան, կը պատասխանէր կընթիւպի նախագահը, բայց մեր ունիւնքը նոյն նահապետին տապանը չէ: Ո՛չ անոր մեծութիւնն ունի, ոչ նպատակը, ուստի հնարաւորին սահմաններէն դուրս չեղնեմք:

Վերջապէս, երկար վիճաբանութիւններէ յետոյ որոշուեցաւ որ ուղեւորը ընտիր բարակ (որսի շուն) մը տանին որ Նիքոլ նաւապետինն էր, և թէր-Նեօլի վիթխարի և հուժկու գամբռ մը: Քանի մը անտուկ ամենօգտակար սերմանիք անհրաժեշտ նիւթոց կարգը դրուեցան: Եթէ Միշէլ Արտանի մնար, քանի մը պարկ ալ հոյ կը տանէր, զանոնք հոն ցանելու համար: Բայց վերջապէս տասներկուքի չափ մանր ծառեր առաւ, զորս յարգէ պատեանի մը մէջ փաթթեցին խնամով և ուումբին մէկ անկիւնը դրին:

Կը մնար պարէնի կարեւոր խնդիրը, վասն զի հարկ էր նախատեսել այն պարագայն, ուր ունիւնքը լուսնին բացարձակապէս չոր ու անբեր մէկ կողմը մատչէր: Պարպիքէյն այնպէս լաւ կարգադրեց, որ կրցաւ մէկ տարուան համար նպար առնուլ: Բայց ընթերցողները չզարմացնելու համար պէտք է յաւելուլ թէ նպարը կը բաղկանային մնի և ընդեզէնի պահածոյներէ, որ ջրաբաշխական մամոյ միջոցաւ իրենց ամենապարզ քանակութեան վերածուած էին և

մեծաքանակ սնուցիչ տարր կը պարունակէին: Տեսակնին շատ չէր, բայց այսպիսի ուղեւորութեան մը մէջ դժուարահաս զէտք չէր լինիլ: Կար նաեւ օղոյ պահեստ մը, որ յիսուն կալոնի կրնար հասնիլ, և ջուր երկու ամոյ համար միայն: Արդարեւ աստղագիտաց վերջին դիտողութիւններուն վրայ ոչ ոք կ'երկբայէր թէ լուսնի մակերեւութին վրայ բաւական քանակութեամբ ջուր կը գտնուէր: Իսկ ուտեստի մասին, անմտութիւն էր կարծել թէ երկրի բնակիչը չպիտի կրնային ուտելիք գտնել լուսնին մէջ: Միշէլ Արտան բնաւ կասկած չունէր այս մասին: Եթէ ունենար, յանձն չէր առնուր այս ուղեւորութիւն:

— Անշուշտ, ըսաւ օր մը իւր բարեկամաց, մեր երկրաբնակ ընկերք մեզ չպիտի լքանեն, և չմոռնալու փոյթ պիտի ունենան:

— Անշուշտ, պատասխանեց Ժ. Թ. Մասթոն:

— Ի՞նչպէս, հարցուց Նիքոլ:

— Ամենապարզ բան մ'է, պատասխանեց Արտան: Միթէ ֆուլումպիատը միշտ հոս չէ՞: Արդ՝ ամեն անգամ որ լուսնին եթէ ոչ երկրամերձի՛ գոնէ դադաթնակէտի նպաստաւոր պայմաններու մէջ ներկայանայ, այսինքն գրեթէ տարին միանգամ, միթէ կարելի չէ՞ նպարով լի ուումբեր զրկել մեզ, որոց պիտի սպասեմք սահմանեալ աւուրց մէջ:

Հուրրա՛, հուրրա՛, գոչեց Ժ. Թ. Մասթոն, իբրեւ մարդ մը, որ իւր գաղափարն ունի, շատ աղէկ ըսեք: Անշուշտ, քա՛ջ բարեկամք, ձեզ չպիտի մոռնամք:

— Վստահ եմ: Կը տեսնէք ահա, որ մեք կանոնաւորապէս լուր պիտի ստանամք երկրագունտէս, և մեր մասին՝ յոյժ ապիկար մարդիկ պիտի լինիմք եթէ հնար մը չգտնեմք հաղորդակցելու մեր երկրաբնակ բարեկամաց հետ:

Այս խօսքերն այնչափ վստահութիւն ազդեցին,



որ Միշէլ Արտան իւր անվեհեր դէմքով և իւր խորխա համարձակութեամբ բոլոր կըն-Քլիւպը կընար իւր և տուէն տանիլ : Ըսածը պարզ , տարրական , դիւրին և անվերապելի կ'երեւէր , և պէտք էր արդարեւ որ մէկն յոյժ գծուծ կերպիւ յարած լինէր այս հողէ ու ջուրէ բաղադրեալ երկրագունտիս , որպէս զի չուզէր հետեւիլ երեք ուղեւորաց Լուսնական արշաւանքին :

Երբոր այս ամեն այլ և այլ նիւթերը զետեղուեցան ռումբին մէջ , զսպանակ լինելու սահմանեալ ջուրն անոր միջնորմներուն մէջ մտցուցին , և լուսաւորութեան կազն ալ իւր ընդունարանին մէջ փակեցին : Պարպիքէյն մտածելով որ անակնկալ դէպքեր կընային ուղեւորութիւնն երկարել , երկու ամիս շարունակ թըթուածինը նորոգելու և ամխաթթուն ծծելու համար պէտք եղած քանակութեամբ բոթասի բլորատ և կիզիչ բոթաս առաւ : Ճարտարարուեստ ինքնաշարժ մեքենայ մը՝ օդը կենդանացնելու և կատարելապէս մաքրելու կը ծառայէր : Ուստի ռումբը պատրաստ էր , և Քոլումպիատին մէջ իջուցնելէ զատ ուրիշ գործ մնացած չէր . գործողութիւն մը , որ լի էր դժուարութեամբ և վտանգներով :

Ահագին ռումբն Սթոն'ս-Հիլի գագաթը հանուեցաւ , և հոն հզօր մեքենաներ գայն վերցուցին և մետաղեայ հորին վրայ կախեալ բռնեցին :

Տագնապալից վայրկեան մ'էր այս , եթէ շղթայները ռումբին անհեղ ծանրութեանը չբիմանալով խըզէին , այնպիսի սարսափելի ծանրութեան մ'անկումն անշուշտ կը բռնկցնէր բամպակ-վառօդը :

Բարեբաղդաբար այսպիսի վտրձութիւն մը չպատահեցաւ , և քանի մը ժամ՝ յետոյ ռմբախառքը մեղմիւ թնդանօթի վողին մէջ իջնելով՝ բամպակ-վառօդի կակուղ կոյտին վրայ բազմեցաւ : Իւր տուած ճնշումն ուրիշ արգելիչ չունեցաւ , բայց միայն աւելի ուժով Քոլումպիատին մէջ կոխել բամպակ-վառօդը :

« Կորուսի գրաւս » ըսաւ Նիքոլ նաւապետն՝ երեք հազար տոլարի գումար մը տալով Պարպիքէյն նախագահին :

Պարպիքէյն չէր ուզեր ընդունիլ այն գումարն իւր ուղեւորութեան ընկերէ մը , բայց պարտաւորեցաւ զիջանիլ Նիքոլի յամառութեան առջեւ , որ երկրէս մեկնելէ առաջ իւր տուած բոլոր խոստումները կատարել կ'ուզէր :

« Այժմ , ըսաւ Միշէլ Արտան , բան մը միայն ունիմ՝ ձեզ ըղձալու , քաջ նաւապետս :

— Ի՞նչ հարցուց Նիքոլ :

— Այսինքն թէ ձեր երկու միւս գրաւներն ալ կորսնցնէք : Այն ժամանակ կատարելապէս ապահով պիտի լինիմք թէ ճանբան չպիտի մնամք :

ԳԼՈՒԽ ԻԶ .

Կ Ր Ա Կ

Գեկտեմբերի առաջին օրն հասաւ , օր անհրաժեշտ վասն զի եթէ ռումբն այն իրիկունը ժամը տասը քառսունեւեկ վայրկեան և քառսուն մանրերկրորդ անցած ճանբայ չեղնէր , տասնեւութ տարիէն աւելի պիտի անցնէր՝ մինչեւ որ Լուսինը գագաթնակէտի և մերձակէտի սոյն միտոնական պայմաններուն մէջ վերադառնալու ներկայանար :

Օդը գեղեցիկ էր : Չմրան մօտենալուն հակառակ , արեւն իւր բոլոր պոյճառութեամբ կը փայլատակէր , և իւր շողջողուն հոսանքով կը բախէր այս երկիր , զոր իւր բնակիչներէն երեքը թողլով նոր աշխարհ մը պիտի երթային :

Ո՛րչափ մարդիկ չկրցին ննջել այս անհամբերու-



թեամբ սպասուած աւուր նախընթաց գիշերը . որչափ կուրծեր ճնշեցան սպասման ժանր բեռին ներքեւ : Ամեն սիրտ կը բարախէր անհանգստութենէ , ի բաց առեալ Միշէլ Արտանի սիրտն : Այս անդգած անձն իւր սովորական փութաջանութեամբ կ'երթար կուգար , բայց անսովոր մտահոգութիւն մը չէր տեսնուեր բնաւ իւր վրայ : Գիշերն հանգիստ ննջեր էր . ինչպէս ժամանակաւ թիւրէն՝ ճակատամարտէն առաջ կը ննջէր թնդանութի մը սայլին վրայ :

Առաւօտէն ի վեր անթիւ բազմութիւն ծածկած էր Սթոն'ս Հիլի շուրջը տարածեալ ընդարձակ մարդագետտիները : Քառորդէ քառորդ թամբայի երկաթուղին նոր հետաքրքիրներ կը բերէր : Եկող հանդիսատեսաց թիւը շատ չանցաւ անհաւատարի համեմատութեան հասաւ , և թամբա-թաունի Օպտերվըր լրագրին խօսքին նայելով , այս արժանայիշատակ աւուր մէջ հինգ միլիոն մարդ ոտքով կոխեցին Յլորիտի երկիրն :

Ամիսէ մ'ի վեր այս բազմութեան ամենամեծ մասը շրջափակին շուրջը բանակած էր , և քաղաքի մը հիմունք ձգեց , որ յետոյ Արտան'ս—թաուն կոչուեցաւ . անհամար խրճիթներ , հիւղեր , տաղաւարներ , վրաններ ցցուած էին դաշտին մէջ . և այս առժամեայ բընտարանք ա՛յնչափ բազմութիւ ժողովուրդ կը պատնւ պարէին , որ Եւրոպիոյ ամենամեծ քաղաքաց նախանձը կրնային շարժել :

Աշխարհի ամեն ազգերն իրենց ներկայացուցիչներն ունէին . աշխարհի ամեն լեզուները կը խօսուէին միանգամայն . լսողն ինքզինք Ս. Գրոց յիշած բարեւոնեան խառնակութեան ներկայ կը կարծէր : Ամերիկեան ընկերութեան այլ և այլ դասերն իրար խառնուած էին բացարձակ հաւասարութեամբ : Սեղանաւորք , երկրագործք , նաւաղք , միջնորդք , յանձնակատարք , բամպակամշակք , վաճառականք , նաւալարք , դատա-

ւորք իրար խառնուած , արմուկով զիրար կը հրմշտուէին նախնական անհոգութեամբ . Լուիզիանայի գաղթածինք կ'եղբայրանային ինտիանայի կալուածավորձից հետ : Քէնթուքիլի և թէնէսիլի ճէնթըլմէնները , վայելչասէր և խրոխտ վիրժինիացիք , պատասխան կուտային Լիճերու կէս վայրենի որսորդաց և Սինսիննաթիլի եզնավաճառաց : Ճերմակ Քասթորէ լայնեղր փեղոյր մը կամ Բանամա կոչուած հնաձեւ գլխարկը դըլուխնին դրած , Օբէլուզասի գործարաններէն ելած կապոյտ տափասներ հագած , անթափ կտաւէ վայելչաձեւ բաճկոններ վրայնին անցուցած , պայծառ գոյներով կոչիկներ ազած , ճերմակ կտաւէ անհեթեթ լանջակայներ դրած , իրենց շապիկին կուրծքը , իրենց փողպատներուն վրայ , թեւնոցներուն վրայ , տասն մատներուն և մինչեւ իսկ ականջներուն վրայ մատնիներ , դնտասեղներ , ագամանդներ , չլթայներ , գինդեր , ժամացուցի մանր զարդեր կը շողողեցնէին , որոց բարձր գինն իրենց յոռի ճաշակին կը հաւասարէր : կանայք , տղայք , ծառայք , ոչ նուազ ճոխ հագուստներ հագած , կ'երթային իրենց այրերուն , հայրերուն , տէրերուն քովէն , առջեւէն , ետեւէն , որք բազմութիւ ընտանիքէ շրջապատեալ ցեղապետաց կը նմանէին :

Ճաշին ժամանակ , պէտք էր տեսնել թէ ի՞նչպէս այս բոլոր բազմութիւնն հարաւային նահանգաց յատուկ եղող կերակրոց վրայ կ'իյնար և կը լափէր ա՛յնպիսի ախորժակով մը , որ Յլորիտի նահանգին մէջ գտնուած բոլոր պարէնն սպառել կ'սպառնար , այնպիսի կերակուրներ , յորոց կը զգուին եւրոպական ըստամոքսներն , ինչպէս են տապկած գորտ , կապկի շոգեփեաց (պուղուլամա) , սարիկի , ռաքունի և բոսսու մի(\*) խորովածոյք : Նմանապէս որչափ տեսակ հեղուկներ կամ ըմպելիներ , որք օգնութեան կուգային

(\*) Ամերիկեան կենդանիներ :



այս դժուարամարս կերակրոց : Ի՛նչ գրգռիչ աղաղակներ, ի՛նչ ստիպողական գոչիւններ կը հնչէին գինեւտանց մէջ, որք այլազան և այլաձեւ գաւաթներով սկահակներով, սրուակներով, շիշերով, ստոմաններով զարդարեալ էին, ինչպէս նաեւ շաքար ծեծելու սանդերով և յարդի ծրարներով :

»Աւասիկ անանխոյ ճուլապ, կը գոչէր վաճառողներէն մին :

— Աւասիկ Պորտոյի գինիով շինուած սանկառէ(\*) , կը գոչէր միւսը :

— Եւ ճի՛ն կը կրկնէր ուրիշ մը :

— Եւ քուքթա՛յլ, պրանտի սմա՛շ (\*\*), կը գոչէր ուրիշ մ՛ալ :

— Ո՛վ կ'ուզէ ճաշակել ճշմարիտ անանխոյ ճուլապը, կը գոչէին ճարպիկ վաճառողք, ձեռնածուի մը գնտակին պէս մէկ գաւաթէն միւսն անցունելով շաքարը, լեմոնը, կանանչ անանուխը, աղացեալ սառը, ջուրը, քոնեաքն և թարմ անանասն, որք այդ զովարար ըմպելին կը կազմեն :

Այս դեղերուն կիզիչ ազդեցութեամբ պապակեալ կոկորդներու ուղղեալ թելադրիչ հրաւերներն՝ օգին մէջ իրար խառնուելով՝ խլացուցիչ խոր մը կ'արտադրէին : Բայց դեկտեմբերի առաջին օրն այս աղաղակներն յոյժ նուազած էին : Վերոյիշեալ ըմպելավաճառքի զուր իրենց ձայնը պիտի սպառէին գնողները թելադրելու համար : Ոչ ոք ուտել խմելը կը մտածէր : Եւ իրիկուտն ժամը չորսին սրչափ հանդիսականք կը պըտըտէին բազմութեան մէջ, որք տակաւին իրենց սովորական ճաշը չէին ըրած : Եւ որ աւելինչանական էր, Ամերիկացւոց բուռն խաղամուտութիւնն իսկ յաղթուած էր իրենց սրտայուզութենէն : Ամեն տեսակ խաղերը

(\*) Տեսակ մ'ըմպելի :  
(\*\*) Ողելից ըմպելիք :

դադրած էին : Օրուան մեծ գործն ուրիշ ամեն պէտքերը մոռցուցեր, ուրիշ որ և է զբաղմանց տեղի չէր թողուր :

Մինչեւ իրիկուն, մեծ աղէտներու նախազուշակն եղող խոր և լռին յուզում մը կար սրտատանջ բաղմութեան մէջ : Աննկարագրելի տատամութիւն մը կը տիրէր մտաց մէջ, նեղիչ թմբութիւն մը, անսահմանելի տազնապ մը : Ամեն մարդ կ'ուզէր որ ժամ մ'առաջ լմննար :

Սակայն ժամ եօթնին մօտ այս ծանր լռութիւնն յանկարծ փարատեցաւ : Լուսինն հորիզոնէն վեր կ'ելնէր : Քանի մը միլիոն հուրրաներ ողջունեցին անոր երեւումը : Եւ մարդութեանն հաւատարիմ էր : Բաղմութեան գոչիւնները մինչեւ երկինք ելան : Ծափահարութիւնը որոտացին ամեն կողմէ, մինչդեռ խարտեան փերէ խաղաղութեամբ կը փայլէր սքանչելի երկնքի մը մէջ և իւր ամենասիրալիր ճառագայթներով կը զգուէր այս զգլխեալ ամբոխը :

Սոյն միջոցին երեք անվեհեր ուղեւորք յերեւան ելնելով աղաղակներն աւելի մեծցան : Իսկոյն Միացեալ-Նահանգաց ազգային երգը միաձայնութեամբ դուրս ցայտեց ամեն թասուն կուրծ երէ, և Եսէի որոր երգն հինգ միլիոն երգիչներէ կրկնուելով հնչուն փութորիկի մը պէս մթնոլորտին մինչեւ վերջին սահմաններն ելաւ :

Այս անդիմադրելի թռիչէն յետոյ՝ երգը դադրեցաւ, վերջին ներդաշնակութիւնք քիչ քիչ մտրեցան, ձայները փարատեցան, և լռին շնջիւն մը ծփաց այս խոր ապաւորութեամբ զգածեալ բազմութեան վրայ :

Սակայն քրանսացին և երկու Ամերիկացիք ներս մտեր էին վերապահեալ շրջափակէն, որոյ շուրջը խըռնեալ էր անհուն բազմութիւնն : Ասոնց ընկերացած էին կըն-Քլիւպի անդամք և Եւրոպական դիտարան



ներէն յուղարկեալ պատգամաւորութիւնը . Պարպիւքէյն պաղ և հանգարտ , իւր վերջին հրամանները կուտար : Նիբոյ , շրթունքը սեղմած , թեւերն ետին կապած , հաստատուն ու չափեալ քայլերով կերթար : Միշէլ Արտան , միշտ համարձակ , կատարեալ ուղեւորի մը կերպարանօք , կաշիէ կոշիկներն ոտքը , որ սորդի քսակը քովէն կախած , իւր շագանակադոյն թաւիչէ լայն հանդերձներուն մէջ տատանելով , դլանիկը բերանն , իւր ճանքուն վրայ մէկուն միւսին ձեռքը կը սեղմէր իշխանական շուայութեամբ : իւր աշխոյժն ու զուարթութիւնն անսպառելի էր . կը խընդար , կը ծաղրաբանէր , չարածճի տղու մը պէս կատակներ կ'ընէր յ. թ. Մասթոնի . միով բանիւ , «Պըրանսացի» , և որ առաւել դէշն է՝ «Փարիզցի» մինչեւ ցվերջին մանրերկրորդ :

Ժամը տասն զարկաւ : Ռումբին մէջ տեղաւորուելու ժամանակն եկած էր . մէջն իջնելու համար պէտք եղած գործողութիւնը , մուտքը փակող տախտակին պտուտակներով ամրապնդումը , ֆոլումպիատի բերանին վրայ կախուած խորդակներուն ու լաստակներուն բարձումը բաւական ժամանակ կը պահանջէին :

Պարպիւքէյն իւր ժամացոյցը Միւրքիսոն երկրաչափին ժամացոյցին վրայ կանոնաւորած էր , որ վառօդին կրակ պիտի տար ելեքտրական կայծին միջոցաւ : Ռումբին մէջ փակեալ ուղեւորք պիտի կրնային աչքով հետեւիլ անկարեկիր սլաքին , որ իրենց մեկնելուն ճիշդ վայրկեանը պիտի ցուցնէր :

Հրաժեշտի ժամանակն եկած էր : Տեսարանը սըրտաչարժ եղաւ . հակառակ իւր սաստիկ զուարթութեան , Միշէլ Արտան յուզեցաւ : յ. թ. Մասթոն իւր ցամքած արտեւանանց տակ հին արտասուքի կաթիլ մը դտաւ , զոր անշուշտ այս առթիս համար պահած էր , և իւր սիրելի և քաջ նախագահին ճակտին վրայ թափեց :

« Ես ալ կրնամ գալ , ըսաւ . դեռ ժամանակ կայ : »  
— Անհնար է , ծերունի՛ Մասթոնս , պատասխանեց Պարպիւքէյն :

Քանի մը վայրկեան յետոյ , երեք ուղեկիցք զետեղեցան ռումբին մէջ , որոյ մուտքին տախտակը ներսէն պտուտակած էին , և ֆոլումպիատի բերանը զերծանելով իւր խափանարար արգելքներէն՝ ազատապէս բացուեցաւ դէպի երկինք :

Նիբոյ , Պարպիւքէյն և Միշէլ Արտան վերջնականապէս փակուած էին իրենց մեռադեայ կառքին մէջ :

Ոչ ոք կրնայ նկարագրել ընդհանուր սրտայուզումըն , որ իւր վերջին կէտն հասած էր :

Լուսինը վճիտ պարզութեամբ կը յառաջանար հաստատութեան մէջ , մարելով իւր ճանքուն վրայ աստեղաց բոցափայլ հուրերն . սոյն միջոցին երկաւորի աստեղատունէն կ'անցնէր և գրեթէ հորիզոնին ու գազաթնակէտին կէս ճանքուն վրայ կը գտնուէր : Ուրեմն ամեն մարդ գիւրաւ պէտք էր հասկնալ , թէ նպատակին յառաջակողմը նշանակէտ բռնել պէտք էր , ինչպէս որսորդն իւր զարնելիք եղջերուն յառաջակողմը նպատակ կը բռնէ :

Ահաւոր լուծիւն մը կը տիրէր այս բոլոր տեսարանին մէջ . բնաւ հով չկար երկրի վրայ . բնաւ շունչ չկար կուրծերուն մէջ : Սիրտերը չէին համարձակեր բարախել : Ամեն հայեացք՝ սարսափահար՝ ֆոլումպիատի ահագին բերնին վրայ սեւեռած էին :

Միւրքիսոն իւր ժամացուցին սլաքը կը դիտէր : Հազիւ քառսուն մանրերկրորդ մնացած էր չուելու կէտին , և այս մէն մի մանրերկրորդ դար մը կը տեւէր :

Քսաներորդին , ընդհանուր սարսուռ մը տիրեց . բազմութիւնն համայն մտածեց թէ ռումբին մէջ փակեալ յանդուգն ուղեւորք ալ կը համրէին այս սարսափելի մանրերկրորդները : Քանի մը ձայներ լսուեցան :



« Երսունեւհիւնք . — Երսուն և վեց . — Երսուն և եօթն , Երսուն և ութ . — Երսուն և ինն . — Քառսուն . կրակ . »

Իսկոյն Միւրքիսոն մատովը կոխեց ելեքտրական գործիքին ընդմիջողը , վերահաստատեց հոսանքն , և ելեքտրական կայծը ֆոլումպիատի յատակը զրկեց :

Եւ ահա զարհուրելի , անլուր , գերմարդկային պայթիւն մը լսուեցաւ , որոյ վրայ դաղափար մը չեն կըրնար տալ ոչ շանթերու փայլատակմանց որոտումն , ոչ հրաբուխերու շառաչիւնը : Հրոյ անհուն փունջ մը ցայտեց գետնին ընդերքէն , ինչպէս հրաբուխի մը բերնէն : Երկիրը վեր ելաւ , և հազիւ քանի մ'անձինք կրցին նշմարել ռումբն , որ յաղթաբար օդը ճեղքելով կը սլանար հրացայտ շոգիներու մէջէ :

ԳԼՈՒԽ ԻԷ .

Փ Ա Կ Օ Գ

— օ —

Երբ բորբոքեալ հրափունջն երկնից բարձունքն ելաւ , իւր ակնախտիլ բոցերուն ծաւալումը լուսաւորեց զհամայն Ֆլորիտ . և անհաշուելի պահ մը , ցերեկը գիշերին յաջորդեց երկրին մէկ մեծ մասին վրայ : Այս անհուն հրոյ ցցունք ծովուն վրայ հարիւր մղոն հեռուէն տեսնուեցան , թէ՛ ծովածոցէն և թէ՛ Ատլանտեանէն , և բազմաթիւ նաւապետք իրենց տետրակին մէջ նշանակեցին այս ահագին օդերեւոյթը :

Ֆոլումպիատին պայթումն ահեղ գետնաշարժ մը պատճառեց : Ֆլորիտի նահանգն ի խորոց ցնցուեցաւ : Վառօդին կազերը , տաքէն ծաւալելով՝ անբաղդատելի ուժգնութեամբ մղեցին մթնոլորտական խաւերն , և այս արուեստական հովին բռնութիւնն ,

հարիւրապատիկ աւելի արագ փոթորկաց և հովին ուժգնութենէն , թաթառի պէս օդերուն մէջէն անցաւ :

Հանդիսատեսներէն ոչ մին ոտքի վրայ չէր մնացած . ամեն ալ գետինը փռուեր էին մրրկահար հասկերու պէս : Մննկարագրելի աղմակ մ'ելաւ . բազմաթիւ մարդիկ ծանրապէս վիրաւորուած էին . և ժ. թ. Մասթոն , որ ամեն խոհեմութեան հակառակ , խիստ առաջ կեցած էր , քսան գրկաչափ ետ նետուեցաւ , և ռումբի պէս իւր հայրենակիցներուն գլխուն վրայէն անցաւ : Երեք հարիւր հազար հօգի պահ մը խուլցան և ապշած մնացին :

Մթնոլորտական հոսանքը , փայտաչէն խրճիթները կործանելէ , հիւղակները քանդելէ , մինչեւ քսան մըղոն ծառերն արմատախիլ ընելէ , երկաթուղոյն կառախումբերը մինչեւ թամբա վանելէ յետոյ , ձեան հիւսի պէս քաղաքին վրայ ինկաւ և հարիւրի չափ տուն քանդեց , և անոնց հետ Ս. Մարիամայ եկեղեցին և Պորսայի նոր շէնքն , որ իւր բոլոր երկայնութեամբ խրամատեցաւ : Նաւահանգստին մէջ խարսխեալ նաւերէն մի քանին , իրարու բախելով ծովասոյզ եղան , և աասնի չափ նաւեր , իրենց շղթաները բամպակ դերձանի պէս խզելով՝ ծովեզրն եկան ինկան :

Բայց այս աւերմանց շրջանակն աւելի հեռուն և մինչև Միացեալ-Նահանգաց սահմաններէն անդին տարածեցաւ :

Հակահարուածին արդիւնքն , արեւմտեան հովերուն օգնութեամբ՝ Ամերիկայի ծովեզրքէն երեք հազար մղոն հեռի Ատլանտեոն Ռիկէանի մէջ զգացուեցաւ : Արուեստական փոթորիկ մը , անակնկալ փոթորիկ մը , զոր Ֆիձ-Ռուա ծովակալը չէր կրցած նախատեսել , անլուր բռնութեամբ մը նաւերուն վրայ ինկաւ , և բազմաթիւ նաւք՝ այս զարհուրելի մրրիկէն



բռնուելով՝ ժամանակ չունեցան իրենց առաքապտներն ամփոփելու, և ծովասոյց եղան. ի մէջ այլոց՝ Լիվերփուլի Շելտ-Հէրլտը. ցաւալի կորուստ մը, որ Անգլիոյ կողմէ դառն դանդապաներու նիւթ եղաւ:

Վերջապէս, բան մը պակաս չթողու համար, թէ և քանի մը բնիկներու վկայութենէն զատ ուրիշ երաշխաւորութիւն չկայ, ուումբին չուելէն կէս ժամ յետոյ՝ ֆորէայի և Սիէրա-Լէոնի բնակիչք խորին դժբաղդիւն մը լսեր են, հնչուն կոհակաց վերջին տեղափոխութիւնն, որ Ապառաժութեան անցնելով ամբողջեան ծովեզերաց վրայ գնացած մեռած էր:

Բայց վերադառնալք ի Յլորիտ = Դորդման առաջին վայրկեանն անցնելէ յետոյ, վիրաւորեալք, խլացեալք, վերջապէս բազմութիւնն համայն արթնցաւ, և մոլեգին աղաղակներ «Հուրրա՛ Արտանի համար, Հուրրա՛ Պարպիքէյնի համար, Հուրրա՛ Նիքոլի համար» մինչեւ երկինք բարձրացան: Քանի մը միլիոն մարդիկ, քիթերնին օգին մէջ տնկած, հեռացոյցներ, մեծ ու փոքր դիտակներ ի ձեռնին՝ միջոց կը զննէին, մոռնալով իրենց կրած ճմլումներն, և միայն ուումբը կը հոգային: Բայց ի դուր կը փնտռէին դայն: Այլ չէր տեսնուեր, և հարկ էր Լոնկ'ս-Բիքէն գալիք հեռագրաց սպասել: Քէմպրիճի դիտարանին տնօրէնն իւր պաշտօնին գլուխն էր Ապառաժութեան լերանց մէջ, և իբրեւ ճարտար և անխոնջ աստղագէտ, իրեն յանձնուած էին հետազննութիւնք:

Բայց անակնկալ օդերեւոյթ մը, թէ և զիւրաւ նախատեսելի, և որոյ դէմ բան մ'ընել անհնար էր, շատ չանցած՝ եկաւ հասարակաց անհամբերութիւնը գմնդակ փորձի մը ներքեւ դրաւ:

Սղը, որ մինչեւ այն ժամանակ գեղեցիկ էր, յանկարծ փոխուեցաւ, երկինք մթնցաւ և ամպերով ծածկուեցաւ: Կրնա՞ր ուրիշ կերպ լինել մթնոլորտական

խաւերուն սարսափելի տեղափոխումէն և երկու հարիւր հազար լիպրա բանպակ-վառօղի բռնկելէն գոյացած ամբաւ շողիներուն ցրուումէն յետոյ: Բնական կարգը բովանդակապէս վրդոված էր: Եւ զարմանալի չէ այս, որովհետեւ ծովային պատերազմներէ՝ յետոյ շատ անգամ տեոնուած է, որ մթնոլորտին վիճակն յանկարծ փոխուած է բազմաթիւ թնդանօթաց արձակմամբ:

Հետեւեալ օրն, արեւուն ծագած ժամանակ հորիզոնը թանձր ամպերով լի էր. ծանր և անթափանցելի վարադոյր մը երկնից և երկրի միջեւ ձգուած, որ դժբաղդաբար՝ միջեւ Ապառաժութեան լերանց կողմերը տարածուած էր: Տարաբաղդութիւն մ'եղաւ այս: Բողոքոյ միաձայնութիւն մ'ամբարձաւ երկրագունտին ամեն կողմերէն. բայց բնութեան վրայ չկրցաւ ազդեցութիւն մ'ունենալ. և որովհետեւ մարդիկ մթնոլորտը վրդովեր էին իրենց բոմբւնովը, անշուշտ հետեւանքը պարտէին կրել:

Այս առաջին օրն ամեն ոք ջանաց ամպերուն թանձր քողը թափանցել, բայց ի դուր. ասկէ զատ, ամեն ոք կը սխալէր իւր հայեացքը դէպ երկինք ուղղելով, վասն զի, երկրագունտին օրական շարժման պատճառաւ՝ ուումբն հարկաւ հակոտնելից գծին վրայ կը գտնուէր յայնժամ:

Ինչ և իցէ, երբոր գիշերն եկաւ երկիրը պատեց, գիշեր խոր և անթափանցելի, և երբ Լուսինը վերստին հորիզոնին վրայ ելաւ, անհնար եղաւ նշմարել դայն, կը թուէր թէ դիտմամբ կը թաքչէր իւր վրայ ուումբ արձակող յանդուզն մարդոց հայեացքէն: Ուստի գննութիւն կարելի չեղաւ. և Լոնկ'ս-Բիքէն եկած հեռագիրք հաստատեցին այս ցաւալի դժպատեհութիւնը:

Սակայն, եթէ փորձը յաջողէր, ուղեւորք, գեղեց



տեմբեր 1ին ժամն իրիկուան տասը քառսուն և վեց վայրկեան և քառսուն մանրերկրորդ անցած ճանրայ երնելով, դեկտեմբեր 4ին կէս գիշերուն պիտի հասնէին: Արդ, մինչեւ այն ժամանակ, և ըստ որում յոյժ դժուարին կը լինէր ուումբին չափ փոքր մարմին մ'այս պայմանաց մէջ դիտել, համբերել հարկ եղաւ առանց շատ դոչելու:

Դեկտեմբեր 4ին, իրիկուան ժամ ութէն մինչեւ կէս գիշեր, կարելի էր ուումբին հետքը դիտել, որ սեւ կէտի մը պէս պիտի երեւնար լուսնի պայծառ սկաւառակին վրայ: Բայց օդն անգթաբար ամպամած մնաց, որով հասարակաց զայրոյթը սաստկապէս բորբոքեցաւ, և սկսան հայհոյել լուսնին, որ ինքզինք չէր ցուցներ: Տխուր յետադարձ աշխարհային իրաց:

Ժ. Թ. Մասթոն, յուսահատեալ, ելաւ լոնկ'ս-բիք գնաց: Կ'ուզէր անձամբ դիտել: Տարակոյս չունէր որ իւր բարեկամը իրենց ուղեւորութեան վախճանն հասած էին: Միւս կողմէ, չլսուեցաւ որ ուումբը կողեաց կամ ցամաք երկիրներու որ և է մէկ կէտին վրայ ինկած էր, և Ժ. Թ. Մասթոն բնաւ չէր ընդուներ անկման մը հնարաւորութիւնն ովկիանոսներուն մէջ, որովք երկրագունտին երեք քառորդը ծածկեալ է:

Դեկտեմբեր 5ին նոյն օր: Հին աշխարհի մեծ հեռացոյցք, Հէրշելի, Ռոսի և Ֆուքոյի, շարունակ գիշերային աստղին վրայ ուղղեալ էին, վասն զի օդը խիստ գեղեցիկ էր եւրոպիոյ մէջ, բայց այդ դիտակներուն յարաբերական տկարութիւնը կ'արգելուր ամեն օգտակար զննութիւն:

Դեկտեմբեր 6ին դարձեալ նոյն օր: Անհամբերութիւնը կը կրժէր երկրագունտին երեք քառորդը: Գործըն այն վիճակին հասաւ որ ամենայիմարական մի-

ջոցներ առաջարկուիլ սկսան օդին մէջ կուտեալ ամպերը ցրուելու համար:

Դեկտեմբեր 7ին, օդը քիչ մը փոխուելու երեւոյթ ունեցաւ: Բայց յոյսերն երկար չտեսցին, իրիկունը թանձր ամպերը վերստին աստեղազարդ կամարը ծածկեցին ամեն հայեացքէ:

Այն ժամանակ գործը ծանրացաւ: Վասն զի դեկտեմբեր 11ին առաւօտեան ժամն ինը տասնեւմէկ վայրկեան անցած, լուսինն իւր վերջին քառորդը պիտի մոնէր: Այն պայմանաժամէն յետոյ՝ խոնարհիլ պիտի սկսէր, և եթէ օդը բացուած իսկ լինէր, զըննութեան հաւանականութիւնը զարմանալի կերպիւ պիտի նուազէին: Արդարեւ, լուսինն այն ժամանակ, իւր սկաւառակին նուազելու վրայ եղող մասը միայն պիտի ցուցներ, և պիտի նորոգուէր, այսինքն արեգակին հետ պիտի մոնէր ու երնէր, և արեւուն շառաւիղները զայն բացարձակապէս անտեսանելի պիտի ընէին: Ուրեմն հարկ պիտի լինէր սպասել մինչեւ յունվար 3, կէս օրը քառսուն և չորս վայրկեան անցած, որպէս զի լուսինը լրանար և զննութիւնը ըսկըսէին:

Լրագիրք այս խորհրդածութիւններն հրատարակելով, հազար տեսակ մեկնութիւն կուտային, և չէին ծածկեր հասարակութենէն թէ հրեշտակային համբերութեամբ մը պէտք էր զինուիլ:

Դեկտեմբեր 8ին դարձեալ ոչինչ: Դեկտեմբեր 9ին արեգակը պահ մը երեւցաւ Ամերիկացիները ծաղրելու համար և հայհուջներով ողջունեցաւ: Ոստից անչուշտ վիրաւորեցաւ, և իւր շառաւիղները վերջին աստիճան կծծութեամբ արձակել սկսաւ աշխարհի վրայ:

Դեկտեմբեր 10ին, փոփոխութիւն չկար: Ժ. Թ. Մասթոն մազ մնաց պիտի խենթեմար և վախցուեցաւ որ այս պատուական մարդուն ուղեղը պիտի խան-



գարէր, որ մինչեւ այն ժամանակ լաւ պահուած էր իւր կիւթաբէրքայէ գանկին ներքեւ:

Բայց դեկտեմբեր 11ին, այրեցեալ գօտիին մօտակայ երկիրներուն յատուկ եղող սարսափելի փոթորիկներէն մին պայթեցաւ օդին մէջ: Արեւելեան բուռն հովերն աւլեցին երկար ժամանակէ ի վեր դիզուած ամպերն, և իրիկունը գիշերային աստեղ կէս կրծուած սկաւառակը մեծափայելուչ փառքով անցաւ երկնից յստակափայլ համաստեղութեանց մէջէն:

ԳԼՈՒԽ ԻԸ .

ՆՈՐ ԱՍՏՂ ՄԸ

Անդուսպ անհամբերութեամբ սպասուած սրտատրորով լուրը նոյն գիշեր կայծակի պէս փայլատակեց Միութեան նահանգաց մէջ, և անտի խոյանալով յովկէան, աշխարհի բոլոր հեռագրաթելերուն վրայէն սրացաւ գնաց: Ռուսքը Լոնկ'ս-բիքի յաղթ ցոլացուցչին շնորհիւ տեսնուած էր:

Ահաւասիկ ֆէմպրիճի դիտարանի տնօրէնէն խըմբագրեալ ծանուցագրին պատճէնն, որ կըն-ֆլիւպի այս մեծ փորձին գիտական եզրակացութիւնը կը պարունակէ:

Լոնկ'ս-բիք 12 դեկտ .

Ա. Տ. Տ. Անդամս դիտարանին ֆէմպրիճի

«Սթոն'ս Հիլի ֆոլուսպիատէն արձակուած ռուսքը՝ «դեկտեմբեր 12ին իրիկուն ժամ ութը քառասուն «եօթն վայրկեան անցած տեսնուեցաւ Տ. Տ. Պէլֆաս-«թէն և յ. Թ. Մասթոնէն, Լուսինն իւր վերջին րա-«ուորդը մտած լինելով:

«Այն ռուսքն իւր նպատակին չէ հասած, այլ քո-

«վէն անցած է, բաւական մօտ, որով Լուսնի ձգողու-«թիւնը բռնած է գայն:

«Անդ իւր ուղղագիծ շարժումը պարուրածեւ ամե-«նարագ շարժման մը փոխուելով, թերատեան յրջա-«նով մը Լուսնին շուրջը ձգուած և անոր ճշմարիտ «արբանեակն եղած է:

«Այս նոր աստղին տարերքը դեռ չեն կրցած ճշ-«դուիլ: Ոչ տեղափոխութեան արագութիւնը, ոչ հո-«ւովման արագութիւնը ծանօթ չեն: Լուսնի մակերե-«ւութէն զայն բաժնող հեռաւորութիւնը կրնայ եր-«կու հազար կիլոթ հարիւր երսուներեք մընի շափ «հաշուիլ:

«Այժմ երկու ենթադրութիւնը կրնան արտադրել «և իրաց վիճակին մէջ փոփոխում մը բերել:

«Կամ Լուսնի ձգողութիւնը վերջապէս պիտի յաղ-«թէ և ուղեւորը իրենց նպատակին հասնին:

«Կամ, անփոփոխելի պարունակի մը մէջ բռնուած «մնալով, ռուսքը Լուսնի սկաւառակին շուրջը ծան-«րահակ պիտի մնայ յաւիտեան:

«Չայս պիտի ուսուցանեն օր մը զննութիւնը, բայց «մինչեւ ցարդ կըն-ֆլիւպի փորձն ուրիշ արդիւնք «չունեցաւ, բայց եթէ նոր աստղ մ'աւելցնել մեր «արեգակնային դրութեան մէջ:

«Ե. Պէլֆաս» .

Ո՛րչափ խնդիրներ կը յարուցանէր փորձին այս անակնկալ ելքն. ո՛րչափ դաղանեօք յի վիճակ մը կը պահէր ապագայն՝ գիտութեան խողարկութիւն-ներուն: Շնորհիւ րաջասրտութեան և անձնուիրու-թեան երեք մարդոց, ըստ երեւութին բաւական սնու-տի ձեռնարկն՝ այն է Լուսնին ռուսք մը զրկելու փորձն՝ անհուն արդիւնք մ'ունեցած էր, որոյ հետե-ւանքն անհաշուելի են: Եւ որ արբանեակի մը մէջ բան-տարկեալ ուղեւորը, եթէ չէին հասած իրենց նպա-



տակին , գոնէ լուսնական աշխարհին մասն եղած էին .  
 դիչերուան աստղին շուրջը կը դառնային , և առաջին  
 անգամ մարդկային աչքը կրնար թափանցել անոր  
 ամեն գաղտնեաց : Նիքոլի , Պարպիքէյնի , Միշէլ Ար-  
 տանի անուններն յաւիտեան հռչակաւոր պիտի մնան  
 աստղագիտական տարեգրութեանց մէջ , վասն զի այդ  
 քաջասիրտ հետախոյզք , մարդկային ծանօթութեանց  
 շրջանակն ընդաճարկելու տենչով յանդգնաբար խո-  
 ացան միջոցին մէջ , և իրենց կեանքը վտանգիդրին՝  
 արդի ժամանակաց ամենէն տարօրինակ փորձով :

Ինչ և իցէ , Լոնկ'ս-Բիքի ծանուցագիրն հրատա-  
 րակուելուն պէս , բովանդակ աշխարհ զարմանք և սար-  
 սափ զգաց : Հնա՞ր էր օգնութեան երթալ Երկրի այդ  
 յանդուգն բնակչաց : Ոչ , անշուշտ , վասն զի մարդ-  
 կութեան պայմանէն դուրս ելած էին՝ անցնելով այն  
 սահմանները զորս Աստուած դրած էր երկրաւոր արա-  
 րածոց : Կրնային երկու ամիս օդ գտնել . մէկ տարւոյ  
 համար պարէն ունէին . բայց յետոյ . . . Ամենէն անըզ-  
 գայ սիրտերը կը դողային այս սարսափելի հարցման  
 առջեւ :

Միակ մարդ մը չէր ուզեր ընդունիլ այս փիճակին  
 յուսահատականութիւնը : Միակ մարդ մը վստահու-  
 թիւն ունէր , և այդ մարդն էր՝ անոնց անձնուէր բա-  
 րեկամն , անոնց պէս յանդուգն և խիզախ , քաջն Ժ-  
 թ . Մասթոն :

Այսու հանդերձ զանոնք չէր կորսնցներ աչքին առ-  
 ջեւէն : Իւր բնակարանն եղաւ այսուհետեւ Լոնկ'ս-Բի-  
 քի կայանը , իւր հորիզոնն՝ անհուն ցոլացուցչին հա-  
 յելին : Լուսինն հորիզոնէն վեր ելածին պէս , զայն  
 հեռացոյցի դաշտին մէջ կը շրջանակէր , վայրկեան մը  
 չէր կորսնցներ իւր աչքէն , և անձանձիր կը դիտէր  
 անոր ընթացքն աստեղային միջոցին մէջ : Յտւիտենա-  
 կան երկայնմտութեամբ ուռմբին անցնելը կը դիտէր

անոր արծաթափայլ սկաւառակին վրայէն . և ճշմար-  
 տիւ այս պատուական անձը մշտնջենաւոր հաղորդակ-  
 ցութեան մէջ էր իւր երեք բարեկամաց հետ , զորս օր  
 մը վերստին տեսնելէ չէր յուսահատած :

« Պիտի թղթակցիմք անոնց հետ , կ'ըսէր զինքը մը-  
 տիկ ընել ուզողին , երբոր պարագաները թոյլ տան :  
 Անոնցմէ լուր պիտի առնումք , անոնք ալ մեզնէ լուր  
 պիտի առնուն : Անոնք երեքն ալ հանճարեղ մարդիկ  
 են , ես քաջ դիտեմ : Արուեստի , գիտութեան և ճար-  
 տարութեան ամեն հնարքներն իրենց հետ կը տանին  
 միջոցին մէջ : Ասով մարդ մ'ինչ որ ուզէ՝ կրնայ ընել :  
 Եւ պիտի տեսնէք որ անոնք այս գործն յաջողութեամբ  
 ի գլուխ պիտի հանեն : »

Վ Ե Ր Ջ





ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՔ ԹԱՐԳՄԱՆՁԻՆ



1. ԲԱՆՏՔ ԻՄ — ՍԻԼՎԻՈՑ ԲԷԼԼԻՔՈՑ .
2. ԵՐԷՑ ՎԷՔՑԻԼՏԻ — ԿՈՒՏՍՄԻԹ (ՍԿԱՌԵԱԼ) .
3. ԳԱՂՏՆԻՔ ՀԱԻԱՏԱՔՆՆՈՒԹԵԱՆ — Մ. Վ. ՏԸ ՖԷՐԷԱԼ .
4. ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԵԱՑ — ԷՕԺԷՆ ՍԻԻ (ՍԿԱՌԵԱԼ) .
5. ԵՐԿԱԹԷ ԴԻՄԱԿՈՎ ՄԱՐԴՆ ԵՒ ԱԻԵՏԻՔ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ — ՄԱՐԻՈՍ ԹՈՐԷՆ .
6. ՍԿՋԲՈՒՆՔ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ — ԺՈՋԷՑ ԿԱՌՆԻԷ .
7. ԱՐՇԱԻԱՆՔ ԱՐԱԲԱՑ Ի ՀԱՅԱՍՏԱՆ — ՔԱՂԵԱԼ ՅԱՐԱՐԱՑԻ ՄԱՏԵՆԱԳՐԱՑ Ի Պ. ՄՈՐԹՄԱՆԷ .
8. ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՐՄՆԱԳՐԱԿԱՆ ՈՒԻՏԻՆ .
9. ՅԵՐԿՐԷ Ի ԼՈՒՍԻՆ — ԺԻԼ ՎԷՐՆ .
10. ԿԱՐՄԻՐ ՄԱՐԴՈՑ ԵՐԴՈՒՄԸ — ԲՈՆՍՈՆ ՏԻԻ ԹԷՐԱՅԼ .
11. ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՔ ՓԱՐԻՋԻ — ԷՏՄՈՆ ԱՊՈՒ .





1610  
7  
11270

719  
720

0009821  
0004898

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0004898

ՀՀ Ազգային գրադարան



NL0004821



